




853

Ly III. 5







ՆՈՐ ՇՐՋՈՆ

II ՏՈՒՐ

ՄՈՒՐՃ

ԳՐԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԱՄՍԱԳԻՐ

№ 1

ՅՈՒՆՈՒԱՐ

1902

Թ Ի Ֆ Լ Ի Ս

Типография Груз. Издат. Т—ва. | Տպարան Վրաց Հրատ. Ընկերության.
1901

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

№ 1

1.	ՋՀՈՒԴ-ՔՈՒՇԱՆ, Վէպ Շահրիարի	5
2.	ԱՇՈՒՂԻ ԵՐԳԵՐԻՅ, բանաստեղծութիւններ Ալ. Ծառուեանի	27
3.	ԲՈՒՐԴԻ ՎԱՃԱՌԱԿԱՆՈՒԹԻՒՆՍ, ճանապարհորդու- ղիւն Թիւրքիայում, Առանձարի	31
4.	ԱՄԵՆ ԳԻՇԵՐ..., բանաստեղծութիւն Աւ. Իսահա- կեանի	49
5.	ԽԱՉԱԽՅՆ, պատմուածք Լ. Բաշալեանի	50
6.	ՌՈՒՍԱՅ ՀՐԱՊԱՐԱԿԱԾՍՈՒԹԵԱՆ ՆԱՀԱՊԵՏԸ, յօդ. Կ. Կուսիկեանի	58
7.	ՀԱՅՐԵՆԻ ՀՈՂԸ, Վէպ Հանրի Բօրդօի, Թարգ. Հ. Առաքելեանի	78
8.	ԿԵԱՆՔԻ ԺԵՈՐԻՅ..., բանաստեղծութիւն Աւ. Իսահ- ակեանի	95
9.	ԿԱՊՈՒՏԱՆԻ ԱՐԵՒՄՏԵԱՆ ԱՓԵՐԻՅ, յօդ. Տ. Օսեանի	96
10.	ՏՊԱՌՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ ՇԻՐԱԿԻ ԳԻՒՂԵՐԻՅ, յօդ. Ն. Բ. Նիկողոսեանի	106
11.	ԱՂՋԻԿ, առողջապահական և բարոյադիտական էտիւդ, բժայ. Վ. Արժումնու	123
12.	ՄԱՏՆԱԽՈՍՈՒԹԻՒՆ.—1) Ե. Թ.՝ «Մեարոյ Մաշտոց». Լ. —2) Ե. Թ.՝ «Մահմէդ». Լ.—3) Ս. Յարճանեան՝ «Գիւ- ղաղնորէն», Լ. Ա.—4) Մ.—Կարաղեղեան՝ «Գերմ. հայ ուսանողութիւնը», Վ. Ն.	138
13.	ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐՅԵՐ. Անասնապահութիւնը և կաթ- նատնտեսութիւնը մեր և ուրիշ երկրներում, Ս. Զաւարեանի	149
14.	ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մեր երկրի մի քանի առանձնա- յատկութիւնները.—Յշիտառնքի արդատաւորութեան կախումը կրթութիւնից.—Ամենակրթուած ազգերը և ա- մենահարուստներն են.—Փուս Խնտելիզնցիայի զովքի եղանդը ժողովրդի կրթութեան գործում.—Փուս Նուի- րատունների առատաձեռնութիւնը.—Ժողովրդի կրթու- թիւնը նպատաւոր է բուրժուադիալի շահերին.—Եր- կրի զլխաւոր սպառողները.—Ինչո՞ւ զբնկած զներքը չեն արդելում արտառանձանից ապրանքներ ներմուծե-	

Նոր շրջան II տարի

Հրատ. XIV տարի

ՄՈՒՐՃ

ԳՐԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԱՄՍԱԳԻՐ

№ 1

ՅՈՒՆՈՒԱՐ

1902

—o—o—o—

Թ Ի Ֆ Լ Ի Ս

Типография Груз. Издат. Т—ва. | Տպարան Գրայ Հրատ. Ընկերություն,

1901

Дозволено цензурой. Тифлисъ, 25 января 1902 года. .

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

№ 1

1. ԶՀՈՒԳ-ՔՈՒՇԱՆ, Վէպ Շահրխարի	5
2. ԱՇՈՒՂԻ ԵՐԳԵՐԻՑ, բանաստեղծութիւններ Ալ. Ծառուբեանի	27
3. ԲՈՒՐԿԻ ՎԱՃԱՌԱԿԱՆՈՒԹԻՒՆՍ, ճանապարհորդու- ղիւն Թիւրքիայում, Առանձարի	31
4. ԱՄԵՆ ԳԻՇԵՐ..., բանաստեղծութիւն Աւ. Իսահա- կեանի	49
5. ԽԱՉԱՆՆԻՆ, պատմուածք Լ. Բաբայեանի	50
6. ՌՈՒՍԱՅ ՀՐԱՊԱՐԱԿԱՆՍՈՒԹԵԱՆ ՆԱՀԱՊԵՏԸ, յօդ. Կ. Կուսիկեանի	58
7. ՀԱՅՐԵՆԻ ՀՈՂԸ, Վէպ Հանրի Բօրլօի, թարգ. Հ. Ասաբեկեանի	78
8. ԿԵԱՆՔԻ ԺԵՈՐԻՑ..., բանաստեղծութիւն Աւ. Իսա- հակեանի	95
9. ԿԱՊՈՒՏԱՆ Ի ԱՐԵՒՄՏԵԱՆ ԱՓԵՐԻՑ, յօդ. Տ. Օսեանի	96
10. ՏՊԱՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ ՇԻՐԱԿԻ ԳԻՒՂԵՐԻՑ, յօդ. Ն. Բ. Նիկողոսեանի	106
11. ԱՂԶԻԿ, տողջոտպահական և բարոյագիտական էտիւդ, բժպ. Վ. Արծրուհու	123
12. ՄԱՏԵՆԱՆՍՈՒԹԻՒՆ.—1) Ե. Թ.՝ «Մեարտոյ Մաշտոց». Լ. —2) Է. Թ.՝ «Մահմէդ». Լ.—3) Ա. Նարճանեան՝ «Դիւ- ղաղնօրէն», Լ. Ա.—4) Մ. Կարաղեօղեան՝ «Գերմ. հայ ուսանողութիւնը», Վ. Ն.	138
13. ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ. Անասնապահութիւնը և կաթ- նամանեղութիւնը մեր և ուրիշ երկրներում, Ա. Զաւարեանի	149
14. ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մեր երկրի մի քանի առանձնա- յատկութիւնները —Աշխատանքի արգասաբոլորեան կախումը կրթութիւնից.—Ամենակրթուած ազգերը և ա- մենահորատաներն են.—Թուս ինտելիգէնցիայի զովկրի հասնիր ժողովրդի կրթութեան զարթում.—Թուս նուի- թառոնների առատաձեռնութիւնը.—Ժողովրդի կրթու- թիւնը նպատար է բուրժուազիայի շահերին.—Եր- կրի գլխաւոր սպասողները.—Ննչու՞ զննկած զներքը չեն արգելում արտասահմանից սպրանքներ ներմուծե-	

լուն.—Արքունական լեոնային գործարանների բան-
տրների կենսաթոշակը.—Հաղորդակցութեան միջոցնե-
րի ազգատութիւնը.—Երկաթուղային նոր վիթխարի
գծեր. 1. Սարգսեանի.

- Քաղաքի նախագործների XXVI հերթական ժողովը. 2. —Հրա-
հանգներ զոնապաններին 165
15. ԳԱԻԱՌԱԿԱՆ ԿԵԱՆՔ. Մասնագիտական դպրոցների
կարիքը Երևանեան հասնագում, Ա.—Դ օ . . . 178
16. ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Եւրոպական քաղաքակր-
թութեան լատիցն կողմերը. —Դրական գիտութեան
և նրա մէջ աշխատողների դրութիւնը. —Հանճարները
գիտութեան մէջ. —Տերթլիօի փանամիակի առիթով. —
Ալֆրէդ Նոբէլ և նրա 5 մրցանակներին արժանացած
երեսլի մարդիկ. —Նիլիկիայի կաթիլկոտական հարցը. 3. Ս. 182
17. ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻՑ. Թոքախառ և ալկոլականու-
թիւն, դօկտ. Կ. Յ. Փաւսայեանի 189
18. ԹԻԻՐՔԱՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐԳԻ ՇՐՋԱՅԵՐԱԿԱՆԸ . . . 195
19. ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՅ, Տիգրանի 203
10. ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. 207
21. ՅԱԻԵԼՈՒԱԾ. «ՕՐԱՄՈՒՏԻՆ», Վէպ Ի. Ս. Տուրգենեվի 1—32

Զ Հ ՈՒ Դ - Ք ՈՒ Շ Ա Ն

(Հրէաստեղծութիւն)

Վ. Լ. Պ

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ԿԵԱՆՔԻՑ

I

Մահմադ Շահ Ղաջարի թագաւորութեան վերջին տարիներն էին:

Արքաների արքան, շահնշահը, Աստուծու ստուերը երկրի վրայ, աշխարհի ազօթարանը, իմաստութեան, հանճարի, գեղեցկութեան, բարութեան քուրան ¹⁾ արգէն հրաման էր տուել, որ բարխանները ²⁾ ճանապարհ դրուեն գէպի Դամավանդի բարձունքը, ուր նա մտադիր էր պատապարուել ամարային տօթերից ծիրանագոյն վրանների տակ և հանգստանալ հարեմական զուարճութիւնների ծոցում: Հարեմի արդէն քեաշավաններով, թախտրավաններով ³⁾, ներքինիների և Ղըզլար-Աղասիի ⁴⁾ ընկերակցութեամբ Մունէջիմ բաշու ⁵⁾ բարեգուշակ յայտարարութիւնից, յետոյ ճանապարհ էր ընկել: Արեգալինաւայլ Շահը այս անգամ չափաւորութեան մեծ օրինակ էր ցոյց տուել. հարեմի 400 կա-

¹⁾ Պարսից Շահի տիտղոսներն են: ²⁾ Ցան իրեր, կահ կարասի:

³⁾ Քեաշավա, թախտրաւան, ամենահին ժամանակից Պարսկաստանում գործածուող վանդակաձև անանիւ կառքեր են, որոնցով ճանապարհորդում են. քեաշավան բաղկացած է երկու վանդակից և զցոււմ է ջորու վրայ, իսկ թախտրաւանը մի մեծ վանդակ է, որ տանում են երկու ջորի կամ ձի: ⁴⁾ Ներքինապետ: ⁵⁾ Գլխաւոր աստղագէտ, որ ամեն մի Շահ ունի:

նանցից միմյան 200-ը պէտք է արժանանային քաղցրացնել իրանց տիրոջ սիրտը և ծառայել նրան. մնացածը պէտք է մնային Թէհրանում և երկրորդ Ղզլար-Աղաախի հսկողութեան տակ գիշեր և ցերեկ աղօթէին Աստուծու ստուերի կեանքի երկարութեան համար:

Մի գարնանային օր էր, մայիս ամսի սկիզբները, երբ Թէհրանում արդէն սկսւում է տօթը: Չը նայելով որ դեռ առաւօտ էր, օդը չափազանց հեղձուցիչ էր. փողոցները փոշոտ և գարշահոտ ապականութիւններով լի: Սակայն քաղաքի գլխաւոր փողոցներից կամ խիաբաններից մէկի վրայ, Ալա-Դօվլա խիաբանի վրայ մեծ շարժում և իրարանցում կար: Դա այն փողոցն էր, որով Շահը պէտք է իր պալատից անցնէր և դուրս գար քաղաքից: Խիաբանի երկու կողմով ընկած ծառուղիները բաց էին անում իրանց արանքում մի լայն ճանապարհ, որ եռանդուն կերպով ջրւում էր ծառուղիների երկարութեամբ ձգուող բաց ջրանցքներից սաղկանների¹⁾ ձեռքով: Փէրրաշները՝ ճիպոտները ձեռին, կարմրազգեստ ու խայտաճամսակ փետրաւոր գլխարկներով զարդարուած շաթիրները իրանց հաստ և արծաթապատ գաւազաններով վազվզում էին խիաբանի միջոցով և իրանց սպառնական հայեացքներով հալածում անցորդներին: Ճիպոտները երբեմն-երբեմն բարձրանում և ընկնում էին անդգոյշ անցորդների ուսերի վրայ: «Փեղէր-սուխտաներ²⁾», դուռում էին շաթիրները և ֆէրրաշները, ճիպոտի հարուածներից ուսերը դադուած անցորդների ուփը լսելով,—կամենում էք ֆալակայի մէջ չորացնենք ձեզ. կորէք այստեղից»: Միայն սև շարշաւների մէջ տռղած և սւրբանդով³⁾ երեսները օտար տղամարդի հարամ նայուածքից թաղցրած կանայք, առանց երկիւղի, անցնում են խիաբանով անպատիժ, լաւ իմանալով, որ ոչ ոք չի համարձակի վի-

¹⁾ Ջրկիր. ջուրը անում են կաշուէ տիկերի մէջ: ²⁾ «Հայրդ ալրուած», —հայհայանք, որ նշանակում է թէ հայրը ալրուել է դժոխքում: ³⁾ Գօզ, որով պարսիկ կանայք ծածկում են երեսները:

րաւորել իրանց: Կնոջ խփելը համարուում է տմարդութիւն և արգելուած է Ղուրանից:

—Իբրահիմ, չշնչաց մի շաթիր իր ընկերին, արեւիդ խաթեր, մի այստեղ նայիր. ամ, կեղծաւոր, խաբերայ:

Եւ այդ խօսքերը արտասանելով հանդերձ, նա մի խոր գլուխ տուեց խիարանով անցնող և սպիտակ էջի վրայ հեծած մի մօլլայի, որ ջուբբան ¹⁾ քաշել էր գլխին. սուրբ մարդը, ամբողջովին անձնատուր եղած վերացական և հոգեշահ մտածողութիւնների, խլացրել էր ականջները, ծածկել աչքերը, որպէս զի, նահլաթ չար սատանային, որեւէ պիղծ բան չը տեսնի, երկրային անոտի խօսակցութիւն չը լսի և, մանաւանդ, քեափրգեալութիւն չը պատահի: Նրա բոլոր հագուստները—վարտիքը, ջուբբան, ամմաման ²⁾ ձիւնի պէս սպիտակ կտորից էին,—առաքինութեան, անմեղութեան և անարատութեան նշաններ: Էջի սանձից բռնած, առաջից գնում էր մի գեղեցկատեսիլ պատանի, որ սուրբ մարդին և ծառայում էր, և Ղուրանի, մարգարէների, իմամների իմաստութիւնները ու հազիսները ³⁾ սովորում նրանից... Ամբօխը, պատկառանքի և մեծարանքի ամենամեծ նըշաններով, մօտենում էր էջի վրայ հեծած մօլլային և համբուրում շորերի թղանցքները: Դա՛ թէհրանի իմամ Զուման էր, Հաջի Միրզա Զաւադ աղան, որ հռչակուած էր իր օրէնսգիտութեամբ և շարիաթի կանոնների խիստ պահպանութեամբ: Նրա ետեւից մի ծառայ էր գնում զայլանը ձեռքին բռնած. ապա հետևում էին մի խումբ միրզաներ ⁴⁾, թալարաներ ⁵⁾ և ծառաներ:

Իմամ Զուման գնում էր Շահաբգուլ-աղիմ ուխտատեղին՝ աղօթելու:

Նա մօտ 50 տարեկան մի անձն էր, հիւժուած,

¹⁾ Վերարկու ²⁾ Գլխի փաթաթոց ³⁾ Պատգամ ⁴⁾ Գրադիր ⁵⁾ Աստուածաբանութեան ուսանողներ

մաշուած. հաւատացեալները և թալաքաները ասում էին, որ տքնութիւնից, գիշեր-ցերեկ աղօթելուց է նա հիւծուել և մաշուել. աչքերը խոր էին ընկել, գլուխը բոլորովին ածելած էր, իսկ մօրուքը, ալեխառն, հասնում էր մինչև գօտին, որի անհամար ծալքերի մէջ խրուած էր մի փոքր ձեռագիր զուրան: Բոլոր դէմքը արտայայտում էր մի տեսակ դժնդակ, խիստ, անգութ տրամադրութիւն. աչքերի մէջ երբեմն-երբեմն վազում էր մի մոլի կայծ, որը, սակայն, իսկոյն հանգչում էր, և աչքերը իրանց առաջուայ պաղութիւնն ու անշարժութիւնն էին ստանում: Թէև էշի վրայ նստած և նրա գլուխը ծածկուած էր սպիտակ ջուրբայով, բայց նա ամեն րոպէ արաասանում էր բարձրաձայն «ալէ-քում-սալամ», անցորդների «սալամ-ալէքում» ողջոյնին:

—Ինչ անեմ,—ասաց Սէլիմ շաթիրը Իբրահիմին, երբ գնացքը անցաւ,—թող Ալլահը դոնէ մի օր, մի ժամ ինձ Շահ դարձնի և ես ցոյց կը կամ Միրզա Զաւադ աղին, թէ նա ինչ պտուղն է: Ալլահ, Ալլահ, փառք Գեդ, փառք մարգարէին. ինչո՞ւ, Ալլահ, թոյլ ես տալիս որ այսպիսի անդգամները մուսուլմաններին խաբեն և շարիաթը ոտնատակ տան:

—Խուբ ¹⁾, ասաց Իբրահիմը, եթադրենք, որ Ալլահը—անբաւ է նրա ողորմութիւնը—կատարեց խընդիրքդ և դու մի օր Շահ դարձար. էհ, ինչ կ'անես:

—Ինչ կ'անեմ, աչքերը բարկութեամբ վառուած բացականչեց Սէլիմը. ինչ կ'անեմ. ես նրան կը տկոբացնեմ և նրա մարմնի վրայ իմ այս գաւազանի միջոցով ցոյց կը տամ, թէ ինչպէս են «տկլորներին» ողորմութիւն տալիս:

—Դու էլի պնդում ես քո ասածների վրայ:

—Թող Ալլահը խուով կենայ գլխիս, թող Ազրայիլը հոգիս առնի և ջհաննամի փայ ²⁾ դառնամ, եթէ ասածիս մէջ ստութիւն կայ. բայց ո՞վ է լսում խեղճ.

¹⁾ Լաւ: ²⁾ Դժոխքի բաժին:

շաթիրին. յոյսս մնացել է միայն հաղթեթ Աբբասի ¹⁾ վրայ. նա է թշուառների և խեղճերի պաշտպանը:

—Դէ մի լաւ պատմիր, նորից լսեմ. մինչև այժմ սուլտանութիւն չեմ դարձրել ասածներիդ վրայ. գուցէ մի բան անել կարողանանք. արխային կաց, էնդէրու-նում ²⁾ ծանօթներ ունեմ:

Եւ նստելով փողոցի դռներից մինի սաքունների վրայ, Սէլիմը մի խոր ախ բաշեց ու սկսեց.

—Դու գիտես, որ հայրս, հաճի Թաղին, մի հարուստ վաճառական էր. նա աստուածածանաչ մարդ էր. նամազ, զարեաթ ³⁾ նա ճշտութեամբ կատարում էր. շարիաթի կանոնները գրեթէ անգիր գիտէր. տարին հինգ անգամ թաղիւ ⁴⁾ կը սարքէր, աղքատներին ու խեղճ-րին կը կերակրէր. սէյիդների, մուլանների տառնորդը իր ձեռքով կրբաժանէր: Ալլահն էլ, տեսնելով նրա մաքուր մուսլիմանութիւնը, կրկնապատկեց նրա հարստու-թիւնը, լցրեց նրա տունը ամեն տեսակ բարիքներով: Հէնց որ ես, նրա մինուճար զաւակը, տասնեութ տարեկան դարձայ, նա ինձ հարսանիք արեց և ինձ համար ուղեց մուշթայիդի, այդ անիծուած Իմամ Զումայի եղբոր աղջիկը, Փաթմային. խեղճ մայրս հակառակ էր, որովհետեւ Փաթման շատ տգեղ և չար աղջիկ էր. ինչպէս ասում էր, նա կամենում էր ինձ համար կին ուղեւ գեղեցկունհի Լէյլային, մեր դրացի մաշադի Քէրիմի աղջկան. բայց ով կարող էր հակառակել հօրս կամքին. նա կամենում էր և մեծ պարծանք էր համարում բարեկամանալ Իմամ Զումայի տան հետ: Մեր հարսանիքը կատարուեց. Փաթման իմ կինը դարձաւ. բայց ես նրան սիրել չէի: Կարող. նա տգեղ էր, անչնորհք, չարասիրտ. ուրիշ կին էլ ուզել չէի կարող Իմամ Զումայի վախից. հայրս էլ թոյլ չէր տայ: Ես պատրուակ բռնե-

¹⁾ Ամինայարգի իմամներից մինը: ²⁾ Ներքնոնոց, կանանոց: ³⁾ Գրե-նական տուրք: ⁴⁾ Սուգի հանդէս, երբ կրօնական միատերիւններ են կա-տարում և հանդիսականներին կերակրում, չոգու հաց՝ տալիս:

ցի, որ մեծ ցանկութիւն ունեւմ գնալ ուխտ Քեալբլա հաղրաթ Ալու գերեզմանին, խնդրեցի հօրս թոյլ տալ ինձ այդ ուխտը կատարելը. Իմամ Ջուման հաւանութիւն տուեց. գիտաւորութեանս և ես ճանապարհ ընկայ Վերջապէս ես ազատ շունչ քաշեցի. մտածում էի Քեալբլայից Մէքքէ գնալ. երբ «քեալբլայ ու հաճի» տիտղոսներն ստացած կը լինեմ արդէն, այն ժամանակ հեշտ կը լինի ինձ համար ազատուել տգեղ Փաթմայից կամ երկրորդ անգամ ամուսնանալ գեղեցիկ Լէյլայի հետ. չէ որ մեր շարիաթը հալալ է համարում չորս օրինաւոր կին ունենալը: Ես երկու տարի մնացի Քեալբլայում և Մէքքայում: վերադարձայ Թէհրան «հաճի Սէլիմ» փառաւոր տիտղոսով, բայց, ախ, երանի թէ, հէնց մարդարէի գերեզմանի վրայ մեռած լինէի և չը վերադառնայի: Իմ բացակայութեան ժամանակ հայրս մեռել էր և կտակ էր արել, որ եթէ ես Ալլահի կամքով մեռնեմ և չը վերադառնամ, իմ բոլոր գոյքը բաժանուի «քաղցածներին և տկոյրներին». կտակակատար էր կարգել Իմամ Ջումային, իբրև շարիաթի ներկայացուցչին, այս ստանալ կեղծաւորին, որ այժմ մեր առաջից անցաւ:

Սէլիմը կանդ առաւ. դառն յիշողութիւնները կարծես ճնշում էին նրա միտքը և հոգին և նա ընկաւ խոր մտածողութեան մէջ:

—Դէ, շարունակիր, շարունակիր, ասաց Իբրահիմը կարեկցութեամբ. Ալլահ թաալան ¹⁾ մեծ է և ողորմած:

—Այո, զուրբան լինեմ նրա զօրութեան. երեւի ճակատագիրս այդպէս էր: Որտեղ մնացի. հա, հայրս կտակակատար նշանակել էր Իմամ Ջումային: Հաղիւ անցնում է 4—5 ամիս հօրս մահից յետոյ, Իմամ Ջուման, որ արդէն դրաւել էր հօրս բոլոր ունեցածը իբրև կտակակատար, յայտնում է մօրս, թէ իբր ես ևս վախճանուել եմ Մէքքայում: Ես անում է Փաթմային իր

¹⁾ Ամենագոր Աստուածը:

տունը և մի քանի հարիւր թուման փող տալով մօրս՝ յայտնում է, որ կտակի համաձայն, հօրս մնացած բոլոր կարողութիւնը, Ֆաթմայի քեռքինի փողն դուրս գալուց յետոյ, պէտք է բաժանի «տկլորներին և քաղցածներին»։ Այդ նպատակով, նա, այդ անդուլթը, տկանջ չը գնելով մօրս լաց ու կոծին, աղաչանքին, ծախում է հօրս տունը, գիւղը, գոթը և փող չինում։ Հօրս կարողութիւնը 100,000 թումանից աւելի է լինում։

— Էհ, ինչ եղաւ. միթէ այդքան փողն էլ բաժանեց տկլորներին և քաղցածներին։

— Ինչպէս չէ, պատասխանեց հեգնութեամբ Սէլիմը, բաժանել է, բաժանել «տկլորներին և քաղցածներին»։ աղա իմամ Զուման «շարիյ» ¹⁾ է արել։

— Ի՞նչպէս, պատմիր շուտով։

— Այդ խաբեբան ամեն օր, առաւօտեան նամազը անելուց յետոյ, տկլորացնում է իր բաղմաթիւ կանանց և մանկակիներին և շար գցում իր մեծ սենեակում, ապա սկսում բաժանել այդ «տկլորներին» մի-մի ոսկի։ Երբ նրանք շորերը հագնում են, գարձեալ այդ ոսկիները բերում տալիս են իրան։ Այդպէս շարունակում է ամբողջ երեք ամիս. բացի գրանից ամեն օր, կէսօրին, գնում է հաւերի բակը, հրամայում է հաւանոցից բաց թողնել բոլոր հաւերին, որոնց սոված էին պահում մինչ այդ ժամանակ. երբ քաղցած հաւերը վրայ են թափւում, նա կուտի հեռ միասին թափում է և ոռկիներ, որ դարձեալ յետ է հաւաքում։ Այդպիսով, նա կատարում է հօրս կտակը, տալով նրա փողն «տկլորներին և քաղցածներին» ու «շարիյ» է անում։

— Վայ խաբեբայ, վայ սատանայ, ծիծաղեց Իբրահիմը. անխժածը ինչ խելօք է եղել։ Էհ, դու ճրտեղից իմացար այդ բոլորը։

¹⁾ Համաձայն շարիաթի. մահմեդական իրաւագէտների կարծիքով ամեն բան ներքի է, եթէ բռնացի մաքով համաձայն է շարիաթին։

—Մօրս պատմել է Լէյլան, որ Իմամ Զուլմայի սիրտս կ'ընեն ¹⁾ է դարձել:

—Լաւ, հապա երբ դու եկար, չը գնացիր, չը պահանջեցիր նրանից հօրդ հարստութիւնը:

—Ինչպէս չը գնացի. սակայն նա ասաց թէ շատ ցաւում է, որ այդպէս է պատահել. միայն, երեւի, այդպէս է եղել Ալլահի կամքը և իմ ճակատագիրը և ես իբրեւ բարի մուսուլման, պէտք է հնազանդեմ ճակատագրիս: Նա առաջարկեց ինձ, իբր պարգև իր կողմից, չորս հարիւր թուման, որն ես մերժեցի:

—Իսկ կ'ընդ, Ֆաթման:

—Ֆաթմային Իմամ Զուլման արդէն քեաբին էր կապել իր որդու հետ, իմ քեաբինի փողն լաւ մարսելու համար:

—Դէ, գնայիր, գիւանին գանգատ տայիր, Շահին արդ ²⁾ անէիր:

—Այդ բոլորն փոշիացի. մի փոքր գումար էլ, որ գեռ մնում էր մօտս, այն փողերից, որ Մէքքէ գնալիս հայրս առել էր ինձ, ծախսեցի, բայց անօգուտ. ով Իմամ Զուլմային թողած, իմ կողմս պէտք է բռնէր: Շահին էլ մի գեղեցիկ ազախին փէշքէշ արեց և ամեն բան վերջացաւ. քիչ էր մնում, բանտը նստեցնէին ինձ: Ամբողջ 5 տարի գատ վարեցի. խեղճ մայրս, ցաւին չը դիմանալով, մեռաւ: Ախ, հայր, հայր, ինչ լերեր դու մեր գլխին քս միամտութեամբ:

Եւ Սէլիմի այտերի վրայով գլորուեցին արտասուքի մի բանի կաթիլներ. դարձեալ խորասուզուեց իր մտքերի մէջ. գլուխը քաշ արած մտածում էր և Իբրահիմը, բայց չուտով ձեռքը գնելով ընկերի ուսի վրայ, փիլիսոփայօրէն ասաց. «ճակատագիրը անկարելի է ջնջել. փառք Փեղամբարին. յոյսդ. Ալլահից մի կտրիլ.

¹⁾ Բացի քեաբինի օրինաւոր չորս կնոջից, մուսուլմանները իրատեւք ունեն և սիրտ, հարճ պահել. սիրտին աւելի հեշտ է արձակել, քան քեաբինաւոր կնոջ: ²⁾ Ինգիրք, աղերսագիր:

առած է՝ մի առուից, որ ջուր է գնացել, էլի ջուր կը գնայ և չի ցամաքի։ Բայց այս ինչ զալմաղալ է. Ալլահ, Ալլահ, ինչ է պատահել։

Եւ երկուսն էլ գաւաղանները վեր առնելով վազեցին դէպի խիաբանի ծայրը, որտեղ մեծ աղմուկ ու իրարանցում էր նկատուում։

II

«Սալաւաթ, սալաւաթ, եա Ալի, մահ ջհուդներին» — ահա այն աղաղակները, որոնք լսում էին ամբոխի ժխորի մէջ։ Խառնիճանդանճ ամբոխի առաջից վազում էին ստնաբորիկ երեխաներ և փոքր քարեր իրանց փշերի մէջ ածած «ջհուդ, ջհուդ» ասելով ոստոստում էին. ապա դալիս էին սէյիդներ, թալաբաներ և մօլւաներ. մի բանի դարվիշ ևս, մազերնին գզգզուած, չաւաղները՝¹⁾ ուսերնին ձգած, տապարները շարժելով, «եա հակ, եա հու» գոռումներով թնդացնում էին օդը։ Ամբոխը գնալով-գնալով ստուարանում էր։ Մօտակայ փողոցներից վազում էին, փողոցի վրայ դռները բացւում էին և ամեն մարդ հարցնում էր. «ինչ խաբար է. ինչ է պատահել»։ «Ջհուդ-բուշան» է, պատասխանեց մի սէյիդ և այս խօսքի վրայ յանկարծ հարկւրուտոր բերաններից, գայլի ոռնոցի նման լսուեց մի ընդհանուր գոռոց՝ «ջհուդ-բուշան, ջհուդ-բուշան»։

—Սալաւաթ, սալաւաթ, նորից թնդաց օդը։

Յանկարծ լռութիւն տիրեց. ամբոխը կանգ առաւ խիաբանի մէջ տեղ. մի սէյիդի կապոյտ փաթոթաւոր գլուխը երևաց մի դռան սաքուի վրայ և ամենքի աչքերը դէպի նրան ուղղուեցին։

—Մուսուլմաններ, պոռաց սէյիդը, լսեցէք. տեսնում էք այս ջհուդ աղջկան. սա «միւրթաղ»²⁾ է, սա

¹⁾ Կամ քեաշկիւլ։ ²⁾ Ով իսլամութիւն ընդունէ և ապա ուրանալ, նա միւրթաղ է, արժանի մահուան։

ընդունել է իսլամը, այժմ ուրանում է. ինչ է սրա պատիժը:

—Մահ, ոռնաց ամբոխը, քարկոծ պէտք է անել:

—Բայց սպասեցէք, շարունակեց սէյիդը, չարիաթը կ'նոջ վերաբերմամբ մահուան պատիժ թոյլ չէ տալիս. նրան պէտք է յաւիտեան բանտարկել և ամեն օր, նամազի ժամանակ, գանահարել. սակայն գուցէ նա յետ գառնայ իր անօրէն գէնից. գուցէ այս անիծեալ ջհուդներն են նրան խելքից հանել, տանենք սրանց աղայի մօտ և սպասենք թէ ինչ ֆէթվա կը տայ աղան ¹⁾:

—Գնանք աղայի մօտ, գնանք աղայի մօտ—պոռաց ամբոխը, մուռտառ ջհուդները համարձակում են նախատել իսլամի կրօնը, մեր չարիաթը, մահ նրանց, ժամանակ է «ջհուդ-քուշան» սարքել:

Եւ նորից «սալաւաթ, սալաւաթ» կանչելով, սոսկալի ժխորի և աղմուկի մէջ, մուեռանդ ամբոխը շարունակեց իր ճանապարհը, բայց, յանկարծ, կարծես մի խոչընդոտի հանդիպելով, կրնկի վրայ յետ դարձաւ և մի բոպէում այնպիսի շփոթութիւն ու իրարանցում պատահեց, ու փախչող փախչողի եղաւ օր, ինչպէս տւում են, շունը տիրոջ չէր ճանաչում:

«Հարամդադաներ, փեգէր-սուխտաներ, այս ինչ աղմուկ է, որ բարձրացրել էք. հէնց այժմ Շահը կերևայ, ճանապարհ բացէք. խփէք դրանց վզակոթերին», —լսուեց մի խրոխտ և թնդալից ձայն, որ ստիպեց շատերին փախուստ տալ. ճիպտաները, գաւազանները աջ ու ձախ թափւում էին սրա նրա գլխին. «վայ ուզես, վայ գլուխս, վայ ուսս» աղաղակները խառնւում էին երեխաների ու կանանց վայնասունի հետ:

Հրաման արձակողը, իրարանցումն առաջ բերողը թէհրանի Ռէզլար բէգին ²⁾ էր, որ վրայ էր հասել ֆէր-րաշներով, լսելով աղմուկ և, զարհուրած՝ մնացել էր,

¹⁾ Ֆէթվա—վճիռ, իսկ աղա բառով սովորաբար հակացում է կրօնապետը: ²⁾ Ոստիկանապետ:

տեսներով որ ճանապարհը բռնուած էր ամբողջով: Ամեն
րոպէ կարող էր փչուել պալատից Շահի ելքը ծանու-
ցանող շեփորը և վայը եկել տարել էր Բէգլար բէգուն,
եթէ Շահի հանգիստաւոր գնացքը որեւէ խոչընդոտի հան-
գիպէր ճանապարհի վրայ: Բէգլար բէգին կարծես որ-
դէն զգում էր իր ոտների վրայ Փալախկայի հարուած-
ները, որոնց, անպատճառ պէտք է ենթարկուէր, եթէ
Շահը վրայ հասնէր: Այդ պատճառով Բէգլար բէգին
ձին քշելով, անդադար յորդորում էր Փէրրաշներին և
շաթիրներին ցրուել ամբոխը. Փէրրաշները, նրա առա-
ջից գնալով, աջ ու ձախ ճիւղոտի հարուածներ հա-
ցնելով սրա նրա գլխին, ճանապարհ բացեցին ամբոխի
միջով, մինչև հասան աղմուկի կենտրոնը և Բէգլար
բէգու առաջ հետեւեալ տեսարանը պատկերացաւ: Փեռ-
սի վրայ չորած էր և ձեռները դէպի երկինք բար-
ձրացրած մի ծերունի. երկար, բուխարէ մորթուց գլխ-
խարկը ընկած էր նրա առաջ. գլուխը ածիլած էր. ե-
րեսը արիւնշաթաթախ, մօրուքը, որ հասնում էր մին-
չև գօտին՝ գզգզուած էր: Գօտին բացուած, կուրծքի
վրայ, աջ կողմին, գորշ զատաբից կարած արխալուղի
վրայ կարուած էր մի կլոր կարմիր կտոր, սրից խկոյն
կարելի էր իմանալ, թէ նա հրէայ է, «Վհուդ» է. այդ-
ցոյց էր տալիս և դէմքի նուրբ գծադրութիւնը: Ծե-
րունին, ոչ մի ուշադրութիւն չէր դարձնում իր ուսե-
րին, մէջքին, երեսին անդադար տեղացող հարուած-
ներին և ապտակներին, այլ անմուռն, աղերսաւոր
նայուածքով նայում էր հասարակութեան և հեծեծում:
«աման, աման, ձեր մարգարէի խաթրին խնայեցէր. աղ-
ջը կանս ձեռք մի տաք»: Եւ ձեռքով ցոյց էր տալիս
գետնի վրայ պաղած մի կնոջ, որ ամբողջովին փաթաթ-
ուած էր չարչաւի մէջ և սրի չորս կողմը կանգնած
էին մի քանի սէյիդներ ու մօլլաներ, չրջանակ կաղմե-
լով. երևում էր, որ կինը լացում էր, որովհետև ու-
սերը շարժում էին, ինչպէս շարժում են հեծկլտան-
քի ժամանակ: Ծերունու կողքին երեսի վրայ գետնին

ընկած էր մի երիտասարդ, որ ամեն անգամ, երբ գլուխը բարձրացնում էր և որևէ շարժում էր անում, իսկոյն հայհոյանք, թուր, հարուած տեղում էին նրա վրայ. նրա գէմքը արտայայտում էր խորին կսկիծ, երևում էր, որ նա գրեթէ անզգայ էր դարձել և անտարբեր էր ամբոխի իր վրայ թափած հարուածներին, հայհոյանքներին: Չը նայելով որ գէմքը թաթախուած էր փոշու մէջ և սւռած՝ ստացած հարուածներից, բայց գծագրութիւնը և հազիւ բուսած ընչացքը ցոյց էին տալիս, որ նա գրեթէ մի պատանի է, հազիւ 20—22 տարեկան. նրա կրծքից ևս կպցրած էր սիմբօլական կարմիր նշանը և երբեմն լսում էր նրա կրծքից խուլ հառաչանք:

—Ինչու էր այս մարդկանց բռնել, ինչու էր ծածում՝ սրանց, ինչու է լացում այս կինը—պոռաց Բէգլար բէգին. փեղէր-սուխտաներ, միթէ Շահը մեռել է, միթէ գիւան չը կայ: Պէրրաշներ, ցրուեցէր այս ամբոխը:

—Սպասիր, խոն, առաջ եկաւ մի ծերունի սէյիդ. այս բոլորը կատարւում է ազա Իմամ Զումայի հրամանով: Այս կինը—և մատով ցոյց տուեց գետնի վրայ պալգած կնոջ—ահա այս սէյիդի կինն է, բեաբինի կինը. բայց այս մուստաֆ ջհուդները փախցրել են նրան և գլխից հանել ու ջհուդ դարձրել. նրանց պատիժը մահ է:

—Ճշմտիւն է ասածը, ջհուդ,—դարձաւ Բէգլար բէգին ծերունի հրէային. վեր կաց, պատմիր տեսնեմ, ինչ ես ասում:

Ծերունին կռացաւ, վերցրեց գլխարկը, և գլխին դնելով, ստրի կանգնեց ու խոր գլուխ տալով, ասաց.

—Խոն, քո գլուխդ վկայ, Շահի ազիզ գլուխը վրկայ, այդպէս չէ. այս աղջիկը, Խոթերը, իմ մինուջար զաւակն է, այս զուլի¹⁾—և ծերունին ցոյց տուեց

¹⁾ Զուլ—ստրուկ. փոքրերը մեծերի հետ խօսելիս, այդպէս են անուանում իրանց:

մատով գետնի վրայ դեռ ընկած պատանուն—նշանածն է. շուտով հարսանիքը պէտք է լինէր, բայց մեր թաղի հօրեան այս սէյիդը հինգ օր սրանից առաջ ուժով իրանց տունն է քաշում աղջկան, երբ նա աղախնի հետ փողոցով անցնում էր, և պահում: Երէկ երեկոյեան, դուռն բաց դռնելով, աղջիկն կարողանում է փախչել և վերադառնալ տուն, և երբ մենք պատրաստուում էինք դալ ձեզ դանգատի, յանկարծ թափուեցին մեր վրայ Իմամ Զուլմայի մարդիկը և մեզ թակելով, հայհոյելով դուրս քաշեցին, ասելով, որ իբր մենք մուսուլման կին ենք փախցրել. ծեծելով, հայհոյելով, թքելով բերին մինչև այստեղ. միթէ մենք Աստծու ստեղծած չենք, միթէ մենք Շահի հպատակ չենք:

—Սուտ է խօսում այդ անօրէն ջհուդը, դոռաց հրէայ աղջկայ գլխին կանգնած մի երիտասարդ սէյիդ. սա իմ քեաբէնաւոր կինս է, սա մուսուլման է. ահա թող մօլլա Քեազիմը վկայի:

—«Աչադան-Ալլահ»¹⁾, առաջ գալով վկայեց մօլլան աչքերը խոր ընկած, գաւազանի վրայ յենուած, թատբէհը²⁾ ձեռքին բռնած մի ծերունի. ևս եմ սրանց բեաբինը կտրել, ևս եմ «բեաւէի շահադաթը»³⁾ լսել այս ջհուդ աղջկայ բերանից, զարմանում եմ, որ այդ գինսը ջհուդը փոխանակ ուրախանալու, տխրում է. փառք տուր, ջհուդ, Ալլահին, որ աղջիկդ ջհաննամի փայ դառնալու, բհեշդի⁴⁾ փայ պէտք է դառնայ:

—Խան, երգւում եմ մեզ Ստեղծողով, որ մի է, մօլլան սուտ է խօսում: աղջկանս վախեցրել են, թէ կը սպանեն, եթէ չը կրկնի, ինչ որ իրանք ասում են և բեաբինն էլ իրանք են կատարել զօռով. բեզ երդուեցնում եմ Շահի ջըդգայով⁵⁾, վերահասութիւն գործիր և այն ժամանակ կը տեսնես, որ ասածներին մէջ մի զարրոյ⁶⁾ սուտ չը կայ. հազրաթ Մուսան⁷⁾ գլխիս

1) «Վկայ է Աստուծոյ»: 2) Տէրողորմեաց: 3) Հանգանակ հաւատոյ: 4) Արքայութիւն: 5) Թագ: 6) Նշանախեց: 7) Մովսէս մարգարէն:

խոսով կենայ, ինձ տուր թիբա-թիբա¹⁾ անեն, եթէ սուտ դուրս գամ: Եսթեր, զաւակս, պատմիր խանին եղելութիւնը:

Բէգլար-բէգին շուարած մտացել էր. յանձնել աղջըկան հօրը, անկարելի բան էր. այդ կը նշանակէր գրգռել Իմամ-Ջումայի բարկութիւնը և մեծ վտանգի ենթարկել հրէական թաղը, մանաւանդ որ սովորական ջհուդ-քուշանի օրը մօտենում էր. թող տալ որ սէյիդները տանեն աղջկան, այդ ևս անկարելի էր, որովհետեւ հրէաները կարող էին դիմել Շահին. վերջապէս, անգլիական գետպանը կարող էր միջամտել և խնդիրը կարող էր շատ բարդուել:

Այդ միջոցին յանկարծ լսուեց շեփորի ձայնը. «Շահը գալիս է, Շահը գալիս է», լսուեց ամեն կողմից: Բէգլար-բէգին զարհուրեց. բոլեապէս նա վճռեց իր անելիքը: «Ճշտ, շուտ—հրամայեց նա,—ջհուդներին և աղջկան տարէք աղայի տունը և այնտեղ սպասեցէք ինձ. հէնց որ գըլլէյի-ալէմը²⁾ կ'անցնի, ես կը գամ և աղայի ներկայութեամբ վերահաստեղծիւն կը տանք գործին. դուք էլ, աղա սէյիդներ, գնացէք աղայի մօտ»:

Դառնալով ապա իր կողքին կանգնած Սէլիմ շաթիրին, նա մի քանի խօսք փոփոսաց նրա ախանջին, և ապա, բարձրաձայն ասաց.

—Հաջի Սէլիմ, տար ջհուդներին աղայի տունը և հսկիր, որ նրանց ոչ ոք չը նեղացնի. այժմ հեռացէք ամենքդ, կորէք. քշեցէք ամենքին:

Փէրրաշների, շաթիրների ճիպտաները նորից բարձրացին օդի մէջ և սկսեցին տեղալ ամբոխի գլխին: Այն միջոցին, երբ Սէլիմ շաթիրը հրամայեց գետնի վրայ ընկած երիտասարդ հրէային վեր կենալ և հետեւել իրան միւս հրէաների հետ, երբ ծերունի հրէան բռնեց Եսթերի ձեռքից, երիտասարդ սէյիդը մօտեցաւ երիտասարդ հրէային և ասաց.

1) Կտոր-կտոր 2) Աշխարհի աղօթարան:

... — Եթէ իմ կնոջ մօտենաս, երեսին նայես, տեղն ու տեղը կը սատկեցնեմ քեզ, մուռտառ ջհուդ:

Հրէան ոչ մի պատասխան չը տուեց. կարծես նա չը հասկացաւ, նոյն իսկ չը լսեց սէյիդի առածը, այլ մերենայաբար հետեւեց շաթիրին:

Շեփորը նորից փչուեց, այս անգամ աւելի զօրեղ և աւելի թնդալից. դա նշան էր, որ արեղակնափայլ Շահը պալատի դարպասից դուրս գալով, իր մուքարէք¹⁾ ստըը դրել էր ձիի առաջնդակի մէջ: Նորից ճիպոտները, դաւաղանների հարուածները տեղացին աջ ու ձախ ամբոխի վրայ. շաթիրները շարուեցին իրանց տեղերը և մի ըսպէսով գերեզմանային լուծիւն տիրեց. ամբոխը, խաբանի երկու կողմին, պատերի տակ շարուած, շունչը փորը դցած, սպասում էր. շատերը շտապ-շտապ հագնում էին իրանց շուքբանների և աբաների թեքերը²⁾:

Բէգլար-բէգին մի վերջին հայեացք գցեց ամբոխի վրայ. նրա սիրտը թրթռում էր վախից. «ողորմած Աստուած, տուր անփորձ անցնել այս ըսպէն», մրմնջում էր նա: Նա լուս գիտէր, որ բողոքաւորները, հարստահարեալները, միջոց չունենալով իրանց արդը³⁾ հասցնել Շահին, այդպիսի օրերն են ընտրում Շահի առաջը կտրելու և իրանց դանդաւոր անելու. վայն եկել տարել է Բէգլար-բէգուն, եթէ Շահը վատ տրամադրութեան մէջ լինի. եթէ ստրերը ֆալախկայի չարժանանան, յամենայն դէպս զրպանը սաստիկ կը տուժէ. մի քանի հարիւր, գուցէ և հազար էջրէֆլիներ⁴⁾ պէտք է մատաղ անել Շահի ղլխին և սագրաղամին: Սակայն նա կասկածելի ոչ ոքի չը նկատեց ամբոխի մէջ. բացի դրանից նա ամեն միջոց ձեռք էր առել. իր ֆէրրաշները պատուէր էին ստացել հսկել, որ ոչ ոքի չը թո-

1) Օրհնակ, շնորհաւոր. 2) Սովորութիւնը պահանջում է, որ երբ փորրը ներկայանալ մեծին, ի նշան խորին յարգանքի, վերարկուի թեքերը պէտք է հագած լինի և ոչ վերարկուի մէջ փաթաթուած. 3) Խնդիրք. 4) Ոսկի:

զեն մօտենալ: Այնուամենայնիւ Բէգլար-բէգին հանգարաւ չէր և հոգին խռոված էր. գիշերը վատ երազներ էր տեսել և ժամանակ չէր ունեցել գնալ երազահան միրզա Դարաբէին հարցնելու: «Է՛հ, մաածեց նա, ինչ որ զըսմէթ ¹⁾ է, այն կը լինի»:

Երրորդ անգամ հնչեց շեփորը և Դարը-Ալմասիէի (ալմաստի դուռ) անկիւնից երեւաց հանդիսաւոր գնացքի ծայրը:

III

Ամենից առաջ գալիս էին զամբուրակիչները ²⁾ ուղտերի վրայ նստած և զամբուրակները առաջին դրած. ապա գլուռնահաղարէն ³⁾: Նրանց հետևում էին հարկաւարաւոր ֆէրրաշներ, ճիպոտները ձեռքին և զոռալով. «տո՛ւր բաշ, բրօ, բրին» ⁴⁾. ապա գալիս էին շաթիրները կարմիր մահուգի հագուստով, խայտաճամուկ փետրաւոր գլխարկներով, արծաթեայ թօփուղներով և զեղին լապշիներ հագած: Շաթիրներից յետոյ միրօխօռները ⁵⁾ «եղակով» ⁶⁾ տանում էին Շահի նշանաւոր արար և թիւրքմէն նժոյգներից մի քանիսը, զարդարուած թանկագին մետաքսեայ զինփուշով ⁷⁾, ընդելուզուած մարգարտով, սակէ րախտով ⁸⁾. մի րանիսի ճակատին րախտի մէջ փայլում էր ագամանդ. կամ մի այլ գոհար—զմրսլստ, յակինթ: Նժոյգների ագինները ներկուած էին ծիրանի գոյն՝ արքայական նշան: Եղակներից յետոյ մի ամբողջ տարածութիւն բաց էր մնացած: Եւ նորից սկսւում էր գնացքը միրզազարներով (գահիճներով), որոնց կարմիր հագուստը, ձեռքին բռնած տապարները և մետաքսէ պարանները իսկոյն որոշում էին նրանց պաշտօնը—տապարի հարուածով կամ պարանի

1) ձակատագիր 2) Ջամբուրակ, փոքր թնդանօթներ, տանելի ուղտերի վրայ, զամբուրակիչի—թնդանօթաձիգ 3) Ջուռնի, թմբուկի ամբողջ սարքը 4) Հեռու կանգնիր, գնա, կորիր 5) Ախոռապետ 6) Հետևակ 7) Մածկոց թամբի, 8) Սարք—տանձ:

կապով տեղնուտեղը պատժել այն յանդուգն անձին, որ կը համարձակէր իր վրայ դրդուել գըբլէի-ալէմի (աշխարհի աղօթարանի) բարկութիւնը: Դահլիճներէց յետոյ ընթանում էին խառ փիշխըդմէթները ¹⁾, թիրմաշալի հագուստներով: Ապա ծանրաբայլ դալիս էր «վէզիրը թէշրիֆաւը» ²⁾—Ջահիր-Դովլէն, պարսիկ հին մուսուտֆիների պալատական հագստով—երկար թիրմա նուրը շալի վերարկուով, եղբերը ընդելուզուած մարդարիտներով և մարգարտեայ ծոպերով, գլխին դրած նոյնպէս շալի փաթով, գօտիի մէջ խրած՝ զայսմբան ³⁾ և ձեռքին լռնած ոսկէ թօփուղ: Նրան հետևում էր արդէն Շահի ձիի առաջից մեծ վիզիր ծերունի Հաջի Միրզա Աղասին, թիրմա շուբբան հագած, եռանկիւնեայ բուխարէ մօրթի երկար գլխարկը ծածկած և սպիտակ ներքնավարտիքով և կանաչ սրածայր չմէկներով ու մի երեսնայ գաւազան ձեռքին բռնած: Վերջապէս, մի հիանալի չքեղ սպիտակ նոյգի վրայ նստած երեսայ Մահմէդ-Շահը, աշխարհի աղօթարանը. ժողովուրդը մինչև գետին գլուխ էր ծռում ամեն անգամ, երբ Շահը նայում էր այս և այն կողմը. ձին ամբողջովին կորած էր ակներով ընդելուզուած ոսկէ լախտի մէջ, իսկ ճակատին փայլում էր մի խոշոր ադամանդ. ասպանդակները համակ ոսկուց էին: Ինքը Շահը հագնուած էր այնպէս, ինչպէս հագնում էին իր սլապ ֆաթալի-Շահը և իր հայր անուանի Աբբաս-Միրզան: Գլխին դրած էր մօրթէ եռանկիւնի, լայց կարճ քուլահ ⁴⁾, որի մէջ տեղ, ճակատին պնդացրած էր փոքրիկ ջրգդան, չահուլթեան նշանը. դա մի շարք խոշոր ադամանդներից շինած առիւծի և արեգակի—Շիր ու Խուրշուդի պատկերն է: Թանկագին սամուր քիւրքի ⁵⁾ տակից երևում է թիրմաշալի բաճկոնակ, որի վրայ կապած էր լայն թիրմա գօտի, որից կախ էին ընկնում սխեռի պէս խոշոր մե-

1) Պալատական կամերգէրներ: 2) Մեծ արարողապետ: 3) Գրչաման: 4) Գլխարկ, փափախ: 5) Մուշտակ:

ծուլթեան մարգարիտների երկու ծուլեր, այդ գօտու մէջ խրուած էր արքայական թուրը, պատեանը ամբողջովին ագամանդից, յակնթից, զմրուխտից շինած: Թեքին կապած ունէր ոսկէ բազպաններ, նոյնպէս խոշոր գոհարներով բանուած, ոտքին հագած ունէր զինուորական կամ սէֆերի (ճանապարհորդական) երկար կօշիկներ: Դէմքը հիւանդոտ էր. մօրուքը, հակառակ իր պապի և հօր սովորութեան, երկար չէր թողած. մազերը խինայած էին, ինչպէս և եղունգները:

Ամբօխի երկրպագութիւններին նա ոչ մի նշանով չէր պատասխանում. երբեմն-երբեմն նրա դէմքի վրայ երևում էր քմծիծաղ: Ձիի երկու կողմից գնում էին դարձեալ խառ փիշխըդմէթները, մի քանի մուստօֆիներ¹⁾, ապա գալիս էին զէյլանչիները, շերբէթչիները, ձիի վրայ նստած և իրանց պաշտօնին վերաբերեալ ամբողջ սարասով—սարք ու կարգով. նրանցից յետոյ գալիս էին թիկնապահ ձիաւորները կամ զարափափախները, ոտքից գլուխ զինուած: Ապա գալիս էր մի ամբողջ կարաւան ջորիների, եռխտաններով²⁾, մաֆրաշներով, թամբալիտներով բեռնաւորուած:

Երբ Շահը մօտեցաւ Ալմասիէ խիաբանի մեծ կամարաւոր դռան՝ Թօփխանի մէյդանը մտնելու համար, նա զիմեց ծերունի մեծ վիզիրին և ասաց. «Աթա, մուրախխաս ես³⁾, այժմ գնա ձի նստիր»:

Սովորութեան համաձայն, մեծ վիզիրը և մեծ արարողապետը պէտք է ուղեկցեն Շահին օտքով մինչև քաղաքի դուռը, բայց Մահմէդ Շահը, որ իր մեծ վիզիրին աթա, հայր անունն էր տալիս միշտ, չէր կամենում ենթարկել ծերունուն յոգնածութեան, ուստի և ի նշան շահնշահական առանձին բարեհաճութեան, թոյլ չը տուեց նրան շարունակել: Հաջի-Միրզա-Աղասին իսր գլուխ տալով, համբուրեց Շահի փէշերը և յետ դար-

1) Պետական քարտուղար 2) Սնդուկ 3) Երբ մեծերը կամենում են արձակել իրանց ներկայութիւնից փոքրերին, ասում են «մուրախխաս» (սղատ ես):

ձաւ նստելու իր ձին, որ իր միրախօրը ետեւից բերում էր, բայց հազիւ ոտքը դրել էր ասպանդակի մէջ, որ յանկարծ տեղի ունեցաւ մի սարսափելի դէպք. տիրեց մի ընդհանուր իրարանցումն, որի մէջ լսւում էր միմիայն «Ալլահ, Ալլահ» ձայները, իսկ յետոյ լսուեց Շահի խրոխտ և բարկացոտ աղաղակը. «Հաջի-Միրզա-Աղասի». ծերունին հեալով, «զուրբան, զուրբան¹⁾, այստեղ եմ» ասելով, վազեց առաջ:

Ճիշտ այն րոպէին, երբ Շահի ձին անցնում էր մեծ դռան կամարի տակով, յանկարծ ամբոխի միջից մի անծանօթ մարդ ցայտեց դռան սէքուի վրայ և ձեռքին բռնած մի թուղթ բարձրացնելով գլխի վրայ, պոռաց. «Դուրբան, արդ ունեմ. առ այս իմ կեանքն էլ, թող իմ արիւնը քո վզին մնայ, եթէ աղալած²⁾ չանես իմ որբերին. դատ, դատ անիրաւ Բէգլար-բէկու ձեռքից»: Եւ արտասանելով դատ, դատ խօսքերը, նա հանեց գօտու մէջ խրած մի փոքր դաշոյն և կոխելով փորի մէջ, ընկաւ գետին, ձեռքերը պարզած, երեսի վրայ:

Շահը լաւ տեսաւ, թէ ինչպէս մարդի փորձաքննելը, աղիքը թափուեցին, և ձեռքով աչքերը ծածկեց. ձին խրանեց և քիչ էր մնում վայր դնորի Շահին, եթէ միրախօրները վազելով, չը բռնէին սանձից: Շահը հասկացաւ. կատարուեց մէկը այն տեսարաններից, որ անխուսափելի են բռնապետական երկրներում. այդտեղ, բողոքաւորը, հարստահարուածը, երբ բոլոր ատեաններին գլխուկաց, բոլոր դռները բաղխելուց յետոյ չէ կարողանում արդարագատութիւն գտնել, յոյսը կըտրում է այլ ևս մարդկային արդարութիւնից, նա դիմում է վերջին, յուսահատական միջոցին, բողոքի ծայրայեղ արտայայտութեան. նա անձնասպանութիւն է գործում Շահի կամ կուսակալի աչքի առաջ, իր արեան

1) Մինխտրնիքը, պալատականները Շահին գլխիկա՝ «Ձերդ Մեծութիւն» տեղուտեղ, ասում են «զուրբան», մատաղ: 2) Արդարապատութիւն:

պատասխանատուութիւնը նրանց վրին է դրում, որպէս զի արթնացնի նրանց խթմտանքը, ստիպէ նրանց արդարութիւն անել և պատժել հարստահարողին: Նա դրանով բողոքում է Ալլահին՝ Շահի ձեռից:

Անձնասպանը, թէև երեսի վրայ ընկած, բայց թուղթը դեռ ձեռքին բարձր բռնել էր:

«Շուտ, շուտ, տեսէք մեռել է, թէ կենդանի է, հրամայեց Շահը, առէք ձեռքից թուղթը և տուէք Հաջի-Միրզա-Աղասուն»:

Փիչխրտմէթները վազեցին. թշուառը դեռ չնչում էր. փորտիքը ամբողջովին դուրս էին թափուել. նա չչնչում էր շարունակ. «իմ տունս քանդողին տունը Ալլահն քանդի, Եզիդի, Շիմրի ¹⁾ ընկեր դառնայ»:

«Բէգլար-բէգին, ուր է փաղար-սուխտէ Բէլգար-բէգին, պոռայ յանկարծ Շահը, երբ մի ակնարկ ձգեց անձնասպանի ձեռքից առած և իրան մատուցած թղթի վրայ ու յանձնեց մեծ վիզիրին. տարէր այդ խեղճին մի տեղ, կանչեցէր ջարրահ-բաշուն ²⁾ և թող բժշկի նրան»:

Ապա դառնալով մեծ վիզիրին, հրամայեց.

—Վերահասութիւն տուր դործին և յայտնիր ինձ. այժմ ինչ ես ասում, շարունակե՛նք ճանապարհը թէ ոչ:

—Ո՛չ, զուրբան. անկարելի է, լաւ նշան չէ այս բոլորը, պէտք է վերադառնալ պալատ, պատասխանեց մեծ վիզիրը:

Շահի դէմքը մթադնեց. աչքերի մէջ փայլեց մի բոպէ բարկութեան հուր, բայց, առանց առարկելու, դարձրեց ձիի սանձը, մեծ վիզիրը առաջը ընկաւ, և կանչելով Ֆէրրաշ-բաշուն, ասաց.

—Շղթայեցէք Բէգլար-բէգուն, տարէք պալատի բանտը, պահեցէք մինչև ինձանից նոր հրաման ստանալը:

Խեղճ Բէգլար-բէգին, որ այդ բոպէին մկան ծակը

¹⁾ Ամենամեծ անէծքը, որ մի շիա մահմեդական կարող է տալ շիաին, Եզիդը և Շիմրը Իմամ Հուսէյն և Հստանի հալածողներն ու սպանողն են եղել: ²⁾ Վիրաբույժների գլխաւորը:

հարիւր հազար թումանով կ'առնէր, կուշ եկած, անմուռնչ սպասում էր իր ճակատագրին, ուստի երբ ֆէր-բէշ-բաշին մօտեցաւ չլթաներով, նա միայն արտասանեց.

—Ա՛խ, երազս կատարուեց:

Նորից շեփորները փչեցին և ներքինները, իմանալով Շահի անակնկալ վերադարձը, լեղապատառ վազեցին հարեմխանան՝ հսկելու կարգապահութեան վրայ:

Շահը շտապով վերադարձաւ պալատ և հազիւ իջաւ ձիուց ու մտաւ ներքին պարտեզը, որ հրամայեց. «Գտէք որտեղ որ է այդ փաղարսուխտէ մունէշիմ բաշուն ու քաշ տալով բերէք այստեղ, մի տեսնեմ թէ այս ինչ խէր օր էր, որ նա գուշակեց մեզ»:

Էշիկ-Աղասի բաշին ¹⁾ վազեց կատարելու Շահի հրամանը, բայց մունէշիմ-բաշին, որ փորձով գիտէր, թէ որքան վտանգաւոր է Շահին ներկայանալ նրա բարկութեան առաջին րոպէներում, արդէն իր գլխի ճարձ տեսել էր. կամենալով ազատել ոտքերը ֆալախկայից, նա փախել բէսա ²⁾ էր մտել Շահի ախոռատունը, մինչև որ անցնի Շահի բարկութիւնը և փորձանքը հեռանայ իրանից:

Այն րոպէին, երբ գօտին քանդուած ու ոտնաբոբիկ մունէշիմ-բաշին փախչում էր դէպի ախոռատունը և կարողացաւ գցել իրան այնտեղ, նա զարմացրով նկատեց, որ երկու հրէայ, մէկը ծեր, միւսը երիտասարդ և մի հրէայ աղջիկ, նոյնպէս լեղապատառ, վազում էին դէպի ախոռատունը և նրանց ետևից վազում էին մի շաթիր ու մի սէյիդ, վերջինս գոռում էր. «Բռնեցէք, բռնեցէք մոռտառ ջհուգներին»:

Բայց հրէաները, հեալով, քրտնած, արդէն կարողացան մտնել ախոռատունը, մանաւանդ որ շաթիր Ալիմը շատ էլ եռանդ դնո՞ւմ չէր դնում հասներու նրանց:

Հրէաները նոյնպէս բէսա էին մտնում Շահի ախոռատունը, ինչպէս և մունէշիմ-բաշին, այստեղ այլ ևս

¹⁾ Պալատական գվարդիայի սերունդ ²⁾ Ապստամբ:

ոչ ոք, նոյն իսկ ինքը Շահը, չէր կարող հալածել նրանց
և նրանք ապահով էին:

Սէյիդը ստիպուեց քսու ու փոշիման յետ գնալ,
իսկ Սէլիմ շաթիրը, ծիծաղելով նրա ետեւից, ասաց.

— Սէլիմը դեռ շատ օյիններ կը բերի աղա Իմամ
Ջումայի գլխին:

Նա ուրախ էր, որ կարողանում էր իր վրէժը առ-
նել, միևնոյն ժամանակ մի քանի տասնեակ թուման,
ի հարկէ կը ստանար ջհուղներից, որոնց նա հնարաւո-
րութիւն տուեց փախչել և բէստ մտնել Շահի ախո-
ռատունը: Նա կարողացել էր ճանապարհին փոփսալ
ծեր հրէայի ականջին, թէ ինչ պէտք է անել. այդ
միտքը յղացել էր հնարագէտ Բէգլար-բէգին: Սէլիմը
դեռ չը գիտէր վերջինիս գլխին հասած փորձանքը,
ուստի և ասաց. «Այժմ գնամ արդ անեմ Բէգլար-բէգուն,
որ իր հրամանը ճշտութեամբ կատարեցիս Ո՛հ, որքան կը
կատաղի Իմամ-Ջուման, որ որսը ձեռքից ազատուեց»:

Երբ գլխաւոր միրախօրը եկաւ և արդ արեց Շա-
հին, թէ մունէջիմ-բաշին բէստ է մտել, նա յայտնեց
միևնոյն ժամանակ, որ ջհուղներն ևս բէստ են մտել
ախոռատունը:

Շահը քահ քահ ծիծաղեց և, դառնալով մեծ վի-
զիրին ասաց.

— Տեղն է, թող այժմ ջհուղների հետ քնի վեր
կենայ. ես իմ Աստուածս, լաւ պատժուել է միւնէջիմ-
բաշին. այդ նա չէր գուշակել, թէ չէ բէստ չէր մտնի.
այժմ նրա նամազը բաթըլ¹⁾ կը լինի:

Եւ աշխարհի ազօթարանը անցաւ իսլավաթիւանէն,
ուր պատրաստուած էր նհարը²⁾:

ՇԱՀՐԻԱՐ

(Կը ճարտարագիտի)

1) Մուսուլմանի համար նամազը բաթըլ է, անրնպոնելի է Ալլահին,
եթէ մուսուա ըմնի պատահի նամազ տնելիս: 2) Նախաճաշը:

ԱՇՈՒՂԻ ԵՐԳԵՐԻՑ

1

Ի Մ Ս Ա Ձ Ը

Սազ եմ առել,
Աշուղ դառել,
Սիրտ եմ դըրել իմ սազում:
Սըրտի վերք եմ,
Սըրտի երգ եմ
Սազիս ձենով ձեզ ասում:..

Ձեզ անհատնում
Դարդ եմ պատմում,
Դուզուն-դարդ կայ իմ սազում:
Է՛ն եմ երգում,
Ի՛նչ կայ կեանքում—
Կեանքի երգ եմ ձեզ ասում:..

2

Մ Օ Ր Դ Ա Ր Դ Ը

Ե՛ս սիրտ տուէք, որ դիմանամ
Գըլլիս ընկած ժեռ քարին,
Ե՛ս մահ տուէք, որ չիմանամ
Ազիզ բալէս ո՛ւր տարին...

Մեր չէն գեղը կըրակն առաւ,
Կըրակն ընկայ է՛ն օրէն.
Գեօղալ բալէս թուրքը տարաւ...
Տո՛ւնըդ քանդուի, մնօրէն:

Սե եմ հագել, սուգ եմ անոււմ,
Վա՛յ եմ տալի սե գըլլիս.
Քեզ եմ կանչում—ձէ՛ն չես հանում,
Ո՞ւր ես, ո՛ւր, իմ աչքի՛ լիս...

Ա՛խ, սիրտ տուէք, որ դիմանամ
Գըլլիս ընկած ժեռ քարին.
Ե՛ս մահ տուէք, որ չիմանամ
Ազիզ բալէս ո՛ւր տարին...

3

ԷՐՈՒԱԾ ՍԻՐՏ

Սըրտիս խորքում խոր ցաւ ունեմ,
Վայ, իմ ցաւին գեղ արէք,
Գլուխըս կորցրել, նոր ցաւ ունեմ,
Կորած գըլխիս աեղ արէք...

Աղջիկ տեսայ, ալ-վարդի պէս,
Վարդ-յոյսերով սիրեցի,
Երգ ու վերքըս, մարգարտի պէս,
Ոտքի տակը փռուեցի...

Բայց նա անցաւ, ախանջ չարաւ,
Սիրաքս ընկաւ ցաւ ու կրակ,
Նա կըխճորեց, մըտիկ չարաւ—
Ի՞նչ էր փռած ոտքի տակ...

Սըրտիս խորում խոր ցաւ ունեմ,
Ա՛խ, իմ ցաւին ճար չը կայ,
Սըրտիս վըրէն ժեռ քար ունեմ,
Էդ քարն առնող եար չը կայ...

4

ՂԱՐԻՔԻ ԵՐԳԸ

Օ՛խաը տարով, ճխաը սարով,
Այ սիրեկան իմ աշխարհ,
Հեռացել եմ քեզնից լալով,
Ղարի՛ք ընկել սարէ-սար:

Կեանք եմ մաշում, սև օր քաշում,
Ընկած խալիսի դըռներին,
Քու սէրն է ինձ էրում, մաշում,
Հոգի՛ս կը տամ էդ սէրին...

Կ'ուզեմ հողիդ կարօտն առնեմ,
Հող ու ջրիդ ես զուրբան.
Բայց ճնց անեմ՝ ճամբէդ բըռնեմ,
Բախտն է կապել իմ ճամբան...

Վա՛յ զարիբին—օրը՝ օր չի,
Վայով կեանքն է անցընում:
Դուրսը մեռնի, չօլում կորչի—
Ո՞վ է խեղճին հարցընում...

Ա՛յ, ԾԱՏՈՒՐԵԱՆ

ԲՈՒՐԴԻ ՎԱՃԱՌԱԿԱՆՈՒԹԻՒՆՍ

(Թրքահայոց «Նեհեստկան» կեանքէն)

Անցեալ օր հին թղթերս խառնելու ատեն՝ ծոցի տետրակ մը անցաւ ձեռքս: Թէն շատ ժամանակ չէր անցել վրայէն, բայց կողքերը արդէն մաշած էին և դժուրնած թերթերը հազիւ կը յուցնէին դեռ իրենց վրայ մատիտով նշանակուած խառն ի խառն նօտերն ու հաշիւները: Անմիջապէս միւս թղթերը կրկին իրենց փոշոտ հանգստարանին մէջ զետեղելով, բազմոցիս վրայ կ'երկնեամ ու կըսկսիմ թերթել այդ թերմաշ տետրակս, ուր յիշողութիւններս ամփոփած էի առեւտրական շատ նշանաւոր ճամբորդութեան մը միջոցին: Խեղճ յիշատակարանս ինչպէս կ'ուզէի որ նոր մնար, երբ ձիուս թամբէն սկըսած մինչև յարդի պարկը՝ հազար ծակուծուկ մտած էր վտանգաւոր ձեռքերու չհանդիպելու համար:

Հէնց առաջին երեսին վրայ կը կարդամ—1897 ապրիլ 20-ին մեկնեցայ Կարինէն և նոյն տարուան յուլիս 18-ին հասայ Ճիզրէ: Բերաննիդ անդշափ խոշոր մի բանաք, դեռ աւելի զարմանալին կայ, ճամբու ծախքիս ամբողջ գումարը հասած է 120 օսմանեան ոսկիի, որմէ 100 ոսկիին առջև նշանակուած է անցագրի ծախք:

Պատմեմ:

Ա

Ծննդավայրիս՝ Կարնոյ Սանասարեան վարժարանը հազիւ աւարտած, միակ իղէալս էր անցնել Եւրոպա և համալսարանական կրթութիւն մը ստանալ: Դեռ փոքր հասակէս գրական ընդունակութիւն մը կը տեսնուէր մէջս և շարաթը առնուազն երեք արձակ և մէկ ոտանաւոր բանաստեղծութիւն կ'արտագրէի: Այդ արտագրութիւններս տետրակի մը մէջ հաւաքած, մեծ ոգևորութեամբ հօրս կը կարդայի և Աստուծոյ օրը քանի

մը անդամ իրեն բացատրելով մէջս բռնկող երկնային հուրին զօրութիւնը, կ'աշխատէի համոզել, որ ազգին և մարդկութեան շահերը կը պահանջէին զիս վերջապէս Եւրոպա զրկել: Մարդը ի դուր կը ջանար գլխէս հանել այդ «յիմարութիւնները», իր նիւթական անկարողութիւնն ու ծերութիւնը առարկելով: «Այնչափ զոհողութիւններով վերջապէս զաւակ մը հասցուցի որ գործիս գլուխն անցնի, ծերութեանս նեղուկ դառնայ, անոր ալ խելքը հեռուներն է», կը գանդատէր խեղճ ծերունին հանգիպած ծանօթին ու կը հառաչէր: Վերջապէս անախկալ զիպուած մը բազդս վճռեց: Հայրս միտաւ օր մը, կարծես ուզելով իւր մահովը հարկադրել ինձի, ինչ որ չէր կրցած խօսքով հասկցնել: Ծրագրերնէս մէկ հարուածով տակնուվրայ եղան, մեր ընտանիքին ամբողջ բնոյն իմ ուսերուս վրայ իջնալով, ստիպուեցայ յստահատօրէն այրել բանաստեղծութիւններու տետրակը և հօրս կտակեղէնի խանութը նստիլ: Չէմ գիտեր, այն անտիպ գործերու ոչնչացումով հայոց դրականութիւնը օգուտ բրաւ թէ մնաս, բայց այն ստեղծները վստահօրէն կըրնայի բնել թէ գէշ չեղաւ ինձի համար: Գրչի տեղ հօրս արջինը ձեռք տանելով, քիչ ատենէն համոզուեցայ որ առհաստի աւելի հոգը ունէի քան լսանաստեղծութեան: Առհաստի գիցուէին առջի օրէն ժպտեցաւ ինձի և կարճ միջոցի մը մէջ հօրս համեստ գործը բաւական ընդարձակելով, չուկայի վրայ՝ ինչպէս կ'ըսեն՝ «պատուաւոր ազգային մը» դարձայ, թաղական ընտրուելու չափ պատուաւոր:

Այս վաղահաս յաջողութենէն քաջաւերուած՝ արդէն սկսել էի իդէալներու նոր շրջան մը թեկնոթել: Կ'երազէի գործս հեռագնաց ընդարձակել, մեծ հարստութիւն մը դիզել և զրամի զօրութեամբ յաջողցնել այն բոլորը, ինչ որ չվիճակուեցաւ զրչով իրագործել: Սակայն որու մտքէն կ'անցնէր թէ մօտաւոր ապագան կը ծիծաղէր վրաս...

Արդէն 1894 թուականին առետրական հրապարակը կայուն վիճակ մը ստացաւ և իմ գործերս ալ սկսան կազար: Շատ անգամ ամբողջ օրեր խանութիս մէջ կը յօրանջէի առանց հինգ փարայի առուտուր բնելու: Բայց այդ միջոցին որու հոգն էր առուտուրն ու օրուան շահը: Այնան հովերուն հետ ծիծաղկոտ ձայներ կուգային հեռուներէ, հայերը օրը քանի մը անգամ խորհրդաւոր բաներ կը փափային իրարու ականջի ու բոլորիս գէմքերը ուրախութենէ կը ճառագայթէին:

Վրայ հասաւ 95 թուականը, մայիսի արեւ սրտերնիս տւելի կենդանացուց: Մեր փափաքները լսելի խօսակցութիւններու փոխուեցան, ուրախ լուրերը՝ կարծես սնթել հեռագրով

ամէն կողմերէ տարտամօրէն, բայց ժամը ժամին կը հասնէին մեզի և մէկ օրէն միւսը անհամբեր զիրար չնորհաւորելու բաղ-
ղին կը պատրաստուէինք: Քաղաքին մէջ լեռներէն իջած ժան-
տատեսիլ մարդերու բազմութիւն մը կը դիզուէր, շուկային մէջ
անցուղարձ կ'ընէին ասոնք սպառազէն ու դաժան նայուածք-
ներ կը նետէին մեր ապրանքներուն ու մեր վրայ: Անձանօթ
սպառնալիք մը կը ըսողութեամբ օղին մէջ, մեզ սրտապնդող յոյսե-
րը սակայն դեռ շատ մեծ էին, մտերմեմ կը ծիծաղէինք վայ-
րենութեան այդ ամբողջ թափօրին վրայ: Բայց աւտոմատներուն
շուտով բօթիւր ալ սկսան խառնուիլ և սարսափի ու ակնկալու-
թեան տարօրինակ զգացումի մը տակ ճմլուելու վրայ էինք,
երբ վերջապէս փոթորիկը փրթաւ ու քշեց տարաւ յոյսն ալ,
յուսահատութիւնն ալ:

Այդ օրերուն, կամ ինչպէս Կ. Պալսոյ հայ թերթերը կը
գրէին՝ «սնտակահալ սազմապիւն» տունն, առուտուրի հոգերէն
ալ բոլորովին ազատեցայ: Անձանօթ յաճախորդներու խուման
մը, առանց մեզի հարցնելու՝ սրբած տարած էր ինչպէս շատ
շատերուն այնպէս ալ իմ խանութիս ամբողջ ապրանքը, մին-
չև անգամ տախտակները, խաւաքարտներն ու խանութի փեղ-
կերն ալ, փողերը սակայն չընէին մինչև այսօր... Այս մասին
այնքան ալ չեմ հաւեր, որովհետեւ ուրիշ շատ հայ խանութպան-
ներ ապրանքներուն հետ միասին իրենք ալ գնացին ու ալ
չդարձան, ես գոնէ տեղս մնացի գրամագլուխիս մէկ մասին հետ:

Բ

Այսպէս մէկ անգամէն չահ-մլասի մոմտուքներէն ազա-
տուելէ ետքը, մօտ երկու տարիէ ի վեր տունս փակուած ար-
ձակուրդ կ'ընէի: Ու ես մինակ չէի, մեծ մասը այն հայերուն,
որոնք կրցեր էին «անտեսական տաղնապէն» դէթ գլուխին
ազատել՝ չնորհիւ վեհափառ սուլթանին իրենց թզենիներուն
տակ պառկած, ունեցողը պատրաստէն կ'ուտէր, չունեցողը...
ծամ կը պահէր:

Այս վիճակը սակայն երթալով անտանելի ու տաղնապալի
կը դառնար ինծի համար: Դրամագլուխս արգէն բաւական նի-
հարցեր էր, հազիւ դեռ քանի մը հարիւր ոսկի կը մնար. խա-
նութիս նորէն շտկել չէի համարձակիր, դուրսերը երթալ գործ
որոնելու համար անկարելի էր, որովհետեւ անցագիր չէին տար:

Եւք մը գտնելու համար գիշեր ցերեկ գլուխս կը ճաթե-
ցնէի, երբ կիրակի օր մը եկեղեցւոյ բեմէն մեր առաջնորդա-
կան տեղապահը մաղթանքներու տարափով մը ժողովուրդին

աւետեց կայսերական կարգ մը շնորհներ, որոնք պատրիարքարանէն հաղորդուած էին: Ատոնց մէջէն ինծի համար ամենէն կարևորը հայերուն տրուած երթևեկի ազատութիւնն էր: Ուրեմն կարելի էր անցագիր մը ձեռք բերել:

Նոյն օրը մեր տունը եկաւ Չափուշեան Սարգիսը, որ շուկայի դրացիս և ամենամօտ բարեկամներէս էր. իրեն ալ խանութը դարտիկ էին և ինք ալ ինծի պէս դրամազլիւն ուտողներէն էր:

—Է՛ր ինչ, ըսիր նայինք ասօրուան լուրերուն—հարցուց Սարգիսը ներս մտնելուն պէս:

—Ի՞նչ ըսեմ, Սարգիս, սիրտս քիչ մը հանգստացաւ, եթէ քիչ մը ատեն ալ այսպէս պատրաստէն ուտենք, շուտով բերաննիս քամիին պիտի տանք. ես կը մտածեմ անցագիր մը ձեռք ձգել ու կովկաս երթալ գործ փնտռելու:

—Կովկաս, չէ՞ ես արդէն գործ մը գտեր եմ, եթէ բանիդ կուգայ մէկտեղ ընենք: Աս Հայաստանի կողմերուն համը փախաւ ակ, ասկէ վերջը ապահով գործ չենք կրնալ տեսնել հոս. մեզի հանգստութիւն չպիտի տան, բարեկիսութեան ալ յոյս մը չկայ հիմակուհիմա. ինծի մնայ՝ ամենէն լաւ ճամբան աս կողմերէն հեռանալն է. երթանք Միջագետքի կողմը, ուր հայեր շատ չկան, հետեւաբար հալածանքն ալ քիչ կ'ըլլայ: Ես վաղուց տեղեկութիւն առած եմ որ Ճիզրէի շուրջը բուրդի լաւ գործ կայ, այնտեղիւն վաճառականները ամէն դարնան մեծ քանակութեամբ ոչխարի և այծի բուրդ կը գնեն և քէլէկներով *) Տիգրիսի վրայէն Բաղդադ կ'իջեցնեն, անկէ ալ Եւրոպա կը ղրկեն շոգենաւերով: Մենք ալ երթանք Ճիզրէ այս գործը փորձելք. դուն քանի մը հարիւր ոսկի ունիս, այդչափ մըն ալ ես կը դնեմ, գործի կըսկսինք. ի՞նչ կ'ըսես:

Ի՞նչ ըսէի, այն տեսակ կայսերական մը մէջ կը գտնուէի որ երկար բարակ մտածելու ընդունակութիւնը վաղուց էի կորսնցուցեր: Անմիջապէս հաւանութիւնս տուի և քանի մը օրէն սկսանք պատրաստութիւն տեսնել, կարելի եղածին չափ շուտով մեկնելու և մայիսին անպատճառ Ճիզրէ գտնուելու համար:

Հակառակ կայսերական շնորհներուն՝ անցագիր հանելը այնչափ ալ դիւրին չեղաւ: Ամբողջ երեք շաբաթ այս դռնէն այն դուռը վազեցինք, քանի մը ղոյգ կօշիկ մաշկոյցինք և քա-

*) Քէլէկ=այծի տիկերով շինուած տեսակ մը նաւ, որտ / կը կատարեն ճամբորդութիւնն ու փոխադրութիւնները Տիգրիսի վրայ:

նի մը տաճնեակ ալ մէծիտիյէնէն^{*)} կերցուցինք աջ ու ձախ: Առաջնորդարանէն վկայական մը պէտք էր, մուխթարէն (թաղապետ) թուղթ մը ապացուցանելու համար, որ պետական տուրքերը ամբողջովին վճարած էինք և երաշխաւոր մը, Ամեն-րիկա չփախչելու համար: Վերջապէս այս բոլոր ձևակերպութիւնները լրացնելէ ետքը՝ ունցագիր տրուելու հրամանը ելաւ և գնացինք ներկայացանք անցագրի քարտուղարին:

Քեաթիպ (գրագիր) էֆէնտին ալ անհրաժեշտ համարեց իր կողմէն քանի մը հարց ու փորձ ընել, և մարդահամարի տոմարը բացաւ մեր անունները գտնելու: Իմ անունս արձանագրութիւնը համապատասխան էր ծննդեան թուղթիս. իսկ երբ կարգը եկաւ Սարգիսին, էֆէնդին տոմարին մէջ կարգաց:

— Սարգիս Չափուչեան, ծնած 1309 ըէճէպ 19-ին—քանի մը ըտպէ մատնետուն վրայ հաշիւներ ըրաւ և ապուշ ակնարկ մը ուղղելով ընկերոջս երեսին հարցուց:

— Ուրեմն դուն վեց տարեկան ես:

— Վեց տարեկան, ինչ կ'ըսէք, էֆէնդի,—գոչեց Սարգիս ինքիրմէ ելած:

— Ի՞նչ կը պոռաս, յիմար, չհաշուես, 1309-ին ես ծնեմ, հիմա 1315 թուականն է, քանի տարի կ'ընէ:

Իսկապէս տոմարին հաշուովը 30 տարեկան ընկերս 6 տարեկան կը դառնար. ակներհ էր որ արձանագրութեան ժամանակ պաշտօնեան սխալուել էր:

— Տոմարը սխալ է, էֆէնդի, խնդրեմ ուղղեցէք, ես ինչպէս կրնամ 6 տարեկան ըլլալ—ըսաւ Սարգիս վրդոված ձայնով:

— Լեզուդ քաշէ, չո՛ւն, —պոռաց էֆէնդին կատղած՝ խոշոր թանաքամանը ալ բռունցքին մէջ տոնելով—պետական տոմարը սխալ չի կրնար ըլլալ. ինչպէս այստեղ գրուած է, այնպէս ալ ունցագրին մէջ կը գրեմ ձեռքդ կուտամ. կ'ուզես առ, չես ուղեր մի՞ առներ:

Ընկերոջս տաք բնաւորութիւնը գիտնալով՝ անմիջապէս գուշակեցի, որ միւրի համար շատ վտանգաւոր ընդհարում մը տեղի պիտի ունենար. ուստի Սարգիսին թեկն քաշելով միջամտեցի:

— Ի՞նչ ավելցիլիկդ դուրս կուտաս, ծո՛, էֆէնդին իրաւունք ունի, ի հարկէ, պետական տոմարը չի կրնար սխալ ըլլալ. դուն ես չուտ մեծցեր, լուր չունիս:

Այս խելօք միջամտութեանս վրայ քեաթիպ էֆէնտին քիչ

*) Մէջիտիլէ=թրքական արժաթ փող, մօտ 2 ոսրլի արժողութեամբ:

մը հանդարտեցաւ. խնդրեցի որ միմիայն իմ անցագիրս գրէ և գործներնիս վերջացնելէ յետոյ դուրս ելանք:

Զայրոյթէն Սարգիսին բերանը չէր բացուեր, ինդճը ամբողջ կեանքին մէջ անցագրի պէտք չէր ունեցած, որովհետեւ դեռ բնաւ չէր ճամբորդած և հետեւորար մտքէն իսկ չէր անցըներ թէ մարդահամարի տոմարը կրնար այդչափ պզտիկոցած ըլլալ գինքը: Հիմա՝ վեց տարեկանի անցագիր տունել, ինք իր ստքը թակարդի մէջ ձգել կը 'սշմանակէր. իսկ այդ շատ ակնյայտնի սխալը ուղղել տալը, եթէ ոչ անկարելի՝ գէթ երկար ժամանակի կարօտ էր, մինչդեռ մենք մայիս ամսուն անպատճառ ձիորդ պէտք է գտնուէինք, որ առաջ քրդերու հետ ապրանքի մասին պայմանաւորուելու համար: Արդէն ապրիլ 19 էր, 10—12 օրուան ճամբայ ունէինք առջինիս, մեր վաղեմի ծանօթ կարաւանագետ քուրդ Ալի աղայի կարաւանը յաջորդ օրը պիտի մեկնէր. ուստի որոշեցինք որ ես մեկնիմ, իսկ Սարգիսը մնայ առայժմ:

Յաջորդ օրը իրիկուան դէմ արդէն մեր կարաւանը քաղաքի դռնէն դուրս կ'եկնէր: Երբ դրան մէջ մտանք՝ քովնտի սենեակներէն խուփը մը մարդիկ անմիջապէս մեր վրայ թափեցան. իւրաքանչիւրը մէկ ճամբորդի մօտեցաւ, ծերունի զապթիյէ մըն ալ իմ ձիուս սանձէն բռնեց: Ես արդէն անցագիրս բացած՝ պատրաստ բռնած էի ձեռքս և խօսոյն պարզեցի:

—Ադ ինչ է, անցագիր է, խոթէ՞ զրպանդ, ատոր տեղը քսակդ հանէ—ձայն տուաւ զապթիյէն գլուխը շարժելով:

Դժուար չէր միտքը հասկանալ, հանեցի հինգ զրուշնոյ մը դրի ափը:

—Դէ հիմա գնա, բարի ճանապարհ—ըսաւ ու ձիուս գլուխը բաց թողուց:

Գ

Ճանապարհի վրայ մեր առաջին հանգիստը քաղաքը Բաղէն էր: Կարինէն մինչև հող 8 օր տեկց. ճամբան ամէն քայլի կը հանդիպէինք Համիդիյէ հեծելազօրքերու, որոնք ամբողջ օրը ձիու վրայ՝ դաշտերն ու ուղիները կը չափելէին, «Վեասակար տարրերը» ջնջելու, հայ գիւղացիները ցորենի, գոյքի, անասուններու ծանրաբեռնութենէն ազատելու և երկիրը միշտ այդպէս խաղաղ պահպանելու պաշտօնով: Կարաւանին մէջ միակ հայն էի ես, սակայն կարաւանագետ Ալի աղան հօրս վաղեմի բարեկամն էր, տարիներով մեր ապրանքները փոխադրած էր, այդ պատճառով չէր կրնար տանիլ եթէ մէկը մինչև իսկ ծուռ նայ-

ուածք մը նետէր վրաս: Քառասուն տարիէ ի վեր այդ ճամբաներու վրայ կը բանէր, մօտիկ յարաբերութիւններ ունէր քուրդ յեղապետներու հետ, այդ պատճառով ալ հասարակ քրդերը կը քաշուէին իրմէ: Ահա այս մարդուն պաշտպանութեանը շնորհիւ առանց գլուխս ճամբան թողնելու հասայ Բաղէշ:

Մեր կարաւանին գլուխը արդէն քաղաք մտած էր, իմ ամբողջ իրեղէններս ու անկողինս ձիուս վրայ բարձուած էին և ես ալ ատոնց վրայ թառած՝ բաւական բարձր դիրք մը ունէի, ուրկէ օրօրուելով կը դիտէի գեղեցիկ ձորի մը երկու չրթներուն վրայ սիւսուած Բաղէշը: Ստկայն այդ բանաստեղծական դրութիւնս երկար չտեսցաւ: Առաջնիս ձգուած կամուրջի մը գլուխը աղմուկ մը բարձրացաւ յանկարծ: Ոստիկաններու և ծխախոտի ու հանրային պարտքի դէտերու խումբ մի յարձակում էր գործեր կարաւանին վրայ, մէկը անցագիր կը հարցնէր ճամբորդներէն, միւսը ջորեպաններուն վրան-գլուխը կը խուզարկէր որ չլինի թէ առանց թղթադրոշմի նամակներ փոխադրեն, իսկ ուրիշները ճամբորդներուն իրեղէնները դուրս կը թափէին արգիլուած ծխախոտ և մաքսէ փախցուած ուրիշ ապրանքներ փնտռելու: Նս հանդիսս սրտով մօտեցայ, ինչո՞ւ պիտի վախնայի, փառք Աստուծոյ կանոնաւոր անցագիր ունէի և քովս ալ արգելուած բան մը չկար, երբ ոստիկաններու գլխաւորը յանկարծ զիս նշմարեց. քանի մը բռնալով վրաս վազեց պոռալով.

—Աման թուլթուն, թամ պու խընդիր դիր. (Աման բռնեցէք, հէնց այս խոզն է):

Այս տարօրինակ աղաղակի իմաստին վրայ մտածելու ժամանակ իսկ չունեցայ, մէկ ակնթարթի մէջ բոլոր ոստիկանները վրաս թափեցան ու զիս ձիէն վար առնելով ճամբուն եզերքը քաշեցին:

—Ուրկէ կուգաս, հարցուց գլխաւոր ոստիկանը, դժուարին որս մը բռնած չան մը պէս հնալով:

—Էրզրումէն, Էֆէնդի, տնտեսական անցագիրս:

Անցագրիս վրայ հարկանցի ակնարկ մը ձգեց ու գրպանը դրաւ ծրծաղելով:

—Այդ բոլորը լաւ ես սարքեր, աղուէս կեանքուր, ընկիր առջևս, հիմա անմիջապէս ոստիկանատուն պէտք է երթաս:

—Բայց ինչո՞ւ, Էֆէնդի, պատճառը հասկնանք:

—Քալէ, չո՞ւն—որոտաց փօլիս Էֆէնդին աքայի մը տալով ետէս—հիմա ժամկետով քեզի բացատրութիւն տալու պարտականութիւն չունիմ, ոստիկանատուն երթանք, կ'իմանաս:

Այլ հասկացայ որ բերան բանալու չէր գար, ուստի գլուխս կախած սկսայ քալել, մինչդեռ անդին ոստիկան մը ու քանի մը դէտեր սկսեցին իրեղէններս տակն ու վրայ ընել: Քաղաքին մէջէն իմ անցքս բաւական հանդիսաւոր էր, չորս ոստիկաններով շրջապատուած կը յառաջանայի, իսկ գլխաւոր ոստիկանը առջևէս իր հոյակապ փորը կը տանէր, աջ ու ձախ գոռով ակնարկներ նետելով: Իսկ երբ ոստիկանատուն հասանք՝ ըրած տպաւորութիւնս աննկարագրելի էր: Փսիսուքներ փոխանակուեցան ինծի ընկերացոյ ոստիկաններուն ու հոն գտնուողներուն միջև և զիս անմիջապէս ոստիկանութեան կօմիսէրին առջիւր հանեցին:

Կօմիսէրը երկայնահասակ, ալեխառն մազերով մարդ մըն էր, այն դէմքերէն, որոնց վրայ բնութիւնը առաջի օրէն տպուշութեան կնիքը կը գրուէ: Զիս ձերբակալող հասաւիոր ոստիկանը առջևէս մտաւ, իր գլխաւորը լարեկէ ետքը՝ մօտեցաւ և բան մը ըսաւ. ականջինս ժպիտ մը փայլեցաւ կօմիսէրի նիհար, զստամած դէմքին վրայ, նարկիլէյի ծխափողը բերնէն հանեց և իր օգնականին դառնալով.

—Շնուտ, չնուտ, սա անցեալ օր Ախլաթէն եկած թուղթը բերէք:

Կօմիսէր էֆէնդին թուղթը ձեռքը բռնած՝ մէյ մը վրան կը նայէր, մէյմը երեսիս: Դէմքին վրայ ժպիտը աւելի բացուեցաւ և փոխ այտերուն վրայ հրճուանքի ջղաձգութիւններ ըսկրան նշմարուիլ: Ինծի համար տանջող հանելուկ մը եղող այդ բաղդատութիւնը աւարտելէ ետքը յանկարծ օգնականին դարձաւ.

—Կարգամ, անդամ մըն ալ դուք համեմատեցէք:

«Միջահասակ, ոչ շատ գէր և ոչ ալ չաւս նիհար, թուխ մազերով, ճակատը բաւական լայն ու դուրս ցցուած, ճակատին տակը երկու աչքեր, աչքերուն վրայ զոյգ մը յօնքեր, քիթ մը, քիթին տակը բերան մը և գլխին երկու քովերն ալ երկու տկանջներ»:

Օգնականը լարուած կը լսէր, ձայնս աչքերովը անդադար դէմքս խուզարկելով. երբ ընթերցումը աւարտեցաւ, աջ ձեռքը կուրծքին դրաւ ու պատասխանեց.

—Հաւատքս վկայ, նմանութիւնը կատարեալ է: Իսկ ես ալլես չկրնայով տանել անչարժ արձանի դիրքը՝ բերանս բացի.

—Խնդրեմ, էֆէնդի, այս ինչ հանելուկ է, որով կը նմանցընէք զիս:

—Լնու, լիրը, ձայնդ կտրէ, քեզի բան չհարցուցինք—պոռաց կօմիսէրը նստած տեղէն թիզ մը վեր թռչելով, յետոյ քա-

նի մը անգամ նարկիլէն կրկնացուց, աչքերը աւելի խոփուեց
և ցուցամատը շարժելով հրամայեց.

— Հիմա ամեն մէկ հարցումիս կէտ առ կէտ և ամենայն
ճշտութեամբ պատասխան պիտի տաս. կ'իմանաս:

— Այո, էֆէնդի, պատրաստ եմ, պատասխանեցի թէմէն-
նահ *) մը ընելով:

— Ո՞ւրկէ կուգաս:

— Էրզրումէն:

— Ո՞ւր կ'երթաս:

— Ծիզրէ:

— Ի՞նչ ընելու:

— Բուրդ գնելու:

— Էրզրում բուրդ չկար:

— Կար, բայց ոչ նոյն քանակութեամբ և նոյն գներով:

— Ինչո՞ւ Տիարպէրբի վրայով չգնացիր:

— Ինծի ըսին թէ այս ճամբան աւելի մօտ է և աւելի
յարմար:

— Ո՞վ ըսաւ:

— Բարեկամներ:

— Ի՞նչ են այդ բարեկամներուդ անունները:

— Հիմա անունով, մականունով չեմ կրնար յիշել թէ որոնք
էին ինծի այդ խորհուրդը տուողները. Էրզրումի մէջ ունեցած
հայ և թուրք ծանօթներս էին:

— Բնիկ էրզրումցի ես:

— Այո, էֆէնդիմ:

— Ասկէ առաջ ճամբորդած ես երբեք:

— Էրզրումի նահանգին մէջ ճամբորդած եմ, բայց նա-
հանգէն դուրս չեմ ելեր:

— Ո՞րտեղեր եղած ես և ո՞ր թուականին:

— Հինգ տարի առաջ անգամ մը Երզնկա գնացած եմ
առևտրական գործով, անգամ մըն ալ Ալաշկերտ:

— Ալաշկերտ ինչո՞ւ գնացիր:

— Կտաւեղէն տարի ծախելու:

— Ծիշտը խօսէ:

— Ձուտ ճամբարաութիւնը կ'ըսեմ:

— Է՛լ լաւ, ուրկէ կուգաս հիմա:

— Էրզրումէն, էֆէնդիմ:

— Ատ անգամ մը ըսիր հասկցանք, միևնոյն բանը միշտ
չեն կրկնէիր:

*) Թէմէննահ=թրքական բարև:

—Բայց ի՞նչ ընեմ, էֆէնդի, երբ դուք միևնոյն հարցումը կ'ընէք:

—Միևնոյն հարցումը կ'ընեմ որ նոր բան ըսես. Ախլաթի կողմերը չէս եղած ընաւ:

—Ամենեկին:

—Իսկ խռովարարապետ Սերոբը չեմ ճանչնար:

—Անունը նոր կը լսեմ:

—Հիմա ձեր երթալու միտք ունիս:

—Տիգրիսի եզերքը գտնուող ձիգրէ քաղաքը պիտի երթամ բուրդ գնելու:

—Նորէն նոյն խօսքերը կը կրկնես, անպիտան,—պռուսայ յանկարծ կ'օմիսէրը ոտքը դեպի զարնելով—Տալուորիկի կողմերը երթալու զիտաւորութիւն չունիս:

—Կ'աղաչեմ, էֆէնդի, Տալուորիկ ես ի՞նչ դործ ունիմ. ինչպէս ըսի և ինչպէս անցադրիս մէջ ալ գրուած է՝ ուղղակի էրզրումէն կուգամ ու ձիգրէ կ'երթամ բուրդ գնելու:

—Սնւտ է, սնւտ, բուրդը սուտ է, շան որդի, ինչպէս կ'երկի՝ դուն առանց ծեծ ուտելու ճշմարտութիւնը չպիտի խօսիս, —գոչեց կ'օմիսէրը ոտքի ելնելով.—մենք քու մասին վաղուց տեղեկութիւն ստացած ենք, ինչպէս քիչ առաջ տեսար՝ մինչև անգամ դիմադծութիւնդ ալ ունէինք: Գուն Սերոբի մարդերէն ես, այս ձմեռ Ախլաթի գիւղերը թափառեր ես և հիմա ալ Տալուորիկ կ'ուզես երթալ. միայն Ալաշկերտ երթալը չէինք գիտեր, ան ալ խմացանք քիչ առաջ: Ձեռքէս չես կրնալ ազատիլ, ես քեզ չաքաթ մըն է փնտռել կուտամ. եթէ խելք ունիս ըրածներուդ ու գիտցածներուդ ամբողջը անուշութեամբ խոստովանէ, ես ալ կ'աշխատեմ կերպով մը աղատել քեզ. ապա թէ ոչ դործդ մինչև կախաղան կը հասնի:

—Բայց կ'աղաչեմ, էֆէնդի, դուք զիս ուրիշ մէկու մը տեղ կը դնէք. մինչդեռ ես կ'անոնաւոր անցագիր ունիմ. էրզրումի մէջ ծանօթ մարդ եմ. կրնաք իմ ծախքովս հեռագիր մը տալ անմիջապէս և ստուգել...

—Սնւտ, սնւտ, երկար խօսք չեմ ուղեր ես,—ընդմիջեց կ'օմիսէրը բարկութեամբ,—հիմա գնա ներս, այս ըսածներուս վրայ խորհէ, քեզի երկու օր միջոց կուտամ:

Եւ դառնալով ոտականին հրամայեց.—Ասէք ներս:

Անմիջապէս զիս բռնելով վար իջեցուցին. վրաս գլուխս խուզարկեցին և փոքրիկ սենեակ մը հրելով գուռը վրայէս փակեցին:

Գ

Սենեակը բառական մութ էր և փայտէ կոպիտ նստարան մը կար մէջը. բայց եւ ճամբու յոգնութիւններէն և կրած յանկարծական յուզումէ ափսոսաբար ուժասպառ եղած էի, որ այդ նստարանին վրայ փռուելուս պէս աչքերս փակուեցան։ Շատ խռով քուն մը անցուցի. էրզրումը, ճամբու տպաւորութիւններս, քիչ առաջուան տպաւորութիւնս, Ճիզրէի բուրդի հակերն ու կօմիւնէի սպառնացած կախաղանի պատկերը իրար խառնուելով սարսափելի մղձաւանջի մը տակ կը ճնշէին զիս։ Կէսքուն, կէսարթուն վիճակի մէջ դեռ երկար պիտի մնայի, եթէ մէկը յանկարծ չսթափեցնէր զիս։ Աչքերս բացի, ծերունի զապթիշէ մը, որու աչքերէն ջուրն ու ճպուռը ափսոսաբար կը հոսէին, «ինչպէս խէօը Արաբիայի արմաւենիներէն»՝ կանգնած էր սնարիս քով, ձէթի ճրագ մը ձեռքը։

—Ե՛լ, հէ՛, ե՛լ, ճրագ եմ բերեր։ Կը կրկնէր մարդը զիս ցնցելով։

Շտկուեցայ նստայ, արդէն միջներ էր. սաստիկ անօթութիւն կըզգայի և միևնոյն ժամանակ ծոնելու մեծ ախորժակ։ Հանեցի մէճիտիշէ մը տուի ծերունիին, խնդրելով որ քիչ մը հաց, պանիր, քիչ մըն ալ ծխախոտ բերէ ինծի։ Ճրագին աղօտ լոյսովը երբ արծաթին փայլը տեսաւ, ծերունիին աղբերահոս աչքերը նշուկեցին. «զլիտուս վրայ», ըսաւ ու զուրս գնաց։ Քիչ ետքը վերադարձաւ. ապսպրածներս բերելով, բայց դրամին աւելցածը աւելորդ է ըսել թէ գրպանը մոռցաւ։

—Իմ անունս Օսման չավուշ է, այստեղի պահապանն եմ եւս, — ներկայացուց ոստիկանը ինքզինք. — երբ բանի մը պէտք ունենաս, ըսէ, անմիջապէս կը կատարեմ։

—Լաւ ուրեմն, Օսման չավուշ, չնորհակալ եմ քու բարութեանդ համար. եւ այսօր կարաւանով էրզրումէն եկայ, զիս քաղաքի մուտքին առջև բռնեցին հոս բերին. իսկ իրեղէններս չեմ գիտեր ինչ եղան. չեմ կրնար գտնել բերել քովս։

—Տեսնեմ, պատասխանեց Օսման չավուշ գլխովը տարակուսական նշան մը ընելով ու գնաց։

Կէս ժամու չափ յետոյ կրկին ներս մտաւ և մօտենալով կամայուկ մը, կարծես կը վախնար որ լսեն.

—Իրեղէններդ փօլիսներու սնեակն են. միւս բաները անկարելի է առնել, բայց անկողինդ թերեւ կարողանամ բերել, եթէ չներուն առջև քիչ մը ոսկոր նետեմ։

Ինծի ալ ամենէն աւելի անկողինը պէտք էր, ուստի առանց երկար-բարակը փնտռելու՝ հարցուցի.

—Ո՞րչափ պէտք է, Օսման չափուչ:

—Կարծեմ չորս ճերմակով կը լինի: Պատասխանեց բարեսիրտ չափուչը նոյն զգոյշ ձայնով:

Չորս ճերմակը տուի, անկողինս եկաւ. փայտէ նստարանին վրայ փռեցի, տեղաւորուեցայ, որովհետեւ կը տեսնէի որ այնչափ ալ շուտ չը պիտի կրնայի ազատիլ այդ հիւրընկալ օձախէն:

Այսպէս երկու օր անցուցի. կօմիսէր էֆէնդիին շնորհած պայմանաժամը լրացած էր, ուստի զիս կրկին իր տեսութեանը արժանի ըրաւ: Առաջին հարցաքննութիւնը կէտ առ կէտ կըրկնուեցաւ երկրորդ տպագրութեամբ, միակ փոփոխութիւնն ու յաւելումը ապտակի ե գաւազանի հարուածներուն մէջ կը կայանային: Հակառակ այդ բոլոր ճիգերուն, ճարպիկ ոստիկանապետը չկրցաւ սակայն «նոր բան» մը ըսել տալ ինծի ե զիս կրկին իմ ձգնարանս ճամբեց, այս անգամ առանց պայմանաժամի:

Եւ իրօք, անկէ վերջը կարծեա իմ գոյութիւնս ալ մոռցուեցաւ, ցերեկները կը մթնէին, գիշերները կը լուսնային, բայց ես իմ սովորական Օսման չափուչէս դատ մարդու երես չէի տեսներ: Այս կացութիւնը ամբողջ չորս շաբաթ շարունակուեցաւ. քանի մը անգամներ կօմիսէրին նամակ դրած էի, կուսակալին ալ երկու աղերսագիր, սակայն ձայն-ձուն չեկաւ: Բուրդի ժամանակը կ'անցնէր, բայց ո՞վ էր ալ ձիգրէի բուրդին մասին մտածողը, երբ հիմա իմ բուրդիս հետ կաշիս ալ ածուրդի կը հանէին: Կատաղութեան, թախծութեան, յուսահատութեան ժամեր իրարու կը յաջորդէին. երանի կուտայի Սարգսին որ չկրցաւ հետս դալ ե կ'անիծէի սե բազդս որ մարդահամարի պաշտօնեան իմ ծննդեան թուականս ալ սխալ չէր արձանագրած. վեց տարեկան չէ, թող վեց ամսական դարձնէին զիս, միայն թէ այս վիճակին չհասնէի:

Վերջապէս օրին մէկն ալ խցիկիս դուռը բացուեցաւ ե Օսման չափուչի տեղ նոր դէմք մը երեցաւ: Ներս մտնող երկարահասակ մարդ մըն էր, եւրոպականի ե թրքականի խառնուրդ տարազով, մէջքը կուգ, երկար ալեխառն մորուքը կուրծքը կը շօշափէր ե մէկ աչքն ալ կոյր էր: Ժպիտը չրթունքներուն՝ մօտեցաւ ինծի.

—Բարեւ, դուն մեր էրզրումցի Սահակ աղային տղան ես եղեր:

—Այո, պատասխանեցի այս ծանօթութեան վրայ զարմացած ե քիչ մըն ալ ուրախացած:

—Եւ այսօր իմացայ. է ինչպէս է նայինք հայրդ:

—Հայրս վաղուց մեռած է:

—Չէ, ճանըմ. վախ, վախ, խեղճ Սահակ աղա, ինչ լաւ բարեկամներ էինք. էրզրում եղած ժամանակաւ ամէն օր խանութը կ'երթայի սուրճը խմելու. դուն ա՛յն ժամանակ դեռ երեխայ էիր, երբեմն խանութ կը բերէին գիրկս կ'առնէի կը սիրէի քեզ, բայց չես կրնար յիշել, շատ փոքր էիր:

—Խնդրեմ, կրնամ ձեր անունը հարցնել:

—Ինծի Պայրամ աղա կ'ըսեն. կուսակալին տան ծախսաբարն նմ Պատասխանեց հօրս ծանօթ բարեկամը կոր քամակը շակել փորձելով:

—Ուրիմն, Պայրամ աղա, քանի որ հանգուցեալ հօրս այդչափ մօտ բարեկամն էք, կ'ազատեմ ձար մը բրէք վիճակիս: Էրզրումէն ելայ ճիզդէ կ'երթայի բուրդ գնելու, այստեղ քաղաքին եզերքը ձերբակալեցին գիս ու հոս բերին: Չեմ գիտեր որով կը նմանեցնեն ու ծանր ամբաստանութիւններ կ'ընեն վրաս, մինչդեռ ես անմեղ երիտասարդ մըն եմ, կոնստանտնոպոլիսի ալ ունիմ:

—Ես ալ արդէն ճիշդ ստոր համար եկած եմ—պատասխանեց Պայրամ աղան մտերմօրէն քովս նստելով—կտոր մը աղ ու հացը սասը ասորուան իրաւունք ունի ըսեր են, ես ալ քու հօրդ հետ այնչափ տարի աղ ու հաց կ'երած եմ, չեմ կրնալ մոռնալ. երբ հոս լինելդ իմացայ, անմիջապէս վաղեցի եկայ որ ձար մը ընեմ քեզ ազատելու: Եւ ձեռքէս եկածը չեմ խնայեր, բայց պէտք է որ դուն ալ իմ խորհուրդներս լսես:

—Ինչ որ պէտք է ընել, խնդրեմ ընէք, անմիջապէս կ'ատարելու պատրաստ եմ:

—Շատ բան պէտք չէ. բայց գիտես որ հիմա առանց ստակի գործ չի դառնար, ամէն բանի ճոխը ասոր կ'ապուած է, ըսաւ Պայրամ աղան բութամասն ու ցուցամատը իրար շըփելով:

—Անշուշտ, բայց որչափով կը վերջանայ գործս:

—Շատ չէ. հարիւր կարմիրդ կ'երթայ:

—Հարիւր կարմիր. ինչ կ'ըսէք, Պայրամ աղա,—բացագանչեցի ինքիւրմէս ելած—ստ անկարելի է, չեմ կրնար տալ, կարողութենէս վեր է:

Եւ չկրնալով վայրկենական դայրոյթս զսպել, շարունակեցի.

—Ի՜նչ, անմեղ տեղը ամբողջ ամիս մը բանտարկուեմ, ծեծ ուտեմ, տանջուիմ, գործէս մնամ եւ դեռ հարիւր սակի ալ տուգանք տամ. չէ, անկարելի է, չեմ կրնար, փարա մը չեմ

տար. անմիջապէս հեռագիր կուտամ Պոլիս ուղղակի վեհ. սուլթանին, վիճակս կը պարզեմ, արդարութիւն կը խնդրեմ: Դեռ անցեալները իրազէ ելաւ որ հայերը ազատ ըլլան ուզած տեղերնին ճամբորդելու...

—Հանգարտ, հանդարտ, տղնս, հանդարտ խօսէ—ըսաւ Պայրամ աղան հայրական շնչտով մը թիս բռնելով—բարկութիւնը լաւ բան չէ, այդ խօսքերը չըլլայ թէ ուրիշի առջև ալ ըսես, յետոյ գործդ աւելի կը ծանրանայ: Սուլթանին դիմելդ ալ օգուտ մը չունի. անոր հոգը հատեր էր, քու հեռագիրդ պիտի կարդար. ես քեզի ինչ որ կ'ըսեմ՝ մօտիկ ըրէ, քու օգտիդ համար է. ստակներդ ես չպիտի առնեմ՝ զրպանս դնեմ, պէտք եղած տեղեր պիտի տամ որ ազատիս:

—Քաւ լիցի, Պայրամ աղա, այդ տեսակ կասկածներ չունիմ ես, բայց այդչտի մեծ գումար չեմ կրնար տալ, ունեցած չունեցածս 200 ոսկի է, անոր 100-ը տամ, ինծի լինչ կը մնայ:

—է՛հ, ըսածներուս վրայ խորհէ, ես պէտք է երթամ, գործ ունիմ. երբ ժամանակ գտնեմ, կրկին կուգամ, վերջացուց Պայրամ աղան ու բարեկեցութիւններս ելաւ:

Գլուխս ձեռքերուս առած՝ բաւական երկար մտածեցի: Պայրամ աղայի հօրս հետ ունեցած բարեկամութեան շատ հաւատալս չէր դար, պարզապէս կը տեսնէի որ մարդը լոկ միջնորդ մըն էր կօմիսէրին՝ թերեւս ալ կուսակալին կողմէ: Բայց ինծի լինչ անոր անձնաւորութիւնը կամ հօրս հետ ունեցած յարաբերութիւնը, երբ խնդիրը դրամին գլուխն էր և միմիայն դրամով պիտի կրնայի փրկուիլ: Վերջապէս այն եզրակացութեան յանգեցայ որ պէտք էր տալ ու օձիքս աղատել. շատ շատ վերջին փորձ մը միայն կարելի էր ընել փրկանքին քանակը գեղջելու: Այդ միջոցին Օսման չափուշս ներս մտնելով, ան ալ միևնոյն խորհուրդը կուտար.

—Պայրամ աղային մօտիկ ըրէ, անոր ձեռքը շատ բան կայ. քեզի պէս շատերը ազատեր է, շատերը կախաղանի տակէն առեր է և հաւատքս վկայ, դէշ մարդ ալ չէ:

Յաջորդ առաւօտ Պայրամ աղան կրկին եկաւ. դարձեալ նոյն հայրական խրատները, իմ կողմէս դարձեալ քիչ մը ընդգիծութիւն և վերջ ի վերջոյ 80 ոսկիի կապեցինք, դրամն ալ կանխիկ վճարեցի: Հօրս բարեկամը խոստացաւ գործս նոյն օրը անպատճառ վերջացնել:

Ամբողջ օրը սենեակիս մէջ անդադար կը ձեռնէի, ամենափոքր ոտնաձայն մը լսելուս իսկոյն դրան մօտենալով: Սակայն իզնուր, օրը երեկոյացաւ և Օսման չափուշն զատ եկող գաղտը

չեղաւ: Գիշերը հազար ու մէկ տանջանքներով լուսցուցի, վերջապէս յաջորդ առաւօտ Պայրամ աղան իր դէմքը յցուց:

—Է՛, կը շնորհաւորեմ, տղաս, գարծգ վերջանալու վրայ է, մէկ ժամէն կուգամ քեզ կը հանեմ, ըսաւ զոնէն ու կրկին տներու թացաւ:

Այդ մէկ ժամը, տհ, ջորեպանի ժամէ մը աւելի երկար տեւեց, մինչև որ Պայրամ աղան կրկին եկաւ ու զիս սենեակէն դուրս հանեց:

—Է՛հ, տղաս, գիտեա ինչ քաշեցի մինչև արձակմանդ հրամանը ձեռք բերի. գործդ անշաղի ծանր էր որ եթէ Պայրամ աղային խաթրը չլինէր, հազար ոսկիով ալ չէիր կրնար տակէն ելնել. ինչ որ է փառք Աստուծոյ աղատեցար, հիմա նախ կօմիսէր էֆէնդիին քով պիտի երթանք, շատ հեղութեամբ խօսէ հետը և չի մոռնաա շնորհակալութիւն յայտնել:

Մեր կօմիսէր էֆէնդին այս անգամ բոլորովին փոխուած էր, մինչև անգամ արթն առաջարկեց ինծի և Պայրամ աղայէն ոչ նուազ հայրական շնչով յայտնեց որ Էրզրումէն տեղեկութիւններ ստացուած էին իմ մասիս, մանաւանդ հօրս բարեկամ Պայրամ աղան ալ բարեխօսած էր, ուստի կրնայի ճամբաս շարունակել: Յետոյ քանի մը խօսքով սուլթանին անհուն զթութիւնը, կուսակալին արգարատութիւնը բացատրեց, չմոռնալով իր սրտի ու մտքի քանի մը առաքինութիւններն ալ յիշել և անցագիրս տուաւ, պատուիրելով որ քովի սենեակը տանեմ, Բաղէշէն անցնիլս ետեւ արձանագրել տալու համար:

Կօմիսէր էֆէնդիին անհուն երախտագիտութիւնս ու սրտատագին շնորհակալութիւններս յայտնելէ յետոյ, Պայրամ աղային հետ քովի սենեակը մտանք վիզէի արարողութիւնը կատարել տալու համար: Սենեակին մէջ միայն երկու աղտոտ գրասեղաններ կային, որոնց առջև երկու դրագիրներ նստած եղէգէ գրիչները կը տաշէին իրարու հետ խօսակցելով: Յերեկուան ծոյլ պաշտօնի և ցոփութեան պիչերներու մէջ այլանդակուած դէմքերով, Ասիան Եւրոպայի հետ զօրով հաշտեցնել ուղող տարազով՝ թուրք քեաթիպի երկու հարազատ տիպեր, որոնք չեն նկարագրուիր, այլ միայն լոյս աչքերով պէտք է տեսնել: Մէկը մանաւանդ շատ ակնախաղ տեսարան մը կը պարզէր իր հագուստներուն հարուստ երմներանդութեամբը. պարսկական կարմիր շալէ ժակէտ մը, կապոյտ թաւիչէ բաձկոն մը գեղին կոճակներով, բայկանաչ փողկապ մը և ճերմակ տափառ մը: Զուխտակ դրագիրները հազիւ գրիչները տաշեր վերջացուցեր եղունգներուն վրայ կը փորձէին՝ երբ միջանցքէն մահմեդական տղոթքի բարձր աղաղակ մը սկսաւ: Պաշտօնատան մօլլան էր,

որ միջանցքին մէջ կէսօրուան էղանը կուտար. զանազան սե-
նեակներէ պաշտօնեաները սկսան դուրս թափիլ, մէյմէկ ջրա-
ման ձեռքերնին, լուացքի և աղօթքի միակ անզանցաւելի պար-
տականութիւնը կատարելու: Պայրամ աղան և մեր երկու զրա-
գիրներն ալ անշուշտ ետ չսկիտի մնային այդ սրբազան պար-
տականութիւնէն: Ուստի ես զրան առջի կէս ժամէն աւելի սպա-
սեցի, մինչև այդ ալ վերջացաւ:

Քեթիպները տեղերնին նստան ու իրենց ընդհատուած
խօսակցութիւնը սկսան շարունակել, առանց վրաս իսկ նայելու:

—Վերջապէս լաւ քէֆ ըրինք—սկսաւ գոյն-զգոյն էֆէն-
դին, ետեւ պատուհանին մէջ զրուած ջրի կաւէ աման մը գըլ-
խուն քաշելէ ետքը—ամբողջ գիշերը չքնացանք, հիմա ապուշի
պէս եմ:

—Ո՛ւր էիք որ, մէջ մտաւ մեր Պայրամ աղան:

—էֆէնդիմ, Իզդէթ պէյի տունը հրաւիրուած էինք, ֆէ-
րիտէ, հանըմը բերեր էր, ամբողջ գիշերը խաղցուցինք, օղին
ալ առատ էր. էհ ալ մի հարցներ, հարսնիք էր, հարսնիք, պա-
տասխանեց էֆէնդին ուրախութիւնէն աղոտոտ աստմները ցոյց
տալով:

—Ֆերիտէն գէշ կնիկ չէ, հապա դուք անոր մայրը տես-
նէիք, շան քածը հուրի էր, հուրի. քանի՜ քանի՜ անգամ խաղ-
ցուցեր եմ. հէյ ջահիլ ժամանակներ հէյ, հառաչեց Պայրամ ա-
ղան յուզմունքէն՝ բաց աչքն ալ գոցուեցաւ:

—Հապա կերակուրները, Պայրամ ընդ, —աւելցուց զրա-
գիրը—մարդը 10 տեսակ կերակուր էր պատրաստել տուեր,
բաց կ'նշ կերակուրներ. մանաւանդ փլնւ. մը բերին բերնիդ
արժանի...

Եւ տեսնելով որ քեթիպ էֆէնդին գիշերուան տպաւո-
րութիւններուն նկարագրութիւնը դեռ շատ պիտի երկարէր,
կամաց մը մօտեցայ և խնդրեցի, որ դործս վերջացնէ:

—Ալլահ, Ալլահ, համբերէ, քիչ մը շունչ առնենք, ինչ
չպայթեցար, պտուղ էֆէնդին երեսիս:

Բարեբաղդաբար Պայրամ աղան միջամտեց.

—Վնաս չունի, զրէ տուր, էֆէնդին իմ բարեկամիս տղան
է. և ինձի մօտենալով ակունջիս փսփսաց՝ «ճերմակ մը գիր
ձեռքը»:

էֆէնդին ճերմակը տեսնելուն պէս ամէն բան մոռցաւ և
գրիչը ձեռք առնելով գործս վերջացուց:

Բեռնակիր մը գտնելով անկողինս ու իրեղէններս ալ
վերցնել տուի և սրապոյզը բոպէն հառաւ հրաժեշտ տալու իմ
երկու աչքի լոյսերուն՝ Օսման չափուչին ու Պայրամ աղային:

Օսման չափուշը չորս մէծիւտով դոհացուցի, իսկ Պայրամ աղային ափը հինգ ոսկի դնել հարկ եղաւ: «Բարի ճանապարհ, չմոռնաս Պայրամ աղային լաւութիւնը», պատուիրեց ետեէս հօրս բարեկամը:

—Միթէ կարելի է մոռնալ...

6

Ոստիկանութեան հիւրանոցէն քաղաքի հիւրանոց մը փոխադրուելով, ձիգրէ պնացող կարաւան մը փնտռելու ետեէ էի, երբ յանկարծ սաստիկ տենդ մը բռնեց զիս: Գլուխս նոյն օրը բարձի վրայ դրի և երկու շաբաթէն հազիւ կրցայ բարձրացնել: Այդ վիճակին մէջ բժիշկը թոյլ չէր տար ճամբայ երթալ, ուստի շաբաթ մըն ալ սպասել հարկ եղաւ: Ուղղակի ձիգրէ դնացող կարաւան չէր գտնուեր, այդ պատճառով ստիպուեցայ Սղերդի կարաւանին միանալ:

Հազիւ Սղերդ հասած և իսան մը իջեանած էի, երբ ոստիկան մը գալով անցազիրս առաւ և ինձ ալ պատուիրեց որ շուտով ոստիկանատուն ներկայանամ: Յոգնած ու զբաղուած լինելով նոյն օրը չկրցայ այդ պատուէրը կատարել, բայց մինչև երեկոյ ոստիկանին մէկը գնաց միւսը եկաւ, յայտնելու որ կօմիսէր էֆէնդին զիս կուզէր:

Յաջորդ առաւօտ ելայ դնացի: Շատ կը սխալէի կարծելով թէ ամէն ապաշխարանք վերջացուցած էի: Այստեղի կօմիսէր էֆէնդին ալ իր նուրբ օրէնսգիտութեամբ, բոլորովին նոր բան մը մէջ տեղ հանեց — Ամերիկա չփախչելու համար մարդու երաշխաւորութիւն չի բնդունուիր, այլ օրէնքով պէտք է անպատճառ յիսուն ոսկի հնչուն դրաւ դրուի կառավարութեան սնտուկը:

—Լաւ, բայց, էֆէնդի, ինձի այս անցազիրը տուողները այդ օրէնքը չգիտէին:

—Ես ուրիշներու ըրածը չեմ գիտեր, ես օրէնքը միայն գիտեմ—վճռական կերպով պատասխանեց ոստիկանագետը, որ Պօհիթանցի քուրդ մըն էր—անցազիրդ կը մնայ հոս, մինչև որ 50 ոսկին բերես:

—Խնդրեմ, անցազիրս տուր, էֆէնդի, երթամ, գործիս կ'ուշանամ. եթէ օրինական սխալ մը պատահած է, և եթէ պատասխանատուն ես եմ՝ յետոյ էրզրում վերադառնալուս կը տուեմ:

—Կհաժուրին նայէ, կեալուրին. մարդ պիտի խաբէ խելքովը. էրզրում մէրդրում ես չեմ ճանչնար, եթէ վաղը եղնես

ասկէ Ամերիկա փախչիս պատասխանատուն ես եմ, ոչ թէ դուն կամ էրզրումը:

Ալ ի՞նչ ըսէի այդ գլխով մարդուն, որ Ամերիկա փախչիս այնպէս հեշտ կ'երևակայէր, կարծես թէ Սզերզը մեծ նաւահանգիստ մը լինէր և օրը քանի մը շողենաւ ճամբայ հանէր դէպի Նեկօրի: Անցազիրս թողուցի ու դուրս ելայ, սաստիկ բարկացած և ուխտ ընելով որ այլ եւս փարա մըն ալ չտամ: Նոյն օրը հեռապիւր տուի Բաղէշ՝ կուսակալին ու կոմիսէրին և ինզիրը պարզելով անօրինութիւն խնդրեցի: Սակայն անցաւ 10 օր և ոչ մէկ պատասխան չեկաւ:

Քուրդ կոմիսէրն ալ իր Պայրամ աղսն ունէր, որ ամէն օր քովս կուգար, այն զսնազանութեամբ միայն, որ աս առանց հօրս հետ ծանօթ ելնելու կը բանակցէր հետս և առհասարակ աւելի անկեղծ կը խօսէր: Ոստիկանապետը իմացեր էր Բաղէշ իմ գլխէս անցած դարձածները, 80 ոսկիին պատմութիւնը և բարկացեր էր, թէ «ի՞նչ է, Պիթլիսի կոմիսէրը ատամներ ունի, ես չունիմ, ինծի ինչո՞ւ բան մը չի տար»:

Խնդրին ներքին երեսը այսպէս պարզուելէ յետոյ, տեսնելով որ Բաղէշէն կամ ուրիշ տեղէ մը օգնութեան յոյս չկայ, ստիպուեցայ ուխտս դրժել և 10 ոսկիի կրկին գնել անցապիրս Սզերզի կոմիսէրէն:

Ընդամէնը 17 օրի չափ ալ Սզերզ օգալիտութիւն ընելէ ետքը, կարաւան մը գտնելով մեկնեցայ և յուլիս 18-ին վերջապէս հասայ Ծիզրէ:

Անցեալէն փորձուած՝ հասնելու օրը անմիջապէս ոստիկանատուն ներկայացայ, անցազիրս յոյց տուի, խանի սենեակս վերադառնալով երկար նամակ մը գրեցի Սարգիսին և իբրի բուրդի վաճառականութենէս զոյացած առաջին վաստակ՝ 120 ոսկիին հաշիւը ներփակեցի:

Քիչ մը հանգստանալէ յետոյ գնացի դտայ բուրդի միջնորդներէն քաղդէացի Աբդիշօին՝ յայտնելու թէ եկեր եմ ապրանք գնելու:

— Գո՛ւ տարուան համար, — պատասխանեց մարդը՝ քահ-քահ խնդալով, — չմտ կանուխ ես եկեր:

ԱՌԱՆՁԱՐ

ԱՄԵՆ ԳԻՇԵՐ...

Ամեն գիշեր մեր պարտիզում
Լալիան ուռին, ծեր ուռին
Վշտատուչոր լաց է լինում,
Լաց է լինում իմ ուռին:

Նա լալիա է դառնակսկիծ
Ոճիրները աշխարհի,
Նա լալիա է սրտի թախիծ,
Տանձանք, արին զոհերի:

Եւ որբում է առաւօտու
Կոյս արեւը նազելի
Իւր ծամբով հէգ ուռենու
Արցունքները բերեղի...

Ա.Ի. ԻՍԱՀԱԿԵԱՆ

Խ Ա Չ Ա Խ Ճ Ի Ն

Մութ ու մռայլ գիշեր էր: Դեկտեմբերի կծու հով մը կ'ոռնար այսահար, հոն, Իւսկիւտար, Գարաճա-Ահմէդի գերեզմանատան նոճիւրներուն մէջէն, որոնց դալարատանջ հեծեծիւնները օդը կը լեցնէին: Գիշերապահը ժամը վեց կը զարնէր Ս. Կարապետ եկեղեցիին մարմարեայ սեմին վրայ: Գիշերուան այդ մենութեան մէջ, այդ մենակերպ հնչիւնը, որ մէկ քանի վայրկեանը անգամ մը կը կրկնուէր, մարդկութեան մէկ ողբը կը թուէր՝ բնութեան ընդհանուր կոծին խառնուած,—ողբը հէզ գիշերապահին, որ այդ ցրտասարսուռ գիշերով կատաղի հովին գէմ կը պարզէր իր կուրծքը, ու կեանքըն ալ դուցէ:

Շրջակայ տներուն մէջ, որոնց ուրուագիծներն ալ չէին որոշուեր միահեծան խաւարին մէջ, ալ լոյս չէր մնացած: Ս. Կարապետ եկեղեցիին բարձրադիտակ զանգակատունը միայն կը պարզէր իր ուրուատեսիլ կատարը, ու անոր ճիշտ դէմը, թափուր գետնին մէջ, ուր ժամանակաւ այրած տներու փլած պատերը միայն կան ցանուցիւր, յաղթ նոճի մը իր ցցունազարդ գագաթը կը խոնարհեցնէր մռնչող հովին տակ:

Գիշերապահին ողբը նորէն լսուեցաւ բնութեան անհուն աղաղակին խառնուած. մէկ, երկու, երեք, չորս, հինգ, վեց, եօթը: Այդ մարդը մինաւորիկ կը հսկէր բնութեան տագնապին:

Այդ խաւարին ու մրկին մէջ, ինքը մենակ չէր սակայն. Ս. Կարապետ եկեղեցիին դիմացի տափարակին մէջ, յաղթապանծ նոճիին տակ, մարդ մը կանգուն կը սպասէր չորս ժամէ ի վեր:

Քսաներեք քսանըչորս տարեկան երիտասարդ մըն էր, և ժամը հինգէն ի վեր հոն կը սպասէր փախստեայ ծխախոտի, զոր նոյն գիշերն իսկ պիտի ստանար էրէնքէօյէն:

Բրդէ հաստ կօճուկի մը մէջ փաթթուած էր գըլխէն մինչև ոտըը. ու նորէն, ցրտին դիմանալու համար, կէս ժամը անգամ մը բերնին կը տանէր ումի չօդրա մը, զոր իր վերարկուին լայն գրպաններուն խորքը կը սահեցնէր ապա:

Համբարձում Քիրէճճեան կը կոչուէր, արհեստով գրաչար: Ճեմարանին մէջ,—որ հիմա այրացաւեր փլատակներու կոյտ մըն է լսկ տխրատեսիլ,—իր նախնական ուսումը ստացած էր, ու տասնըվեց տարեկան գործի ելած էր, ընտանիքին օգնելու համար: Գրաչար եղած էր: Իր շահած շաբաթական դոյզն գումարը գրեթէ ամբողջութեամբը հօրը կուտար, որպէս զի կարենար պահել իր բազմանգամ ընտանիքը,—հայր, մայր և վեց զաւակ, որոնց չորսը աղջիկ: Հայրը դարբին էր, քիչ շատ կը վաստկէր, և «վարդի պէս կ'ապրուէին»:

Օր մը, հայրը մեռաւ: Սե. օրը այն օրը եղաւ իրենց տանը համար: Ան առեն, Համբարձում ութսուն զրուշ կ'առնէր շաբաթը: Այդ գումարէն պէտք էր տանը վարձքը վճարել և սպրեցնել, իրմէ վատ, դեռ վեց հոգի: Մայրն ու երկու հասուկ աղջիկները սկսան դուրսի կար կարել. պզտիկ մանչը, Արշակը, հազիւ տասնըմէկ տարեկան, դպրոցէն հանեցին և ժամագործի մը քով տունն շաբաթական տասը զրուշով, որուն հինգը շաբաթ իրիկունները՝ կը բերէր մօրը կը յանձնէր: Եւ սակայն, երկու ամիս չանցած, հացադործը ալ սկսու հաց

չտալ, և մատաւածառն ու նպարաւածառը տանը դուռը ափ առին:

Համբարձումի համար տանջանքը սկսաւ, նիւթուկան ու բարոյական ահռելի տանջանք: Յերեկները պաշտօն-հաց կ'ուտէր, և օրը քսան փարա խնայելու համար Իւսկուտարի առաջին ու վերջին շոգենաւերով կ'երթեկէր: Բայց ամենէն աւելի իր սիրտը ճմլող բանն էր տեսնել իր խեղճ մայրն ու մատաղատի քոյրերը որ ասեղին տակ կը ծակծկէին իրենց մատները՝ մինչև կէս գիշերն անցած:

Չյուսահատեցաւ սակայն, և դուռը ապին անդին զարկաւ: Ախ, եթէ կարենար բացէն շահ մը ու նենալ:

Այդ միջոցին էր որ իր դպրոցական ընկերներէն մին, որ ետքէն իր սէքքի բանդալոնը՝ ապա բոթուի փոխած էր և որուն ինչպէս ապրիլը ոչ ոք գիտէր, իրեն առաջարկեց փախստեայ ծխախոտ վաճառել, զոր ինք կ'երթար կը բերէր Չինկէանէ քէօյէն, Չերքէսքէօյէն, Էտէնքէօյէն և այլն: Համբարձում վտանգը աչքը առաւ, և ամէն առտու կռնակին ու կուրծքին վրայ չորս-հինգ ծրար ծխախոտ կտալով՝ կը տանէր Պօլիս իր բարեկամներուն ու ծանօթներուն ծախելու:

Ամիս մը այսպէս շարունակեց: Ամառը լիւն, երկու ոսկի շահ մնացած էր իրեն: Տանը մէջ սկսան քիչ մը շունչ առնել:

Ան ատեն, պատանին, մօրն ու քոյրերուն բեռը բոլորովին թեթեցնելու համար, յանդուգն դադափար մը ունեցաւ: Փոխանակ միջնորդի դեր կատարելու, անձամբ ուղեց փախստեայ ծխախոտ բերել տալ: Կիրակի օր մը Էրէնքէօյ դնաց, և հոն ամէն բան կարգադրեց Գամպուր Մէհմէդ անուն հողատէրի մը հետ:

Իրական վտանգը ան ատեն սկսաւ: Ծխախոտ վախցնելը, քէօի գէտերուն խիստ հսկողութեան հակառակ, դիւրին դործ չէ: Թողէք տուգանքն ու բանտար-

կուլթիւնը, պէտք է նաեւ ամէն վայրկեան մաքառիլ դէտերուն դէմ և դաշոյնն ու ատորճանակը ձեռքէ չթողուլ: Յանդգնութիւնը չէր պակսեր քսանամեայ պատանիին բով, և հակառակ մօրը աղերսագին պաղատանքներուն, տարիէ մը ի վեր Համբարձում իր հաշուին կը գործէր: Իրարու վրայ շաբաթական սսկի մը շահ կ'ունենար, և հանգուցեալ դարձինին տունը իր բարեկեցիկ վիճակը կը ստանար հետզհետէ: Եւ երբ Համբարձում կը տեսնէր որ քոյրերը իրենց վաստակը իրենց արդու-դարդին միայն կը նուիրէին այլ ևս, ալ կը մոռնար իր բոլոր յոգնութիւնները ու բոլոր սրտադողերը:

Գիշերապահին ճովանդ վերտաին հնչեցուց իր տըխուր ու մենակերպ նուագը,—մէկ, երկու, երեք, չորս, հինգ, վեց, եօթը, ութ, ինը: Այս անգամ սակայն ալ առջի ուժգին ողբը չէր. հարուածները հետզհետէ կը տկարանային մարմարեայ սեմին վրայ, ու հիմա նուազկոտ հեծեծիւնի մը պէս կը մարէին: Գիշերապահն ալ, բնութեան պէս, յոգնած կը թուէր: Հովը դադրած էր տակաւ առ տակաւ: Յուրտը կը սաստկանար:

Դեռ չեկան, մրմուռաց Համբարձում՝ ակռաներուն մէջէն ուժով հայհոյութիւն մը քրթմնջելով: Արդեօք փորձանքի մը հանդիպեցան:

Միևնոյն վայրկեանին՝ ականջները սրեց: Քայլափոխի մը թեթև ձայնը քիչ-քիչ կը մօտենար: Մուծին մէջ զանգուած մը սկսաւ որոշուիլ, որ զգուշութեամբ կը յառաջանար: Մարդկային ձայն մը մեղմիկ շնչաց.

—Հոգ ես, Համբիկ:

—Հա:

Նորեկը նոճիին տակ հասաւ:

—Ո՞ւր է Քէլէկը, հարցուց Համբարձում:

—Կուգայ կոր:

—Շատ ուշացաք: Վախցայ որ ճամբան փորձանքի հանդիպեցաք:

— Չէ, փառք Աստուծոյ, ամա այս հավայի՜ն...
Ճերմակ ջուր կա՞յ քովդ:

— Չէ, ում է: Ա՛ռ, մէջը կտոր մը ձգէ:

— Տո՛ւր, ցուրտը ճիյէրս անցաւ:

Եւ երկար ումա՞յ մը կու՛լ տուաւ անյապաքար:

— Ծօ մէջը բան չես ձգեր, Կոկոռդ:

Նորեկը աս անունով կը ճանչցուէր իր բարեկամներու շրջանակին մէջ: «Կոկոռդ»-ը կրճատումն էր «կոկորդիլոս»-ին, որուն արժանի դատած էին զինքն իր ընկերները՝ իր երկար չորուկ հասակին ու սրածայր դիւտուն համար: Ինք խաչախճիներու խլավուզն էր, գիւղերէն մինչև քաղաք ծխախոտ բերող բեռնակրին առջևէն կ'երթար հարիւր քայլ հեռաւորութեամբ, որպէս զի եթէ դէտերու հանդիպի, սուլէ և բեռնակիրը ճամբան փոխէ: Իր պաշտօնը ամենէն վտանգաւորն է, որովհետև գործը միշտ դէտերուն հետ է:

— Հա՛, Քէլէկը կուգայ կոր, ըսաւ Կոկոռդ՝ բռունցքովը պէխերը սրբելով:

Բեռնակիրը կը հասնէր: Երեսնամեայ յաղթանդամ թուրք մըն էր որ, երկար շունչ մը առնելով, դետին նետեց իր բեռը, քառսուն օխա ծխախոտ, զոր չալակովը մինչև հոն բերած էր Էրէնքէօյէն:

Համբարձում տուաւ անոր վարձքը, երկու մէծիտիէ, և մարդը ճակտին քրտինքը սրբելով նորէն ճամբայ ելաւ՝ քալելով Էրէնքէօյ դառնալու:

— Սա թիւթիւնը հիմակ ո՛ւր պիտի տանիս, հարցուց Կոկոռդ:

— Գուզկունճուք, Նիսիմին: Առաջուրնէ խօսած եմ:

— Աստուած կարողութիւն տայ: Բաղդէդ, հավան փէք պէրպատ է, վախու պան չի կայ:

— Չաթը տէրէին ճամբով պիտի տանիմ. հոն խօլճի չի կենար: Դուն հիմա ո՛ւր պիտի երթաս:

— Սէլամըզ, քրոջս: Վաղն իրիկուն գամ տէ հաշիւը լմնցունենք: Կեցիր սա թիւթիւնը կռնակդ տեղաւորցընեմ անանկ էրթամ:

Ու ծխախոտի խոշոր պարկը չուանով մը հաստատեց Համբարձումի կոնակին վրայ: Յետոյ, «գիշեր բարի» մը մրմռալով, անհետ եղաւ խաւարին մէջ:

Համբարձում՝ ալ ճամբայ ելաւ՝ իր ծանր բեռան տակ կքած: Անարգել անցաւ Վանքին Այգիին այրած տներուն փլատակներուն մէջէն, Բոսթա Եօլուն կտրելով՝ Խալֆային Պաղը մտաւ, յետոյ Իճատիէի բարձունքէն սկսաւ յառաջանալ դէպի Գուզկունճուքի ձորը, Ֆրէնկին լեւան ստորոտը: Բայց հազիւ ձորին մէջ մը տած էր, կանգ առաւ յանկարծ:

Իրմէ քսան քայլ դէպի առաջ, չորս հինգ ձիաւոր դէտ կը սպասէին անշարժ:

Համբարձում՝ վախկոտ չէր, գիշերուան այդ ժամուն, Եէնի-Մահալլէէն մինչեւ Գուզկունճուք այդ տաժանելի ուղեորութիւնը միայնակ կատարելը ամէն մարդու դործ չէ: Եւ սակայն սիրտը սկսաւ ուժգին տրոփել: Վեց հարուածեան ըէփօլլէրը գրպանն էր, և դաշոյնն ալ քովէն կախուած, բայց ինք միայնակ կրնար դիմադրել այդ խմբակին: Մէկ քանի անգամ այդ տեսակ կռիւներու մէջ գտնուած էր, բայց իր հետ միասին չորս հինգ ընկեր ալ կային ան տտեն:

Կորսնցնելու ժամանակ չի կար սակայն: Արդէն դէտերը տեսած էին զինքը, որովհետեւ իր վրայ կը յառաջային՝ իրենց ձիերուն քառատրոփ ընթացքով:

Համբարձումի համար երկվայրկեան մը անցաւ, ահռելի երկվայրկեան մը: Այն յանկարծական սրութեամբ, զոր միտքը կ'ունենայ վտանգի նմանօրինակ վայրկեաններու մէջ, տեսաւ իր բռնուիլը, իր քառսուն օխա ծըխախոտին համար ութսուն օր բանտ պառկիլը, — որովհետեւ ռսակից պիտի կրնար վճարել դրաւեալ փախստեայ ծխախոտի իւրաքանչիւր օխային համար երկու մէջիդի կանոնադրական տուգանքը, — և այդ ութսուն օրուան միջոցին՝ իր ընտանիքին չարչարանքը և գիշերները անօթի պառկիլը զուցէ: Այդ մտածումը ինչ քաջալեր տուաւ իրեն, իր երիտասարդական անձնավստահ խի-

զախութեանը մէջ ի՞նչ անսահման ոյժ գտաւ,—ինք
միայն կրնար զուրցել: Սա իրաւ է որ երբ դէտերուն
մեծը խրոխտ ձայնով պռնաց իրեն, թուրքերէն.

—Կեցիր,

Երկտասարդը քաշեց բէվոլվէրը և պատասխանեց.

—Ճամբայ բացէք որ անցնիմ: Թէ չէ, մէկիկ-մէկիկ
ձիէն վար կ'իջեցնեմ ձեզի:

Դէտերէն երկուքը, առանց կարեւորութիւն տալու
այս սպառնալիքին, ձիէն վար իջան և սկսան երկտա-
սարդին մօտենալ:

—Մի մօտենաք, կը զարնեմ, դուքեց նորէն Համ-
բարձում:

Դէտերը ետ քաշուեցան երկու քայլ, և փորձեցին
մնացին: Բայց իրենց խմբապետին հրամանին վրայ,
նորէն սկսան յառաջանալ, այս անգամ բէվոլվէր ի ձե-
ռին: Իրենք արտօնութիւն չունին կրակ ընելու խաչախ-
ճիներուն վրայ. այլ կարծեցին թէ երկտասարդը բնաւ
համարձակութիւն չի պիտի ունենար իր սպառնալի-
քը ի դօրծ դնելու, և յանդգնութեամբ առաջ նե-
տուեցան:

Համբարձում գլխու պտոյտ մը ունեցաւ ու աչքե-
րը մթազնեցան, ու, խելայեղ, պարպեց իր հրազէնը:
Դէտերէն մին ցաւագին ազազակ մը նետեց օդին մէջ,
իր ձախ թիւը բռնեց՝ ուր մտած էր գնտակը, և յետոյ,
մռնչիւն մը արձակելով, պարպեց իր բէվոլվէրը, հաղիւ
մէկ քայլ հեռաւորութեամբ:

Բէվոլվէրին պայթմանը ընկերացաւ ահաւելի ազա-
զակ մը: Երկտասարդը ձեռքը կուրծքին տարաւ, ուր
մտած էր գնտակը և կռնակէն դուրս ելած, ու դետի-
նը գլորեցաւ՝ իր ծխախոտի բեռան տակ ծածկուած:
Դէտերը անմիջապէս վեր վերուցին զինքը:

Հինգ վայրկեան ետքը, իր հոգին կ'աւանդէր՝ ան-
հասկանալի բառեր մը մնջելով, մինչ գիշերապահներ ու
ոստիկաններ կը վազէին կուգային ճեպընթաց:

Հիմակ հովը դարձեալ կը փչէր ամեհի ու ար-
շաւառոյր, հո՛ւ, հո՛ւ, հո՛ւ: Բնութեան տանջանքն էր
ատ, անհուն թառանջ մը, ուր առցուած են կարծեա
ամէն ողբերն ու մորմոքները, բոլոր կոծերն ու հառա-
չանքները: Իր ընթացքին մէջ կարծեա իր հեա կը բե-
րէր իր կտրած անցած վայրերուն բոլոր ցաւի աղա-
ղակները ու հեծկտուքները, ու հիմակ ալ ընդքարշ
կ'առնէր կը տանէր մեռնող երիտասարդին հուսկ յե-
տին խռնչիւնը:

Լ. ԲԱՇԱԼԵԱՆ

ՌՈՒՍՍՆԱՅ ՀՐԱՊԱՐԱԿԱԽՕՍՍՈՒԹԵԱՆ ՆԱՀԱՊԵՏԸ

(Սո. Նազարեանցի գործունէութեան ուրուագիծը)

I

Թէպէտ մենք կազմում ենք մի փոքրիկ ազգութիւն, թէպէտ մեր կեանքը դժգոյն է և աղքատիկ, բայց և մենք ունեցել ենք երախտաւոր գործիչներ, որոնք մշակել են մեր մտաւոր անդաստանը, բացել են մեր առաջ գոյութեան նոր շաւիղներ: Մեր մերձաւոր անցեալը յարուցել է շատ խնդիրներ, որոնք ուսանելի են և մեր օրերի համար: Գիտակցական կեանքը պահանջում է ուսումնասիրել ոչ միայն ներկան, այլ և այն աղբիւրները, որոնցից նա բղխել է, արիւն և մարմին է ստացել: Անցեալի գործիչների դաւանանքները, նրանց ղեկավարող իդէալները, նրանց գործելու եղանակը, այդ բոլորը մի կենդանի գալորդ է, որի ուսումնասիրութիւնը և օգտակար է, և պարտադիր մեզ համար:

Մեր ժամանակը, որ աղքատ է իդէալներով, կարող է շատ բան սովորել վաթսուներկան թուականների մշակներից: Նրանց ջանքերով է կենդանացել մեր կեանքը, նրանք են առաջացրել այն մտաւոր հոսանքը, որ մերթ իտաղացելուն էր և կարկաչուն, ինչպէս վտակ, մերթ մռնչող էր և փրփրուն, ինչպէս լեռնային ջրվէժ: Ոգևորուած ազգաշինութեան վեհ գործով հայ մտածողները ձեռք էին զարկել տենդային աշխատանքի, շատ տէգ ու նիզակներ են ջարդել նրանք, շատ եռանդ ու խելք են բանեցրել իրանց դասը առաջ տանելու համար:

Այդ գաղափարական շարժման գլուխ էր կանգնել գիտնական Ս. Նազարեանցը, որ, կարելի է ասել, ռուսահայերի հրապարակախօսութեան նահապետն է: Թէ իր կենդանութեան ժամանակ, թէ մահից յետոյ՝ նա եղել է խիստ յարձակումների ենթակայ, բայց ունեցել է և շատ պաշտպաններ: Անողորմ

գտնուեց զէպի նա Աղ. Երեցեանը «Փորձ» ամսագրի էջերում. նրան հակառակ՝ ջատագով հանդիսացաւ Ս. Շահազիզեանը իր «Հրապարակախօս Ձայն» աշխատութեան մէջ, Երկուսն էլ խոչորացոյցով քննեցին գիտնական հրապարակախօսի գործերը. մէկը գիտեց միայն թերութիւնները և եկաւ այն եզրակացութեան, որ Ս. Նազարեանցը «Իբրեւ հրապարակախօս համապատասխան չէր իր կոչմանը», իսկ միւսը, միայն արժանիքներ ուրոնելով՝ հռչակեց նրան «Պատէթէոս», գործիչի կատարելատիպ:

Աղ. Երեցեանը, նեղ կուսակցական ոգւով տոգորուած, լիւնելով հակառակ հայեացքների տէր մարդ՝ գրօյի հաւասարեց Ս. Նազարեանցին: Նա չը բարեհաճեց անաչառութեամբ բննել ներքան, դրեց նրա գործունէութիւնը ժամանակից և տարածութիւնից դուրս, որպէս զի նսեմացնի իր հակառակորդի վաստակները, մոռանալով որ չը կայ անպայման կատարելութիւն, ուր մնաց մի հրապարակախօս, որ սերտ կապ ունէր իր ժամանակի հետ և առաջինն էր փորձ փորձել՝ թօթափելու հնութեան փոշին: Եթէ «Հիւսիսափայլը» շուտ դադարեց իր գոյութիւնը շնորհիւ խաւար ոյժերի զբաղրութեան և հասարակութեան անտարբերութեան, եթէ նրա ղեկավարը չը կարողացաւ մշակել գործունէութեան սուղի բէալական ծրագիր, այդ դեռ չի նշանակում, թէ նա համապատասխան չէր իր կոչմանը: Ա. Երեցեանը նեղութիւն չը քաշեց ղեկավարուելու այս սեռակէտով. նա շատ բան ձիշտ լուսաբանեց, մերկացրեց Ս. Նազարեանցի շատ թերութիւններ, բայց չըմբռնեց նրա հրապարակախօսութեան էութիւնը, նրա բուն քաղաքացիական դաւանանքը, նրա արշաւանքի խորհուրդը կղերականութեան դէմ, որը ճշոււմ էր հայի հոգևոր ոյժերը, նա չուզեց հասկանալ, որ «հրապարակախօսական կոչումից դուրկ» գրողը չէր կարող ոտքի կանգնեցնել հասարակութեան մտածող մասը, կենդանացնել, նոյն իսկ ալէկոծել մեր խաղաղ կեանքը, եթէ չունենար կենսունակ իդէալներ. քննադատը չափազանց չղթալուած էր այն հայեացքով, որ «կրօնը հայոց համար միակ փրկարար միջոցն է մեր պատմական անցեալի անջատած օղը ձեռք բերելու համար»:

Երբ մենք կամենում ենք հասկանալ մի գրողի, կազմել նրա մասին լիակատար գաղափար, պէտք է քննենք նրան սուղի բարձր տեսակէտից, քան նեղ կուսակցական դաւանանքը, և սուղի մեծ բարձրութիւնից, քան ծխական զանգակատունը: Բաւական մեղանչեց այս սկզբունքի դէմ և Ս. Շահազիզեանը: Նա բողոքեց Երեցեանի միակողմանիութեան դէմ, չընդունեց քննադատի ոչ մի նկատողութիւն, չը գտաւ նրա ասածների

մէջ ճշմարտութեան ոչ մի նշոյլ, և զայրանալով անուանարկեց նրան՝ «Թաթար մէյդսնի կինոս», «անիրաւ չարախօս», «կաշառուած կրիտիկոս», «գիւղական աքաղաղ» և այլն մականուններով, և այդպիսով ինքն ևս ընկաւ միակողմանիութեան մէջ... Աշխատենք, ուրեմն, մի քանի բնորոշ գծերով ցոյց տալ Ս. Նազարեանի գործունէութիւնը, չը հետեւելով այս երկու ծայրայեղութիւնից և ոչ մէկին:

II

Սոս. Նազարեանցը իր ժամանակի համար յայտնի արեւելագէտ էր. նրա աշխատութիւնները արեւելեան գրականութեան մասին, մանաւանդ թարգմանութիւնները պարսկերէնից (Ֆիրդաւսի և Սաադդի), ռուսիցէլ են կարևոր նշանակութիւն, և, գուցէ, պահպանած լինեն մինչև այժմ իրանց արժէքը: Ժրաջան գիտնականը շատ բան է գրել և ամեն կերպ աշխատել է նրապատիւ իր ազգի մտաւոր-բարոյական վերածնութեան. վառուած քաղաքացիական պարտաճանաչութեան զգացմունքով՝ նա ջանք չի խնայել զարթեցնելու քնած ազգային միաքը և լոյս ներմուծելու մեր խաւար կեանքի մէջ: Բացի մասնագիտական ուսումնասիրութիւններից՝ միայն «Հիւսիսափայլ» ամսագրում նա գրած ունի հարիւր երկու յօդուած, որոնցից քսանը թարգմանական վէպեր են, իսկ մնացեալները շօշափում են բարոյական-փիլիսոփայական, պատմական-քաղաքական, բնագիտական և մանկավարժական խնդիրներ. նա աշխատանքի կատարեալ մարմնացում էր և, կարծես, երբէք ձեռքից բաց չի թողել զըրիչը:

1851 թ. նա լոյս է ընծայում մի գիրք «Յաղագս փորձական հոգեբանութեան ճառ» վերնագրով. սա նրա առաջին աշխատութիւնն է հայերէն լեզուով: Անկասկած, հոգեբանութիւնը, իբրև մի ուսմունք, որ խօսում է հոգու այլևայլ գործողութիւնների, յատկանիշների և կազմութեան մասին, կարևոր նիւթ է. բայց դա մի անհասանելի իմաստութիւն էր այն հասարակութեան համար, որի պէտքերին էր նուիրուած, դա մի ապարդիւն գործ էր սարբական կրթութիւնից զուրկ, «այբբենադէտ» ժամանակակիցների համար: Ո՞վ պիտի կարգար գրաբար գրուած «հոգեբանութեան ճառը»: Տգէտ հայ ծնողը կամ մանկավարժ տիրացուն, որ բացի անուս լինելուց՝ մոտափառութեամբ բռնուած չլինացի էր. հայ ինտելիգենտը, որ կարօտ չէր այդ տեսակ գրուածքին, իսկ հարկաւոր դէպքում՝ կը կարդար աւելի լուրջ հետազօտութիւն, քան այդ անաջող, կիսով չափ

թարգմանական ձեռնարկը՝ Ուրեմն ինչ նկատումներով է գրուած «Հոգեբանութեան ճառը»։ Մենք հաւաստի ենք, որ հեղինակը ունեցել է բարի նպատակ. պարզ է միեւնոյն ժամանակ, որ դատական մտածութիւնների արդիւնք է. անտրձ գիտնականը չէր կշռել այն հանգամանքը, թէ այդ գրութիւնը մի շտապութեամբ էր իր ժամանակի համար. բայց այս՝ մի օտարոտի զգացմունք էլ է զեկավարել իրան, ինչպէս այդ երևում է գրքի առաջաբանից։ Մի քանի դատարկամիտ մարդիկ իրանց մասնաւոր նամակներում տեսել էին, թէ Ս. Նազարեանցը զրաբար չը գիտէ,—իսկ դա ժամանակի հասկացողութեամբ հաւասար էր տգիտութեան,—և ահա մեր խայթումը գիտնականը ճգնում է ապացուցանել, որ դա զրպարտութիւն է, և իր հեղինակութիւնը վերականգնելու նպատակով լոյս է ընծայում «Հոգեբանութեան ճառը»։ Չարժէք զրա համար գրել մի ամբողջ գիրք «Ժանգոտեալ լեզուով» և այն էլ ընդդէմ սեփական հայեացքների. դա ցոյց է տալիս, որ և լուրջ մարդիկ յաճախ ունենում են տարօրինակ թուլութիւններ. դա միեւնոյն ժամանակ և վերջին տուրքն էր, որ վճարում է «նորասէր» գիտնականը. զրաբարի տիրապետութեանը։

«Հոգեբանութեան ճառից» յետոյ Ս. Նազարեանցը հանդէս է գալիս մի շարք դատական ձեռնարկներով՝ «Վարդապետարան կրօնի» (1853 թ.), «Առաջին հոգեղէն կերակուր հայազգի երեխաների համար» (1853 թ.), «Հանդէս նոր հայախօսութեան» (1857 թ.), սրանք բոլորը հեղինակի անխոնջ ջանասիրութեան և հայրենակիցների օգտին ծառայելու բուռն ցանկութեան արդիւնք են։

«Հանդէս նոր հայախօսութեան» երկհատոր գիրքը մի հակայական աշխատանք է ըստ ծաւալի, բայց շատ թերի է ըստ կատարման. դա մի խառնափնթոր հաւաքածու է, որ բաղկացած է պատմական, գիցաբանական, գրականական նիւթերից և կազմուած է սուանց մեծ ճաշակի և սիստեմի. նրա մէջ կան հարիւրաւոր յօդուածներ՝ և՛ «հանճարեղ առաջուածք», և՛ «քաջախիտ ու զօրաւոր խօսուածքներ», և՛ «բարձր ու վաղք պատկերացնող պատմութիւնք», և՛ «զանազան խորհրդաւոր պատմութիւնք», և՛ «զուարճալի ու սրամիտ զրոյցներ», և՛ «արեւելեան առասպելներ», բայց այդ յօդուածների մեծամասնութիւնը հասկանալու համար անհրաժեշտ էր բաւականաչափ պատրաստութիւն ունենալ Հռոմի և Յունաստանի պատմութիւնից, հարկաւոր էր հեղինակի խրթին և արուեստական լեզուին ընտելանալ. հանգամանքներ, որոնք զժուարացնում էին նրանց ընթերցանութիւնը ոչ միայն մանուկներին, այլ և հասակաւոր-

Ներքին։ Չը նայած այս թերութիւններին՝ «Հանդէս նոր հայա-
խօսութեան» գիրքը իր ժամանակ մի ուշադրաւ, մի նոր երևոյթ-
էր մեր աղքատիկ գրականութեան մէջ թէ իր ոգւով և ուղղու-
թեամբ, թէ նիւթերի առատութեամբ և բազմաօտեսակութեամբ։

Այս աշխատութիւնները Ս. Նազարեանցի առաջին գրա-
կանական գործերն են. գիտող աչքը չի կարող չը նկատել նը-
րանց մէջ մտքերի թարմութիւն, նոր բուրմունքները՝ նշոյլներ.
գիտնական հրապարակախօսը հաստատ վճռել է գնալ տիրա-
պետող հոսանքների դէմ և աւետել նոր խօսք. այդ գրութեա-
ները մի տեսակ նախերգանք էին այն դատի, որ պիտի սկսէր
«Հիւսիսափայլը», սակայն նրանք չեն Ս. Նազարեանցի համա-
ւի աղբիւրը. նա նշանաւոր է մեզ համար ոչ իր գրականական
վաստակներով, ոչ էլ իր դժուարական տրտղոսով, այլ իբրև
հրապարակախօս և քարոզիչ եւրոպական հասկացողութիւնների.
Նա ունի պատուաւոր գիրք մեր գրականութեան մէջ ոչ իբրև
գրականական տաղանդ, այլ իբրև պարագլուխ վաթսուական
թուականների դադափարական շարժման, իբրև լուսամիտ քա-
ղաքացի, որ կոչ էր անում գէպի նոր կեանք։

III

Վաթսուական թուականները մի դարագլուխ են կաղ-
մում մեր ինքնագիտակցութեան պատմութեան մէջ. այդ յի-
շատակելի ժամանակի մտաւոր-քարոյական ժառանգութիւնն է,
որ մինչև օրս չարունակում է յուզել հասարակական միտքը։

Յայտնի է թէ ինչ կենդանութիւն, վերանորոգական
բուրմունք էր տիրում Եւրոպայում և Ռուսաստանում, երբ
կերպարանում էր մեր ինտելիգենցիայի առաջին սերունդը.
Յայտնի է նոյնպէս «Երիտասարդ Գերմանիայի» ազդեցութիւնը,
որ Դօրբադի հայ ուսանողութեան միջոցով մուտք գործեց և
մեր կեանքում։ Մեր ինտելիգենցիան էլ ներագլուխով ժամա-
նակի ոգւով, սկսում է խորհել իր հայրենիքի վերաշինութեան
մասին։ Օտար աղգերի առաջադիմական ընթացքը, նրանց մրըր-
կալից ձգտումը գէպի հասարակական ինքնագործունէութիւն,
քաղաքացիական ազատութիւն՝ յուզում են և մեր երիտասարդ
մտքերը. հայ մտածողը «ազատութիւն» է գոչում և իր «անզօր
թեկերով ազատութիւն» է գրկում։

Հայ բանաստեղծ պատանին խիզախում է վրդովել իր
հայրենիքի քաղցր «նիրհը» և, տեսնելով նրա լալն ու կոծը,
նրա դարդն ու աղի արտասուքը՝ լցւում է աւելի քնքոյշ կա-
րօտով գէպի իր սգաւոր մայր-երկիրը, որի անցեալը խաւար

գիշեր է և 'ներկան' անապատ. ահա լուռւմ է նրա աւերակները միջից մի թարմ, եռանդուն ձայն, որ ասում է.

«Հայկ ու Լեոնին մոռանանք, կղբարք,
Թափ տանք մեզանից փոշին հնութեան,
Վերածնենք մեր մէջ նոր կեանք ու նոր բարք...»

Հայ գիտնականը քաղաքացիական պարտք է համարում իջնել գիտութեան բարձունքից, խօսել իր վշտաբեկ «մօր խօսքը».

Հնչիր դու, հնչիր այժմ և յաւիտեան,
Մայրենի լեզու, բարբառ սիրական,
Արի, բարձրացիր հնութեան փոշուց,
Ըզգեցիր նոր կեանք սուրբ գրուածներով,
Որ ամենայն սիրտ վառուի քո սիրով:

.

Ինտելիգենցիայի այս ներքին արամադրութեան արգասիքը լինում է «Հիւսիսափայլ» ամսագրի լոյս աշխարհ գալը (1858) ղեկավարութեամբ Ստ. Նազարեանցի, ամսագրի, որ գառնում է արտայայտիչ հայ մտքի լուսագոյն ներկայացուցիչներին. ոգևորուած ժամանակի առաջագիմական գաղափարներով՝ ասպարէզ են գալիս մեր հոգևոր դարնան առաջին զուշակները. կենդանի իրականութեան շահն էր նրանց առաջնորդող ոյժը, հայրենիքի վերածնութիւնն էր նրանց բաղձանքը:

Տիտւր պատկեր էր ներկայացնում մեր իրականութիւնը այս պատմական ժամանակամիջոցին: Հասարակութիւնը գտնւում էր ինքնագիտակցութեան ոլորմելի վիճակի մէջ. հայ փողաւորը և նրա արքանեակ հոգևորականը իրերի տէր էին հանդիսանում, հասարակական կարծիք կազմում: Ազգային գաղափարն ամփոփւում էր եկեղեցւո մէջ, հայութիւնը՝ քրիստոնէութեան մէջ: Հայ քաղաքացին համոզուած էր, որ ամեն ինչ կատարեալ է իր շուրջը և ոչ մի կարիք չը կայ մի մաղաչափ անգամ փոփոխելու պապերից ժառանգած հասկացողութիւնները: Ազգասէրը նա էր, որ ծածկում էր ազգային արատները, իսկ ով վստահանում էր նայն իսկ թեթևակի խօսել տիրող կարգերի դէմ, նա անպատկառ և ըմբոստ էր հռչակւում:

Գրականութիւնը ներշնչուած էր կղերական ոգւով. հասարակական միտքը չլիթայուած էր կղերական հայեաքներով և արտայայտւում էր կրօնական վէճերի և բարոյական դատողութիւնների մէջ: Գրականական և ուսումնական լեզուն գրաբարն էր. լուսաւորուածը նա էր, ով գրաբար գիտէր, և որքան խրթին էր գրում նա, այնքան ընտիր էր համարւում նրա լե-

զուհետ Լուսաւորութեան շտեմարան էին համարուում «Դեղ Կենաց», «Ծաղիկ գիտութեանց» *), «Ճրագ ճշմարտութեանց», «Թէսաւերոս» և սրանց նման բարոյախօսական գրքերը:

Ողորմելի էր և ազգային լուսաւորութեան վիճակը: Ուսման մատակարարը հոգեւորականութիւնն էր, որ ինքն էլ զուրկ էր տարրական կրթութիւնից. ուսանելի առարկաները սուղմոսն էր և Նարեկացին, մի կտոր քերականութիւն և ճարտասանութիւն, մի փոքր էլ հայոց պատմութիւն. տիրացու-վարժապետները ոչ մի գաղափար չունէին մանկավարժութեան մասին. «փալախան», օտքերը կաշկանդող այդ գործիքը, և «աջահամբոյրը», որ տրւում էր այն դէպքում, երբ աշակերտը ստանում էր իր ուսուցչից ընթերցանութեան նոր գիրք, ահա դաստիարակութեան գործօնները, որ հնարել էր ժամանակը: «Մի քան ազգը», — ասում է Ռ. Պատկանեանցը իր «Ազգային քերականութեան» յառաջաբանում. — տակաւին կրկնայ է. նա կարօտ է հմուտ և անկողմնապահ դաստիարակներին, որոնց բարի խրատով պիտի ուղղէ իր դողդուշուն քայլերը. դժբախտաբար, այդ մանկավարժները իրենց սուգը տգիտութեամբ, անընկճելի յամառութեամբ, նախանձով և չարակամութեամբ, այնպէս նախապաշարել են իրանց ձեռնասուններին, որ սոքա մինչև այժմ խօսում են նոյնը, ինչ որ կէս դար առաջ իրանց շաղաւառի դաստիարակներին և ինչ որ մի անգամ տպաւորուել է նոցա թեթեւ խելքի մէջ»:

Հայ ծնողների միծամամնութիւնը դեռ ևս չապլուծիւն էր համարում ուսումը. նա կարծում էր, որ լուսաւորութիւնն անհրաժեշտ է մի տիրացուի, քահանայի կամ փիլիսոփայի, իսկ ով չի պատրաստում այդ կոչումներին համար, դա մի ապարդիւն ժամաւաճառութիւն է: Հայ ընտանիքը ունէր նոյն նահապետական կերպարանքը, ինչ որ դարեր առաջ. հայ կինը նոյն հարձն էր և իր ամուսնու հաւատարիմ կողակիցը՝ անկամ և ճնշուած:

Այսպէս էր իրերի դրութիւնը, երբ հանդէս եկաւ Ս. Նազարեանցը իր «Հիւսիսափայլ»ով: Քաջ իմանալով, որ հայը տգէտ է և անկիրթ, նա ստանձնում է ուսուցիչ-դաստիարակի պաշտօնը և ամեն կերպ աշխատում է լայնացնել նրա մտաւոր հորիզոնը. նրա աչքում հասարակութիւնը ուսումնառու աշակերտների մի բազմութիւն է. «Թող հայը», — ասում է նա» — նստի այն աշակերտական սեղանի վրայ, որից պատճառ չունի ամաչելու ոչ մանուկը և ոչ հասակաւորը. դա մեր ամենեցուն պաշաճաւոր տեղն է». նա քնքոյշ սիրով սիրում է իր աշակերտ-

*) Սերովրէ վարդապետի պատկերազարդ հաւաքածուն:

ներին, բայց և չի թաղցնում նրանց թերութիւնները, նա անխնայ մերկացնում է հասարակութեան արատներն ու տկարութիւնները և մտադիր է բժշկել նրան էտիան միջոցներով, ինչպիսի դաւ էլ պատճառելու լինի իր բժշկութիւնը, նա բացարձակ յայտնում է, թէ «հայոց ազգի մարմինը ունի իր վրայ ապականուած տեղեր, դրանց քննել անաշուտպէս և ի բաց կըտրել սուր զանակով չպիտի վախենայ գիտութիւնը և մարդկութեան բարեկամը, թող հիւսնողը յաւի և գանգատէ, թող կարճամիտքը և հիւանդի մերձաւորքը հառայհոռոց բարձրացնելով հայհոյեն բանագէտ բժիշկը... Բայց այդ լայ ու կոծը չպիտի խափանէ բժշկութեան դործը, որչափ ծանր լինէին այն պայմանները, որոնց մէջ վիճակուել է հայկական բժշկին գործ դնել իր ճարտարութիւնը»... Նա լայն է հասկանում իր հասարակական դերը և գիտակցում է, որ ազգային շէնքը հնացել է, որ հասարակական կեանքն ընթանում է կորստաբեր ճոնապարհով, որ հարկաւոր է վերաքննել հին սկզբունքներն ու աւանդները, նախապաշարմունքներն ու մոլորութիւնները և կառուցանել նոր ազգային շէնք եւրոպական քաղաքակրթութեան հաստատուն հիմքի վրայ:

Նոր էր այս իդէալը և նրան զաւանուղ ամսագրի առաջին լուրը իրարանցում է առաջացնում աւանդապահների բանակում, նրանք օտքի են կանգնում, մտածելով մի գուցէ խախտուի իրանց հեղինակութիւնը, լարում են իրանց ոյժերն «անկոչ» հրապարակախօսի դէմ մաքառելու համար և հիմնում են «Մեղու Հայաստանի» լրագիրը խմբագրութեամբ Ս. քահ. Մանդինեանցի (1858 թ.): Խանդավարում է հնութեան քաղցր հանգիստը, այժմ նա լիովին ներշնչուած է անձնապաշտպանութեան զգացմունքով, այժմ նա սպասում է իր յանդուգն թշնամու գործողութիւններին:

Վստահ և համարձակ է դուրս դալիս կուռի դաշտ Ս. Նազարեանցը և իր նոր գործի պաշտպանութիւնը սկսում է աշխարհիկ բարբառի դատով, բարբառի, որ «գռեհիկ» անուն էր կրում, նա սկզբունք է յայտարարում, որ եթէ գիտութիւնը և գրականութիւնը դոյութիւն ունեն հասարակութեան համար, նրանց լեզուն էլ մատչելի պիտի լինի ընդհանրութեանը: Իր ամսագրի առաջին տետրակում նա գրում է մի ընդարձակ յօդուած «Հայկական լեզուի խորհուրդը» վերնագրով, որի մէջ ասում է, թէ «հայոց ազգի տունը պիտոյ է շինվի նրա լեզուի շինութեամբ, լեզուն է, որ անապատները շինել է բարեկարգ քաղաքներ և առաջացուցել է արուեստ և գիտութիւն, հաղարուոր գիւտեր և հնարներ... հայը սլարտական է համարել իւր

լեզուն իւր ամենասուրբ բանը, իւր աչքի լոյսը, իւր սրտի արիւնը, իւր կենդանութեան հիմքը, իւր պատիւը և պարծանքը... երբ մի ազգ ժամանակի հետ յառաջ խաղալով փոխում է կեանքի պայմանները, այնուհետև այդ կեանքի համար պիտոյ է նա ծնուցանէ և նոր ձևեր, նոր կերպարանքներ. պատճառ նոր հոգին կամի և նոր ձև...»:

Գրաբարը տարիների ընթացքում հասել էր զստամեալ հասակին և անկարող էր դարուս քաղաքակրթութեան արտայայտիչ լինել. նա անհասկանալի էր ժողովրդին. նա կատարել էր իր մայրական պարտքը և ակամայ պիտի զիջանէր տիրապետութեան իրաւունքը կենդանի աշխարհաբարին: Այս պարզ ճշմարտութիւնը զրգռում է հնասէրների զայրոյթը. նրանք չեն ուզում հասկանալ, որ լեզուն անցնում է զարգացման նոյն աստիճաններով, ինչ որ իւրաքանչիւր կենդանի էակ, որ նա ազգային ոգու արտայայտիչն է, ժողովրդի ստեղծագործութեան մշակն է՝ մի գեր, որ անզօր էր կատարել գրաբարը:

Այսպէս թէ այնպէս՝ անէծք ու նզովքներ են թափւում «խոռովարար» գիտնականի գլխին. նրա սկսած դատը հռչակւում է յանգուզն արշաւանք դարերից սրբագործուած աւանդների դէմ, անպատկառութիւն «կրօնի և բարեպաշտութեան» դէմ: Ա. Արարատեանը իր «Դիմագրաւ ընդդէմ սատան յարուցելոյ ամենապատուական լեզուիս հայոց» գրքով բողոքում է Ս. Նազարեանցի «անվայել արարքի» դէմ, «աղանդատարաւ և դաւաճան» է անուանում նրան, «կործանիչ կրօնի և ազգային պարծանքի», որ համարձակուել է թաղել «նախաստեղծ Ադամի լեզուն»: Սակայն հին լեզուի պաշտպանների վայնասունը տպաւորութիւն չի գործում. դա անզօր ծերութեան հառաչ էր: Մանուկ, թոթովախօս լեզուն ազատ հնչում է և ճիգ է թափում հարթել իր փշոտ ճանապարհը:

Ս. Նազարեանցը աջողութեամբ փաստաբանեց նրա իրաւունքները և կանգնեց նրա տիրապետութեան դրօշը: Բայց արդեօք աջողուե՞լ է նրան տալ մեղ իր տեսական հայեացքներին համաձայն կենսունակ լեզու: Դժբաղդաբար, ոչ: Գուցէ այդ հանգամանքը մասամբ բացատրւում է նրանով, որ նոր գրականական լեզուն ենթակայ էր «աճման հիւանդութիւններին» և իր մանկութեան պատճառով չէր կարողանում եւրոպական մտքի բաւարար թարգման լինել, բայց և անկասկած է, որ նրա պաշտպան Ս. Նազարեանցը չափազանց ակադեմիկաբար վերաբերուեց իր զրաժ հարցին. նա դեռ չէր ազատուել գրաբարի հիացմունքից և բարձրից էր նայում ժողովրդական լեզուի վրայ: «Գրոց լեզուն, — ասում է նա, — մի պերճ թաղա-

ւոր է, և աշխարհաբարը, ինչպէս սա գործ է ածուած աւմկի բերանում, հազիւ թէ արժանի է նրա ոտքը համբուրելու»։ Նա հրաժարուած է «քաղմութեան վայրենացած լեզուից» և երազում է մշակել «քաղաքացի հասարակութեան մէջ գործածական աշխարհաբարը», բայց դա էլ լոկ տեսական իդէ էր, որ չաջողուեց նրան իրագործել։ Նա ձեռք է վերցնում գրաբարից, որի «հանդէսը անդառնալի վերջացել էր», բայց և չի մօտենում ժողովրդականին, որ թւում է նրան «գոեհիկ և վայրենացած»։ Նա հիմք է առնում գրոյ լեզուն և աշխատում է նրան արուեստօրէն ժողովրդականացնել, մինչդեռ աւելի բնական կը լինէր մշտիկ կենդանի աշխարհաբարը, կանոնաւորել և ճոխացնել նրան, օգտուելով հին լեզուի ճարտարապետական ձևերից և պիտանի նիւթերից։ Մեր նոր գրականութեան նահապետ Խ. Աբովեանցը արդէն արել էր առաջին փայլուն փորձը իր «Վէրք Հայաստանի» երկով, դա մի սրտառուչ գարծ էր գէպի ժողովուրդը, մի բնական ճանապարհ, որ կարող էր արագացնել գրականական լեզուի զարգացումը։ Նոյն իսկ Մ. Նալբանդեանցը, քննելով «Հանդէս նոր հայախօսութեան» գիրքը՝ անուանում է հեղինակի լեզուն «աշխարհաբարախառն գրաբար» և ցանկութիւն է յայտնում առաւել ժողովրդականացած տեւեմել նրա լեզուն, որ աւելի մօտ է գրաբարին, քան կենդանի բարբառին»։

Լուրջ էին Ս. Նազարեանցի հայեացքները լեզուի զարգացման օրէնքների մասին, բայց նա չէր իմանում գործադրել նրանց. նա դարձնում էր լեզուն ըստ իր քմահաճութեան և մոռանում էր, որ նրա բուն հեղինակը ժողովուրդն է. սա է տալիս այն առողջ նիւթը, որ կոկում է և ճոխացնում բանագէտ գրողը. քանքարաւոր հեղինակը իր ստեղծագործող հանձարով զտում է և մաքրում նրան իր արհեստանոցում։ Ս. Նազարեանցը զուրկ էր այս ձիրքից. նա հաստորներ է գրել, բայց չի տուել մեղ այնպիսի լեզու, որ ունենար հետևողներ. նրա ոճը ճապաղ է և ծանր. նա չը գիտէ կարճ և ամփոփ գրել, բայց նրա գրականական խօսքը յաճախ աղղու է և կտրուկ շնորհիւ այն կրակի, որ նա ունէր իր բարբառուն սրտում, շնորհիւ իր անսասան համոզութեան և գաղափարակաւութեան. նա գրական չէր (литераторъ), այլ մտքի մշակ էր։

IV

Ս. Նազարեանցը բացասաբար էր վերաբերում գէպի մեր իրականութիւնը. մտածող քաղաքացին չէր կարող հաշ-

տուել այն անշարժութեան հետ, որ ճակատագրային կերպարանք էր ստացել մեր մէջ. նա տեսնում էր, որ հայը չափազանց կղերամիտ է ժամանակի հարցումները հասկանալու համար, որ հոգևոր դասակարգը բռնացել է հասարակական մտքի վրայ և կաշկանդել է ազգային ոգին: Ազգի պատմական անցեալը պատկերանում է նրա առաջ ինչպէս ալէծովի ծովի մէջ խորտակուած մի նաւ, որի ընկորները դուրս են ընկած ժայռի վրայ, ազգային վիճակը՝ մի անսպաս, որ պէտք է մշակել և ծաղկեցնել: Ազգու է և որոշ նրա գործունէութեան բնաբանը, որ մենք կարգում ենք «Հիւսիսափայլ»-ի ճակատին. «Այսուհետև ոչինչ կգիպտական խորամանկ քուրմեր, որ կամէին լինել գիտութեան միակ պահապանքը, այսուհետև ոչինչ չինէական պարիսպ, որ պիտոյ է փակէր լուսաւոր գաղափարների մուտքը ազգերի մէջ. այսուհետև լոյս և ճշմարտութիւն և ազատութիւն խաւարի բարեկոնեան գերութիւնից»: Դժուար էր տեսլի պարզ և կարուկ արտայայտել մի գործունէութեան ծրարագիր: Այստեղ կենդանի կանգնած է մեր առաջ ամբողջ նազարեանքը իր պարզ հոգևով և արի բնաւորութեամբ:

Նրա մարակը ուղղուած է հոգևորականների դէմ, որոնք եւ գիպտական քուրմերին յատուկ խորամանկութեամբ քողարկում էին իրանց տգիտութիւնը փքուն բարոյախօսութեամբ և իրանց կասկածելի իմաստութիւնը՝ մեռած գրաբարով:

Կղերն ի լնէ մեր մտաւոր-բարոյական վիճակի կարգադրին էր. նա էր մեր ուսուցիչը և խնամատարը. դարերի ընթացքում նա դարձել էր ազգային մտքի միակ ուղղիչը: Սա մի չարիք էր, որ պահում էր մեզ մի կախարդական տեղում և արգելում էր մեր հոգևոր ոյժերի զարգացման: Ժամանակակիցներից բարձր կանգնած Ս. Նազարեանքը, լաւ հասկանալով այս՝ արշաւանք է սկսում մեր խնամատարների դէմ և պահանջում է նրանցից կենդանի գործ: «Թող հոգևորականութիւնը, — ասում է նա, — դուրս գայ իւր միջին դարերի կապանքից, թող բացուի նրա բերանը... և կենդանացնէ Աստուծոյ բանը ժողովրդի մէջ»: Նա բուռն եռանդով քարոզում է, որ առաջագիմը ուղող ազգը ինքը պիտի հոգայ իր կարիքները, ապաւինի իր ոյժերին, նախաձեռնութիւն ցոյց տայ իր գործերի մէջ և իր աշխատանքով մտքի ճանապարհ բաց անի. «Ինքը ազգային հասարակութիւնը պարտական է պատրաստել իւր ուսուցիչը, եթէ չկամի, որ ամբարիշտ մարդիկ իւրեանց խաւարի թշուառ սպասաւորներով օձի ձաղեր անուշանին ազգի համար, կամ թէ իւրեանց գաղափարներով մեռուցանեն հայոց զաւակների հոգին և սիրտը. ազգի լուսաւորութեան անգաստանը պի-

տոյ է գործել աղղի հարազատ ձեռքով և ոչ թողուլ արեղանե-
րի կամքին... Հիայ այսուհետև արեղաներին գործ ազգային
խնդիրների մէջ. ժողովուրդը կարօտ է այժմ այլ ուսուցիչների,
քան թէ կարող էր տալ նորան խուլների մէջ փակած, մարդ-
կութիւնից օտարացած մի հասարակութիւն»:

Ունէր արգեօք Ս. Նազարեանցը լուրջ հիմք այսպիսի
մեղադրանքներով արշաւելու մի դատակարգի դէմ, որ մեծ
գեր է խաղացել մեր պատմութեան մէջ: Անկասկած, այն Նա
քաջ գիտէր, որ հոգևորականութիւնը տուել է մեզ գրականու-
թիւն և եղել է միշտ մեր անջատուած ոյժերի կապակցող օ-
ղակը, բայց գիտէր նոյնպէս, որ նրա ժառանգորդները անար-
ժան հովիւներ են իրանց հօտի, առանց վաստակի փառք պա-
հանջող, առանց պարտականութիւնների իրաւունքներ բանե-
ցնող: Ս. Նազարեանցը յայտնում է, թէ «մեր եկեղեցին կա-
րօտ է մի աղղու վերանորոգութեան աւետարանի հաստատման
հիման վերայ. նորոգութիւն աւետարանի լուսով, նորոգութիւն
դիտութեան զօրութեամբ». սա չէր նշանակում փոփոխել ե-
կեղեցու դասանութիւնները, սրանով առաջարկում էր միայն
կրթել նրա ազէտ պաշտօնեաներին և հաստատել մեր մէջ ա-
ւետարանի վարդապետութիւնը:

Յաւն այն չէր, որ փչացած, շահախնդիր մարդիկ օտարա-
նում էին մեղանից. նրանց համար ոչ կրօն կայ, ոչ ազգու-
թիւն, միայն թէ պարարտի իրանց մարմինը. «թող ազգային
ծառի անպիտանացած ճիւղերը բաժանուեն նրանից». յաւն
այն էր, որ դիւղայիներն էլ ուրանում էին մայրենի եկեղե-
ցին, մի տարր, որ պաշտպանել է իր կրօնը հազար ու մի
դրկանքներով: Ինչո՞ւմ էր գաղտնիքը: Մի պատասխան միայն
կարող էր լինել. հովիւների անպարտաճանաչութեան և հօտի
անխնամութեան մէջ:

Գատապարտելի էր կղերի վարքը դէպի ժողովուրդը, սա-
կայն աւելի դատապարտելի էր այն ոգին, որ նա մտցրել էր
մեր կեանքի մէջ. արքայապետական տենչով բռնուած՝ նա կրթել
էր ազգը կղերական իդէալներով. օրօրելով նրան հնութեան
աւանդներով՝ նա շղթայել էր մտքերը և գիտակցաբար խեղ-
ւում էր քաղաքացիութեան ամեն մի արտայայտութիւն հա-
սարակութեան մէջ: Հայ ազգասէրը չէր ճանաչում հայութիւն
«արտաքոյ Հայաստանեայց եկեղեցւոյ» և պնդում էր, թէ մեր
ազգը կրօնական համայնք է, թէ եկեղեցին և ազգութիւնը մի
գաղափար է. սա մի սկզբունք էր, մի անխախտ ուսմունք
նրա աչքում: Նա չէր ընդունում այն հայեացքը, որ ժամա-

նալին առաջացնում է կեանքի նոր ձևեր, որ որոշ պատմական հանգամանքներում ազգայնությունից դադարաբեր կարող է ստանալ նոր կերպարանք:

Այդ միակողմանի դաւանանքի դէմ գինաւորում է Ս. Նազարեանցը իր մտքի ամբողջ զօրութեամբ. նա չի կարող մի ազգի հոգեւոր գոյութիւնն ամփոփել այդպիսի նեղ շրջանակների մէջ. նա առում է, թէ «հայկական եկեղեցին ազգայնութեան տարրերից մէկն է և ոչ սրա միակ մարմնացումը, թէ կրօնը ազգի համար է և ոչ ազգը կրօնի համար»: Իրաւ, եկեղեցին եղել է և պիտի լինի ազգային մեծ հիմնարկութիւն, բայց նա չի կարող բովանդակել իր մէջ ազգի բոլոր իդէալներն ու ձգտումները. նա եղել է մեր հոգեւոր գաստիրարակը և միշտ էլ կը կատարէ իր վսեմ դերը, բայց որոնել միայն նրա մէջ ազգաչինութեան բոլոր նիւթերը՝ նշանակում է մոլորուել և չը հասկանալ ազգերի պատմութեան ընթացքը: Մարգարային մտքի փայլուն նուաճումները գիտութեան զանազան ճիւղերում այնքան մեծ են, որ եկեղեցին անկարող է ամփոփել իր մէջ մեր առաջադիմութեան համար անհրաժեշտ բոլոր մտնողները:

Յաւալի էին կղերի տիրապետութեան հետեանքները: Վաս էին կրթել հովիւները իրանց հօտը, այդ ոգւով տողորուած անկարելի էր առաջադիմել. լոկ կրօնական իդէալներով տնհնարին էր գրաւել մի կայուն տեղ ապագայ ունեցող ազգերի շարքում: Կղերական աշխարհահայեացքն արգելում էր առաջադիմութեան. հոգեւորականութիւնն իր դերում վաղուց դադարել էր կենսունակ գործօն լինելուց. ժամանակը պահանջում էր մշակել նոր իդէալներ: Պէտք էր թօթափել կղերի խնամակալութիւնը, ազատուել նրա լծից և լուսաւոր քաղաքացիներին միահամուռ գործակցութեամբ հոգալ ազգային կարիքները և նպաստել քաղաքացիական կեանքի զարգացմանը: Այս գիտակցութեամբ է սպառազինում Ս. Նազարեանցը կղերի դէմ, որ ծէսը պաշտամունք էր դարձրել, անչարժութիւնը՝ ուսմունք, իսկ քրիստոնէական վեհ վարդապետութիւնը՝ մի գործիք՝ տիրապետելու մտքերին և ազգային վիճակը իր ձեռքում պահելու: Բուն եռանդով է մաքառում նա այն ազգասէրների դէմ, որոնք ազգի փրկութիւնը տեսնում էին միայն լուսաւորչական եկեղեցու մէջ և մոլեռանդութեամբ հալածում էին ուրիշ դաւանութեան պատկանող հայերին. լինելով ճշմարիտ քրիստոնեայ, խանդավառ սիրով վերաբերուելով մայրենի եկեղեցուն՝ նա ջանում է կրթել հասարակական միտքը համբերողութեան դադարաբերութեան, Խնչպիսի սրտմատութեամբ պախարակում է նա

այն ֆանատիկոս հայերին, որոնք տմարդաբար չէին թոյլատրել թաղելու մի բողոքական հայի դիակն իրանց գերեզմանատանը: Տխրահոչակ դէպքը պատահում է Պօլսում: Մեռեալի ազգականները, մերժում ստանալով ազգակիցներին՝ դիմում են անդլիական դեսպանին և նրա օգնութիւնը հայցում. դեսպանը միջամտում է, բարեխօսում է տաճիկ կառավարութեան առաջ, ապա սրա զօգքի և ղէնքի ոյժով թաղել է տալիս արդէն կաղմալուծուած դիակը: Այս դէպքը խորապէս խոցում է Ս. Նաղարեանցի սիրտը. նա պնդում է, որ մեր և կեղեցին միշտ համբերող է եղել և միայն նրա անարժան սպասաւորները հոչակում են նրան մոլեռանդ, պնդում է նաև, որ հայը միշտ և ամեն տեղ հայ է, ինչ կրօն էլ դաւանում լինի նա:

«Պիտոյ է թողուլ,—ասում է նա,—նեղ և փոքրոգի կրօնական հայեցութեամբ, պիտոյ է հասկանալ, որ ֆանատիկոսութիւնը մեծ արգելք է ազգային լուսաւորութեան և կրթութեան ճանապարհի վրայ... դաւանաբանութիւնը չէ բրիստոնէական կրօնի իսկութիւնը, քրիստոնեան կամակորուելով այդ հիմքի վրայ, միշտ կը մնայ իւր ընկերին ատեցող, թշնամի և հալածող»:

Սարսափահար է անում կղերականներին այս համարձակ հայեացքը: Խայթում պահպանողականները ոտքի են կանգնում յանգուզն գլանականի դէմ, նրանց թարգման լրագիրը՝ «Մեղու Հայաստանին», «Կոռնիկը» և «Ծոպաղը» հուշակում են նրան «գաւաճան», «հերետիկոս» և «լութերական»: Սրտմտոզների զլուխ է կանգնում Յ. Չերքեղեանցը, որ յայտնի էր իր յարձակումներով Ս. Նաղարեանցի վրայ. նա դիմում է բողոքագրով Մատթէոս կաթողիկոսին, մատնացոյց է լինում «խոռվարար» հրապարակախօսի հակաքրիստոնէական ուղղութեան վրայ, և տղերսում է նրանից դադարեցնել տալ «Հիւսիսափայլը», ինչպէս մի հակազգային ամսագիր:

Բողոքատուին համամիտ կաթողիկոսը աշխատում է մարմնաւոր իշխանութեան միջոցով փակել «Հիւսիսափայլը», բայց այդ չի աջողում. այն ժամանակ նա վշտացած տարօրինակ հարածանք է սկսում չարաբաստիկ ամսագրի դէմ, կոնդակներ է ցրում ամեն տեղ, բանադրում է նրան և հրաման է արձակում բաժանորդ չը գրուել հերետիկոսական թերթին: Ազգի հովուապետը իջնում էր բարձր գահից և, ներհնչուելով ընազդական ատելութեամբ դէպի նոր գաղափարական հոսանքը՝ ջանում է իսպառ խեղդել ճշմարտութեան ձայնը. ազգի ընտրեալը, ամենայն հայոց կաթողիկոսը, որ պիտի հանգստացնէր հասարակական խիղճը, հալածում է մարդասիրութեան և համբե-

լողութեան դադարարը, սակայն... նա ընական արտայայտիչ էր իր դասակարգի և այն մարդկանց, որոնք դիմել էին իր օգնութեան:

Հասկանալով այս ճշմարտութիւնը և գիտակցելով իր սկսած դատի հիմնաւորութիւնը, Ս. Նազարեանցը գինաթափ չի լինում հակառակորդների առաջ. նա լայն սիրտ տղամարդ էր և արհամարհում էր թշնամիների «սե ըամբասանքը»: «Մեր եղբայրքը», — ասում է նա, «կամենում են ինձանից գովասանութեան քաղցր մեղր, բայց ես, միտ դնելով նոցա ջերմախառութեանը՝ կարող եմ միայն տալ նոցա դառն խինին, և այս էր նոցա փրկաւէտ ճարն ու դեղը»:

Սիրելի չէր այս մտրակող ուղղութիւնը հասարակութեան մեծամասնութեանը. ոչ միայն կղերը, աղքատէր-տիրացուները, այլ և հայ փողաւորը ասում էր «հերետիկոս» հրապարակախօսին, որ համարձակում էր մերկացնել իր պծուծ կերպարանքը: Փողաւորը սովոր է, որ իրան խուսկ ծխեն, մեծ մարդ ճանաչեն, իսկ Ս. Նազարեանցը ցոյց է տալիս, որ հայ հարուստը չունի հոգևոր պահանջներ, միայն «զանձեր է դիւլում», որ նրա «սիրտը քար է, և անմտտելի թշուառութեան ձայնին», որ նա անառակ է, չափ, մնափառ, մարդատեաց, կեղևքիչ թոյլի, հղօրի առաջ քծնող, առանց առաքինութիւնների պատիւ պահանջող. «հարստականքը ոչ թէ քաջալերող և ձեռնտու չեն հայկական գիտութեան, այլ դրականապէս թըշնամիք, հալածողք, և ինչու, որովհետև այդ ասիայիք նայում են գիտութեան վերայ, որպէս մի անպատիւ աղանդու վերայ, որի պաշտօնն է կատարել նոցա կամքը, անուշ խուսկեր ծխելով նոցա քթին, գովասանելով նոցա չգործած սխրագործութիւնքը»:

V

Ս. Նազարեանցի ժամանակակից հայ հասարակութիւնը ներկայացնում էր մի անգոյն, խաւար ամբոխ, որ չէր իմանում, թէ ինչ է կատարւում լոյս աշխարհում: Դառնադին պատմական անյգքերը դրոշմել էին նրա վրայ յուսահատութեան կնիքը. գոյութեան դաժան կուռում հասարակակցութիւնը (общественность) տեղ էր տուել անհատականութեան, որ առանձնապէս զարգացել էր մեր մէջ. հայը մոռացել էր ընդհանուր շահերը և լիովին նուիրուել էր իր անձի պաշտպանութեան և սպանովութեան. չը կար գործունէութիւն հաւաքական ոյժերով, թոյլ էր ազգային ինքնաճանաչութիւնը:

Գրականութիւնը մի հեռաւոր, կզդիացած աշխարհ էր, որ վարժուում էր չոր ու ցամաք, վերացական դատողութիւններով աստուածաբանական նիւթերի մասին և արտազրուում էր գրքեր մի քանի տասնեակ ընթերցողների համար. չը կար կեանքի և գրականութեան մէջ այն աւելցութիւնը և մերձաւոր կապը, որոնք առաջացնում են նրանց փոխադարձ համազգեցութիւնը: Պէտք էր մօտեցնել միմեանց այդ երկու, իրար օտար տարբերք, բանալ նրանց մէջ հաղորդակցութեան կամուրջ. պէտք էր զարթեցնել բաժան-բաժան «ես»-երի գիտակցութիւնը և հաստատել նրանց մէջ բարոյական կապ, ներշնչել պարտաճանաչութեան զգացմունք դէպի ազգային մարմինը, դէպի ծնող հայրենիքը, պէտք էր, վերջապէս, յիշեցնել, որ բացի անձնական բարօրութիւնից կայ աւելի վեհ հասկացողութիւն՝ ազգային, հասարակական շահ:

Երջամիտ Ս. Նազարեանցը պարզ հոսկացել էր այս կարիքները. նա համոզուած էր, որ բաւական չէ ճահճացած կեանքի բորբոսը մարբել սպունգով, ինչպէս անելիս են եղել մեր լուսաւորութեան հոգատարները, այլ հարկաւոր է անցկացնել նրան քաղաքակրթութեան հրով, հարկաւոր է վերանորոգել հնացած հասկացողութիւնները աղատարար գաղափարներով. նա լուս գիտէր, որ հայը չի կարող պաշտպանել իր ազգային կերպարանքը, դնել իր համեստ լուման քաղաքակրթութեան գանձանակի մէջ, եթէ չընդարձակի իր մտքի ասպարէզը, չը բազխի վաստակաւոր Եւրոպայի գոները և չընթանայ նրա հարթած ճանապարհով. նա փափագում էր, որ հայը աշակերտի Եւրոպային, իւրացնի նրա ողու ձգտումները, հայացնի նրա մտքի արգասիքները. «պիտոյ է ինամեցնել Եւրոպականութիւնը և հայկականութիւնը», ասոն այս էր նրա հաւատոյ հանգանակը:

Նրա արչաւանքի էութիւնը հնի դէմ, նրա կոչի իմաստը դէպի Եւրոպան այն էր, որ հայը չը կզգիանայ առաջաւոր ազգերից, ըմբռնի ժամանակի առաջադիմական ոգին, ներազդուի հանրամարդկային լուսաւոր գաղափարներով. նա ուզում էր, որ Եւրոպան կարապետող ուսուցիչ լինի և ոչ ճնշող, ազգային առանձնայատկութիւնները ոչնչացնող տարր:

Արեւմտեան հասարակութիւնները վաղուց թօթափել էին իրանց խնամակալների լուծը. նրանք վաղուց իւրացրել էին հասարակական ինքնօգնութեան բարձր սկզբունքը. համերաշխ ընկերակցական գործունէութիւնը նրանց կեանքի ընդորոշ յատկութիւնն էր. դա մի շարժիչ ոյժ էր, առաջագիմութեան կենդանի գործօն: Ս. Նազարեանցը առաջինն է արծարծում մեր

մէջ այս կարևոր խնդիրը. նա ասում է, թէ «մարդուս մեծութիւնը և կարողութիւնը ընկերութեան մէջ է. մարդս միայնակ ոչինչ է, իսկ ընկերութեամբ ամենակարող է, իսկապէս հրաշագործ», թէ «աշխարհիս բոլոր բարիքները առաջացել են միաբան գործակցութեամբ և փոխադարձ օգնութեամբ»: Այս համոզմամբ նա յորդորում է հասարակութիւնը հիմնել «մի ընդհանուր-հայկական ընկերութիւն հայերի նիւթական և բարոյական կեանքը բարեկարգելու համար»: Ընկերութիւնը պիտի ծառայէր գրականութեանը, «ծաղկեցնէր մայրենի լեզուն», չըրատարակելով ինքնուրոյն գրութեանքներ և ընտիր թարգմանութիւններ եւրոպական լեզուներից. նա պիտի «բանար ազգի չքաւոր զաւակներին պատուաւոր հացի և ապրուստի ճանապարհ, ծանօթացնելով նրանց արուեստներին, երկրագործութեան և պատրաստելով պոլիտեխնիկոսներ, հմուտ վաճառականներ, գործակատարք և գրապահք». նա պիտի «նպաստամատոյց լինէր քանքարաւոր համալսարանաւարտներին կատարելագործվելու Եւրոպայում, օգնէր չքաւոր ուսանողաց»:

Սա առաջին գիտակցական փորձն էր հանելու հայերին անձատական գոյութեան կախարդուած շրջանից և կազմելու ինքնախնամ հասարակութիւն. սա մի բուռն քարոզ էր դուրս գալու հրապարակ, կազմակերպելու ինքնուրոյն և գործունեայ հասարակական մարմին, որ պիտի հոգար ազգային պէտքերը, կանոնաւորէր կրթութեան գործը՝ մեկենասներից և պատահական բարերարներից անկախ: Ինքնագործունէութեան այս գեղեցիկ միտքը չիրագործուեց իր ժամանակին. հասարակական իդէալից զուրկ հայը չը հասկացուէր նրա խորհուրդը:

Նոյն վիճակն է ունենում «Կենտրոնական դպրանոց» հիմնելու խնդիրը, որ մեծ աշխոյժով յարուցել էր մեր հրապարակախօսը իր ամսագրի էջերում, ապացուցանելով նրա անհրաժեշտութիւնը իբրև մի հիմնարկութիւն, որ «պիտի լինէր մայր-ծննդարան միւս դպրոցների», մատակարարող ընդհանուր կըրթութեան. նա մանրամասն մշակում է նրա ծրագիրը, խօսում է աւանդուելիք առարկաների, ուսուցիչների և սրանց տրուելիք ոռճիկների մասին. սակայն այս միտքն էլ մի անիրագործելի երազանք էր մեր անուս հասարակութեան մէջ:

VI

Ժամանակակիցները, ինչպէս տեսանք, խեթ աչքով էին նայում Ս. Նազարեանցի վրայ և համարում էին նրան ըմբոստ քաղաքացի, որ առ ոչինչ է դնում և կեղեցին, ազգային աւանդութիւն-

ներքո՝ Դա բնական էր. նոր հոսանքի մարդը չէր կարող դուրս գալ հնութեան պահպաններից, որովհետեւ նա չէր դոհում ճշմարտութիւնը նեղ, միակողմանի ազգասիրութեան եւ համարձակ դատափետում էր այն, ինչ որ համաձայն չէր իր իդէալներին. «գիտութեան առաջ ոչինչ կշիռ չունի նեղսիրտ հայրենասիրութիւնը. գիտութեան ինդիքն է վերահասու լինել ճշմարտութեան, թէև դա պիտոյ է կործանէր մի քանի քաղցր երազներ». նա վստահանում է անգամ յանդիմանել հինգերորդ դարի հոգեորականութիւնը, որ աւելի կրօնն է պաշտպանել, քան ըստ ազգը. նա հաւատացած է, որ առանց ինքնազննութեան չէ կարող լինել առաջագիմութիւն, որ կեանքը մի անընդհատ փոփոխութիւն է և ինքնաճանաչութիւնը մի տեսակ ինքնապատաստան է:

Ս. Նազարեանցի քննադատական ուղղութիւնը գրգռել էր սեանդապահների կոյր թշնամութիւնը և չէր վաշելում հասարակութիւն հասարակութեան ստուար մեծամասնութեան մէջ. նա ունէր թերութիւններ, որոնք զրկում էին նրա գործունէութիւնը կենդանութիւնից և աւելի բեղմնաւոր լինելու հնարաւորութիւնից. նա չափազանց տեսական հրապարակախօս էր, կարիքնուային մարդ, որ անձանք էր իրական կեանքին: Սաւառնելով սկզբունքների և տեսական մտածութիւնների աշխարհում՝ նա բարձրից էր դիտում մեր իրականութիւնը, համեմատաբար քիչ էր զրազւում ներքին խնդիրներով, յաճախ չէր հասկանում հասարակութեան հոգեբանութիւնը և լուռ էր այնպիսի դէպքերում, երբ նրա ազդու խօսքը պիտի բարձրաձայն հնչէր, ուղղութիւն տար հասարակական կարծիքին—Տարօրինական է թւում մեզ նրա կատարեալ լռութիւնը, երբ վախճանւում է Ներսէս V նշանաւոր կաթողիկոսը 1860 թիւ լուկանին հաստատւում է տաճկահայոց սահմանադրութիւնը. հայութեան մեծագոյն մասը ստանում է որոշ քաղաքացիական իրաւունքներ, իսկ գիտնական հրապարակախօսը չի 'սկստում' մեր կեանքի այդ խոշոր երևոյթը: Չի գրաւում նրա առանձին ուշադրութիւնը նոյն իսկ Զէյթունի ապստամբութիւնը, հայոց արիւնով ողողւած Մարաշը, մինչդեռ օտարներն անգամ կարեկցաբար էին խօսում հայ նահատակների մասին և ջատագովում էին ազատասէր ապստամբների ձգտումները...

Տեսական էր նա իր ամսագրի նիւթերի ընտրութեան մէջ, Համարելով լեզուն ազգայնութեան ամենազօրեղ գործոն՝ նա գովելի եռանդով աշխատում է կոկել, մշակել նրան, մտքի կենդանի գործիք դարձնել. կամենալով ճոխացնել մեր աղքատիկ գրականութիւնը՝ նա ձեռք է վարկում թարգմանութեա Շ

առանց խիստ ընտրողութեան, անտես է անում եւրոպական և ռուս գրականութեան ընտիր երկերը, մինչդեռ սրանք կարող էին միայն նպաստել առողջ մտքերի տարածման հասարակութեան մէջ, դրականական ճաշակի և լեզուի զարգացման: Լեւոնտովի «Դև» վիպասանութեան տաղանդաւոր թարգմանիչ Սաղաթեանը մասամբ նկատում է այդ և ցաւ է յայտնում, որ «Հիւսիստիպլի» էջերը փակ են ռուսաց բանաստեղծական և ուսումնական մատենադրութեան համար: Լյուտաժ բուռն ցանկութեամբ կրթել իր «ասիայի եղբայրներին», նազարեանցը թարգմանում է բազմաթիւ գիտնական յօդուածներ (գերմաներէնից), թարգմանում է «Կիւլերնի ճառը դաւադիր Կատիլինայի դէմ», անբովանդակ արեւելեան վէպեր («Շէյխը և իւր դուստրը», «Բտարոտի հարսնախօսութիւն»), լցնում է իր թերթը շատ դժւարամարս գրութիւններով, բայց չի մտածում այն մասին, թէ որքան այդ նիւթերը հետաքրքրական են և մտաշնչի իր ընթերցողներին համար. նաւ տեսնաբանում է ամենայն բարեխղճութեամբ, բայց չի ճանաչում իր լսարանը, չի նախատեսում նրա տարակուսանքներն ու հարցերը, նրա իրական պահանջները:

Իր «Հայոց պատմութիւն» աշխատութեան սկզբում նա տեսնում է. «ով որ կամենում է ծանօթանալ իր ազգի որպիսութեանը, պարտական է ուսանել նրա անցեալը, որի մէջ զբաժ է և իւր յատուկ ներկայի բանալին... մենք պիտոյ է ծանօթացնենք մեր սիրելի ազգը իւր ազգային պատմութեան հետ, անաչառապէս մերկացնելով նորա անցած-դնացած օրերի պատկերը, որպէս հարկաւոր ուսում, փրկաւէտ խրատ և յոյս-դիմանութիւն մեզ, միայն թէ կամենայինք մեր նախահարց փորձերից իմաստնանալ և խելացի կերպով ընտրել ազադայի ճանապարհը...»: Եւ որքան մեծ գործ կատարած կը լինէր գիտնական հրապարակասօքը, եթէ նա տար մեր անցեալի ճշգրիտ պատկերը, որքան զատիտարակիչ նշանակութիւն կ'ունենար դա ընթերցողներին, ուսանող սերնդի համար. սակայն մեր գիտնականը չի կատարում իր խոստմունքը և չի հասցնում պատկանելի գործը իր վախճանին:

Յափշտակուած ընդհանուր սկզբունքային խնդիրներով՝ նա չի խորասուզւում մեր իրականութեան խորքերը. նրա հրապարակախօսութիւնը չի ընդգրկում մեր կեանքի բոլոր կողմերը. նա ուսուցանում է հասարակութեան բարձր խաւերը՝ հոգեւորականութիւնը և հարստականներին, բայց հազիւ է յիշում բուռն ժողովրդին, նայն իսկ քիչ է ճանաչում նրան. նրա կարծիքով, «հայոց ազգը համարեա բոլորովին վաճառական է,

ունի միայն նիւթաւոր-սուտրական կապակցութիւն օտարի կամ իւր ընկերի հետ», նա ոչ մի փորձ չը փորձեց որ և է կապ հաստատել խաւարի և թշուառութեան մէջ հեծող ժողովրդի հետ. գաւառը իր հարիւրաւոր կարիքներով, հայ գիւղացին և արհեստաւորը իրանց նիստ ու կացով, տնտեսական վիճակով, իրանց յոյժերով և մտածմունքներով չը զրաւեցին նրա պատշաճաւոր ուշադրութիւնը: Տեսական հրապարակախօսը, շօշափելով ազգային լուսաւորութեան հարցը՝ բաւականանում է մի «Վնտորոնական դպրանոցով», բայց նեղութիւն չի քաշում արծարծել ժողովրդական դպրոցների խնդիրը, որի բարերար լուծումը կը լինէր ամենայնուայն չիմքը ազգային առաջադիմութեան համար. նա միայն հարեանցի կերպով ասում է, թէ «հայկական կիսնքի վերանորոգութիւնը պիտոյ է սկսանի ժողովրդական դպրոցից, որ արմատն է ամենայն ազգային լուսաւորութեան»:

2ը նայած այս թերութիւններին՝ Ս. Նազարեանցը մի խոշոր ոյժ էր մեր նորածիլ գրականութեան մէջ. նա հիմք դրեց լուրջ հրապարակախօսութեան, խորտակեց գրաբարի գերիշխանութիւնը, պաշտպանեց աշխարհաբարի քաղաքացիական իրաւունքները և մեծ զարկ տուեց նորագոյն գրականութեան զարգացման. նա ուսանայոյ կեանքում առաջինն էր, որ քաջութիւն ունեցաւ բողոքել կղերական աշխարհայեացքի, կրօնական մոլեռանդութեան դէմ և յայտարարել «համբերողութեան, առանց կրօնի խտրութեան» բարձր սկզբունքը. նա բացեց մեր առաջ արեւմտեան մտքի լայնատարած սասպարէզը, դուրս բերեց մեր հասարակական միտքը նեղ կրօնական մըթնոյտրոյց և ուղղեց նրան դէպի ինքնաճանաչութեան և ինքնագործունէութեան գաղափարը:

Լցուած անհուն սիրով դէպի իր հայրենիքը՝ Նազարեանցը լայն կերպով էր հասկանում նրա քարօրութիւնը: Կարճ ասած, նա մի գործիչ էր, որ ներշնչուած էր իդէալական ձգտումներով և ունէր անյողգող համոզմունքներ. նա ուղղամտութեան և անձնուիրութեան կենդանի տիպար էր:

Ժամանակակիցները հայածեցին նրան, բայց յաջորդ սերունդը բերկրալից սրտով ընդունեց նրա գաղափարները, և այսօր հասարակութեան լաւագոյն մասը, երախտագիտութեամբ լցուած, համարում է նրան մեր առաջադիմութեան աւագ գրօշակակիր, ուսանալների հրապարակախօսութեան նահապետ:

ՀԱՅՐԵՆԻ ՀՈՂԸ

ՎԷՊ

ՀԱՆՐԻ ԲՅՐԴՈՒ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍ

I

Պարիզեան ձեպընթաց գնացքը կանգ առաւ կայարանում: Աւագ վերակացուն անցաւ վագօնների միջով, անփոյթ կերպով կրկնելով.

—Աննէսի, գնացքը կանգնում է տասը րոպէ:

Իւսիէն Հալանդը հեռացաւ նրբանցքից, որտեղ, լուսամուտի մօտ կանգնած՝ ծխում էր, հիանալով յունիսեան պաշտառ առաւօտով, որ գեղեցիկ լուսաւորում էր Սալօյի գաւտերը: Նա առանց շտապելու հաւաքեց իր իրերը, իբրեւ մի անտարբեր մարդ, որին ամենեւին չէր գրաւում իր ճանապարհորդութեան նպատակը, իջաւ վագօնի սանդուխներից և ամենաքիչ վերջը ուղղեց իր քայլերը դէպի կայարանի դուռը:

Աննէսի Այս անունը այլ ևս չէր յուզում նրա սիրտը: Նա այստեղ եկաւ վերջին անգամ, քսան տարեկան պատանի, շտապելով իր մեռնող ժօրը տեսնելու: Արդէն տասը տարի է անցել այդ կորստի օրից և այդ տասը տարին խոր անդունդ է պեղել նրա նախկին և այժմեան կեանքի մէջ: Առաջ, երբ նա գիւնազիստ էր, իսկ յետոյ իրաւագիտական ֆակուլտէտի ուսանող, ամենամեծ երջանկութիւնը նրա համար՝ Աննէսի գալն էր, ուր ծնողները դիմաւորում էին կայարանում—և կառքով Ավիւլլի հին դղեակը ճանապարհորդելն էր: Սա նրանց տոհմային կալուածն էր, որը այն ժամանակ նա կոչում էր տուն, կարծես թէ դա միակ տունը լինէր աշխարհի վրայ: Այժմ այլ ևս նրա գալը ոչ ոքի չէր հետաքրքրում, և նայն իսկ իրան ոչ մի բերկրանք չէր պատճառում ոչ իր ճանապարհորդութեան նպատակը և ոչ էլ այդ անագան վերադարձը դէպի անցեալը:

Պատափօրմից անցնելիս՝ նրան մօտեցաւ մի ծեր պիւղաղի,
խորամանկ աչիկներով և խնամքով ածելուած:

—Դուք պարոն Հալանդն էք:

—Ա՛հ, դո՛ւք էք, փափերա՛: Գաւառում, ինչպէս տեսնում
եմ, չեն պառաւում: Դուք ամենեկին չէք փոխուել: Իսկ ինձ
ճանաչեցիք:

—Ո՛հ, պարոն Լիւսիէն, ես ձեզ դժուար թէ ճանաչէի. վա-
ղուց ձեր կօշիկները իրանց մեխերի հետքը չեն թողնում մեր
ճանապարհի վրայ: Բայց ձեր հայրիկին մենք լաւ յիշում ենք և
երեի դուք նման էք նրան և դրա համար ձեր գէմքը խփոյն
յիշեցի: Միայն ձեր հայրիկը ձեզանից բարձր էր և կարծէք մի
քիչ էլ չքեղ հագուած:

Ծերունին, արտասանելով այդ խօսքերը, դուրս ցցեց
ստորին չրթունքը, արտայայտելով արհամարհանք և թաքուն
հեգնալիւն, որ այնքան յատուկ է պիւղաղիներին: Նրան շատ
էլ դուր չէր գալիս այդ նրբակազմ, վայելուչ և չքեղ երիտա-
սարդը. նա յիշում էր նրա հօրը, որ չէնց առաջին նայուածքով
խրախուսում և ուրախացնում էր ամենքին իր թարմ գէմքով,
աշխոյժ ձեւերով և կենդանի խօսքով:

Լիւսիէն Հալանդ նստեց փոքրիկ կառքի մէջ, որին լծուած
էր մի անտաշ ջահէլ ձի:

—Ի՛հ, ինչպէս է պառաւ սև մատակը,—հարցրեց նա.—իր
բնական մահով մեռաւ ախոռում:

—Ո՛հ, ոչ, ձեր կառավարիչը մի քանի տարի առաջ ծա-
խեց նրան. նա շատ պառաւել էր. է՛հ, գիտե՛ք, պառաւներին
էլ այժմ շատ չեն սիրում Ավիւլլիում:

Փափերայի չրթունքի վրայ երևաց նախկին արհամարհա-
կան արտայայտութիւնը:

—Տեսնում եմ, իմ բարի փափերա, որ ձեզ դուր չէ գա-
լիս իմ կառավարիչը:

—Չէ, ես հօ վատ բան չեմ խօսում նրա մասին, պարոն
Լիւսիէն: Նա կարողանում է հողի հիւթերը քամել և, ի հարկէ,
իրան էլ չէ մոռանում: Բայց ես ճանաչում էի ձեր հօրը և
պապին: Նրանք պահում էին պառաւած օնասուռներին և խնա-
մում էին ծեր մարդկանց: Նրանք ժամանակ էին գտնում զբաղ-
ուելու իրանց կալուածով, չը նայելով որ պ. Հանրին պատ-
գամաւոր էր Տիւրքիում, իսկ պ. Ալբերը—Պարիզում:

—Գիտեմ, գիտեմ,—սառն կերպով ասաց Լիւսիէնը:

Կառքը, դուրս գալով քաղաքից, բռնիլ էր Ավիւլլիի ուղ-
ղութիւնը. նա անցաւ չինարների ծառուղիով. դալարապէղ
ձիւղերը, հիւսուելով միմեանց, կամար էին կաղմել: Ծիւղերի

միջից երևում էր լիճը՝ ծածկուած թեթե կապաւուն մշուշով։ Նրա զունաւ ջրերը խառնուած էին ափի գոյների հետ. հազիւ նկատուած էին լիճը շրջապատող լեռները, իբրի խոր անօթի եզրեր։ Պարզ կերպով գծադրւում էին միայն լեռների ոլորուն կողքերը և այդ գծերը բաժանում էին նրանց երկնքից, որ իր անորոշ գոյնով ներգահանութիւն էր կաղմում երկրի և լճի հետ։ Տուրնետի վրայ լողում էին ոսկեւոյ մշուշներ, արեգակի ծագման կարապետները։ Ճանապարհի մօտ վարդադոյն լոյսի շերտեր երևում էին լճի ափի եղիպնուտի մէջ։

Լիւսիէն, թեքուելով առաջ, զուարճանում էր այդ զեղա-ծիծաղ տեսարաններով, որոնք փռուած էին ամեն տեղ առաւօտեան ցողի հետ։ Ապա նրան թուաց, որ այդ տեսարանների քնքշութեան մէջ իր համար մի դժնդակ բան կայ։ Նա ուղղուեց և այլ ևս չը նայեց շրջապատող լեռնութեան։ Նա մտածում էր այն տաս տարիների մասին, որոնց ընթացքում նա ոչ մի անգամ ոտք չէր կոխել հայրենի հողի վրայ։ Ամեն անգամ երբ նա պատրաստւում էր գնալ այնտեղ, առաջ էին գուլիս որևէ խոչընդոտներ, որ ինքն էր ստեղծում իր նոր կեանքի մէջ։ Բայց որպիսի՞ ոչնչութիւն էր այդ կեանքը, որ անցնում էր անպատու ձգտումների և ցանկութիւնների մէջ առանց որոշ նպատակի և առանց որևէ յենակետի։ Այդ անցեալը նա կհնդանայնում էր իր յիշողութեան մէջ և թախիծով տեսնում էր որ այնտեղ չը կայ ոչ մի նշանաւոր բան, նոյն իսկ ոչ մի տանջող կիրք, մէկը այն կրքերից, որոնք, մտնելով սրտի մէջ, լայնացնում են նրան, իսկ անհետանալով սրտից, թողնում են մարդու մէջ գոնէ գիտակցութիւն, թէ նա ապրել է իսկական կեանքով—այդ է միութարութիւնը այն մարդկանց համար, որոնք ոչինչ չեն կարողանում ստեղծել։

Աւարտելով ուսումը, ունենալով նիւթակտն այնպիսի կուրողութիւն, որ ապահովում էր նրան լիակատար աղատութիւն, նա զրկուեց ծնողներից, որոնք վախճանուել էին մէկը միւսի յետեից մի տարուայ ընթացքում։ Թողեց Սալօյեան, իր շիտակ և աշխատասէր նախնիքների սիրեցեալ երկիրը և սկսեց վարել Պարիզում հաճելի, բայց կատարեալ ապարդիւն կեանք։ Սէրը դէպի քաղաքական գիտութիւնները և ճանապարհորդութիւնները ազատում էր նրան կատարեալ անգործութիւնից։ Նա միշտ նորանոր ծրագիրներ էր յղանում. կամ ուզում էր բժշկականութեան դասընթացը լսել, կամ պատրաստւում էր պատմական երկասիրութիւն գրել։ Սակայն օրերը անցնում էին աշխարհիկ կեանքը, ծուլութիւնը, կամ որևէ կիրք գրաւում էին նրան և նա ոչ մի բան չէր վերջացնում։ Նա զուրկ էր յամառ

և տակուն կամքից, առանց որի միտքը նման է անհոտ ծաղկի։ Պարիզում շատ կան հողից կտրուած, արմատախիլ եղած այգի-պիտի մարդիկ, օժտուած շատ բարեմասնութիւններով, որոնք կլորիկ ֆրազներով վերանորոգում են հասարակութիւնը և գրականութիւնը, գրում են գեղեցիկ վերնագրներ մաքուր տետրակների վրայ և վերադառնում են ժամանակաւորապէս թողած իրանց սովորութիւններին, միանգամայն մոռանալով իրանց հայրենի հողը, մոռանալով այն միտքը, թէ կարող էին այդ հայրենի հողի դարձը դառնալ։

Լիւսիէն մտքում ինքն իրան դատաւարտում էր առանց որեւէ ներդամութեան։

«Միտքս, սիրտս երբեք ամբողջովին չը կենտրոնացան որեւէ մի զգացման կամ դադափարի վրայ—մտածում էր նա.— երբ ես մօտենում եմ ինձ գրաւող առարկաններին, նրանք կորչում են ինձ համար ամեն մի հետաքրքրութիւն։ Իմ ուղեւորութիւնների ժամանակ այն երկրները, որոնք առաջուց հրմայում էին ինձ իրանց բարձրահնչիւն անուններով կամ ճանապարհորդների բռնն նկարագրութիւններով, չուտով ճանճրացնում էին ինձ, բայց հէնց որ վերադառնում էի հայրենիք, նրանք դարձեալ ցանկալի և գեղեցիկ էին թւում ինձ։ Սիրային կրքերս նոյնպէս երկարատեւ չեղան։ Նրանք անհետացան, թողնելով իմ մէջ միայն «ափսոսանք, որ վերաբերում է աւելի սիրոյ չը գոհացած ցանկութեան, քան սիրային կրքերին։ Ես երեսուն տարեկան եմ, պատանիկութեանս ժամանակ ես չը զգայի բեղմնաւոր ուրախութիւն, կեանքիս մէջ չունեմ որեւէ շահ, իսկ փոխել որեւէ բան՝ ես արդէն անկարող եմ...»

Կառքը ծուռեց Մենտօնի ճանապարհից և սկսեց բարձրանալ գէպի գլեակը։

Այդտեղ հեղեղատը կալուածի բնական սահմանն էր կադմուս։ Նրա վրայից անցնում էին փայտաշէն կամրջով, զէնը գալիս էր մի սլորուն ճանապարհ, որի երկու կողմից անկուած էին հոյակապ ալեւոր կաղնիներ և սօսիներ։ Ծառատանի սահմանադիւրի վրայ նրանք կարծես թէ ձեռք էին մեկնում հանդիսաւոր կերպով օրհնելով և խաչակնքելով ճանապարհորդին հեղեղատի անընդհատ խուլ որոտմամբ։ Ծառատանի այդ մուտքում կար մի առանձին բօմանտիկական և լուրջ գեղեցկութիւն։ Այդ գեղեցկութեամբ կարելի էր դատել, թէ ինչպէս մի յայտնի վայր աղդում է մարդկային հագու վրայ, թէ որքան կարեւոր է պատանիկութեան ժամանակ ձուլուել ալեւոր ծառերի կեանքի հետ, ականջ դնելով գետակի մրմունջներին։

Լիւսիէնի համար ալեւոր ծառատանի այդ մուտքը չի էր

յիշողութիւններով: Նա մտքով սլացաւ դէպի իր մանկութիւնը: Այդ ստուերախիտ տեղը ամբողջովին լի էր անցեալով, որ դեռ չէր կորցրել իր թարմութիւնը: Անցեալի յիշողութիւնները թռչում, սաւառնում էին նրա առաջ, ճիւղերի միջից, իբրեւ վախեցրած թռչուններ: Նա, կարծես թէ, իրան կորցրել էր կեանքի մէջ և միայն այժմ նորից դանտում էր ինքն իրան: Նա զգում էր իր շուրջը և իր մէջ վերածնութեան բարախում:

Յանկարծ նա կանգնեց կապի մէջ:

—Բայց ուր է հացենի բուրակը, ուր են այն մեծ հացի-ները, կարծեմ այստեղ էր, ես չեմ ճանաչում այս տեղը:

—Ձե՛ք որ նրանց կարտել են—պատասխանեց Ֆաւերան չար քմծիծաղով:

—Ինչպէս թէ կարտել են:

—Հէնց այնպէս, պ. Լիւսիէն: Զեր կառավարիչը ասում էր որ դուք ծախել էք նրանց Պարիզում: Կառագործների համար այդ ամենատառջին փայտն է, նրա համար լաւ փող են տալիս:

Կառքը շարժւում էր կիզիչ արեւի տակ ամայացած տեղով, որի վրայ մի ժամանակ իրանց ստուէրն էին ձգում հացենիները: Դեռ անսնւում էին ծառերի մնացորդները գրեթէ հաւասարեցրած գետնի հետ սղոցով. բանուորները արմատահան էին անում բունները, ձանապարհի մօտ տխուր ցցուած էր մի հին կոպիտ նստարան, որի՝ երկար տարիներ ստուերի թարմութեան սովորած և որդերից կրծուած տախտակները այժմ կիզւում էին արեգակի տաքութիւնից:

Գիւղացին մատով ցոյց տուեց այդ նստարանը:

—Պէտք է վերցնել նրան այստեղից, — արտասանեց նա. — գուր տեղն է կանգնած, ոչ ոք նրա վրայ չէ նստում: Այդ նրստարանը ձեր հայրը հրամայեց քնել և սիրում էր երբեմնակի հանդստանալ նրա վրայ: Այդտեղ նրա մօտ գտլիս էին կալուածական գործերով:

Ֆաւերան շարունակում էր յամառ անդթութեամբ յիշեցնել Լիւսիէնին նրա հօրը:

Երիտասարդը ոչինչ չէր պատասխանում: Նա յիշեց թէ ինչպէս մի անգամ հրաման տուեց կարտել և ծախել այդ բուրակը: Նրա յիշողութեան մէջ աղօտ կերպով անցաւ մի կանաչի ուրուտապատկերը, կիսամոռացուած և գունատ, ինչպէս հին՝ դոյնը փախած նկար. և այս յիշողութիւնը զարթեցրեց նրա մէջ անախորժ զարմացքի զգացումն: Նա կոչւում էր Լիւսնա Մէյ, պարողուհի, նոյնքան ճորհալի, սրբան և անուներ, նոյնիսկ ոչ զեղեցիկ, խորամանկ, նենգաւոր և չափազանց չար, որ սակայն սաստիկ թանգ նստեց իր վրայ: Նա փողի մեծ հարկո-

ւորութիւն ունէր, իսկ հայկենիների համար մեծ գին էին առաջարկում:

Ապրելով հեռու, մարդ մոռանում է բնութեան գեղեցկութիւնները, ուստի և դժուար է հասկանալ թէ ինչ յանցանք է գործւում, ոչնչացնելով այդ գեղեցկութիւնները: Մի անսիրտ, հմայքից զուրկ ազնկայ համար, փայտահատները եկել էին տապալել կայնի հարուածներով լիարմատ և հնչուն ծառերը, վորձնտեղ այդ յիշատակները, ինչպէս հալածում են վայրի դազանհերին և արևի ջերմութեան ենթարկել այդ խաղաղ հին նստաբանը, ուր իր հայրը սիրում էր նստել և զրուցել զիւզացիների հետ իրիկնամուտին:

«Փոքրիկ անպիտանը չարժէր որ նրա համար մարդ կորցնի այսպիսի հոյակապ բանը, և զրակացրեց Լուսիննը և աւելացրեց. բայց այդ կարևոր չէ, չէ որ միևնոյն է, ես պէտք է ծախեմ կալուածը»:

«Ծախեմ» — այս խօսքը յանկարծ նրա համար մի նոր նշանակութիւն ստացաւ: Նա կամենում էր նոյն իսկ բարձր ձայնով արտասանել լսելու համար թէ ինչպէս է դա հնչում, բայց մտիկ տալով իր կառապանին՝ նա այդ անկու համարձակութիւնը չունեցաւ: Նրա համար անհաւանութեան պարզ ապացոյց կը լինէր Ֆալկերայի զարմացքը, որ ըստ իր էութեան շատ անտարբեր մարդ էր, և նա աշխատեց արդարանալ ինքն իր առաջ:

«Է՛հ, ինչ անենք: Ես ծախեցի հայկենիների այս բուրակը մի ողորմելի արկածի համար, որը սակայն այն ժամանակ ինձ մեծ հաճոյք էր պատճառում: Ես վարձեցի կառավարիչ, որպէս զի մի քիչ այս պառուների կապը քաշեմ, որոնք արդէն շատ քնքոյշ կերպով են վարւում հողի հետ. այժմ ինձ վառաւոր գին են առաջարկում իմ գլխակի համար իր բոլոր պարագաներով և հողերով: Նիւթական կարողութիւնս մի քիչ խանդարուել է: Ամիրլիի վաճառքից ստացած գրամով կարող եմ շարունակել Պարիզում իմ նախկին կեանքը նոյն իսկ աւելի լայն ծաւալով: Տատանուելը սնկարելի է: Եթէ ես չը ծախեմ, ես պէտք է մի գեղեցիկ օր թաղեմ ինձ գիւղում: Բայց միթէ կարելի է ապրել գաւառում: Ոչ մի բան այլ ես չէ քաշում ինձ դէպի Սափոյեան, ես կտրել եմ բոլոր կապերը ինձ լաժանութեան հետ: Նիւթ կեանքիս վերջին տաս տարիները: Հիմա ինձ հօ չը պէտք է յուզեն մանկութեան ինչ որ յիշողութիւններ: Այդպիսի գիւրագացողութիւնը կատարեալ յիմարութիւն կը լինէր»:

Կառքը անցաւ շաղանակի բուրակից, որ ձգւում էր դեհակի ետևի կողմից, մինչև Տօնի հովիտը, մօտեցաւ շինութիւններ

րին, ծուռելով անցաւ հին բամանական աշտարակից, որ հնու-
թեան ամենահին մնացորդն էր և անցնելով կամարաւոր դռնից՝
կանգ առաւ ներքին բակում:

Կառավարիչը—մի փոքրիկ, չոր մարդ, դէմքի խիստ գծե-
րով, դաժան կերպարանքով բայց զլուկեցնելու չափ հաճոյանա-
լու պատրաստակամութեամբ—կանգնած էր բակում, պիտակը
վերցրած:

Լիւսիէն դուրս եկաւ կառքից: Նրա երեսը, սոյնորաբար
ծիծաղուն, այժմ մոայլ էր: Նա հազիւ նայեց կառավարչին, ո-
րին դեռ ամենին չէր ճանաչում:

—Դուք պարոն Բիւրլէնն էք, լաւ: Շնորհակալ եմ, որ
ինձ սպասում էիք: Ես իսկոյն ձեզ կը կանչեմ. մենք կը խօսենք,
ցտեսութիւն, պարոն:

—Շատ էլ բարի տէր չէ,—ակամայ մրմնջաց կառավարիչը:

—Այդպէս չէ, նա ցորենի հայի պէս բարի է, առարկեց
Ֆապերան, որ ատում էր Բիւրլէին:

Մի սլառաւ, լղար գեղջկուհի, թոկերի նման դուրս ցցուած
վզի մկանունքներով և շատ հասած խնձորի նման կնճոռտած
երեսով, կանգնած էր, յենուած դռանը և չէր սրբում աչքերից
կաթող արտասուքը:

—Ի՞նչ է պատահել, Ժիւլիէնա, հարցրեց Ֆապերան կնո-
ջից:

—Ես նրան ծիծ եմ տուել, իսկ նա ինձ չը ճանաչեց,—
պատասխանեց պառաւը հեծկլտալով:—Ես փակել եմ նրա մօր
աչքերը, իսկ նա ինձ չը ճանաչեց:

Եւ որովհետեւ Բիւրլէն այդ ժամանակ հեռանում էր, Ֆա-
վերան վստահացաւ ասել.

—Մեր վերջն է հասել, իմ խեղճ պառաւ: Սա հօր նման
չէ: Թէև մեզ մի քիչ ժամանակ է մնում ապրելու, բայց դար-
ձեալ այստեղ չենք մեռնի: Ես սպասում էի նրա դալուն, համ-
բերում էի. երկար սպասեցինք: Այժմ այլ ես չեմ կարող տու-
նել նրա այս Բիւրլէին: Հեռանանք այստեղից:

Այժմ արդէն պառաւն էր, որ դադարեցնելով լացը, աչ-
խատում էր ամեն կերպ հանդարտեցնել նրան:

Լիւսիէնը արագ քայլերով մտաւ տունը, չը նկատելով մին-
չե անգամ այն կնոջը, որի համար նրա պալուստը տօն էր, և
որին նա վշտացրեց իր անուշադրութեամբ: Մտնելով սրահը,
առաջին յարկում նա լայն բացեց բոլոր երեք լուսամուտները:
Այդտեղից գեղեցիկ տեսարան էր բացւում լճի վրայ, որ փայ-
լում էր իբրեւ շողշողուն դաւաթ, և նրան շրջապատող լեռների
վրայ: Արեգակի թեք ճառագայթները ընկնելով հովիտների վը-

բայ, կտրոււմ էին սարերը ոսկեշող փողոս շերտերով: Լիւսիէնը հազիւ նայեց այդ կախարդական տեսարանին: Նա տնտղեց ամբողջ կահկարասիքը, գտաւ ամեն բան իր տոռաջուայ տեղում և երկար կանգ առաւ պատերից կախուած պատկերների առաջ: Դրանք բոլորը տոհմային պատկերներ էին. քաղաքային վարչութեան անդամներ, լուրջ և հանդարտ, առանց վշտի որևէ հետքի, հագած Սալօյեայի սենատի կարմիր համազգեստներ. կանայք՝ բուրժուազիայից, լուրջ, հեղ գէմքերով, մի առանձին խնամքով պնդուած իրանց պարզ հագուստների մէջ, որպէս զի պատիւ բերեն իրանց ամուսիններին:

Մանաւանդ երեք պատկեր զրաւեցին Լիւսիէնի ուշադրութիւնը: Առաջին վրայ նկարուած էր մի ծերունի, խնամքով ածելուած հրեայով, հարթ ճակատով, երկար, ալետ խոպովիկներով, նուրբ հեգնական ժպիտով շրթունքների վրայ, վիզը կապած աղլուխով հին մօդայի համաձայն: Պատկերի տակ կար այս ստորագրութիւնը. «Հաւերի Հալանդ, անդամ Սալօյեան սենատի, պատգամաւոր Սարդինիայի պարլամենտի, 1805—1875»:

Միւս պատկերի վրայ նկարուած էր մի տղամարդ, որի գէմքը եռանդ, համարձակութիւն և բարութիւն էր շնչում: Նրա մէջ աւելի գոռոզութիւն և ոյժ էր զգացուում, քան առաջինի մէջ: Նա ունէր գեղեցիկ, իրիստ դիմապէներ, բարձր, մեծ ճակատ, որ աւելի մեծ էր երեսում ճաղատութիւնից, վառվառն և միևնոյն ժամանակ մեղմ արտայայտութեամբ աչքեր, առհասարակ մէկն էր այն գէմքերից, որոնց տեսնելիս մարդ կամենում է ասել. «անա իսկական մարդ»: Ստորագրութիւնն էր. «Ալբեր Հալանդ, փասաբան, անդամ ազգային ժողովի, անդամ պատգամաւորների ժողովի 1829—1882». Կողքին կախուած հետևեալ պատկերի վրայ նկարուած էր մի մատաղահաս կին նուրբ դիմապէներով, գունատ և շէկ մազերով: Այդ պատկերի տակ ոչ մի ստորագրութիւն չը կար:

«Ահա պապը, իսկ անա հայրս և մայրս,—մտածեց Լիւսիէնը —Ինչքան օտար պէտք է թուամ նրանց»:

Այդ պատկերները յուզեցին նրան, բայց նա աշխատում էր ցրել յուզմունքը, ասելով ինքն իրան թեթև հեղինակութեամբ.

—Էհ, այս ինչ է, կարծես թէ ես մի տեսարան եմ խաղում «Էրնանի» օպերայի պատկերների առաջ:

Սրահին կից էր իր մօր առանձնասենեակը: Նա մտաւ այնտեղ: Այդ սենեակի երկու լուսամուտներից մինը բացուում էր լճի վրայ, իսկ միւսը՝ ծառատանի մեծ ծառերի վրայ: Բոխարու վրայ նա տեսաւ երկու լուսանկար: Մինը ներկայացնում

էր հօրը՝ մահուան անկողնի մէջ և նրա տուաջ զրուած էր վե-
նետիկեան անօթ չորացած ծաղիկներով: Երբ նա զիպաւ այդ
ծաղիկներին, որոնք զրուած մնացել էին այդտեղ տաս տարի,
նրանք շող եկան իբրեւ մոխիր: Նա դիտէր, որ այդ ծաղիկները
զրուած էին այդտեղ իր մօր ձեռքով, սրա՞ մահից մի քանի օր
տուաջ:

Միւս լուսանկարը ներկայացնում էր մի փոքրիկ աղջիկ,
կարճ հագուստով, 12 կամ 13 տարեկան: Նա մի քիչ վախկոտ
դէմք ունէր և մեծ, տխրամած աչքեր: Լուսիէնը փչեց թողը,
որով ծածկուած էր լուսանկարը և առաջին անգամ ժպտաց: Նա
յիշեց այդ գողտրիկ երեխային:

«Իմ փոքրիկ բարեկամուհին՝ Աննի Մերան,— մտածեց նա:
— Մայրս նշանակել էր նրան ինձ կին: Բայց քանի՜ տարեկան
է այժմ: Նա վեց կամ եօթը տարով ինձանից փոքր է: Նա այժմ
22 կամ 23 տարեկան է, և տնչուշտ, արդէն մարդու է գնացել:

Ծիրունի Ֆալերան կանգնած էր սենեակի չէմքում պոտո-
ցնելով ձեռքին զլխարկը: Նկատելով նրան, Լիւսիէնը իր տեղը
զրկեց լուսանկարը:

— Իմ պառուը մի թեթիւ ճաշ է պատրաստել ձեզ համար,
— առայ գիւղացին: — միայն գուցէ նրա եփած-թխածը ձեզ
գուր չը գայ:

— Ընդհակառակը, ես հաճութեամբ կ'ուտեմ նրա եփածը:
Կանչեցէք այստեղ Ժիւլիէնին: Ես կամենում եմ նրան տեսնել:
Ես վատահ եմ, որ նա ինձ կը ճանաչի, միայն նա:

Ֆալերան յետ դարձաւ գնալու համար, բայց Լիւսիէնը
կանգնեցրեց նրան:

— Ասացէք ինձ, Ֆալերա, Մերանները դեռ մեր զրա-
ցի են:

— Ի հարկէ, միայն պէ՛ Մերանի կալուածը աւելի մեծա-
ցել է:

Լիւսիէն չը հարցրեց, թէ մարդու է գնացել արդեօք
• ր. Աննին, թէն նա շատ ցանկանում էր այդ իմանալ: Մի
քանի րոպէից յետոյ Ֆալերի կինը մտաւ սենեակ, զրկեց սեղա-
նի վրայ մատուցարանը և սպասողական դիրք բռնեց: Նրա
դէմքը խրոխտ և խիստ էր: Լիւսիէնը մօտեցաւ նրան.

— Դու չես կամենում ինձ ոչինչ տեսլ, Ժիւլիէնա, միթէ
դու էլ ինձ մոռացել ես:

Եւ ժպտալով մի այնպիսի ժպիտով, որ միանգամից նրան
ջահէլացնում էր տաքը տարով, նա աւերացրեց.

— Իսկ ես կամենում էի քեզ համբուրել: Այժմ այլ ես չեմ
համարձակուի:

—Ո՛հ, պ. Լիւսիէն,—բացականչեց պառաւը, սկսելով նորից լաց լինել։

Նա գրկեց պառաւին, բայց առանց ողևորութեան, իսկ ժիւլիէնը շարունակում էր ասել։

—Իմ բարի տէր Լիւսիէն։

Հանդարտուելով մի քիչ, նա հարցրեց երիտասարդին.

—Ինչու համար դուք մեզ երեսի վրայ գցեցիք։ Նա օրեր և շաբաթներ էի համրում։ Նւ որտեղ է տեսնուած, որ տէրերը այսպէս ձգեն, թողնեն իրանց հողը։

—Ի՞նչ էք կամենում, ժիւլիէնա։ Այստեղ ես ոչինչ չու-

նէի անելու,—պատասխանեց նա ներողամիտ շեշտով։

Գեղջկուհին վրդովուեց։

—Ի՞նչպէս թէ ոչինչ չը կայ անելու,—կոչեց նա թափ տալով գլուխը և շարժելով իր երեսի բոլոր կնճիռները.—ոչինչ չը կայ անելու։ Իսկ մեր հողերը, իսկ գլուղը, իսկ ամբողջ երկիրը։ Ձեր նախնիքը, ձեր պապերը մեզ ամենքիս համար հարազատ հայրեր էին։ Եթէ դուք այստեղ մնայիք, դուք մեր պատգամաւորը կը լինէիք։

—Չէ՛, միայն ոչ այդ, ներիր խնդրեմ, միայն ոչ այդ,—առարկեց նա ծիծաղելով։

Գեղջկուհու սուր աչքերը անմիջապէս նկատեցին Աննի Մերանի լուսանկարը։ Նա մատով ցոյց տուեց Լիւսիէնին այդ լուսանկարը և արտասանեց, թէ նա շարժում արաւ որ նրան կանգնեցնի։

—Երբ դու դուք բոլորովին մատաղահաս էիք, տիրուհին ինձ ասում էր, որ դուք կ'ամուսնանաք այս փոքր օրիորդի հետ։ Այժմ նա արդէն բոլորովին չափահաս է, ձեր դաշտերը կից են նրանց դաշտերին։ Նւ ի՞նչպէս կը մեծանար մեր կալուածքը։

Ժիւլիէնը կանգ առաւ։ Երիտասարդի լուսթիւնից նա եղբակացրեց, որ իր չաղակրատանքով ճանձրացնում է նրան, ուստի դուրս գնաց։ Իսկ Լիւսիէնը, ընդհակառակը, դաւաւ, որ նա արտայայտեց միայն այն մտքերը, որ յղացել էին իր մտքում։

Նա շտապով նախաճաշեց սեղանի անկիւնի վրայ, դուրս չը գալով սրահից, որ սեղանատանից աւելի լուսաւոր էր, և ներքե իջաւ ման գալու ծառաստանում։ Մանդուխների վրայ նա պատանեց կառավարչին։ Նրա յետևից գալիս էր ժիւլիէնը սեղանը հաւաքելու համար։

—Պարոն Բիւրլէ,—դիմեց կառավարչին Լիւսիէնը,—չորհակալ եմ ձեր ծառայութիւնների համար։ Որովհետեւ ես մտա-

գիր կ'մ ծախել կալուածը, ուստի այլ ևս պէտք չունեմ ձեր օգնութեան: Մեր պայմանագրի մէջ նախատեսուած է այդ կէտը, ներկայացրէք ինձ, խնդրեմ, հաշիւ և ես կը վճարեմ ձեզ երկու ամսուայ կանխավճարը, ինչպէս պայմանաւորուած է:

Այդ միջոցին մօտեցաւ նրանց ժիւլիէնը և լսելով վերջին խօսքը, ժպտաց իր բոլոր կնճիռներով: Արդէն հեռանալով, Լիւսիէնը լսեց, որ նա կոտրեց ափսէն: Նա վերին աստիճանի զարմացած կը լինէր, եթէ կարողանար տեսնել, թէ ինչպէս այդ բոպէին ժիւլիէնն ուրախ-ուրախ ուստոստում էր սրահում, ինչ որ բոլորովին չէր կարելի սպասել այդպիսի պատկառելի պառտւոյ:

Երիտասարդը դիմեց ուղղակի ծառաստանի խորքը: Այդտեղ գեղեցկահասակ նոճիները իրանց տէգի պէս սուր գազաթներով չըջապատում էին սպիտակ մարմարիոնի մի պարզ մահարձան: Նա բաղկացած էր գետնի վրայ սեղաւորած երկու սալերից և մի մեծ խաչից, որի ստորոտին քանդակուած էր հետեւեալը. «Ալբեր Հալանդ, Մարիա Սիլան», իսկ ներքեւում աւելի փոքր տառերով «In memoria aeterno erit Justus»:

Այդ մահարձանի տակ հանգչում էին նրա ծնողները, թաղուած իրանց սեփական հողի մէջ, ուր նրանք ապրել և սիրել էին միմեանց: Լիւսիէնը վեր առաւ գլխարկը, բայց ինքն իր մէջ կենտրոնանալու համար նա չունէր հարկաւոր անդորրութիւնը: Նրա խոհերը ծանր էին և տխուր: Տաս տարի առաջ, կալուածը թողնելուց առաջ, նա ինքը հոգ տարաւ որ այստեղ փոխադրի իր ծնողների աճիւնը, այդ երկար տեւեց և շատ դժուարութիւններ առաջ եկան: Ամբողջ այդ ժամանակը նա միաշնակ և տխուր ապրում էր դղեակում: Նա գտնում էր, որ մի նուիրական պարտք է կատարում կարգաւորելով դորձը այնպէս, որ ծնողները թաղուած լինեն իրանց սիրեցեալ տեղում: Դրանից յետոյ նա վճռեց մեկնել, բայց ափսոսում էր բոլորովին թողնել կալուածը և նրան թւում էր, թէ թանկագին հանգուցեալները կը մնան հսկելու այդտեղ: Այժմ նա ցաւում էր, որ այն ժամանակ նրա գլուխը մտաւ այդպիսի անտրիական միտք: Այժմ կալուածը ծախելիս, նա դարձեալ պէտք է տեղափոխէր հանգուցեալներին գիւղի գերեզմանատունը, և նրան շատ ծանր էր գալիս որ դարձեալ պէտք է վրդովէ նրանց աճիւնը: Բայց էլի այդ աւելի լաւ էր, քան թողնել նրանց այստեղ միաշնակ, օտարների հողի վրայ:

Տխրութեամբ նա հեռացաւ գերեզմաններից: Նա շարունակեց ճանապարհը ցանկապատի մօտով Մենտօնի ուղղութեամբ և մօտեցաւ պատի բացուածքին, որ փակուած էր երկաթէ փշապատ

վանդակով. այդպիսի վանդակներ շատ դոգծածական են իրանց հարևաններին անվստահութեամբ և թշնամութեամբ վերաբերուող կալուածատէրերի մօտ։ Առաջ այդ բացուածքը վատ էր պաշտպանուած մի շատ հասարակ ցինկապատով։ Վարդի թփերի մի խումբ, մի քանի կղնիներ և մի քարէ նստարան այդ տեղին սալիս էին բանաստեղծական և հաճելի տեսք։ Նրան կոչում էին «Արրահարների սնկիւն», որովհետև յաճախ սիրահար զոյգերը ցատկում էին ցանկապատից այդտեղ հանգստանալու և ծաղիկներ քաղելու համար։ Հալանդ-հայրը երբեք չէր համոժայնում նորոգել պատը. նրա համար մեծ հաճոյք էր սրիէ մէկին հնարաւորութիւն տալ իր վարդերը քաղելու։

Յիշելով այս բոլոր մանրամասնութիւնները, Լիւսիէնին շատ անհաճոյ թուաց ւր. Բիւրլէի անտեղի եռանդը, բայց նա ձեռքով անորոշ չարժում արեց, որ նշանակում էր. «դուցէ վաղը այս ամենը այլ ևս ինձ չի պատկանի»։

Մի գիւղացի տղայ վաղելով եկաւ և հանց նրան այդ մտածմունքներից։ Նա յայտնեց, որ մի չաղ պարոն սպասում է նրան. Լիւսիէնը ըմբռնեց, որ դա գնողների կողմից եկած նստարան է։

«Ահա արդէն սկսւում է վաճառուին,—մտածեց նա,—մի քանի բոպէից յետոյ դուցէ կը յաջողուի ամեն բան վերջացնել»։ Եւ սակայն, նա չարունակում էր կտրել վարդեր և շատ էլ չէր շտապում։

Սրահում նա դառաւ Տայլարին, Աննէսիի նստարին։ Դա մի չաղ պարոն էր, որից բուրում էր առողջութիւն և ուրախութիւն, լայն պոռոզ հացի պէս կլորակ երեսով, կարճ ձեռքերով և հաստ ոտներով մի մարդ։

—Նստեցէք ինդրեմ,—ասաց Լիւսիէնը.—մի բոպէից յետոյ ձեր հրամանին պատրաստ կը լինեմ։

Նա անցաւ իր մօր առանձնարանը և դրեց բերած ծաղիկները վննետիկեան ծաղկամանի մէջ, բուխարու վրայ։ Նրա մոայլ դէմքից կարելի էր հասկանալ, որ նստարը նրա մէջ առանձին համակրութիւն չէ յարուցել։ Դնելով ծաղիկները ամանում, նա մտածում էր.

«Սա, երևի, մի մարդ է, որ քաշուել չը գիտէ և կոպիւս հանաքներ սիրող է։ Գեղջուկների անվստահութիւնը քնաչնելու յայտնի կզոնակ է դաւ։ Պէտք էր որ ես առաջարկէի նրան մի բան իմելու. նա թէի ոտքով չէ եկել, բայց երևի չորում է, որովհետև ամբողջ ժամանակ երեսը սրբում է։ Ես վստահ եմ որ նա անյկերջ կարող է իմելու Բայց նա ինձանից ոչինչ չի ստանալ, ևս նրան չեմ առաջարկի նոյն իսկ մի բաժակ լիմօնադ։

Շատ բաւական է և այն որ նա խլում է ինձանից իմ կալուածը իր կլիէնտի համարս:

Երբ նա վերադարձաւ սրահը, նստարը բացատրեց նրան գնողի բոլոր պայմանները.—անմիջապէս կնքել պայմանագիրը, վճարել բոլոր գումարը կալուածագրի գրելու օրը, յանձնել կալուածը մի ամսուայ ընթացքում:

Լիւսիէնը լսում էր, ոչինչ գեռ չը խոստանալով:

—Ուրեմն մենք եկանք կատարեալ համաձայնութեան,— եղբակացրեց նստարը:

—Արդեօք բարի չէք լինիլ ասել ինձ գնողի անունը,— հարցրեց երիտասարդը:—Ավիւլին տոնային կալուած է. ես կը յանկայի որ նա լաւ ձեռք ընկնէր: Այդ նկատումն ինձ համար շատ կարեւոր է:

Նստարի դէմքի վրայ երևաց չափազանց նուրբ ժպիտ:

—Ես այդ շատ լաւ հասկանում եմ. այդ կողմից դուք բոլորովին գոհ կը լինէք. իմ կլիէնտը—ձեր գրացին է, պարոն Մերանը, քաղաքապետական խորհրդական Աննէսիում և ձեր հանգուցեալ հօր անձնական բարեկամը: Այն յարգանքը, որ նա վայելում է...

—Ես նրան ճանաչում եմ,—ընդհատեց Լիւսիէնը:

Բայց չաղակրատ նստարը շարունակեց շատախօսել.

—Կարծեմ նա Ավիւլին յատկացնում է օժիտ իր աղջկան: Հիմա ձեզ հասկանալի կը լինի, որ նա շտապում է վերջացնել բոլոր գործերը մինչև օրիորդ Մերանի ամուսնանալը:

—Օր. Մերանը մարդի է գնում:

—Ոչ, բայց նա ամենահարուստ հարսնացուն է մեզանում, և պէտք է զարմանալ, թէ ինչպէս նա մինչև հիմա գեռ չէ ամուսնայած:

Լիւսիէնը լուռ մնաց մի քանի րոպէ, և վերջապէս ասաց.

—Ես կամենում եմ տեսնել պ. Մերանին նախ քան որն է բան ստորագրելը:

Նստարի բարեհոգի դէմքը ձգուեց, բայց նա խոնարհութեամբ դրեց թղթերը թղթապանակի մէջ: Նա յոյս ունէր, որ միանգամից կը վերջացնէր իր գործը: Մի փոքր լռութիւնից յետոյ նա ասաց.

—Պարոն Մերանը ծառաստանումն է: Նա ինձ հետ է եկել. նա չը մտաւ ձեզ մօտ, մտածելով, որ իր ներկայութիւնը անօգուտ է, սրովհետև ձեր նամակներից կարելի է դատել, որ դուք յօժար էք նրա առաջարկած գնին, և մնում է միայն առողջ ծախսի մանրամասնութիւնները քննել:

— Ես երբեք ոչինչ չեմ խոստացել, — ասաց երիտասարդը առանձնապէս շեշտելով խօսքերը:

— Ես բւոյրովին այդ չէի կամենում ասել, — մեղմութեամբ առարկեց նոստարը: Նրա գէմքը վրդովմունքից ծածկուեց քրտինքի կաթիլներով:

— Ուրեմն գնանք գան ենք ծառաստանում պ. Մերանին, — ասաց Լիւսիէնը վեր կենալով:

Նրանք գտան Մերանին այն տափարակում, որ գոյացել էր նոսրկին հացենիների բուրակի տեղում: Մերանը չը տեսաւ թէ ինչպէս նրանք մօտեցան, որովհետեւ երեսը դարձրել էր գէպի ճանապարհը՝ յենուելով իր ձեռնափայտի վրայ, բմկւմուած էր խոր մտածողութեան մէջ:

— Բարեւ ձեզ, պ. Մերան, — ասաց Լիւսիէնը: — Դուք քննում էք ձեր սպտոգայ կալուածը: — Նա արտասանեց այս խօսքերը սիրալիր, բայց մի սառն շեշտով:

Մերանը դարձրեց երիտասարդին իր նուրբ և ախորժելի գէմքը: Դա մի միջահասակ տղամարդ էր, մի քիչ չաղ, աւելսաւն միբուքով a la Henri IV: Մանաւանդ աչքերը տալիս էին նրա գէմքին հեղութեան և բարեհաճութեան արտայայտութիւն: Դրանք իր կեանքում շատ բան տեսած մարդու աչքեր էին, ինչպէս լինում է այն մարդկանց մօտ, որոնք հակուած են գէպի զգայականութիւն և մտախոհութիւն: Այդ աչքերին ամենեին չէր համապատասխանում բերանը: Զգայական չթուէքները, որոնց վրայ յաճախ երևում էր հեգնական ժպիտ, ցոյց էին տալիս կրքոտ բնաւորութիւն և նուրբ միաբ:

— Պարոն Հալանդ, — արտասանեց նա դանդաղ, լայն շարժում անելով իր փայտով, — այստեղ առաջ դարևոր հացենիների մեծ բուրակ էր, իսկ այժմ ոչինչ չը կայ: Դա մահուան տպաւորութիւն է թողնում: Ես սիրով և յարգանքով եմ վերաբերւում բնութեան արտադրութիւններին: Երբ իմ աչքին է բնկնում մի գեղեցիկ ծառ կամ աղբիւր, ես ակամայ ողջունում եմ նրանց: Սա կարող է թուալ ծիծաղելի, — հաւանորէն սա ժամանող ծերութեան նշան է:

Եւ որովհետեւ Լիւսիէնի գէմքը սկսեց մոսայլուել, Մերանը աւելացրեց.

— Դուք, ի հարկէ, կը ներէք շատախօսութիւնս, իբրեւ ձեր հօր հին բարեկամին: Դուք այնքան սակաւ էք գալիս, որ բուրովին մոռացել էք ձեր հին բարեկամներին:

Այս խօսքերը կակղեցրին Լիւսիէնին: Նա յիշեց թէ ինչպէս ինքը մի ժամանակ ընդունւում էր Մերանների տանը, երբ վերադառնում էր զբօսանքից Աննիի հետ:

—Դուք պէտք է ուղղակի պայքար ինձ մօտ, փոխանակ ծառաստանում մնալու: Ես կ'աշխատէի ընդունել ձեզ այնպէս, ինչպէս կ'անէր հայրս:

Մերանը գլուխ տուեց և փոքր ինչ լռելով ասաց.

—Ուրեմն ինչ, դուք համաձայնութեան եկաք պարոն Տայլարի հետ:

—Ափսոսում եմ, որ չեմ կարող դրական պատասխան տալ,—արտասանեց վճռապէս Լիւսիէնը. — ես չեմ ծախի իմ կալուածը:

Նօսարի դէմքը վերին աստիճանի դարմապք արտայայտեց: Նա չէր աշխատում ծածկել այդ խօսքերի իր վրայ գործած տպաւորութիւնը և մինչև անգամ մի այնպիսի շարժում արեց, որով կարծես կամենում էր պահել ձեռքից զտրուող դաշնագիրը: Մերանը չեղտակի և հարցողական նայեց Լիւսիէնի վրայ և յանկարծ մեկնեց նրան իր ձեռքը:

—Ես կորցնում եմ մի գեղեցիկ կալուած, բայց ես ձեզ յարգում եմ նրա համար, որ դուք կամենում էք պահել այն հողը, ուր թաղուած են ձեր ծնողները: Այժմ պէտք է այստեղ գտնէ մի քանի սմիս անցկացնէք տարուայ մէջ: Ես յոյս ունեմ, որ դուք կը մնաք մեզ մօտ մի առժամանակ:

—Ես, ճշմարիտ, չը գիտեմ,—պատասխանեց երիտասարդը, թուլացած իր յանկարծակի վճռից, որ այնպէս արագ հասունացել էր իր մէջ օրուայ՝ հետզհետէ սաստկացած տխուր տպաւորութիւնների ազդեցութեան տակ:

—Ո՛չ, դուք պէտք է մնաք մեզ մօտ գտնէ մի քանի օր: Արդեօք չէ՞ք գայ նախաճաշել վաղը չէ միւս օրը մեզ մօտ Վաղամախիները: Կինս հրաւիրել է մի քանի ծանօթներ, նա շատ ուրախ կը լինի ձեզ տեսնելու այդքան երկար բացակայութիւնից յետոյ:

Լիւսիէնը ընդունեց հրաւերը ոչ իսկոյն, բայց Մերանը այնպէս յամառութեամբ համոզում էր նրան զալ, որ նա վերջի վերջոյ գիջեց: Ճանապարհ գցելով հիւրերին և վերադառնալով իր սենեակը, Լիւսիէնը անցու իր փոքր ընդունարանը և նստեց՝ թիկն տուած լուսամուտին: Նա գրեթէ մեքենայաբար վերադառնում էր հէնց այն սենեակը, ուր առաջ այնքան սիրում էր ժամանակը անցկացնել:

Լուսամուտի դիմաց առաջին տեղը երկում էին ծառերը և մարգերը, որոնք զեռ պահպանել էին դարնանային թարմ գոյնը: Նրանց ետևում, ներքեւում տարածուած էր լիճը, որ թեթև կերպով ծփում էր և մայր մօտող արեգակի ճառագայթների շողջողում էր. հէնց նոյն իսկ լուսամուտի առաջ երկում

էր սարի լանջը, որ ծածկուած էր կապուտակ ստուերով, արեգակը յամրաքայլ անհետանում էր հորիզոնից: Լիճը փայլում էր վարդի դոյներով, իսկ երկնքում երևում էին շուշանագոյն և ոսկեգոյն շերտեր: Կարծես թէ հեռում գոյների անձրև էր գալիս:

«Սակայն ես ինձ բաւական ծանր դրութեան մէջ գրի,— մտածեց Լիւսիէնը,— ես պէտք է տարուայ մի մասը ապրեմ գիւղում և տանեմ այս Տայլարի նման դաւաճայիների ընկերութիւնը: Թող զլուխս կտրեն, եթէ բոլոր սավոյեայիները նրման չեն նրան, ինչպէս ջրի երկու կաթիլ: Դա անտանելի կեանք կը լինի: Ահա ինչ հետեանք է ունենում է փափկազգացութիւնը: Ես երբեք չը կարողացայ ազատուել այս պակասութիւնից: Պարիզում շատ հեշտ բան է ապարդիւն կեանք քաշ տալ, բայց գիւղում կամ պէտք է լինել հանճար կամ ուղիղի ծիւրախտութեան մէջ ընկնել»:

Երբ նա հեռացաւ լուսամուտից, մարդ կիսալոյսի մէջ դեռ կտրելի էր նկատել պատկերները պատերի վրայ:

«Այս պատկերները ուղղակի գրգռում են ինձ», մտածեց նա բարձր ձայնով և իսկոյն աւելացրեց կատարեալ անկեղծութեամբ.

«Ես գիտեմ ինչից է ծագում այս նրանք յանդիմանում են ինձ: Նրանք ծառայել են հայրենի հողին, անձնատուր են եղել խաղաղ զբաղմունքներին և երջանիկ էին օրինական սիրով: Ինձ թւում է, որ նրանց բարեհոգի դէմքերը զլիւով են անում ինձ, խռնացած չրջանակներից խորհուրդ են աւելիս ընթանալ այնպէս, ինչպէս իրանք ընթացան, և հաւաստիացնում են, թէ երջանկութիւնը դեռ հնարաւոր է ինձ համար: Բայց ես կապուած չեմ հողին, ես ոչ մի գործ չունեմ ժողովրդի հետ, և ես գաղափարակից եմ այն գրողին, որ բարձր լաղմակերպութիւնը նախադաս է համարում ցեղեցկութիւնից:

Նա ներշնչեց այգուց բերած և մօր պատկերի առաջ դրուած վարդերի բուրմունքը: Եւ սակայն նա զգում էր խորին յագնածութիւն դատարկ, անգործունեայ կեանքից: Նրա նոր անցեալը մոխրի պէս ցրուեց հէնց երբ առաջին անգամ փորձեց գիտակցաբար վերաբերուել նրան, ինչպէս առուօտեան ցրուեցին չորացած ծաղիկները, երբ նա դիպաւ նրանց ձևերով: Թարմ, զարնանային ծաղիկները զարթեցրին նրա մէջ նոր մեղքեր և զգացումներ:

Ներս մտաւ փութիէնը և կանչեց ճաշի:

— Ծշմարիտ է, պ. Լիւսիէն, առանց քաշուելու. դիմեց նա նրան. — Ծշմարիտ է ինչ որ պատմում է կառավարիչը:

— Իսկ ի՞նչ է նա պատմում, իմ սիրելի Ժիւլիէն:

— Նա այնտեղ ներքևում, դարսում է իր իրերը և ասում է, որ դուք այստեղ ամեն բան ծախել էք այն չաղ պարոնին, որ այսօր եկաւ:

— Ոչ, ձգմարիտ չէ, ևս ոչինչ չեմ ծախել:

— Շատ լաւ, — բացականչեց յաղթանակ տարած պառաւը: — Նա այդպէս էլ գիտէի: Ինձ այդպէս էլ երևում էր, որ պ. Բիւրլէն չարութիւնից է ասում այդ բոլորը:

— Հա, ի դէպ, — ասաց Լիւսիէնը. — չէ՞ որ այժմ ևս պէտք է յետ կանչեմ կառավարչին: Նա ինձ պէտք կը գայ:

— Ոչ, ոչ, — առարկեց պառաւը, աղաչանքով ծախելով ձեռքերը, որոնց վրայ դուրս էին ընկել ջիւերը. — ևս և մարդս իբրև երիտասարդներ կ'աշխատենք, իսկ դուք միշտ մեզ հետ կը լինէք և ձեզ հեշտ կը լինի միշտ սննամբ ամեն բան ստուգել:

— Ինչպէս թէ միշտ, լաւ, ևս համաձայն եմ, թող կառավարիչը, դնայ, բայց ևս չառ սակաւ անգամ պէտք է գամ այստեղ, շատ-շատ երկու կամ երեք ամսով, իմ սիրելի Ժիւլիէն:

Եւ երբ պառաւը վազեց հաղորդելու ուրախ լուրը իր ամուսնուն, Լուսիէնը աւերացրեց.

«Կ'աշխատեմ միտլ այստեղ որքան կարելի է քիչ». բայց նրա մէջ էլ չը կար առաջուայ հաստատամտութիւնը:

Թարգմ. Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

(Ըր ՇԱՐԼԱՖԻԼՈՒԻ)

ԿԵԱՆՔԻ ԺԽՈՐԻՑ...

Կեանքի ժխորից մտայ անապատ,
Գիշերը եկաւ, բազմեց փառաւոր
Եւ յոգնած հոգիս մեղմիկ ու հանգարտ
Գիշերը գրկեց... Եւ խաղաղ, անդճրր,
Լուռ անապատը փռուեց, ծաւալուեց...
Ստղերը երկնի անհուն խորքերից
Թրթռուն հայեացքով զարթեցին նորից.
Լճու է, խորին լճու—և հանդիսաւոր
Եւ խորհրդաւոր...
Եւ հոգիս հալուեց զեհ լռութեան մէջ...

ԱԻ. ԻՍԱՀԱԿԵԱՆ

ԿԱՊՈՒՏԱՆԻ ԱՐԵՒՄՏԵԱՆ ԱՓԵՐԻՑ

(Ուրմի և Բարանդուզ գաւառների ներկայ վիճակը)

Ա

Ուրմիի և Բարանդուզի սահմաններ. — Կապուտան կամ Ուրմիի ծովը. — Լըզ-գիններ. — Գետեր. — Լեռներ և բլուրներ. — Հողը. — Պողարերութիւն և հողի մշակութիւն:

Հին Հայաստանի Պարսկահայք նահանգի Զարեւանդ գաւառը այժմեան Ուրմին է, որ ընկած է համանուն ծովի արեւմտեան կողմը: Ուրմի գաւառի գեղեցիկ և ընդարձակ հարթութիւնը շրջապատում են, արեւելից՝ Ուրմիի կամ Կապուտան ծովը, Սուլդուզ և Սալուզ-Բուլազ գաւառներ հարաւից, արեւմուտքից՝ թիւրք-պարսկական սահմանադիր լեռներ—հայկական պարի շարունակութիւն (Վանի, մեծ Աղբակ, փոքր Աղբակ, Գեաւառ և Շամզիրան սանջակներ), իսկ հիւսիսից՝ Սալմաստ: Այս սահմաններում ընկած հարթութիւնը ձգւում է հիւսիսից հարաւ 100 վերստ երկարութեամբ և 28—35 վերստ լայնութեամբ: Բարձր տեղից նայելիս այս ընդարձակ տափարակը մի սննման տեսարան է ներկայացնում. — բազմաթիւ այգեատաններ, ծառատաններ, ծառուղիներ միմեանց պինդ զրկած մոյգ-կանաչ գոյնով միացած Կապուտանի մանիչակագոյն կապուտակութեան հետ, մրցում են մշտածիծաղ և կապուտաչեայ երկնակամարի հետ:

Ուրմի ծով կամ Կապուտանը գտնւում է լաֆնութեան 390 և երկարութեան 43 աստիճանների տակ (ըստ Կիպէրտի), ձգւած է հիւսիսից հարաւ 130 վերստ երկարութեամբ, լաֆնութիւնը 30—35 վերստ է: Ծովի ամենախոր տեղեր հազիւ 15—20 արշին լինին, ջուրը ծանծաղ է, աղային. արտադրում է մեծ քանակութեամբ աղ *): Կապուտանի ափերը անհիւրասէր են, առ-

*) Ծովափնեայ բնակիչներ ամասն, ծովի ափերի մօտիկ, շինում են մարգեր—ածաւների և ջուրը սրանց մէջն են կապում. արեւ տաքութեան տակը ջուրը գոլորշիանում է, իսկ աղի հաստ շերտը մնում է մարգում:

հասարակ ազոտ և ճախճախուտ։ Տեղատուութիւն չատ անգամ է պատահում. կատաղած, փրփրած ծովը յուզւում է և սկսում է ափերից դուրս գալ, ողողում է մշակւած դաշտեր և այգիներ, ծածկում է արշիւնաչափ կպրանման հողային շերտով, ապա յետ դառնում և հանգարտւում։ Այսպէս է անում գիժ կապուտան շատ անգամ, և հաղարաւորների դժբախտութեան պատճառ դառնում։ Ծովի վրայ երթեկեկում են մի քանի առագաստաւոր նաւեր, որոնք կղզիներից փայտ են փոխադրում, ապրոնք տանում-բերում։ Կղզիների խումբը գտնւում է ծովի կենտրոնական մասում. բոլորն էլ համարեա տնայնակ են։ Բուսականութիւն կղզիների վրայ աւելի ճոխ և հարուստ է. կան ընդարձակ անտառներ, ծովափնեայ բնակիչները ձմեռ ժամանակ իրանց ոչխարների հօտերը կղզիների վրայ են պահում։ Կղզիներից իրանց մեծութեամբ յայտնի են՝ Գոյուն-Դաղի, Էչակ-Դաղի, Իսփիր և այլն։

Ուրմիի ծովը թափւում են հետեւեալ գետեր.—Աջի-չայ (գտն-գետ) և Սօֆին՝ արեւելից. Թաթաւին, Ջաղաթուն՝ հարաւից. Զօլան, Նաղլուն, Շըհէր չայ և Բարանդուզը՝ արեւմուտքից։ Զօլան անցնում է Սալմաստի հովտի միջով։ Նաղլուն, Շըհէր և Բարանդուզը գրեթէ հաւասար հեռաւորութեամբ ձեղքում են Ուրմիի հարթութիւնը, հարիւրաւոր գիւղերի արտեր և այգիներ ջրկով գնում-հանգչում են իրանց մօր—Կապուտանի ծոցը։ Արեւմտեան կողմի բոլոր գետերն էլ բոխում են սահմանադիր լեռներից. Նաղլուի ակունքը Տաճկաստանումն է։ Բայի այս երեք գետերից, գիւղերում և գիւղերից դուրս կան բազմաթիւ արհեստական և բնական աղբիւրներ։ Զրի և անձրենների սակաւութեան ժամանակներ, ջրաբեր արտեր և այգիներ, խռովութիւնների և արիւնհեղութեան պատճառ են դառնում. որ գիւղատէր աղդեցիկ է և կամ որ կալուածատէրը համաձայնւում է մի մեծ դումար կաշառք տալու, նրա արտ կամ այգին անձար չի մնալ, իսկ այս տեսակ միջոցներից զրկուածների արտեր և այգիներ մնում են երկնքի յուսով։

Ուրմիի հարթութեան վրայ միայն մի լեռ կայ, որ կարծես ամաչելով իր միայնութիւնից, և չուզելով մեն-մենակ ցցուել տափարակի վրայ, նրա միօրինակութիւնը չը խանգարելու համար քաշուել մտել է ծովի մէջ. այս լեռը Բզով-Դաղն է։ Շըր-ջապատի լեռները ծածկուած են հարուստ և ծաղկաւետ արօտատեղիներով։ Տափարակի վրայ, դէս-դէս, զանազան գիւղերի մօտեր, կան շատ բլրակներ, աւելի ճիշտ, աւերակների կոյտեր, ինչպէս Գեօք-Թափա, Դիզա-Թափա, Նախջևան-Թափա, Թօֆրակ-Կալա, Կուռթ-Թափա, Դիզեալա գիւղի մօտ գտնուած մեծ

աւերակներն և այլն: Արանցից շատ թանկագին հնութիւններ, զանձներ են դուրս բերել, եթէ կարգին և խնամով պահումներ լինին, դարձեալ շատ հնութիւններ դուրս կը գան: Ուրմի քաղաքի հարաւորեմտեան կողմն է Ալու լեռը, որի կրճքի վրայ են ամերիկացի միսիօնարների ամարանոցներ և հուշակաւոր, ամենադօր Ս. Սարգսի ուխտատեղին:

Ուրմիի հողը շատ բերրի է, համեմատած Սալմաստի հետ, մի ափ հող անմշակ չի մնացել հարթութեան վրայ: Սարալանջերն անգամ ազատ չեն մնացել երկրագործի սուր խոփից: Հացաբոյսերից մշակում են. ցորեն, գարի, կոբեկ, նոխուզ, բրինձ: Վատ չեն և բամբակ, թիւթիւն, վերջինիս մշակութիւնը հետզհետէ զարգանում է: Հացաբոյսեր աւելի լաւ են աճում և բազմապատիկ բերք տալիս գէմիներում, ուր երկրագործի աշխատանքն էլ շատ քիչ է լինում:

Ընդարձակ և բազմաթիւ են այգեստաններ, որոնք դաշտաբնակների ապրուստ հայթայթող ամենաառաջին միջոցներն են: Համեմատ են ամենատեսակ և բնորոշ պտուղներ: Ուրմիի խաղողը աննման է իր տաճնեակ տեսակներով և մի քանի դոյներով: Քիչմիջի խաղողից պատրաստում են սաքաւ, որ տարին միլիօնաւոր փութերով արտահանում են Եւրոպա, Ռուսաստան և Տաճկաստան. խաղողների ուրիշ տեսակներից պատրաստում են. չամիչ, քիչմիջ, դօշար (ռուբ) և մեծ քանակութեամբ գինի: Ծառերի պտուղներից համով և զեղեցիկ են զեղձը (հիւլի տեսակը), ծիրան, սերկեիլ, կեռաս և սալոր: Մշակում են ընդարձակ բանջարանոցներ և բօստաններ, ընտիր է և սեխը:

Ուրմիի զաշտում և լեռներում բնական անտառներ իսկի չը կան, շատ չեն և ձեռատունկ անտառներ: Կան երկարածիւղ և զեղեցիկ ծառուղիներ 20—30 փրստ երկարութեամբ, ճանապարհի երկու կողմից հաստաբուն ուռիներ գլուխ-գլխի տուած մի ախորժելի հովանի և զեղեցիկ կամար են կապել ճանապարհի վրայ: Հասարակ ծառերից շատ են՝ ուռնիներ, բարդենիներ, չինարներ:

Ուրմիի կլիման ընդհանրապէս բարեխառն է, ձմեռը շատ կարճ է լինում, սաստիկ ցրտեր շատ քիչ անգամ են պատահում: Ամռան պատահում են անտանելի շոգեր, որի ժամանակ զիւղացի և քաղաքացի բնակչութիւն այգիներումն են լինում:

Հանքային հարստութիւններից բոլորովին զուրկ է Ուրմին. գոնէ մինչև այսօր չի արտադրել, կամ նշաններ ցոյց չի տալիս: Կան քիչ կապտագոյն և բոլորովին սպիտակ քարեր, որոնց բնակարանների և զերեզմանքարերի համար են գործածում:

Բ

Յւրմին և իր ստորաբաժանումներ. — Գիւղերի թիւը. — Աղգարնակութիւն. — Թուրքեր. — Թուրք զառակարգեր. — Քիւրդեր. — Ասորիներ և միաթոնարներ. — Հրէաներ. — Վառաժարութիւն. — Պատիժներ. — Աղգարնակութեան զբաղմունք. — Երկրագործութիւն. — Արհեստ. — Վաճառականութիւն:

Ուրմիի հարթութեան և լեռնային գաւառակների գիւղերի թիւը 800 են հաշուած: Այս գիւղերի իւրաքանչիւր խումբը առած է իր շրջանում գտնուող մի լեռան կամ գետի անունը. այսպէս Ուրմիի դաշտային մասը բաժանուած է հետեւեալ գաւառաւանդների՝ Անգալի, Նաղլու, Հայ, Բարքիչլի, Հայ և Բարանդուզ, իսկ լեռնայիններն են՝ Սօմայի, Թեարգսփար, Մեարգսփար, Բարգսփար, Բարգսփար, Ուշնիա և Դօլ. Վերջիններս լեռնային գաւառակներ են և գտնուում են ճիշտ թիւը-պարսկական սահմանադրի վրայ և աննշան բաղադրութեամբ բնակուած են քիւրդերով: Դաշտային մասերում բնակուած են թուրքեր, ասորիներ և հայեր:

Թուրքեր կազմում են աղյուսակութեան մեծագոյն մասը: Մեծամասնութիւնը նորահաստատ գաղթականներ են: Երբ տեղի ունեցաւ 1827—28-ի սուս-պարսկական պատերազմը և պարսկահայերի մեծ գաղթականութիւնը, երբ ամբողջ գաւառը զատարկուեց իր բնիկներից—հայերից, նրանց տեղ հետզհետեւ եկան և հաստատուեցին թուրքեր և քիւրդեր: Ուրմիի թուրքերը ընդհանրապէս չիա պաւանութեան և պատկանում, գտնէ աշխատում են այդպէս ցոյց տալ: Չանազան ազանգաւորներից իրանց բաղմութեամբ, առաջադիմութեամբ առաջին տեղն են ընդունում բարիներ, թուրք արիստոկրատիան, պաշտօնական չորջանի մարդիկ և քիչ-միշ սոր կարգերին ծանօթներ տոհմաւարակ բարի են: Իրանը տեղի չառ սիրում են քրիստոնեաներին: Թուրքերը 4 զատակարգերի են բաժանուած. 1) գիւղական ժողովուրդ, 2) արհեստաւոր և առեւտրական, 3) գիւղատէր-աղանուականներ, 4) կղերականութիւն:

1) Գիւղական ժողովուրդը, բառի բովանդակ նշանակութեամբ ճորտ է, նա գիւղեր-ցերեկ աշխատում է, տանջւում է ուրիշների համար, նա լեցնում է ուրիշների ամբարները և ինքը չառ անգամ քաղցած մնում. վերջապէս թուրք գիւղական ժողովուրդը իր ազգակիցների կողմից սոսկալի հարստահարութեան և հալածանքի է ենթարկուած: Իր սոսկալի դրութիւնից ազատուելու ճար չը կայ, քանի որ տիրող կարգերը այսպէս կը մնան, և ինքը տգէտ:

2) Արհեստաւոր և առեւտրական զոսակարգը քաղաքացի ժողովուրդն է, որ շատ բարեբախտ է գիւղական ժողովրդից: Առեւտրականն ու արհեստաւորն իրանց ծախած ապրանքեղէնի, բայց արած խանութի համար, բացի մաքսային տուրքից, ուրիշ ոչինչ չի վճարում կառավարութեան:

3) Գիւղատէր-ազնուականների ձեռքն է ամբողջ գիւղական ժողովրդի բախտը: Սրանց համար տանջւում և աշխատում են տասնեակ հազարաւոր մարդիկ: Սրանք են ժողովրդի հալալ աշխատանքը հարստահարողները: Արեւելի այս ազնուականները խառնել են արեւելքի պերճ և վառահեղ նիստ ու կայր արեւմտեան ներութիւնների հետ: Բնակարանները օժտուած են ամեն տեսակ յարմարութիւններով: Ուրմիի բնական սքանչելիքների հետ միացած ճարտար գեղարուեստը, ամեն մի գիւղատէր աղայի, սէյիդի, մօլլայի և մուշտէիդի տանը, իսլամի վառ երեւակայութեան երկրային ջաննաքն է ներկայացնում: Ղեկութիւն, ցոփութիւն և անգործութիւն տիրապետում են, սրանց վրայ աւելացրէք և ոգելից ըմպելիների չափազանց գործածութիւն, որը օրէց օր ծաւալւում և վարակում է ամբողջ թուրք հասարակութիւնը: Գիւղատէրերը աւելի խնամով են վերաբերւում դէպի իրանց քրիստոնեայ հպատակներ և մասնաւորապէս դէպի հայերը, սրանց համեմատաբար շատ են սիրում: Ամեն մի հարուստ, և աւելի նոր սերունդը աշխատում են իրանց որդեկերանց ֆրանսերէն սովորեցնել տալ: Ուրմիում շատ են ֆրանսագէտ թուրքեր:

4) Կղերականութիւն—սէյիդներ (մարգարէների և իմամների թոռներ), մօլլաներ, մուշտէիդներ և գէրվիշներ բաղմաթիւ են և զօրեղ. թուրք ժողովրդեան ամենամեծ դժբախտութիւնն են սրանք, և միակ փչացնող և կործանող զգուելի կաղմակերպութիւնն: Հազարաւոր անհոգի և ֆանատիկոս կղերներ ձեռք-ձեռքի տուած դժբախտ ժողովրդին առաջնորդում են դէպի սնկում: Օրէց օր շատացնում են անմիտ և յեշտակար ծիսակատարութիւնները, զրգւում են նրա բարբարոսական միտումները, սերմանում են մշտական սոսկալի ատելութիւն դէպի ոչ իսլամները: Կղերականութիւնը մինչև այսօր տիրապետող է եղել Պարսկաստանում: մարմաւոր իշխանութիւնը նրա «թանին թթու ասել» չի կարողանում: Կրօնական ֆանատիկոսութիւն, կղերական ոյժը Պարսկաստանի և ոչ մի տեղ այնքան բուռն և զօրաւոր չէ, որպէս Ուրմի: Ուրախալի է ասել, որ վերջին տարիներս կառավարութիւնը սկսել է ճնշումներ գործ դնել, և սրանցից ամենավտանգաւորներին աքսորել: Կղեր գիւղատէրերը աւելի սոսկալի բռնաւորներ են:

Անասնական դրութեան մէջ են թրքուհիները, չնորհիւ մահմեդական օրէնքների. իբրև մի բեռնակիր անասուն առ-
ծախսի առարկայ են դարձրել. բաւական է մի քանի շահի փող
տալ մի մօլլայի, նա անմիջապէս ֆաթիկ (պսակ) կը կտրէ և կամ
բօթանմիջ (ամուսնալուծում) կ'անէ:

Թուրքերը դեռ ոչ մի կարգին դպրոցական հաստատութիւն
չունեն: Վերաբերմունքը դէպի քրիստոնեանները կատարեալ
վայրենական է, վերջերս միայն սկսել են մեղմանալ. քրիստո-
նեաններին առհասարակ գեօվուր (անհաւատ) են կանչում:

Ազգաբնակչութեան երկրորդ տեղը բռնում են ասորիները,
որոնք 3—4000 տուն են: Բնակուած են գաւառի զանազան
կողմերում, գլխաւորապէս դաշտային մասում: Լեռնային գա-
ւառակներից՝ Թեարդավարում. Մավանա և իր շրջապատի մի
քանի գիւղերում բնակւում են 200 տան չափ ասորիներ, որոնք
իրանց նիստ ու կացով, բարոյականով և քաջասիրտութեամբ
չառ բարձր են կանգնած իրանց քաղաքացի և դաշտաբնակ աղ-
գակիցներից: Բայց դժբախտաբար սրանց մէջն էլ մուտ են գոր-
ծել միսիօնարներ, մասնաւորապէս կաթողիկոսներ, որոնք շատ
չուտով կը փչացնեն և կ'ալլասեռն լեռնաբնակ ասորիներին էլ:
Ամբողջ գաւառում սրանք քաջ և կտրիճ կռուողների, ինքնա-
պաշտպանների հռչակ ունեն, և կառավարութիւնը սրանցից
հեծեալօգործի յատուկ զուգ ունի կազմակերպած: Ասորիները
ընդհանրապէս, չնորհիւ դարաւոր ստրկութեան, հարեան ժողո-
վուրդների բարբարոսութեան և միսիօնարական անբարոյակա-
նացուցիչ ազդեցութեան՝ սոսկալի վատ դրութեան մէջ են: Ըն-
տելանալով քիչ-չառ բարեւաւ սպորուստի և այդ չը կարողանա-
լով իր հայրենիքում աշխատելով ձեռք բերել, նա դիմում է
պանդիտութեան, դիմում է ամենաստոր և ամենախայտառակ
միջոցների մի շահի աւելի փող տուողին. տալիս է իր պատիւը,
կրօնքը և մինչև անգամ, կրօնափոխ դառնալը սովորական մի
գործ է ասորու համար: Ինչպէս ասի, տղամարդիկ առհասարակ
պանդիտութեան մէջ են անցկացնում իրանց կեանքի մեծա-
դոյն մասը: Բազմաթիւ են ասորի խաչափողեր, որոնք վխտում
են աշխարհի ամեն կողմերում, մասնաւորապէս Ռուսաստա-
նում: Անկարելի բան է, որ մի ասորական ընտանիք մի դա-
ւանութեան պատկանի: Արեւմուտքի միսիօնարները, աւետարա-
նի քարոյղիչները փոխանակ ագնուացնելու, կրթիւլու այս ժողո-
վուրդը, նրա մէջ եղած աղնիւ ղգացումները և յատկու-
թիւններն էլ փչացրել են: Խաչափողութեան գրգիչները մի-
սիօնարներն եղան, երեի նրա համար, որպէս զի յարատև լինի

իրանց գործունեությունը, և անխուզ վայելեն արեմուտքի բարեալացանքի և միամիտների նուիրած միլիոնները: Ասորունիները, չնորհիւ տգամարգկանց նուազութեան և երկարամեայ բացակայութեան, սնրարոյական և անհաւատարիմ ամուսիններ են: Տարին մի քանի տասնեակ թուրքանում են:

Ասորիների մէջ գործում են բողոքական (ամերիկացի և գերմանացի) կաթոլիկ, անգլիկան և այլ զաւանութիւնների բազմաթիւ միսիոնարներ և միսիոնարուհիներ: Բողոքականների այստեղ հաստատուելը 70 տարւան է մօտենում: սրանք հիմնել են հիւանդանոց, տպարան, ուր տպում են միամիտն կրօնական գրքեր և կրօնական ամսագիր, ասորական լեզուով, կոլլէժ՝ բժշկական բաժանմունքով: Բայց այս երկար ժամանակամիջոցի աշխատութեան և ծախսած միլիոնների բարոյական արդիւնքը համարեա չնչին է. կոլլէժը տուել է մի կարգ կիսատապաւտ ֆէլդշէրներ և կաշաշամաշաներ (տէրտէր, տիրացու), աւելի ձիշտ ուսումնական խաչագողներ: Բայց և այնպէս բողոքական ասորիները, և նրանց հետ աւելի շատ շփում ունեցող ասորիները, աչքի ընկնող առաւելութիւններ ունեն միւսներից: Կաթոլիկներն էլ ունին տպարան և ամսաթերթ, որի միջոցով ատելութիւն են քարոզում դէպի հայերը, և կրօնական փանատիկոսութիւն սերմանում: Սրանք ունին հայերէն տառեր էլ, տարիներ առաջ տպագրել են մի քանի մեծ մասամբ կրօնական գրքոյկներ: Անգլիական-եպիսկոպոսական հոգևորականները աւելի համեստ են, սրանք գլխաւորապէս աշխատում են տաճկաստանցի ասորիների—Ջէլօների կրթութեան գործով: Մի քանի տարի առաջ հաստատուելին գերմանա-հայկական ընկերութեան անդամներ, որոնք բաց են արել զուտ ասորական սրբանոց (խեղճ հայ որբեր, դեռ սրբան պիտի չահագործեն ձեզ): Ռուս միսիոնարները դեռ սեպհական շինութիւններ և եկեղեցիներ չունին: Միսիոնարների հաստատութիւնները, և սրանց բնակարանները, իրանց չքեղութեամբ և արդուզարդով, յետ չեն մնում թուրք աղաների պալատներից, ամեն մի միսիոնար մի լօրդ է: Եկեղեցու բեմից՝ «մի գիղէք զանձս ուր ցեցք կան» քարոզողներ: Գանձ էլ են դիզում և փառաւորապէս էլ ապրում են:

Քիւրդները, ինչպէս ամեն տեղ, այստեղ էլ բնակւում են լեռնային գաւառներում, կոյս բնութեան ծոցում, զղզղան և սառնորակ աղբիւրների կշտին և կենդանացուցիչ օդի մէջ: Վարուցանքի, աշխատանքի սովոր չեն, պարապում են աւաղակութեամբ և ալան-թալանով: Բաւական է որ քիւրդը իր ձեռքին ունեցաւ մի հրացան և տակին ձի, այն ժաւանակ էլ իր ապ-

բուստի մասին հոգս չի անում: Գրգռական սխրագործութիւնների ասպարէզը աւելի ազատ և արդիւնաւոր է սահմանազրիս մօտերքը: պարսկաստանցի քիւրդը թալանում և ապաստանում է Տաճկաստանում, որն զրկաբայ է ընդունում նրան, իսկ տաճկաստանցի քիւրդը իր աւարի հետ միասին ապաստանում է Պարսկաստանում, որն կանոնաւոր զօրաբանական չունենալով, չի կարողանում սրանց հալածել: Քիւրդերը բաժանուած են բազմաթիւ աւելաբների: Աշիրաթները մշտական կռուի և արիւնհեղութեանց մէջ են, միայն իրանցից աւելի զօրեղ և դրսից եկած թշնամու դէմ կռուելիս են միանում: Կառավարութեան մի շահի հարկ չը տալուց յետոյ մեծամեծ վնասներ են հասցնում իրանց քէֆը եկած ժամանակ զալիս վրդովում են դաշտաբնակների հանդիստը, և հարուստ աւարով իրանց տեղը վերադառնում: Դեռ մի քանի տարիներ առաջ էր, երբ տաճկահպատակ Շէյխ-Իբրաղուլահը քրդական խառնիճաղանձ բանակով յարձակուեց Ուրմիի վրայ, պաշարեց Ուրմիի քաղաքը, որը հազիւ ազատեցին: Վերջապէս քրդերն են որ վնասում են երկրի զարգայման գործի առաջադիմութեան՝ երկիւղալի զարծնելով ճանապարհներն և հաղորդակցութիւնները:

Ուրմիի քաղաքում բնակւում են մի քանի հարիւր տուն հրէաներ: սրանք մասնուած են սոսկալի արհամարհանքի և բռնութեան: Պարսպում են մասնաւորապէս չլի աւետրով:

Ուրմիի գաւառում կան բաւականաչափ թափառական կաւայիներ (բօշա), սրանց սղամարդիկը քաղաքներում և գիւղերում չըջելով ժող են ծախում և գողութիւն անում, իսկ կանայք բախտ գուշակում և ֆալչիութիւն անում:

Ամբողջ գաւառի թէ՛ գաւառապետը, թէ՛ դատաւոր, թէ՛ զօրապետը, թէ՛ ոստիկանապետը և թէ՛ քաղաքապետը ինքը Հաքիմն է, որ շատ անգամ արքայական տան հետ արհնակցական կապեր ունենալուն համար Շահզադա է կոչւում:

Ոչ Իսլամների դատաւոր և պաշտպանութեան պաշտօնեան է սարփարասը, որ մի դժբախտութիւն է ոչ իսլամ ժողովուրդների համար:

Հաքիմից և սարփարասից աւելի ազդեցիկ են և շատ գործեր են տեսնում մուշտէյիդները, սէյիդները, մօլլանները և դիւղատէրերը: Վերջիններս եթէ ազդեցիկ են, շատ քիչ անգամ թոյլ կը տան իրանց ռայաներին կառավարութեան դիմելու: Հաքիմի և սարփարաստի ոյժը տարածւում է աւելի թոյլ և անպաշտպան մարդկանց վրայ: Այս կարգի մարդիկն էլ անճարացած իրանց հպատակութիւնը փոխում են և մտնում են զօրա-

ւոր աղաների, մուշտայիղների և սէյիղների հովանաւորութեան տակ:

Յանցաւորների պատիժների մէջ ամենաբաւաւրին տեղն է բռնում փողը, յետոյ ծեծ, անդամահատութիւն և գլխատում: Բանտային շէնք դեռ ևս գոյութիւն չունի: Ամենասոսկալի անդամահատութեան և մահուան են ենթարկւում գողերն և մարդասպանները: Նայած յանցանքի ծանրութեան, այսինքն՝ անփողութեան և անպաշտպանութեան, գողցուած իրի արժէքին, կտրում են մատներ, թևեր, քիթ, ականջներ, ոտներ և վիզը: Ամիս չի անցնում որ այս տեսակ անօրինակ օպերացիա չը կատարուի: Եթէ չը լինէին այսպիսի սոսկալի պատիժներ, այս անկարգ և վայրենի հարևանների մէջ, այս անկանոն կառավարութեան տակ դուռն պահել անկարելի կը դառնար: Այս բանը խոստովանում են և իրանք թուրքերը, որոնք միայն ենթարկւում են այս տեսակ պատիժների, որովհետև քրիստոնեաներ փող տալով կարող են ազատուել: Հաքիմը ունի իր Միրկազարը—ջալլաղը (դահիճ), որը ամեն մի մարդու կտրատելույ յետոյ ընկնում է շուկաներ և փուչախ փուլի (դանակի փող) է հաւաքում: Դահճին յայտնապէս սպանողը ինքը կը դառնայ դահիճ:

Ուրմիւում կայ հեռագիր և փոստ: Փոստը ստացւում է շաբաթը մի անգամ, այն էլ շատ անկանոն: Խօսք կայ որ փոստն էլ չուտով պիտի յանձնուի բէլգիացիներին, ինչպէս մաքսային գործը, որն այժմ քիչ շատ կանոնաւորուած է, կառավարութիւնը բաղմապատիկ մուտք է ունենում, և ժողովուրդն էլ ազատուել է զանազան թալանչի ռախզարներից:

Ազգաբնակչութեան գլխաւոր պարագամունքերն են՝ երկրագործութիւն, արհեստ և վաճառականութիւն:

Երկրագործութիւնը դեռ նահապետական է, ոչ մի առաջադիմութիւն չի գործել: Մի գութանի համար պահում են մէկ-երկու գոյգ գոմէշներ, երեք-չորս գոյգ եզներ, իսկ սրանց պահել պահպանելու և գործածելու համար հինգ-վեց մարդ: Վերջին ժամանակներս մի հայ վաճառական բերել տուեց 40—50 հատ նոր տեսակի գութաններ, որոնք ընտիր և դիմացկուն տեսակից չը լինելով լաւ ընդունելութիւն չը գտան: Երկրագործի ցանածը, աշխատանքը շատ արդիւնաւոր և պտղատու է լինում, շատ քիչ անգամ մնաս են կրում հիւանդութիւններից:

Գիւղական հասարակութեան ապրուստի երկրորդ միջոցն է այգեգործութիւն: Խաղողի այգիները մշտապէս մնասում են հիւանդութիւններից: Ամենամնասակար հիւանդութիւնը զարախան է (սև բիծ), որ չորացնում և թափում է խաղողի հատիկ-

ները՝ Յուդան էլ շատ անգամ վիասում է, որովհետև ձմռան վաղերը չեն ծածկում:

Արհեստ և վաճառականութիւն մասնաւորապէս թուրքերի ձեռքն է: Կան սալմաստի և թաւրիղցի հայ վաճառականներ և այս տեսակ ընկերութիւններ, որոնք աւելի շատ արտահանում են: Մինչև վերջին ժամանակներս հրապարակը տիրապետում էր եւրոպական ապրանքը, որը Պօլսի-Տրապիզոնի-էրզրումի վրայով Ուրմի են բերում թուրք վաճառականները, այժմ քիչ-քիչ սկսում է հրապարակ գալ ուսական չիթ, շաքար և այլն: Առևտուրը առհասարակ շատ լաւ է, Ուրմին վաճառչան քաղաք է: Արհեստը մասնաւորապէս թուրքերի ձեռքն է, կան մի քանի հայ, ասորի և հրէայ արհեստաւորներ. ամենագլուրգագած արհեստը որմնադրութիւնն է:

(Վերջը յաջորդ համարում)

ՏԻԳՐԱՆ ՕՏԵԱՆ

ՏՊԱԽՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ ՇԻՐԱԿԻ ԳԻՒՂԵՐԻՑ

I

Շիրակի բոլոր գիւղերը թէ արտաքուստ և թէ ներքուստ նման են միմեանց: Ճանապարհորդը միայն մէկ գիւղ մասնելով, կարող է պարզ գաղափար կազմել գաւառի միւս բոլոր գիւղերի մասին:

Բոլոր գիւղերում տներն ընդհանրապէս ներկայացնում են գեանափոր խրճիթներ: Նրանք բոլորն էլ շինուած են իրար կողքի, խառն ի խառն: Գիւղերում չը կան կանոնաւոր և լայն փողոցներ: Գիւղացիների մասնաւոր երթեկուղիները կատարւում է տների կտուրների վրայով:

Փողոց համարուող ծուռ ու մուռ ուղիները անհարթ են, քարքարոտ, ցեխոտ: Շատ տեղեր լցուած են անասունների աղբակոյտերով: Գարնան և աշնան անձրևներին փողոցները ներկայացնում են անտանելի ճահիճներ: Այդ ժամանակ փողոցներով անցնել չի կարելի ոչ միայն ոտքով, այլ մինչև անգամ սայլով կամ ձիով: Տեղ-տեղ սայլի անիւները կէսից հետ թաղւում են կաւախառն հողի մածուցիկ ցեխի մէջ ու աւելի ծանրացնում խեղճ բեռնակիրների լուծը: Այսպիսի դէպքում գիւղացին իր անհոգութեան վրէժը լուծում է թշուառ անասուններից: Նա փոխանակ փողոցները նախապէս երթեկուղիների համար յարմարեցնելու, սր հեշտանայ անցուղարձը, սկսում է վայրագ կատաղութեամբ ծեծել կենդանիներին: Կարծես անբան անասունները իրանք գոհ են այդ դժուար զրութիւնից...

Մտնում ես մեր երկրում բնակուող եւրոպացի գաղթականների գիւղերը և մտում ես զարմացած նրանց հասկացողութեան մասին. որպիսի յարմարութիւններ, գեղեցիկ տներ, լայն, խճած փողոցներ, որոնք պահւում են խնամքով, մաքուր: Սրանք կատարեալ հակադասուի են մեր հայ գիւղերի:

Յիշեալ գիւղերում դուք չէք տեսնիլ ոչ աթարի բուրգեր և ոչ թարմ աղբակոյտի բլուրներ: Նրանք անասունների աղբը դուրս են տանում գիւղից և ինչքան որ իրանց վառելիքի համար պէտք է, այնքանը փռում, չորացնում են վառելիքի համար, իսկ մնացածը կրում են այգիներն ու արտերը պարատացնելու համար:

Մեր հայ գիւղացին նոյնպէս հասկանում է հողը պարարտացնելու կարևորութիւնն ու արժէքը, բայց չի անում: Ինչու: Որովհետև նա աչքը բաց է արել ու հօրից կամ պապից տեսել է աթարի հետ չարչարունին ու ժամանակ կորցնելը, ինքն էլ նոյնն է անում: Շիրակում գիւղացու տունը անգամ հեռաւոր նմանութիւն չունի միւս գրացիների (բայի թիւրքերին ու քրդերի) տների հետ: Հայերի տներն ըստ մեծի մասամբ գետնափոր խրճիթներ են, պատերը խարխուլ և ծածկուած են հաստ գերաններով: Նրանց կտուրները ծածկուած են հողի հաստ շերտով, կէս արշինից աւելի, որի ծանրութեան տակ բնական է որ չը դիմանան հողով ու մանր քարերով շինուած պատերը: Որպէս զի այդ ծանր ծածքը կանգուն մնայ, գիւղացիները նոյն շափով գերաններ ամրացնում են գետնին, որպէս սիւններ, որով կրկնակի ծախս է նստում իրանց վրայ: Տուն մանկելու համար պէտք է մի երկու աստիճան դառն իջնել գետնի մակերեսէն: Որովհետև տան մէջ լուսամուտներ չը կան, կան միայն երդիքներ 5—6 վերջով մեծութեան, այնպէս որ հազիւ աղօտ լոյս կարող է նրանցով ներս թափանցել, ուստի անձանցին իրան կը դրայ խաւարչտին բանտի մէջ: Կամ պէտք է նրա թիւից տան անկիւններին ծանօթ մէկը բռնէ տուն տանի, կամ նա պէտք է մի քանի բոպէ կանգնի, մինչև որ նրա աչքերը կը վարժուեն միթին, ու ապա թէ կարողանայ ճանապարհը գտնել: Խաւար միջութեան մէջ ապրում է մարդը, նոյն խաւարի մէջ ապրում են նրա անասունները: Զարմանալի է, ճշմարիտ, գիւղացին ամեն օր տեսնում է լոյսի հրաշալի ազդեցութիւնը բոյսերի վրայ, որոնք միջութեան մէջ գունատուում, դեղնում են, իսկ ինքն իր կենդանիներով լոյսի պահանջ չի զգում:

Բնական է որ մի այգւիսի տան մէջ օդը միշտ կանգնած է, խեղդող և ապականուած: Անսովոր մարդն այս օդում չնչիլ չի կարող. նրա կուրծքը ճնշուած է և բուկը խեղդում, քրտինք է տալիս վրան: Գիւղացու տան օդը դռների բաց ու խուփով, որքան և իցէ մաքրուած է, բայց աւելի կանգնած է օդայի օդը:

Գիւղական օդան շինուած է անասունների դոմին կից և չունի բաժանող միջնորմ նրա հետ, ուստի մարդիկ ժամերով, ողջ գիշերներով չնչում են անասունների գարշահոտութիւնը:

Բնակարանի անյարմարութիւնն ու հակառողջական պայմաններն են պատճառը, որ հայ գիւղերում կան շատ հիւանդներ, որոնք տարիների ընթացքում տանջւում են ոսկրացաւով, թոքախտով, խլացաւով և այլն:

Մեր գիւղացու անասունները, համեմատած մալականների անասունների հետ, աւելի մանր են, վտիտ, կարծես աշխոյժից ընկած. դրանք ձմեռ թէ գարուն կոտորւում են զանազան համաճարակներից, օրինակ, ծաղիկ, դաբազ (հիւանդութիւնը լինում է բերանի և պճեղների մէջ), խշխշուկ, քեափանակ և այլն հիւանդութիւններից:

—Գրիգոր ամի,—հարցրի մէկ անգամ իմ տան տիրոջ,— ինչո՞ւ առանձին չէք շինում օդաները, որոնք կը լինեն աւելի մաքուր, լուսաւոր, այստեղ չնչեւ չի կարելի: Ձե՞ որ անմաքուր օդի մէջ ապրելը վնաս է:

—Տէր-հայր,—պատասխանեց նա,—մեր պապերից այսպէս ենք տեսել, այսպէս էլ մենք ենք ապրում, ի հարկէ, քաղաքի մաքուր օդաներում լաւ է ու հանգիստ:

—Ինչո՞ւ անպատճառ քաղաքի օդաներն են ասում, ասացի նրան, առ քեզ օրինակ մալականների օդաները: Նրանք անասունների մէջ չեն ապրում, թէն ձեզ պէս նրանք էլ գիւղացիներ են:

—Այո, ուղիղ ես ասում: Նրանց սովորութիւնն էլ այնպէս է. նրանք մեղանից խելացի ազգ են. մենք չենք կարող նրանց հաւասարուել:

—Բայց տունը յարմար չինելու մէջ առանձին խելք չէ պէտք: Հերիք է որ ինքդ էլ հասկանում ես, թէ մալականների տները բնակուելու լաւ են, իսկ ձերը վատ. միթէ նոր շինելու ժամանակ չի կարելի նրանց ձևի շինել:

—Ինչո՞ւ չէ. դէ, բանը նրանումն է, որ չենք ուզում նոր ձևի տուն շինել: Եթէ այսօր մի կրկու հոգի գիւղի մէջ նրանց նման նիստ ու կաց սկսեց, մենք էլ կը հետեւենք...

Այդպէս է մտածում հայ գիւղացին:

Մեր գիւղական տներում սովորութիւն է ամեն օր թոնիր վառել՝ կերակուր եփելու, հաց թխելու համար: Թոնիրը թաց գետնի մէջ թնդուած լինելով, նրան սաքացնելու համար ահագին քանակութեամբ վառելիք է գնում, բայց նա տունը չի տաքացնում, որովհետեւ տաքութիւնը տալիս է չուրջն եղած խոնաւ հոգին: Բաւական չէ տաքութիւն չարձակելը, դեռ վնաս էլ է տալիս:

Թոնիրը վառած ժամանակ, աթարի թանձր ծուխը լցւում է տան մէջ և սարսափելի տանջանք պատճառում անեղիններին,

մանաւանդ փոքրահասակ մանուկներին: Կծու ծուխը խեղդում է մարդու և լացացնում: Շնորհիւ այդ հանգամանքի, գիւղերում, ազատ, մաքուր օդ չնշող գիւղացիների մէջ, շատ քիչ կ'ի՛ն կամ երեխայ կը գտնէք առողջ աչքերով և առողջ թոքերով: Ծուխը ցաւացնելով կոպերը, հաստացրել է նրանց, և թանձր նիւթը նստելով թոքերի մէջ, չնչարգելութիւն է առաջացնում:

Մաքրութիւնը կեանքի առաջնակարգ պայմաններից մէկն է, բայց մեր հայ գիւղացին սրա մասին շատ թոյլ հասկացողութիւն ունի, գիւղացու բնակարանը անմաքրութիւնների բոյն է:

Գոմի օդան, որ գիւղացու համար սեղանատուն է, հիւրանոց, ժողովարան և ննջարան, պահւում է վերին աստիճանի կեղտոտ: Սաքունների վրայ փռուած թաղիքը գործածելու առաջին օրից մինչև քրքրուիլ, անպէտքանալը, գոնէ մի անգամ չի լուացուիլ: Գիւղացի կնիկները ծուլանում են շատ անգամ նըրանց երեսանց աւելել կամ փոել դուրսը, արևի առաջ:

Վայ այն մարդուն, որ ստիպուած կը լինի քնել այդպիսի մի թաղիքի վրայ: Միջատների սարսափելի արշաւանքը մի բուպէ հանգիստ չի թողնում: Այդպիսի դրութեան մէջ մարդ նախանձում է գիւղացիների վրայ, որոնք սովոր են միջատներին, իսկ գիշերը խրմովում են խոր քնով: Հիւրի համար տանտէրը թէև առանձին տեղաշոր է ձգել տալիս, բայց և այնպէս անյայտ թշնամիները նեղում են նրան:

Ընդհանրապէս մեր գիւղացին գուրկ է փափուկ անկողնից: Նրա տանը մի քանի ձեռք անկողին հազիւ թէ լինի, այն էլ տան բոլոր անդամներին չի բաւականացնում: Նրանցից շատերը քնում են խոտի, թաղիքի վրայ և վերմակի տեղ վրաներին ձգում են մի կտոր փալաս, կամ կապերտ: Երեք-չորս հոգի քնում են մի ծածկոյթի տակ, փոքրահասակները մեծերի հետ միասին:

Հասկանալի է թէ սրբան վատ ազդեցութիւն ունի այդ բանը փոքրերի վրայ, որոնց մէջ չուտ է զարթնում է սեռական կրքերը:

Ինչպէս բնակարաններն են, այնպէս էլ նրանց շորերն ու վրաներն են կեղտոտ:

Գիւղերում բազանիքներ չը կան: Մանկահասակ երեխաներին մի կերպ լողացնում են թոնրի վրայ տաքացրած ջրով, իսկ մեծերը շատ ուշուշ են լողանում: Կան մարդիկ որ տաւրիներով ջրի երես չեն տեսնում:

Փոխնորդներ չունենալուց, նրանց սպիտակեղէնը համարեա չի լուացւում: Վրայի շորերից մինչև տակի շորերը կեղտի

ու մերի մէջ կորած են, կուպրի մէջ թաթախածի նման: Վրաներից կեղտի ու քրտինքի գարշ հոտ է գալիս: Գիւղացիներն առանց քաշուելու, մարդկանց ներկայութեամբ վրաներն են քորում և մասների մէջ տրորում բռնած միջատը: Այդպէս կեղտոտ են ոչ միայն աղքատները, կեղտոտ են նոյն իսկ շատ ունեւոր ընտանիքները:

Խեղճերը չը գիտեն, որ կաշու ծակոտիներից դուրս են գալիս քրտինքի հետ միասին մարմնի վնասակար նիւթերը, իսկ երբ կեղտով կաշւում են կաշու ծակոտիները, նրանք մնում են մարմնի մէջ և առաջացնում են կաշու զանազան հիւանդութիւններ—խուլեր, ուռուցներ:

Գիւղացու սովորական շորերը պատաստուած են, բայց ունի նոյնպէս տօնական շորեր: Այդ շորերը նա հագնում է տօներին և քաղաք կամ ուխտ գնալու ժամանակ: Մինչև վերջին տարիներս գիւղացին բաւականանում էր անաշնադործութիւնից ոտացուած գործուածքներով: Ոչխարի բուրդը մանում էին հարսներն ու աղջիկները և նրանից չալ գործում, տղամարդկանց չուխա ու արխալուղ շինում, իսկ այժմ բուրդը գործ են դնում կապերաների ու գսրգերի համար: Կնիկների համար նրանք բամբակից մանում էին կտաւ և այդ կտաւը ներկել տալով՝ շինում էին չրջագգեստներ:

Այժմ տղամարդը հագնում է քաղաքացու նման մահուդի ու դրաբի գործուածքներ, իսկ կինը մետաքսի թանգ կտորներ:

Գիւղացի հարսներն ու աղջիկները շատ քիչ բացառութեամբ կտր ու ձև գիտեն: Տղամարդկանց չուխան, արխալուղը, չալվարը կարում են քաղաքի դերձակները: Կնիկների մեծ մասը միայն մի տեսակ չրջագգեստ կարել գիտէ, երբ որ պէտք է կտորը կտորի վրայ դնել, չափով կտրել ու կարել: Ներանց կարածի մէջ արհեստի հմտութիւն չի երեւում: Այն կարը, որ սրանք են անում, խամ մարդն էլ կարող է անել: Թէև գեղջկուհիների մէջ կան և այնպէս ասեղնագործներ, որոնք իրանց ձեռքի արուեստով կարող են զարմանք չարժեք քաղաքի ամենալաւ մետաքսի անկուածներ բանողին: Ասեղնագործութեան մէջ առաջին տեղը բռնում են ալաշկերտցի, մշեցի կնիկները:

II

Շիրակում գիւղացիները, ինչպէս յայտնի է, պարսպում են երկրագործութեամբ և անասնապահութեամբ: Վերջինս մի

տեսակ լրացուցիչ պարապմունք է առաջինի նկատմամբ, թէև իսկապէս մեծ տեղ կարող էր բռնել գիւղատնտեսութեան մէջ, տալով գիւղացուին տնտեսական մթերքներ—կաթ, կարագ, իւղ, պանիր, մածուն, թան, չորթան, սեր կայն, բայց հողի պակասութեան պատճառով, գիւղացիները միջոց, յարմարութիւն չունեն այս մասը աւելի ընդարձակելու:

Գիւղի աչքի ընկնող սուներ հազիւ 6—10 կով ունի, իսկ սովորաբար 2—3 կով, որը շատ քիչ է գիւղացու համար, եթէ աչքի առաջ ունենանք, որ գիւղացին մի տեղ կաթնեղէն է գործ ածում: Ոչխարների թիւը նոյնպէս մեծ չէ գիւղերում: Կան գիւղեր, որոնք բոլորովին ոչխար չեն պահում: Քիչ գիւղեր կան, որ իրանց սահմաններում կարողանան տաւարն ու ոչխարը պահել, ընդհանրապէս դնում են եայլա: Եայլա գնացողները, որպէս զի կարողանան մի փոքր արդիւնք ստանալ, քաղաքացիների կովերն էլ պայմանով տանում են, իւրաքանչիւր կովին տալով 1 պուգ իւղ, 20 փունտ պանիր:

Պէտք է պարծենալ հայ կնոջ այս գործում ունեցած հըմտութիւնով: Նա, հայ կինը, կաթից աճապէս լաւ իւղ, պանիր է պատրաստում, որի հետ չի կարող մրցել ոչ մի օտարազգի կին: Ափսոս, որ այստեղ էլ, անապրութեան պատճառով չուկայում յաճախ լաւ գնով չի ծախում այս անարատ, գործածութեան համար պատուական ապրանքը:

Բաւական չէ որ հողը ընդհանուր առմամբ պակաս է, գիւղերում աղքեցիկ մարդիկ փողի կամ այլ միջոցներով իրանց ձեռքն են գցել հողի խոշոր կտորներ, չնչին մասը թողնելով իրանց դրացիներին: Բոլոր գիւղերում միևնոյն ցաւը, միևնոյն դանդաղութիւն է հողի անհաւասարութեան համար: Դիցուք մէկը նափարին (անհատին) ունի 7 կոտի տեղ, այն էլ լաւ հող, միւսը ունի մէկ կամ երկու կոտի տեղ: Ներկայումս սաստիկ դժգոհութիւններ կան հողաբաժանութեան համար Չրախլի, Դիրաբլար գիւղերի մէջ:

Վերջիններս այն աստիճան լարուած են իրար դէմ, որ քիչ է մնում նրանց մէջ սպանութիւններ տեղի ունենան: Ներանք հարուստներից նեղուած՝ մի քանի անգամ սահգին փողեր ծախսելով՝ խնդիր են սուել նահանգապետին, որ հողը բաժանուի իրանց մէջ: Ունեւորները իրանց կողմն են քաշում պանդատաւորներից մի մասին և այդպիսով մեծամասնութիւն կազմում, որով արգելում են հողաբաժանութիւնը:

Հողերի սակաւութեան և անհաւասարութեան պատճառով, գիւղացիները ծայրայեղ ատելութիւն են տածում միմեանց դէմ ու դիմում են ոչինչ հետեանքի չը հասցնող միջոցների:

Նրանք իրար դէմ գանգատներ վարելով ահագին ծախսեր են անում:

Գիւղացիների փոխադարձ թշնամութիւնները աւելի բորբոքում են քաղաքացի շառլատան՝ իբր թէ օրէնսգէտները, և, օգտուելով գիւղացու տգիտութիւնից ու կոյր ատելութիւնից դէպի զրացին, նրանք խոստանում են իրանց դրած խնդրով օգնել գիւղացու ցաւին և մի երես խնդրի համար վերցնում են 5, 10, 15 ուրլի: Պարզամիտ գիւղացին տալիս է իր փողերը, բայց ոչ մի հետևանքի չի հասնում:

Չը կայ գիւղերում մի կարեկցող սիրտ, որ յորդորէ ունեւորներին բաւականութիւն տալ խեղճերին և չը թողնել, որ առանց այն էլ խեղճ-աղքատ դրացին քանդուի քաղաքացի վամպիրների ձեռքն ընկնելով:

Հող ունենալու և տան կարիքին հասնելու համար, գիւղացին շտապում է անչափահաս որդուն ամուսնացնել «Բէշէկ-քեարդմի» սովորութիւնը գիւղերումն էլ վերջանալու վրայ է: Սովորաբար տղաների տէրերը գլխագնով աղջիկ են ուզում: Գլխագինը տրւում է աղջկայ ծնողներին, որպէս զի նրանով օժիտ անեն աղջկան: Երբեմն գլխագինը լինում է շատ բարձր 2—3 հարիւր ուրլի: Միայն այդ չէ տղայի տիրոջ ծանրութիւնը. նա պարտաւոր է զանազան ընծաներ տալ աղջկայ ծնողներին և միևնոյն ժամանակ տալ հարսնացուի պսակի չորերը, անկողնի երես, աստառը և բուրդը, մսացու ոչխար, եզ, բրինձ ու արաղ:

Թէև գիւղերում կայ մի սովորութիւն, որ հարսնեւորները պսակի տիրոջը օգնելու մտքով «սաչու» են անում, փող հաւաքում, բայց դրա փոխարէն հարսանիքի տէրն էլ պէտք է շատ աւելի ծախս անէ, արաղ-գինի խմացնէ. այնպէս որ հաւաքած փողը միայն ծախսին է գնում և աննպատակ կորչում: Մի հարսանիքին գնում է 15—20 վեդրօ արաղ, որ փողի հաշւով արժէ 75—100 ուրլի, բայց հարսանիքի միւս ծախսերից:

Հարկաւ այս տեսակ անմիտ ծախսերի տակ ընկնողը, երբ առ ձեռն փող չունի, պէտք է դիմէ պարտքերի: Գիւղացին վաշխառուից 40—50 ուրլի առնելով, խոստանում է երեք օրավար տեղը տոկոսի տեղ՝ ցանել, քաղել, ծեծել և արդիւնքը տանել տալ փողատիրոջը, իսկ կալից յետոյ էլ գումարը վերադարձնել կամ մուրհակը նորոգել, վճարելով թումանին 20 կոպէկ տոկոս:

Բայց մի անգամ պարտքի տակ ընկած գիւղացին այլ ևս իրան ուղղել, պարտքից ազատուել չի կարող: Նա ծախում է տաւարը, ոչխարը, բայց էլի չի յաջողում պրծնել վաշխառուի

ձեռքից: Նա իր արտը, գերդաստանի միակ յոյսը, յանձնում է վաչխառուին, որ վարէ, ցանէ, քաղէ, ծեծէ: Վաչխառուն վրայից սերմը վերցնում է և սպա մնացած արդիւնքը կիսում:

Վաչխառուն անփորձ մարդուն առանց գրաւականի փող չի տալ: Տալու դէպքումն էլ սովորաբար տոկոսը գլխի հետ է հաշւում: Գիւղացու պարտքը յայտնի է լինում ողջ գիւղին: Վաչխառուն որպէս մանրավաճառ կամ ճոթածախս, առանձին-առանձին կապեր ունի գիւղացիների հետ: Սա, իբր խոստովանանք, յայտնում է գիւղացու պարտքը դրացիներին, այնպէս որ գիւղացին ամբողջապէս վաչխառուի և նրա լրտեսների ձեռքին կը լինի:

Գիւղացիներն աղայի մօտ լաւամարդ լինելու մտքով, յայտնում են նրան դրացու գործի դրութիւնը և պահանջուած դէպքում վաչխառուին կանգնեցնում պարտապանի գլխի վերեւ: Ո՞ր անմիտը կը համարձակուի ծուռ մտքով վարուել պարտատիրոջ հետ: Այդպիսի մարդուն գիւղական կարծիքը կը դատապարտէ: Այս դէպքում գիւղացիներն իրանցից են վախենում, թէ մի դուրէ աղան խեթ աչքով նայէ գիւղացիների վրայ և էլ իրանց նեղութեանը չը հասնի:

Գիւղացիները վաչխառուի շահը պաշտպանելու համար, դատաւոր են հանգրիսանում իրանց դրացու գլխին, նրան հայնոյում, նախատում են, որ նա ժամանակին խոստումը չէ վըճարել:

Շատ դէպքեր են պատահել, որ գիւղացին պարտքը մաս-մաս տուել է, յուսալով որ աղան պարտքի հաշուից կը զեղջէ, ոտկայն աղան իր «դաւթարում» եռապատկել է գիւղացու պարտքը:

Իմ ծանօթ գիւղացիներից մէկը Ա. աղայից փոխ էր վերցրել 13 ռուբլի: Նա այս հաշուով աղայի համար բերել էր մի գառ, որ արժէր 2 ռուբլի, կէս պուգ կարագ իւղ, 5 ռուբլի, մէկ երինջ, 10 ռուբլի: Ամեն զաւիս էլ հետը բերում էր մի դունտ կարագ, երբեմն մէկ կաթ թել-պանիր և այլն:

Աղան այս բոլորն ստանալիս, ձայն չէր հանում պարտքի մասին: Երբ արդէն գիւղացին հաշւում էր պարտքից ազատուած, մի օր աղան խանութ է կանչում ու տալիքը պահանջում: Սա մի առ մի թւում է իր տուածները: Բայց աղան խոստովանուելով հանդերձ իր ստացածները, այնուամենայնիւ անցած երեք տարի հինգ ամիս տասներկու օրուայ շահը հաշուելով, գիւղացին դեռ մնում է տալու տասն չորս ռուբլի և քառասուն կոպէկ: Խեղճ գիւղացին ստիպուեց 20 ռուբլանոց կովը տալ աղային, որ հաւատարմութիւնից չը զրկուի:

Գիւղացի վաշխառուներն աւելի վատթար են քաղաքացիներին: Շատ անգամ գիւղացին իրան դրացի հաց ունեցողից ուտելիք կամ սերմացու է վերցնում, կալին տալու պայմանով: Օգտուելով գիւղացու անճարութիւնից, նա տալիս է դիցուք մէկ սոմար ցորեն կամ գարի և կալին պէտք է ստանայ 4—6 կոտ գլուխ: Գարնան սկզբից մինչև կալոցը վեց ամիս է: Ասել է թէ տոկոսը կ'անէ 25—40, իսկ եթէ տարուայ վրայ հաշուենք, կը գայ 50—80%:

III

Գիւղական կեանքն իր ձևերի մէջ սովորաբար անցնում է խաղաղ, կարծես մարդկանց մէջ կարուել է կենսական երակը, մարդիկ չեն ապրում, այլ հրեշտակներ են, անմեղ, բայց խեղճ: Սակայն կան շատ բռնիքներ, երբ գաղանդ զարթնում է նրանց մէջ, և նրանք կատաղած ծովի պէս յուզւում, մրրկւում են և այդ յորձանքի մէջ ընկնողը հեշտութեամբ դուրս չի գալիս նուաճանգիստ:

Վերևում արդէն խօսք եղաւ գիւղական չարիքներից մէկի հողային խնդրի առթիւ գիւղացիների իրարանցման մասին: Այդ չարիքին ոչ պակաս նիւթ են տալիս հասարակական գործերը, երբ նրանց կառավարելու համար ընտրւում են տանուտէր, երեսփոխ և քահանայ:

Տանուտիրութիւնը ձրի պաշտօն է և, արտաքուստ դատելով, առանձին արժանի բան չունի ուշադրութեան: Տանուտէրն աւելորդ գլխացաւանք պէտք է յանձն առնէ գիւղացիների մէջ ծագած տարածայնութիւնները վերջացնելու, պետական հարկերը բաշխելու և, հարկը պահանջած դէպքում, իշխանութեան ներկայացուցիչներին զանազան բաւարարութիւններ ու դիւրութիւններ տալու:

Բայց գիւղացիները դրա մէջ այլ հաշիւներ ունեն: Նրանք յոյս ունեն, որ տանուտէրը այս կամ այն կուսակցութիւնից ընտրուելով՝ այս կամ այն կողմի շահերը կը պաշտպանէ: Օրինակ, հողային վեճերը դամոկրեան սուրի պէս կախուած են գիւղերում, ունեւոր մասը չի ուզում, չի ցանկանում նոր հողաբաժանութիւն, իսկ չունեւոր մասը խնդիր-խնդրի ետևից իշխանութեանը տալով, ցանկանում է խնդրին լուծում ստանալ:

Ահա հէնց այս խնդրում լարուած կուսակցութիւնները կանգնում են միմեանց դէմ: Ունեւորներն ամեն ներելի ու սնունդեղի միջոց գործ են դնում իրանց թեկնածուին ընտրելու համար: Չունեւորները վերջին ոյժով դիմադրում են և առաջ են

քչում իրանց ընտրելին: Եւ որովհետեւ այսպիսի պայքարի մէջ առաջին տեղը բռնում է կիրքը, իսկ այս երեսն եկած ժամանակ լուծւում է խոհեմութիւնը, ուստի սկսում են նրանք կռուել, ծեծուել ու ջարդել միմեանց:

Պատահում է երբեմն, որ ընտրող կողմերից մէկը կամ միւսը իրանց կողմն են գրաւում կաշառքներով գիւղական պրիտաւներին, որոնք ակնհերե բռնում են կաշառող խմբի կողմը. դրանով էլ աւելի բորբոքւում է կտիւր և տեղի են ունենում անկարգութիւններ, որոնք վերջանում են միշտի վնաս կռուողների նրանք խմբերով բանան են նետւում, ամիսներ պահւում, նրանց ընտանիքները ծախում են վերջին զոյգ ևզները՝ բանտարկուածներին դուրս բերելու համար, իսկ ամբողջ գիւղի վրայ տուգանք է դրւում (экекунія):

Հետաքրքիր է նոյն իսկ տգէտ գիւղացու փառասիրութիւնը. Գիւղացին փառքի դագաթնակէտին հասած կը համարէ իրան, երբ կ'արժանանայ տանուտէր անուանը և պարանոցից քաշ կ'անէ տանուտիրական նշանը, շղթայից կախ արած: Նա՞յլ ևս իրան հասարակ մահկանացու չի կարծում, անմահներ չարքն է անցել: Քիչ բան է ապա, որ արժանանում է մեծ մարդկանց հետ նիստ ու կաց անել, գաւառապետի հրամանները լսել, կատարել, պրիստաւ ու դրագրի հետ ուտել-խմել: Այս բոլոր բարիքները վայելելու համար, նա կը զոհէ ամեն սրբութիւն: Չէ որ ինքը ձրի է ծառայում, ինչո՞ւ ուրեմն խիղճը չը մեռցնէ, գործիք դառնալով դրագրին (որոնք ատրաքախտաբար յաճախ տգրուկի պէս ծծում են միտմիտ գիւղացիների արիւնը), ներելի ու աններելի միջոցներով կաշառքներ չառնի, որ համ ինքը կ'օգտուի, համ իր աղաները: Էլ ո՞վ կը համարձակուի տանուտիրոջ հակառակ խօսել, այդպիսին կ'արժանանայ նրա լուտանքներին, պրիստաւի ու դրագրի մարակների հարուածներին:

Եւ տանուտէրի խօսքը օրէնքի ոյժ ու կշիռ ունի բոլոր գիւղական գործերում:

Չը նայելով այս առաւելութիւններին, տանուտէրը իր անտեղի փառասիրութեան, իր անխոհեմ վարմունքի համար արժանանում է գիւղի մեծամասնութեան արհամարհանքին ու տուեւութեանը:

Դժգոհ ու զրկուած գիւղացիները եթէ չեն կարողանում յայտնապէս դիմադրել տանուտէրի կամայականութիւններին, սկսում են նրա դէմ ծածուկ դաւեր սարքել, գանգաւորներ տալ, գործ բաց անել նրա դէմ, կամ նիւթական վրէժ լուծել, աչրելով նրա կալը, խոտի դէզը, մարագը, արտը ևայլն: Այնուհետեւ

սկսւում են դատաստանական քննութիւններ, գրագրութիւններ, բանտարկութիւն, աքսոր և այլն:

Անհատական դժգոհութիւններից, հասարակ վէճերից, գիւղերում ծագում են ահագին խռովութիւններ, կռիւներ, նոյն իսկ մարդասպանութիւններ: Դիցուք մէկը եզները տանելիս, պատահմամբ թոյլ է տալիս որ եզը մի բերան ցորեն քաղէ դրացու արտից, միւսը այդ բանը լսելով, դիտմամբ գիշերը բոլոր անասուններին լցնում է առաջնի արտի մէջ, որ տրորեն և փչացնեն հասած արտը:

Մի ուրիշ օրինակ: Գիւղացու մէկը իր արտի քարերը (չակիլ) մաքրում է և դէն զցելիս, մի երկու կտոր քար դուրսում, ընկնում է կողքի արտը, որն իր թշնամունն է: Սա այդ բանը տեսնելով՝ կարծում է թէ դիտմամբ է՝ արած, մահալով խփում, մերձ ի մահ վիրաւորում է դրացուն:

Բերենք մի այլ օրինակ: Պատահում է որ գիւղում մէկ տղայ և մէկ աղջիկ սիրահարուած են լինում իրար հետ: Յանկարծ յայտնւում է մի ուրիշ հակառակորդ և աղջկայ ծնողներին մեծ գլխագին և խալաթ խոտանալով՝ նշանւում է աղջկայ հետ, առանց նրա հաճութիւնն ստանալու: Աղջկայ նախկին սիրահարը գիշերով փախցնում է աղջկան: Աղջկայ ծնողները վիրաւորուած ինքնասիրութեամբ, ընկնում են տղայի յետից, չըջապատում են նրա տունը: Տանտէրերը պաշտպանում են տունը յարձակում գործողների դէմ և այդպիսով սկսւում է մեծ իրարանցում: Կուում են մահալներով, եղաններով և բանը վերջանում է մէկ կամ միւս կողմի պարտութիւնով, այսինքն երբ վիրաւորւում է մէկը կամ սպանւում:

Ի հարկէ, գիւղական կռիւներից օգտւում են դարձեալ քաղաքացի խնդիր գրող, մասնաւոր գործեր պաշտպանելու իրաւունք ունեցողները: Մէկ հասարակ խնդրի, բողոքի, գանգատի համար վերցնում են 10, 20, 25 ուլբլի փող: Ծանաչում եմ գիւղական ունեւոր (համբա) տներ, որոնք իրար դէմ վէճեր յարուցանելով՝ այսօր կարօտ են մնացել մի կտոր հացի:

Երբ գիւղացին իր տգիտութեան երեսից յետ չի մնում յամառ կենդով հակառակորդին տապալիւլց, դրա վրայ ծախսում է իր կարողութիւնը, որից չահւում են քաղաքի «աբլակատները»: արդեօք բարեխարութիւն չէր լինիլ, եթէ քաղաքում հիմնուէր իրաւաբանական օգնութեան հասոցնող մի բիւրօ, որտեղ դիմէին գիւղացիները խորհրդի, խնդրի և այլ պէտքերի համար: Նրանք այդպիսով ազատուած կը լինէին աւելորդ ծախսերից:

IV

Հասարակական պատուաւոր պաշտօններից մէկն է երէց-
փոխութիւնը: Բայց մեր մէջ, ինչպէս քաղաքներում, այնպէս
էլ գիւղերում, երէցփոխները հակառակն են հասկանում այդ
պաշտօնը: Կարծես նրանք ընտրւում են լոկ այն պատճառով,
որ եկեղեցիները կողոպտեն: Այս երեւոյթը ընդհանուր ցաւ է և
գրեթէ անուղղելի ծոռութիւն: Եթէ եկեղեցիները կալուածներ
ունեն, որքան և իցէ նրանց հաշիւը կարելի է ստուգել, իսկ
ընդհանրապէս, եկեղեցու եկամուտները պատահական լինելով,
նրանց հաշիւն էլ պատահականութեան է ենթարկւում:

Ի դուր է գլուխ կոտրել, կանոնաւորելու ձգտելը: Հաշուի
լաւն ու վատը կախուած կը լինի երէցփոխի խղճից ու հաս-
կացողութիւնից:

Մի անգամ երէցփոխութեան պաշտօն ստանձնողը, պաշ-
տօնավարութեան երեք տարին լրացնելուց յետոյ էլ չի ուզում
պատուաւոր կերպով հրաժարուել, ուզում է մնալ պաշտօնում:
Եւ հասկանալի է, եկեղեցու մոլթ հաշիւները մեր եկեղեցա-
սէր-հոգեւէր երէցփոխի քիմքին դուր է եկել:

Քաղաքում անտարբերութիւն է տիրում. մարդիկ սիրում
են սրան-նրան բամբասել, բայց երբէք գործին կանոնաւոր
ընթացք տալ չեն ուզում: Գիւղերում երէցփոխի գործունէու-
թիւնը իսկոյն աչքի է ընկնում: Իւրաքանչիւր երէցփոխի սուրբ
պարտքն է համարւում եղած օրից սկսած, քիչ-քիչ մաքրազար-
դել եկեղեցու եկամուտները:

Նա ծածուկ արգելուած մոմ է ծախում, Հոգ. իշխանու-
թեան առաջարկած մոմերի արդիւնքը չառ չնչին է ցոյց տա-
լիս, եկեղեցու լուսաւոյնները մատեան չի տնցկացնում:

Պէտք է նկատել, որ գիւղերում, բացի Ղարաքիլիսի և
Համամլուի գիւղերից, ոչ մի տեղ կանոնաւոր մատեաններ չը
կան: Եղածները հին, քրքրուած, իւզոտ ու պատառոտուած
տետրակներ են, որանդ ամեն ինչ խառն ի խումն է գրւում,
այնպէս որ ստուգելը դժուար է. ժամանակն է նրանց նոր մա-
տեաններ տալու և պահանջելու, որ կանոնաւոր հաշիւ պահեն:

Եկեղեցիների զրամագլուխները ցրուած են գիւղացիների
վրայ: Տարին մէկ անգամ իբր թէ մուրհակները փոխւում են,
տոկոսը վրայ են գալիս, բայց բարդուելուց ոչինչ չի դուրս
գալ, զրամագլուխներն են կորած, թնդ թէ տոկոսը:

Շատ եկեղեցիների կտուրները քանդուած, գերանները
Յունուար, 1902.

վատած, ու 10—20 տեղից սիւներ նեցուկ տուած, ուրիշները խոնաւ, մուժ, ներսը կեղտոտ, պատերը խարխուլ: Ընդհանրապէս զարդ-զարդարանքից զուրկ, չը կան կանոնաւոր պատ կերներ, եղածները անշնորք մարդկանց նկարներ են:

Չը կան եկեղեցիներում անօթներ, խաչեր, խաչվառներ, նրանց շարականները, ճաշոցները, ժամու գրքերը մաշուած, գզգզուած, գործածութիւնից ընկած. իսկ մտնում էք գերմանացիների կամ նորեկ ռուսների գիւղերը, հիանում էք զուր նրանց եկեղեցիների արտաքին ու ներքին բարեկարգութեան վրայ: Նրանց անօթեղէնը, արդէն ու զարդը բոլորովին համապատասխան է տեղին ու կոչմանը:

Ո՞վ է յանցաւորը:—Ե՛ւ հոգեւորականը, ի՛ աշխարհականը:

Բայց թողնենք այդ հարցը, որ չաւ է արդէն խօսուած և անցնենք գիւղացու մտաւոր դրութեան:

Գարնան սկզբից մինչև սեպտեմբերի վերջը մեր գիւղացին անդուլ, անդադար աշխատում է արին-քրտինք մտած: Իսկ հոկտեմբերից սկսած, նա անգործ վայր է ընկնում տանը —գիւղական օդայւում: Ժամանակ անցկացնելու, օրը մի կերպ մթնեցնելու համար, գիւղացիները հաւաքւում են միմեանց գլխի և բամբասանքներ են անում: Նրանք չունեն հոգեկան մխիթարութիւններ, կարգալ չը գիտեն, տեղեկութիւններ չունեն: Ուրիշներից լսած սուտ ու սխալ տեղեկութիւններին ներանք կատարեալ հաւատ են ընծայում և ոյժ տալով իրանց վառ երևակայութեանը, ստեղծում են նրանցից անհեթեթ, ալի-անգալ պատմութիւններ:

Մի քանի տարի առաջ գիւղերում բաւական դպրոցներ կային, որոնք թէև կանոնաւոր դասընթացներ չունէին, գոնէ դրագիտութիւն էին սովորեցնում գիւղական մատաղ սերնդին: Այդ նոր կրթուող սերունդը ձմեռուայ երկար գիշերներին, իր շուրջը հաւաքած գիւղացիներին, կարդում էր իրանց հասկանալի լեզուով հէքիաթներ, վէպեր: Այս հէքիաթներն ու վէպերը սիրելի էին գիւղացիներին:

Պէտք էր անանել, թէ ինչպէս ուշագրաւ լսում էին նրանք կարդացողին: Նրանք ոգեւորութեամբ կարդում էին մեր վիպասանների գրուածքները: Կարդալը սիրելի էր նաև գիւղի հարս ու աղջիկներին, որոնք տղամարդկանցից հեռու, մի անկիւնում կանգնած՝ լսում էին և ուրախանում: Կարդացւում էին նաև լրագիր: Գիւղացին չաւ է սիրում լրագրական նորութիւնները: Թէև չաւ չի հասկանում, բայց քաղաքական ուրերը կարգալով, ոյժ է տալիս խելքին և լուծում քաղաքական բարդ խնդիրները:

Այժմ ամբողջ գաւառում հաղիւ 5—6 դպրոց կայ, որը, հասկանալի է, շատ քիչ է 145 *) գիւղի համար: Գրքեր չը կան գիւղերում, եթէ լինէին, գիւղացիները սիրով կը կարդային: Որքան ցանկալի էր, որ ձեռնհաս մարդիկ կարողանային չըջիկ գրավածառի իրաւունք ստանալ և էժանագին գրքեր տարածէին գիւղերում:

Անգործութիւնից ձանձրանալով՝ գիւղացիները ժամանակը նուիրում են թղթախաղի, խումարի և հարբեցողութեան: Շիրակում կան մի քանի գիւղեր, որտեղ սաստիկ տարածուած է թղթախաղը, իսկ այս նորամուտ մտնութիւնը երիտասարդների մէջ է դարգացած:

Գիւղերում վերջերս առաջ է հիկել մի դասակարգ, որ ձեռք է վերցրել երկրագործութիւնից և անգործ օրերով ընկած է գիւղերի մէջ եղած խանութներում կամ օղաներում: Անգործների այդ դասակարգը կազմում են այն երիտասարդները, որոնք զինուորութիւնից յետ են դարձել:

Իսկապէս յոյս ունէինք, որ մեր երիտասարդները՝ զինուորական չարքաշ կեանքի հետ միասին ենթարկուելով զինուորական կարգապահութեան, յտուն դառնալուց յետոյ կը լինէին օրինակելի մարդիկ, աւելի աշխատող, աւելի խելօք, քան թէ իրանց հայրերն են: Բայց դուքս եկաւ բոլորովին դրա հակառակը: Որանք ծառայութիւնը վերջացնելուց յետոյ, աշխատում են քաղաքներում տեղաւորուել քաղաքապահների և ուրիշ պաշտօններով: Իսկ որոնց որ չի յաջողում քաղաքներում մնալ, դառնում են գիւղերը և փոխանակ անմիջապէս գործի կաշկելու, իրանց բացակայութեան ժամանակ խանգարուած գործերը կարգի բերելու, խոյս են տալիս աշխատանքից և ծոյլ ու անհոգ ընկնում են վայր: Նրանց այժմ խորթ է թուում գիւղը, հայրական աշխատանքը՝ ծանր և տաժանելի, քաղաքների մեղկ կեանքն աւելի քաղցր է իրանց համար:

Փակագծի մէջ պէտք է յիշել և այն, որ սրունք գիւղերին որպէս բարիք բերում են իրանց հետ վեներական ախտեր: Այժմ շատ կան հիւանդներ թէ կանանց և թէ տղամարդկանց մէջ, որոնք ամենքն էլ վարակուած են սիֆիլիսով—որոնց պարզ նշանները նկատուած են դէմքերի վրայ: Կան և շատ՝ քիթը թափած մարդիկ:

Գիւղական անգործ երիտասարդները լուսական չէ որ չեն աշխատում, ուրիշների աշխատանքն էլ աւելորդ տեղն են վատնում: Շատ անգամ տանից փողեր են գողանում և բերելով

*) Գաւառի բոլոր գիւղերի թիւն է:

քաղաք, վատնում են անառականոցներում ու գինեաներում: Սրանց բռնած վատ ընթացքի չնորհիւ տան մէջ ծագում են տարածախուժիւններ, որոնք վերջանում են բաժանութիւններով: Բաժանում են այն եղբայրները, որոնք մինչև այդ ժամանակ ապրել են խաղաղ, մէկ տեղ ցանել, մէկ տեղ յոգնել ու քրտինք թափել:

Գոված նահապետական կեանքի անդորրութիւնը, ընտանեկան սրբութիւնը խախտուել է գիւղերում: Քաղաքների վատ աղղկեցութիւնը արտացոլում է գիւղերի վրայ: Դէպի մեծերը տածած յարգանքն ու ակնածութիւնը չի նկատուում երիտասարդների մէջ: Չը նայելով որ գիւղական պարագմունքները կարօտ են շատ աշխատանքի ձեռքերի, այնուամենայնիւ չը կան այլ եւս առաջուայ մեծ տները, որոնց մէջ 60—70 հոգի հաւաքւում էին տան նահապետի շուրջը:

Տղամարդկանց իրար մէջ ունեցած վատ յարաբերութիւնների չնորհիւ, փոխուել է և կնիկների յարաբերութիւնը: Երկու տեղեկիկներ շարունակ կուռում են, իրար բամբասում, իրար հայհոյում: Երբ տան մէջ նրանցից մէկը երեխաների տէր է, միւսը չոռնի երեխաներ, վերջինս շարունակ զրգում է մարդուն՝ ծածկել աշխատանքը, կամ բաժանուել եղբորից. ինչու միւս եղբոր երեխաներն ուտեն իր ամուսնու վաստակը:

Այժմ գիւղացու կինը քաղաքացու պէս սիրում է ազատ ապրել, առանց հսկողի, առանց կողմնակի աչքերի գիտողութեան: Բայց որովհետև ցանկացած ազատութիւնից օգտուելու յարմարութիւն ու ջնորք չոռնի, ուստի և չուտով էլ ենթարկւում է կեանքի փորձութիւններին:

Գիւղացու կինը երեխայի նման խաբւում է օտար տղամարդու արտաքին փայլից, տուած գրօջանոց ընծաներից: Մի հատ կարմիր աղլուխ, մի հասարակ մատանի, մի երկու գրուսնաքայ չաքարեղէն-մրգեղէն կարող է խաբել, օտարի գիրկը գցել նրան:

Երբեմն իրանք տղամարդիկն են ծախում իրանց կանանց: Անառակութիւնը շատ անգամ ծածկւում է ընտանիքի անդամների մէջ: Եղբայրը եղբոր կնոջ հետ է յարաբերութիւն ունենում: Կան մարդիկ, որ ամօթից խեղդուած, ձայն չեն հանում, իսկ շատ անգամ սրա հակառակ, մարդիկ հետևում, բռնում են անառակներին և իրանց ձեռքով դատաստան անում:

Քանի չէ բացուել խայտառակութիւնը, անառակ կինը համեստ է երևում, իսկ երբ բացւում է, այնուհետև դէն է ձգում իր կանացի համեստութիւնը: Նա էլ յետ չի կենում՝ ոչ մի խայտառակութիւնից, յայտնի կերպով սկսում է սիրե-

կաններ պահել: Բայց նա երբ գիւղում հալածանքի է ենթարկւում, գնում է քաղաք և աւելի անպատկառ դառնում, քան թէ քաղաքի անառակ կիներ: Ներկայումս բաւական թուով աւանառակ գիւղացի կնիկներ կան թէ՛ հասարակաց տներում և թէ՛ մասնաւոր տներում:

Եւ այսպէս ահա մեր գիւղերումն էլ կեանքը անցողական վիճակի մէջ է. հին նահապետական նիստ ու կացը փոխւում է, նորագոյն աւելի լաւ կարգեր դեռ մուտք չեն գործել նրա կեանքի մէջ, և ստացուել է մի դրուժիւն, որ շատ անմխիթարական է:

Ն. ք. ՆԻԿՈՂՈՍԵԱՆ

Ա Ղ Զ Ի Կ

(Առողջապահական եւ բարոյագիտական եփուդ):

Նուէր օր. Հայկանոյց Տիգրանեանին:

(Իմ քրոջ աղջկան)

Սիրելի Հայկանոյց.

Դու գիտես, որ հայ օրիորդի վիճակը և նրա խաղացած դերը մեր կեանքի մէջ միշտ զբաղեցրել է ինձ:

Երկար տարիների դիտումներն ու ուսումնասիրութիւնները ինձ համոզեցին, որ մեր ազգի պրօգրեսսիվ վատասերման և օտարանման մէջ հայ աղջկայ կրթութեան ու դաստիարակութեան սխալանքները առաջնակարգ դեր են խաղում:

Մեր ոչ ընտանեկան կեանքը, ոչ դպրոցական շրջանը և ոչ հասարակական վերաբերման ձեւը դէպի աղջիկը, ընդունակ չեն զարգացնելու սրա մէջ այն ֆիզիկական ու հոգեկան յատկութիւնները, որոնք առհաւատչեայ են թէ նրա անձնական բարօրութեան և թէ ազգի բարգաւաճման:

Այն ինչ աղջիկը պիտի կազմի հայ ընտանիքի սիւնը...

Վաղուց մտադրուել էի հաղորդել հասարակութեան այն հայեացքները աղջկայ կրթութեան ու դաստիարակութեան վրայ, որ տուել են ինձ թէ գիտութիւնները և թէ իմ սեփական խորհրդածութիւնները:

Մակայն միշտ յանդգնութիւն եմ համարել ձեռնարկել լաւ այսպիսի մի աշխատութեան, որովհետեւ լաւ եմ հասկացել նրա դժուարութիւնը. դժուարութիւն, որ կապուած է ինդրի ծաւալի մեծութեան և նրա բազմակողմանիութեան հետ:

Գուցէ երբեք չը վստահանայի սկսելու այս էտիւզը, եթէ քեզ յայտնի սոսկալի դէպքը վերջնականապէս չը համոզէր ինձ այսպիսի մի գործի օգտակարութեան մէջ, թէկուզ այդ գործը թերի էլ լինէր:

Մարիամը մի զոհ էր. զոհ անկանոն դաստիարակութեան, զոհ սխալ ուղղութեան: Կան զոհեր, որոնք խոշոր հոստարակական երևոյթներ են, և խորին յուզմունքի հետ միասին նաեւ լուրջ խոհեր են յարուցանում մեր մէջ:

Մարիամի դէպքը այդպիսիներից է, այս պատճառով նա ստիպողական դարձրեց իմ աչքին այս օրինակ մի էտիւզի պահանջը:

Եւ ահա ձեռնարկում եմ այս ուսումնասիրութիւնը, համոզուած լինելով, որ սրանով մի օգտակար գործ կատարած կը լինեմ, և յարգանքս մատուցած կը լինեմ նրա յիշատակին:

Գու լաւ ճանաչում էիր Մարիամին և սքանչացած էիր նրա հրեշտակային հրապոյրներով:

Եւ քեզ պէս էլ ամենքը, ով մօտենում էր նրան, որովհետեւ նրա մէջ բիւրեղացած էին տեսնում ինչ որ ազնիւ էր, բնօրյ էր, կնային էր: Ամենքը խորին պատկառանքով էին վերաբերում դէպի այս վեհանձն կուսութիւնը, որի անբխժութեան առաջ խոնարհւում էր անպատկառ հայեացքն անդամ:

Մի ինչ որ թովիչ շերմութիւն էր բուրում նրա ամբողջ գոյութիւնից և լցնում մեր սիրտը հրապոյրով ու մեղմ, անսահման համակրութեամբ: Նա ապնուանող ազդեցութիւն էր գործում մարդու վրայ:

նրա աչքերը արտափայլում էին հոգու, մաքրի ազնւութիւն ու յստակութիւն, և ամբողջ դէմքի վրայ, շարժումների մէջ, խօսակցութեան ձևի մէջ արտայայտւում էր բնածին հեղութիւն:

Վեղեցիկ ու դիւթիչ էր նրա արտաքինը, և նրա բարոյական աշխարհը միանգամայն ներդաշնակում էր արտաքինի հետ:

Ուրչափ բարձր ու վեհ էին նրա բարոյական գաղափարները: Մեր կեղտոտ կեանքի վրայ նա նայում էր իր իդէալի պրիզմայի միջով և կարծում էր թէ աշխարհի ղեկավարողները աղնւթիւնն ու բարոյականն են:

Ամեն մարդու սրտակից ընկեր ու բարեկամ էր համարում իրան, և իր մտքի ու զգացմունքների անկեղծութեան մէջ կարծում էր, թէ ամենքի բերանից անկեղծութիւն ու ճշմարտութիւն է բղխում: Իր սեփական զգացմունքների և մտքերի վեհութեան ու սրբութեան արդելում էին նրան ուրիշի մէջ կեղծիք ու ստութիւն տեսնել:

Այն ինչ, ինչճի շուրջը ամենքը ստում էին ու կեղծում:

Եւ երբ բացում էինք նրա առջև կեղտոտ իրականութիւնը, երբ ցոյց էինք տալիս նրան իրերը իրանց սեփական գոյնով, նրա նրբազգաց ոգին կարծես տանջւում էր, վիրաւորւում, որ աշխատում են փշրել իր փայփայած կումիրը:

Այդ դիտելով մարդ զգում էր, որ անսրտութիւն կը լինէր հիասթափեցնել այդ անարատ էակին, ներկայացնելով մարդկանց իրանց իսկական պատկերով: Անգթութիւն կը լինէր կոշտ ու կռաւիտ ձեռքով ետ բաշել իրականութիւնը ծածկող խաբուսիկ քօղը: Եւ միամիտ աղջիկը շարունակում էր սիրել ու հաւատալ մարդկանց, շարունակում էր ենթադրել նրանց մէջ ևս այն բարոյական սկզբունքները, որոնք նրա գոյութեան միակ սիւներն էին:

Աւանդ, տատանուեցան սիւները և ճօճաց ամբողջ շէնքն ու վրատակուեց:

Նա աւարտեց գիմնադրան և օտք դրեց կեանքի մէջ, այն կեանքի, որին նա բոլորովին անծանօթ էր:

Այժմ զգում էր, որ ինքն էլ անդամ է հասարակութեան և որ պարտաւոր է մի գործ կատարելու:

Որչափ յուսալից պատրաստականութիւն էր ցոյց տալիս նա աշխատելու իր ազգի, հասարակութեան օգտին, օգտաւէտ մարդ դառնալու:

Ահ, սիրել մի մեծ, մի ազնիւ գործ ու հոգով անձնատուր լինել նրան, ղլնուած օգտակար մարդ լինելու բաւարարութեամբ: Ահ, զգալ, որ այս ձեռները, այս ուղեղը, այս բնական ձիրքերն ու ընդունակութիւնները պիտանի պիտի լինեն հասարակութեան խոցերի վրայ սպեղանի դնելու, նրա յուսահատութեան ովկիանոսի մէջ մի կաթիլ մթնոլորտի գցելու:

Եւ պատանուհու երեւակայութեան մէջ ուրուագրւում էր իր ապագայ գործունէութեան գրաւիչ պատկերը: Նա տեսնում էր իրան կամ վարժուհի—մայր ու բոյր դառած հարիւրաւոր մանուկների, տալով նրանց իր բոլոր մարմնական և հոգեկան ճիւղերը, կամ հասարակական եռանդուն գործիչ, նուիրուած բարեգործական գործունէութեան: Նրբեմն էլ երազում էր քաջուել մի յետ ընկած տեղ, իսկական խաւար ամբոխի մէջ և գործել յաւիտենական տառապանքի ու տանջանքի բովարանում:

Նա պիտի մեծ հռչակ հանէր նոյնպէս և դրական ասպարէզի մէջ, տալով հայ մանկան մի շարք գրքեր, հիմնելով մանկական թերթեր, ժողովրդի մէջ տարածելով դրական դաստիարակութեան հիմունքներ: Զէ որ նա էլ անդամ է հայ ազգի, չէ որ հասարակութիւնը սպասելիքներ ունի նրանից, նա պիտի գործի, գործի ամեն ասպարէզի վրայ... Եւ այս հեշտ յափըշ

տակուող պատանուհին համոզուած էր, որ ամեն առաւելագոյն բաց է իր առաջ:

Իր միամիտ անուրջներում՝ դիւթական օդային ամրոցներ էր կառուցանում: Ամեն բան պիտի յաջողուէր իրան: Իր ամփոքածութեան մէջ համոզուած էր, որ միշտ հարթ է ճանապարհը դէպի օգտակար գործը. — բաւական էր ցանկալի և նպատակիդ կը հասնես... Բաւական էր պատրաստականութիւն և գործելու բուռն ցանկութիւն: Իսկ իր մէջ այնքան պատրաստականութիւն և ցանկութիւն էր զգում Մարիամը, որ համոզուած էր, թէ իր բաց սիրտը կարող էր մի ամբողջ աշխարհ ընդունել իր մէջ ու բախտաւորեցնել...

Աւանդ, բախտը ուրիշ կերպ էր տնօրինել:

Մի օր նա վեր է կենում մի ծանր քար կուրծքին: Նա նշանդրած էր...

Ինչպէս էր կատարուել այդ վճռական բայլը, նա չէր կարող հասկանալ: Նա հասկացաւ միայն, որ յանկարծ մարել է նրա լուսատու աստղը, խաւարել է հրաշալի հորիզոնը:

Ա՛հ, նա երազել էր սիրելի, սիրելի իր գոյութեան ամբողջ զօրութիւնով, նուիրել իր սիրած մարդու իր կեանքի ամեն մի բոլէն, իր ներվերի ամեն մի թելը, իր մտքի ամեն մի թռիչքը. սիրելի այն անհուն սիրով, որին կինը ժպիտը երեսին ու հրճուանքը սրտում գոհ է բերում իր կեանքի իւրաքանչիւր վայրկեանը:

Այո, նա ընդունակ էր այդպիսի սիրուն: Նրա ամուսինը պիտի լինէր մեծ, այնչափ բարձր մտաւորապէս ու բարոյապէս, որ նրա առաջ իրան փոքր, անոյժ երեխայ զգայ: Ամուսնու մէջ պիտի զուգաւորուած լինէին զօրեղ կամքի ոյժ և սրտի անչափ քնքշութիւն, առնական զօրեղ միտք և զգացմունքների անսահման նրբութիւն: Նա պէտք է իշխէր աշխարհին իր ուղեղի ոյժով, իր գաղափարների վեհութեամբ և տաղանդաւոր մեծութիւնով: Նա պիտի նաև գեկեցիկ լինէր. նրա առնական դէմքից պիտի թափէր ինքնվստահու-

թիւն, վճռողականութիւն, համոզմունքի անխախտութիւն:

Ամուսնու այդ իդէալն էր ստեղծուել նրա օրինորդական անուրջների մէջ:

Ի՞նչ երջանկութիւն: Ապրել այդպիսի մի մարդու հետ, թե թեի տուած ընթանալ կեանքի աստարեզով, տապալելով ամեն խոչընդոտներ, օգնելով տառապեալին, ձեռք մեկնելով ընկածին, քաջալերելով թոյլերին ու յուսահատներին, ա՛յ ու ձախ սփռելով երջանկութիւն ու հանգիստ մի յաղթական դնացք դէպի այն աշխարհը, որտեղ մարդիկ դո՛հ են իրանցից, որովհետեւ կատարել են իրանց պարտքը, բաւարարութիւն են տուել սրտի պահանջին:

Եւ այս ուղիովմ նա պիտի լինէր ամուսնու օգնականը, ընկերը, նրա սիրտն ու հոգին, իր փայփայանքով միշտ ազնիւ, վե՛հ պահողը: Եւ եթէ այդ մարդը պէտք ունենար իր կեանքին, առանց մի վայրկեան տատանուելու, կը զոհէր իրան:

Եւ իեղճ պատանուհին որոնում էր այդ անձին, որոնում էր... բայց նրան տուեցին մի ուրիշ մարդ:

Ո՛վ էր դա, ի՞նչ կապ կար դրա և իր երեւակայութեան առաջ կանգնած ամուսնու մտապառկերի մէջ: Չէ, չէ, դրան Մարիամը չէր ճանաչում:

Յանկարծ նա զգաց, որ իր առջև մի անտակ վի՛հ է բացուած, որի մէջ ընկղմում է իր իդէալը:

Եւ նրա ցաւացած կրծքից դուրս թռաւ առաջին հիասթափման ճիչը.

—Ափսո՛ս իմ երազներ:

Մի օր նա անքուն գիշերը լուսացրեց, և սոսկալի հոգեկան կռուի մէջ յաղթանակեց իդէալը:

—Չէ, այդ մարդուն ես չեմ ճանաչում, նա չի նմանում իմ երազած ամուսնուն, նա չի կարող ինձ երջանկացնել, ոչ էլ ես նրան:

Եւ նա մերժեց...

Մերժեց... Եւ սկսուեց մի կատաղի անխիղճ ար-

շաւանք խեղճ աղջկայ դէմ, կարծես մի յանցանք գործած լինէր, որ լսեց սրտի ձայնին և չը կամեցաւ կեղծել իր զգացմունքը:

Եւ սկսուեց յուզմունքների անվերջ շարքը, սքանչացման ու հիասթափման բոլորական փոխանակութիւնները, ճակատի վրայ ակօսուեցան յուսահատութեան առաջին կնճիռները:

Անցան ամիսներ, գլորուեց տարին, լուռ էր Մարիամի լեզուն, բայց նրան մօտիկ ճանաչողը չէր կարող չը նշմարել նրա տանջալից դէմքի վրայ, նրա խոր ընկած աչքերի մէջ ներքին աշխարհի սոսկալի ալէկոծումն:

Մի ելք կար միայն այս տանջող գրութիւնից, — դա ինքնամոռացումն էր: Այո՛, այո՛, խրուել աշխատանքի բոլի մէջ, անընդհատ լարման մէջ պահել հոգու ու մտքի թելերը, քրտնալից տակնապի մէջ խեղդել սիրազուրկ սրտի զարկերը:

Չէ՞ որ նա կարդացել էր, թէ սէրից դատարկացած սիրտը կարելի է լցնել ուրիշ զգացմունքներով, գործելու եռանդով, օգտաւէտ լինելու իղձով: Նա լսել էր, որ երբեմն երջանկութիւն ու հանգիստը ինքնազոհութեան մէջն է, և եթէ սէրը անկարող եղաւ երջանկացնել նրան, անձնազոհաբար գործելու իղձը կարող էր լինէր գոնէ հանգիստ տալ նրա ջլատուած սրտին:

Ո՛րչափ հետաքրքրութեամբ հետևում էր նա լսած խորհուրդներին և ձեռնարկում էր մատնացոյց արած գործերին:

Բայց ցանկութիւնն ու եռանդը բաւական չէին գործ կատարելու համար: Հարկաւոր է պատրաստութիւն և որ գլխաւորն է՝ կամքի ոյժ... Աւաղ, այդ երկուսն էլ պակասում էին Մարիամին:

Տատանմունք, անվճռականութիւն, անհաւաստիութիւն գործի օգտաւէտութեան, հաւատի պակասումն դէպի իր ոյժերը — այս բոլորը արտայայտուում է նրա

ամեն մի սկսանքի մէջ: Առաջին բողոքներում սրտանց կպչում էր նա գործին, բայց շուտով վրայ էր հասնում անբաւարարութեան զգացմունք, և ձեռները թուլանում էին ու սիրտը յցւում անվստահութեամբ: Սրտածմլիկ մի տեսարան էր դիտել այդ փորձերի անպողոթնութեանը, ներկայ լինել խեղճի ամենօրեայ ատումներին:

Նա ինքը լաւ էր հասկանում, որ անյաջողութիւնը գործի անմատչելի ու անիրագործելի լինելուց չէր, այլ կամքի թուլութիւնից ու նախաձեռնութեան բացակայութիւնից:

Նա կարգացել էր պատմական նշանաւոր կանանց մասին, որոնք գործել են և իրանց գործերով ապշեցրել են աշխարհը: Ինչի՞ նա ինքը ոչինչ չէր կարողանում գլուխ բերել, ինչն է պատճառը, որ ամեն քայլափոխի նա հանդիպում է անյաղթելի խոչընդոտներին:

Ինչի՞ նրա որտեղ էր բուն էր դրել կասկածի հրէշը, որ ամեն ձեռնարկութիւն ունայն էր դարձնում:

Եւ ինչ օգուտ գործից, ինչ միտթարութիւն, եթէ նա անկարող է լռեցնել յուսահատ սրտի ճիչը: Ձէ՞ որ աշխատանքը, ինքնագոհութիւնը պիտի մոռացութիւն բերէին, պիտի ջնջէին մարդու յիշողութիւնից աանջող անցեալը, իսկ նա...

—Բայց դրա համար հարկաւոր է կամքի ոյժ, իսկ ես տկար եմ, անպատրաստ, կրկնում էր նա:

—Ինչո՞ւ, ինչո՞ւ, գոչում էր նա երբեմն յուսահատ: Եւ Մարիամը խորասուզւում էր իր մէջ:

Ի՞նչ էր եղել նա իր ամբողջ կեանքում:—Մի մեքենայ, որ անզգայաբար առաջ էր մղւում միշտ ուրիշների կամքով: Այո՛, ամենափոքր հասակից մինչև հիմի նա մի մանրքէն է ներկայացրել, կամ աւելի ճիշտ ասած, նրանից մի մանրքէն են շինել, նրա կեանքի ամեն մի քայլը արուել է ուրիշի կամքով. նախ ծնող-

ներն ու աղախներ, յետոյ դպրոցն ու հասարակութեան ճնշումն:

Նա վերանորոգում էր իր յիշողութեան մէջ իր կեանքի գլխաւոր գծերը և չէր գտնում նրանց մէջ ոչ մէկը, որ նա գիտակցաբար, իր սեփական կամքով կատարած լինէր: Այն անբախտ նշանդրէքն անգամ առանց նրա հաճութեան, նոյն իսկ հակառակ նրա կամքին էր եղել: Եւ Մարիամը սարսափեց:

Ի՞նչ. բանաւոր էակը այդչափ անգամ և այդքան ստրկացած ու ցանկութիւնից զուրկ դարձրած, որ մինչև անգամ ամուսնու ընտրութիւնը ուրիշներն են կատարում:

Նա լաւ էր յիշում իր մանկութիւնը:

Միշտ նոյն խորասուզուած, նոյն մուռլ հրեխան է եղել: Մեկամաղձոտ ու ներվային էին նրան ծնողները, այդպէս էլ ծնուեց նա. տխրամած դէմքով երբէք սրտանց չը ժպտաց նա իր կեանքում, երկնքի արևը երբէք չը ջերմացրեց նրա սիրտը:

Իր տանը նա հրճուանք չէր տեսել երբէք, և երբ հազարից մի անգամ նա խառնուում էր ընկերուհիների խաղին ու ձայնակից լինում հանած աղմուկին, նրան պատժում էին «չարութեան» համար:

«Չարութիւն». ազատ մանկական ճիշդ չարութիւն էր համարւում ու պատժւում:

Այսպէս, ամեն կենդանութեան արտայայտութիւն խեղդուած էր նրա մէջ. նա չէր կարող վազել, երգել, խաղալ, զբօսնել: Եւ քանի մեծանում էր նա, այնքան տւելի սեղմւում էր նրա ազատութիւնը և 14 տարեկանից վեր, նրան արդէն արգելւում էր մենակ զուրս գալ տնից. — ամեն մի քայլի համար բացատրութիւն էին պահանջում նրանից և ամեն մի շարժում կշտամբում: Այդ ինչ էր, ինչ տարօրինակ սխտեմ էր դա: Կարծես ծնողները իրանց աղջկան անբարոյական, ստախոս էին համարում:

Նոյնն էր տնում նաև դպրոցը:

Դպրոցը... Նա կարծես ընտանեկան բանտի շա-
րունակութիւնն էր: Այնտեղ նոյն սիստեմով ճնշում
խեղդում էին երեխայի մէջ մտքի ու գործի անկա-
խութիւնը: Չէ՞ որ այնտեղ ևս արգելուած էր սեփա-
կան միտք, ցանկութիւն ու կամք ունենալ: «Այստեղից-
այնտեղ»: Թո՛ւ մեր դպրոցների նշանաբանը, որով ստի-
պում էին աշակերտուհիներին դասագրքի ուղեղով մը-
տածել: Ամեն ինչ որոշ չրջանակի մէջ էր դրուած. նրա-
նից դուրս գալը յանցանք էր համարուում, և օրինա-
կելի աշակերտուհին նա էր, ով թուլթակի նման բերան
էր անում «այստեղից-այնտեղը»:

Այսպէս, նա միշտ շարժուել է ուրիշի թելադրու-
թեամբ, նրա մտքերն անգամ ուրիշներինն էին:

Այսպէս, ծնողներն ու դպրոցը երկար տարիների
ընթացքում կաշկանդել էին նրա կամքը և յանկարծ
դուրս թողել նրան կեանքի ուղիւնոսի երեսը ա-
ռանց ղեկի. բնականաբար նա պիտի ընկղմուէր ու
խեղդուէր: Ամեն կենդանի իր փոքրիկին սովորեցնում է
կռուել ու կռուով ապրել, միայն մարզն է, որ իր ե-
րեխային անդէն ու անպատրաստ դուրս է չալրաում
կեանքի աստարէզէ: Եւ այնտեղ, կեանքի այդ կռուի
մէջ, ինչպէս ուսուցանում է Պարվինի դպրոցը, անդէնը
կուլ է գնում զինուածին, թոյլը—ուժեղին:

—Ի՞նչ եմ ես և ինչի ապրեմ, ասաց նա մի օր,
յուսահատ ձայնով: Ծնողներէյս ժառանգել եմ ներ-
վայնութիւն, ներվային թուլութիւն, հիւանդական դիւ-
րազգացութիւն ու նրբամտութիւն: Դաստիարակու-
թիւնը ինձ չինել է անվճռական, կամազուրկ, զուրկ
նոյնպէս ձեռներէցութիւնից ու տոկունութիւնից ակը-
սանքների մէջ, իսկ դպրոցը ոչ մի գործնական գիտե-
լիք չի տուել ինձ և մէջս չի մշակել ոչ մի լուրջ հայ-
եացք հասարակական կեանքի և մարդկանց փոխա-
դարձ յարաբերութիւնների վրայ: Ես մի վրիպած
էակ եմ, ինչպէս վրիպած է ի ծնէ ապուշը, որ ան-
պէտք է կեանքի համար:

Մի գիշեր լողուորները կուրի հոսանքի միջև
գուրս հանեցին քո սիրած ընկերուհու այլակերպուած
գիւղը:

«Ես չը կարողացայ ապրել,—գրում էր նա իր հրա-
ժեշտի նամակում:—Ես մի անպէտք էի և մի վրիպած,
ինչ կարող է սպասել ինձնից հասարակութիւնը: Ոչինչ:
Ուրեմն էլ ինչի ապրեմ: Մի նուազ, մազի չափ բարակ
թել գեռ կապում էր ինձ այս աշխարհից. այդ սիրելու
ու սիրուելու յոյսն էր: Ա՛հ, որչափ անսիրտ ու անողոր
գտնուեցան մարդիկ, գտնէիմ վերաբերմամբ:

«Ա՛հ, որչափ դժուարին էր ընտելանալ մեռնելու և
ոչնչանալու մտքին. բայց այժմ բարեբախտաբար մահ-
ուանս ուրուագիծը այլ ևս չի զարհուրեցնում ինձ...
Երբեմն միայն մի սարսուռ է անցնում ողնաշարիս
վրայով, բայց ինչ փոյթ, քանի որ վճիռս անգառնալի է:

«Ինձ մի մեղադրէք թէ երկչոտ եմ: Այո՛, ճշմարիտ է,
ապրելու, գոյութիւնս զգալու երկիւղն է որ մղում է
ինձ գէպի ինքնասնչացումն: Երկչոտ եղայ իւրաքան-
չիւր սկսանքիս մէջ, երկչոտ եղայ սիրուս մէջ, մի բա-
նում գտնէ անսասան ու հաստատակամ լինեմ:—մեռ-
նելու մէջ:

«Կեանքը արօրեց ինձ ու ջաղճախեց, որովհետեւ ես
տկար էի ու անգէն: Ես հարիւրաւոր, հազարաւոր գո-
հերից մէկն եմ: Միայն ամենքին չի յաջողում իմ այս
ընտրած ճանապարհով իրանց հանգստութիւնը գտնել,—
չատերը շարունակում են տանջուել, անվերջ տանջուել»...

Մարեց մի լաւ կեանք, գոհուեց մի անարատ ու
սուրբ էակ:

Ա՛հ, ո՞վ կարող է վերլուծել ինքնասպանի հոգու
շարժումները: Ո՛րչափ հակասութիւն կար նրա անհաս-
տատ, միշտ տատանուող մտքերի մէջ:

Մի հարուածով կտրում է իր կեանքի թելը, այն
կեանքի, որ երբեմն ուրուագծւում էր նրա երեւա-
կայութեան մէջ այնչափ յուսալից, այնքան գեղեցիկ:

Ի՞նչ զարհուրելի որոշումն, սրալիսի ուղեղային

բոլորուման մէջ վճռուեց այդ ինքնաշնչունն: Կորչել, թագնուել այնպիսի խաւարի ու լռութեան մէջ, ուր երբէք, երբէք չեն թափանցի երկնքի արեւը, ու աշխարհի անմիտ խլրտման աղմուկը:

Ո՞րտեղ է գտնում ինքնասպանը իր մէջ այդ հերոսութիւնը: Ի՞նչ ահագին ոյժ էր լցուել թշուառ աղջկայ մէջ, որ ստերը չը դողացին այդ երկար ճանապարհին, որ տանում էր դէպի Կուրի կեղտոտ հոսանքը: Ի՞նչպէս չը ծալուեցան նրա ծնկները, երբ պատրաստուում էր նետել իր տանջուած մարմինը գետի կատաղի ալիքերը:

Այն ինչ ոյժ էր, որ վախկոտ չարագործի նման յետեւից հրում էր նրան միշտ առաջ, մինչև մահուան զարհուրելի անդունդը...

Ահաւոր է այդ ոյժը, որ աւելի մեծ է քան ապրելու փափագն ու մահուան տալիսապը:

Մի զարմանար, որ ապրելու անկարող տկարը իր մէջ մեռնելու զէնք գտաւ:

Կեանքը նրա համար տանջանքի բով էր դառել, ապրել նշանակում էր տանջուել, և այս տանջանքները երկարացնելու վախը խեղդել էր նրա մէջ մեռնելու սարսափն անդամ...

Մեռնել: Չէ՞ որ այդ նշանակում էր քնել, հանգըստանալ, մոռանալ այն ամենը, ինչ որ իւրաքանչիւր վայրկեան կտրատում է մարդու սիրտը: Մեռնել ու մի ցնցումով վայր գցել կուրծքը սեղմող անտանելի ծանրութիւնը...

Ո՞վ գիտէ, գուցէ այդ յոյսը մխիթարեց նրան այն սոսկալի վայրկեաններում, երբ մենակ ու անօգնական, ահռելի մթի մէջ, նա զգաց իր տանջուած մարմնի խորքերում մահուան ահաւոր սարսուռը...

Անշուշտ յիշում ես այն խօսքերը, որ ես ասացի

քեզ, երբ դու մեռելային գոհնատութիւնը երեսիդ, դէմքիդ գծերը զարհուրանքից ու կսկծից այլայլուած, կցկտուր ձայնով, համարեա չճշալով յայտնեցիր ինձ այդ բօթը.

— Զգոյշ կաց, տաացի, այդ ինքնասպանութիւնը յաճախ վարակիչ է. սանձիր ներսերդ ու բանեցրո՛ւ ուղեղդ. թո՛ղ բանականութիւնդ զեկավարի քո բայերը: Անձնատուր մի լինիր օրինակի յուսահատեցնող վարակիչ տպաւորութեանը: Այո՛, կորուստը մեծ է, այո՛, այս ինքնասպանութիւնը չի կարող չը խոցել մեր սիրտը, մանաւանդ քո, որ սիրում էիր ու յարգում այդ թշուառին, բայց ամենամեծ կսկիծն անգամ չը պէտք է կարողանայ խեղդել մեր մէջ խեղքի ձայնը: Այո՛, անշուշտ խեղճ ընկերուհուդ սոսկալի որոշումը ներքին ահագին ոյժի արտայայտութիւնն էր, բայց նա նաև փորրոգութեան գործ էր:

Ամենքի մէջ հրաշալի բնութիւնը մի լապտեր է դրել, որ միշտ վառ է մեր սրտի խորքերում:

Նա է մեր ամբողջ գոյութեան շարժառիթը, նա է որ տանելի է դարձնում այս տաղտկալի կեանքը, նա է, որ փարոսի նման լուսաւորում է մեր կեանքի դժուար ուղին, նա է որ ցոյց է տալիս ցամաքը, այսինքն հանգստեան վայրը, մեր տանջանքների ծայրը...

Դա յոյսն է:

Դառնացած, լեզիով լցուած սիրտն էլ զրկուած չէ յոյսից: Կախաղան բարձրացողի սրտումն անգամ դեռ վառ է այդ փարոսը: Ամենաաղէտալի վայրկեաններում անգամ մենք մի հրաշքի ենք սպասում. հրաշք, որ պիտի լցնի մեր սիրտը երջանկութիւնով: Հարիւր տարեկան զառամեալ ծերունին անգամ ինչ որ սպասելիքներ ունի կեանքից...

Մետաբոլիզմը, արդի խորհողներից մէկը, իրաւացի է, երբ ասում է. «Ամենայնեւրեւ, ամենաթշուառ մարդն անգամ մի ապաստարան ունի իր հոգու խոր-

բերում, որտեղ նա հանդիստ է գտնում՝ ու նոր ոյժ է ձեռք բերում՝ ապրելու համար»:

Տես, ինչ վարդազոյն գոյներով է ներկայանում ապագայ կեանքը թորախտաւորի առաջ: Թորերը կերուած, արիւնը թունաւորուած, կմախքացած ու քայքայուած հիւանդի մէջ մինչև սրտի վերջին զարկը վառ է յուսատու փարոսը...

Դժբախտութեան ու յուսահատութեան րոպէներում մարդ այդ լապտերի լուսով պիտի փնտռի իր գնալու ուղին:

Եթէ մեր յոյսերից, սպասելիքներից մէկը կամ մի քանիսը դաւաճանում են մեզ, որոնքնք մի ուրիշ յոյս, մի ուրիշ նպատակ: Եթէ մենք չը հասանք մեր իդէալին, ձգտենք մօտենալ նրան:

Հարիւր սանդուխներ կան, որոնք տանում են մարդուն դէպի երջանկութիւն, դէթ դէպի ինքնագոհութիւն: Եթէ մի սանդուխը խախտւա է և վախում ես չը կտորուի, անցիր միւսին և յամառ, անսասան դիմիր իդէալին, որչափ էլ անհասանելի թուայ նա քեզ:

Թշուառ Մարիամը իր հետ գերեզման տարաւ իր դադանիքը:

Անտարակոյս սարսափելի պիտի լինէր այն վիշտը, որ սպանեց խեղճին. բայց, ո՞վ գիտէ, գուցէ նրան հասած դժբախտութիւնը չափազանցրած է երևացել նրա աչքին:

Չը մոռանաս, որ վիճքը այն ծանրութիւնն ունի, որ մեր հոգեկան տրամադրութիւնը քալիս է նրան: Կարգն ունի փիլիսոփայի գիրքը:

Ո՛րքան ճշմարտութիւն կայ այս մտքի մէջ.— Միևնոյն թշուառութիւնը տարբեր կերպով է աղբում մարդկանց վրայ, նայելով նրանց կրթութեան, կամքի ոյժին, բռնակոտորութեան, վերջապէս հանգամանքներին: Կան բնաւորութիւններ, որոնց համար ամենաթեթեւ անախորժութիւնը դժբախտութեան չափեր է ընդունում, ինչպէս որ սարսափահար եղած մարդու աչքին անտառի

Թիերը, աւազակների ու գաղանների կերպարանք են ընդունում: Սրանք հլու հպասակներ են դառնում պասահարներին, փոխանակ փերելու ու իրանց հպասակեցնելու այդ աննպաստ հանգամանքներ:

Եւ երբ որ մի դատարկութիւն է բացւում նրանց սրտում, աշխատում են լցնել դառնութիւնով և յուսահատութիւնով, որոնք տանում են նրանց դէպի անդառնալի կորուստ:

Ափսոս չէ՝ մատաղ, փայլուն կեանքը, որ ինքնապաշտով փչրում է անգթաբար: Ափսոսում ենք մի բաժակի կոտորուելուն, և մեր ձեռով սպանում ենք մի բան, մի անփոխարինելի բան, որ կոչւում է կեանք:

Ի՞նչ իրաւունքով:

Բնութիւնը ահագին ոյժ, զօրութիւն է վատնել մեզ ստեղծելու համար, ծնողները աներևակայելի տանջանքներով ու ճիգով սնուցանել ու պահել են մեզ, հասարակութիւնը կրթել է մեզ ու պիտանի մարդ դարձրել, ի՞նչ իրաւունքով մի ակնթարթում ոչնչացնում ենք այսչափ աշխատանք, ու զրկում մեր բարերարներին իրանց սպասելիքներից: Ո՞վ պիտի վճարէ ինքնասպանի պարտքը:

Խեղճ Մարիամը լաւ էր հասկանում, որ զոհ է—զոհ անկանոն կրթութեան ու դաստիարակութեան, հասկանում էր, լայց անկարող եղաւ գտնել իր մէջ փրկարար փարոսը:

Այն ինչ գիտակցութեան ամենաբարձր արտայայտութիւն է.—չընկճուել կեանքի հարուածների տակ, չը ստորանալ յոյսերի դաւաճանման առաջ:

Այդ ներքին կենսական դիմացկոտութիւնը, այս բարոյական էնէրգիան զարգանում են ու ամրանում միմիայն մարմնի ու հոգու ներդաշնակ կրթութիւնով:

Կամքի ոյժ, անսասան տոկունութիւն, որանք ձուլած մաքուր ոսկու կտորներ են, որոնք դուրս են

բերուած հանքաքարերի ձուլարանից ու կռարանից: Սը-
րանք տղամանդներ են, որ գտնուում են սև ածուխի
միջից:

Դաստիարակութիւնն ու կրթութիւնը պիտի դառնան
հանքաքարերի միջի ոսկին:

Ահա իմ ձգտումը:

Ես պիտի վերցնեմ աղջկան երեխայութիւնից մինչ-
և օրիորդական հասակը, պիտի ցոյց տամ, թէ ինչպէս
պէտք է կրթել նրան ֆիզիկապէս, բարոյապէս ու
մտաւորապէս, մինչև որ հասունանայ:

Ես կը հետեւեմ գիտութեան ցուցմունքներին, որ
պիտի այսուհետև լինի մայրերի և հասունացած օրիորդ-
ների ուղեցոյցը:

Այս տեղ ևս, ինչպէս իմ միւս առողջապահական—
էտիւդներում, ես կ'աշխատեմ խօսել պարզ և անկեղ-
ծօրէն, դէն դցելով կեղծ ամօթխածութիւնը, որ միշտ
խոչընդոտ է եղել լուրջ առողջապահական գիտելիքներ
տարածելուն ժողովրդի մէջ:

ԲԺՊ. Վ. ԱՐԾՐՈՒՆԻ

(Կը ռաբունակուի)

Մ Ա Տ Ե Ն Ա Խ Օ Ս ՈՒ Թ Ի Ի Ն

1) Ե. Թ. Մեսրոպ Մառտոյ. Արեքսանդրապօլ, 1901, 32 էր. 8⁰, գինը
— 5 կոպէկ:

2) Ե. Թ. Մահմէդ. Արեքսանդրապօլ, 1901, 35 էր. 8⁰, գինը 7 կոպէկ:
Երկու գրքոցկի հրատարակողն է Յովհաննէս Արամեանց:

Վերջին տարիները մեզանում էլ առանձին ուշադրութիւն
են դարձնում մեծ մարդկանց կենսագրութիւնների վրայ: Հատ
ու կտոր: այստեղ ու այնտեղ հրատարակում են կենսագրու-
թիւններ: Երևոյթը անպայման համակրելի է և խրախուսանքի
արժանի: Յաւալի է միայն որ այդ գործը մեզանում կատար-
ւում է առանց սխտեմի, առանց որոշ ծրագրի: Մեր թարգմա-
նիչներին կամ կազմողներին, անկասկած, գրաւում է ողու յայտ-
նի հրատարակիչ Պալլենկօվի տուած օրինակը: Բայց մոռա-
ւում է մեզանում այն, որ եթէ Պալլենկօվի «Կենսագրական
Գրադարանը» շատ գեղեցիկ աջողութիւն ունեցաւ, գլխաւոր
պատճառն այն էր, որ նա խմբագրւում էր որոշ ծրագրով և ծա-
ւալով: Անպայման հարկաւոր ենք համարում որ մեզանում էլ
ի նկատի առնուի այդ հանգամանքը: Եւ այսպէս ասում ենք,
աչքի առաջ ունենալով պ. Ե. Թ.-ի կազմած այս երկու կեն-
սագրութիւնները:

Մեսրոպ Մաշտոցի կենսագրութեան առիթով շատ պահանջ-
ներ անել կազմողից չենք կարող: Ի՞նչ անէ խեղճ կազմողը: Մի
հատ հսկայ անձնաւորութիւն ունենք մեր անցեալում, մի ան-
գնահատելի բարերար, որի շնորհիւ, լաւ թէ վատ, ապրում ենք
իրն ազգ: Եւ սակայն, այդ իրապէս մեծ մարդու մասին կեն-
սագրական մանրամասն տեղեկութիւններ չունենք: Ամեն ինչ,
որ վերաբերւում է նրան և նրա գիւտին միթայած է ջատագո-
ւական չափազանցութիւնների և միստիքական սքանչալում-
ների մէջ: Շատ քիչ բան կարելի է մաղել պարզել այդ բոլո-
րից և տալ ընթերցողին, որպէս զի նա տեսնէ թէ ինչ հանճա-

րեղ նախահայր է նա ունեցել հինգերորդ դարի սկզբում, այն անմոռանալի ժամանակներում, երբ հնարունց մեր այբուբենը:

Կազմողը տուել է այն, ինչ կարելի էր տալ, նայած ձեռքի տակ եղած միջոցներին: Եւ մեր նկատողութիւնը գրքոյկի փաստական կողմին չէ այնքան վերաբերւում: Եթէ մեզ հարցնեն թէ ով էր Մեսրոպ Մաշտոցը, մենք կ'ստենք համարեա այն ամենը, ինչ ասել է պ. Ե. Թ. իր գրքոյկում: Բայց մեզ կարող են և մի այլ հարց տալ.—ինչ էր Մեսրոպ Մաշտոցը: Ահա այդ հարցին զօտւար կը լինէր պատասխանել պ. Ե. Թ.-ի օգնութեամբ: Իսկ սա չատ մեծ, հետաքրքրական, կրթիչ նշանակութիւն ունեցող հարց է:

Եւ մեզ թւում է որ գրքոյկի կազմողը այս կողմի վրայ պիտի կենտրոնացնէր իր ուշադրութիւնը: Երբ մենք բաւականաչափ նիւթ չունենք մեր մեծ երախտաւորի ամբողջ ղէմքը նկարելու համար, նրա գործի մանրամասն պատմութիւնը գրելու համար, գոնէ պիտի աշխատենք որ այդ գործի ահագին նշանակութիւնը պարզուած լինի մեր ընթերցողի առաջ:

Ի՞նչ էր Մեսրոպ Մաշտոցը: Բաւական է դրա համար համեմատել չորրորդ դարը հինգերորդի հետ: Մի կողմում մենք կը տեսնենք Ներսէս Մեծի դարը, մեծ ջանքերի, արուեստական միջոցների այն դարը, որ սակայն չը կարողացաւ ժողովրդականացնել քրիստոնէութիւնը, թէև այս նոր կրօնի համար Հայաստանը մեծամեծ զոհողութիւններ արաւ, զոհեց մինչև իսկ իր քաղաքական անկախութիւնը: Դա դրսի, ձևական քրիստոնէութեան դարն էր. Հայաստանը մի մեծ վանք էր դարձել, իր հարստութիւնները անխնայ, չռայլօրէն գործ էր դնում քրիստոնէական բարեգործութիւնը ամենամեծ չափերին հասցնելու համար: Բայց և այդպէս, բաւական էր Ներսէսի մահը, որպէս զի նորից հեթանոսութիւնը մտնէ հայերի սիրտը:

Ահա մի կողմը: Սա Մեսրոպից առաջ եղած ժամանակն է: Այժմ վերցրէք միւս կողմը:

Քառասուն կամ քիսուն տարուայ ընթացքում քրիստոնէութիւնը, այն էլ ոչ թէ քրմական, այլ առաջադէմ, ժամանակի գիտութիւնը իր ծոցն առած քրիստոնէութիւնը այնքան հաստատ հող է գտնում Հայաստանում, որ մենք տեսնում ենք եթէ ոչ մի ամբողջ ժողովուրդ, գոնէ նրա մի նշանաւոր մասը նահատակուելիս յանուն քրիստոնէական գաղափարի: Հինգերորդ դարը իր արիւնաներկ էջերով, իր գրքերով Մեսրոպի գործն է: Բայց ինչո՞ւ միայն հինգերորդ դարը, ինչո՞ւ միայն Աւարայրի ճակատամարտը, Վահանի պատերազմները: Առաջացէք հայի հետ մինչև նոր ժամանակները, և ամեն տեղ, ուր հային կը

տեսնէք կամ ղէնք վերցրած կամ Եւրոպայում գիրք ու տպարան որոնելիս, զուք ամեն տեղ պիտի որոնէք նոյն մեծ մարդուն, նոյն Մեսրոպ Մաշտոցին:

Նա գտաւ հայերէն տառեր: Բայց դա բաւական չէ: Նա ուսուցիչ հանդիսացաւ, նա դպրոցներ բաց արեց: Ահա թէ ուր է գործի գլխաւոր միտքը: Նա ազգայնացրեց քրիստոնէութիւնը, նա հայի համր ու կաշկանդուած լեզուի կապերն արձակեց և այդ ղէնքը զննելով հայի ձեռքին, ուղարկեց նրան բազմաթիւ դժբախտ դարերի տակ մտնելու:

Գործի այս նշանակութիւնը բաւականաչափ շեշտուած չէ պ. Ե. Թ.-ի աշխատութեան մէջ: Բայց արժէր: Արժէր, օրինակ, մի կողմ թողնել այն վիճելի հարցը թէ Մովսէս Խորենացին Մեսրոպի աշակերտներէից էր, իսկ զրա փոխարէն աւելի մանրամասն կիրպով պարզել Մեսրոպի կատարած գերը մեր կեանքի մէջ:

Մեզ կարող են ասել թէ կենսագրութիւնը համառօտ է, նա ընդամենը 32 կրեւից է բաղկացած, որովհետեւ նշանակուած է ժողովրդի ընթերցանութեան համար: Հէնց այստեղ էլ մենք կ'անենք մեր նկատողութիւնը ծաւալի և ժողովրդական գրքի մասին: Բայց զրա համար նախ դիմենք Մահմէդի կենսագրութեան:

Արաբիայի մեծ մարգարէն բազմաթիւ գիտնական հետազոտութիւնների առարկայ է դարձել մանաւանդ XIX դարի ընթացքում: Համաշխարհային նշանակութիւն ունեցող կրօնների հիմնադիրներից Մուհամմէդը ամենակրտսերն է ժամանակով: Նա գործել է այնպիսի ժամանակ, երբ պատմական վկայութիւնները այնքան հազուագիւտ չէին: Մնացել են այդ ժամանակներից շատ մանրամասն տեղեկութիւններ, որոնք պատկերացում են մարգարէի հասարակական և մասնաւոր կեանքը, այնպէս որ հեշտ է գիտնական քննադատութեան միջոցով հետադիմել այդ անձնաւորութիւնից բարեպաշտական առասպելները, որոնցով չրջապատուած են ուրիշ հին կրօնների հիմնադիրների կեանքը: Եւ Մուհամմէդի մի լաւ կազմած կենսագրութեամբ կարելի է ցոյց տալ թէ առհասարակ ինչպէս են առաջանում կրօնները:

Պ. Ե. Թ., դժբախտաբար, շատ թեթիւ է նայել այդ կենսագրութեան: Նրա գրքոյկի մէջ մարգարէի կեանքը իսկապէս 14 փոքրիկ երես է գրաւում, մնացած մասը իսլամի դաւանութեան է վերաբերւում: 14 երեսում, պէտք է խոստովանել, նոյն իսկ հանճարի լակօնաբանն էլ չէր կարող ասել Մուհամմէդի մասին այն, ինչ պէտք է անպատճառ ասել: Իսկ պ. Թ.

Ե. այդքան փոքրիկ տեղի վերաբերմամբ խնայող չէ եղել, այլ, ընդհանրապես, դրել է այդտեղ այն, ինչ կարելի էր և պէտք էր չը զնել, մինչդեռ բայ է թողել այնպիսի բաներ, որոնց ոչ մի կերպ չէ կարելի բայ թողնել: Այսպէս, նա ցոյց է տալիս թէ ուր թաղուհեյ Մուհամմէդի մայրը, բայց համարեա ոչինչ չէ ասում մարգարէի կեանքի երկրորդ շրջանի մասին, որ շատ կարեւոր է: Կրօնի հիմնադիրների կեանքը օրինակ է դառում այդ կրօնին հետևողների համար: Այդ տեսակէտից վերին աստիճանի հետաքրքրական է Մուհամմէդի կեանքի մեղինական շրջանը, երբ նա ցոյց էր տալիս թէ ինչպէս է ինքը կատարում իր բերանով քարոզուած «երկնային» ճշմարտութիւնները: Այստեղ մենք տեսնում ենք մարգարէին աւաղակալին արշաւանքների մէջ և վաճառականներից կողոպտած բռւարը բաժանելիս. այդտեղ մենք տեսնում ենք մարգարէի հարեմական չափազանցութիւնները և այլն:

Կազմողը թողնում է գործիչի հոգեբանութիւնը լուսաբանող փաստերը և դրա փոխարէն առանց բացատրութիւնների, առանց նոյն իսկ թեթի կասկածներ յայտնելու բերում է աւանդութիւններ և առասպելներ, որոնք մեծ մասամբ Մուհամմէդից յետոյ են ստեղծուել: Այսպէս յայտնի է, որ իսլամի մարգարէն անգրագէտ էր. նրա քարոզները դրում էին նրա մօտիկ մարդիկ ոսկորների, փայտի կտորների, մի տեսակ տերևների վրայ և այդ բոլորը հաւաքում էին մի տեղ: Բայց մուսլիմանական բարեպաշտութիւնը հնարել է այն առասպելը թէ հրէշտակը հրամայեց Մուհամմէդին կարդալ և նա սկսեց կարդալ: Եւ պ. Ե. Թ. բերում է այս առասպելը իբրև փաստ: Առասպելները, ի հարկէ, տեղ ունեն կենսագրութեան մէջ, բայց պէտք է պաշտօնաւոր կերպով բացատրուած և պարզաբանուած լինեն:

Եւրոպացի հետազօտողները գեղեցիկ կերպով բացատրել են թէ ինչ տպաւորութիւն էր թողնում Արաբիայի անապատային բնութիւնը Մուհամմէդի վառվռուն երևակայութեան, զգայուն, միատիկական սրտի վրայ, մինչև անգամ գտել են թէ ինչ հիւանդութեան էր նա ենթարկուած, ինչ հալիւցինացիներ էին գալիս նրա վրայ: Պ. Ե. Թ. անտես է արել այդ բոլորը: Մի քանի չոր ու ցամաք տեղեկութիւններ Արաբիայի մարգարէի մասին ոչինչ չեն ասում ընթերցողին: Մեզանում մանաւանդ հարկաւոր էր մի լուրջ ուսումնասիրութիւն Մուհամմէդի և նրա կրօնի մասին, քանի որ մեր ազգը այսօր էլ գտնւում է նրա ստեղծած քաղաքական և հասարակական պայմանների ահաւոր ծանրութեան տակ: Ճիշտ է, մեզանում կայ վաշինգտոն իրվինգի գործի թարգմանութիւնը, բայց դա հնա-

յաժ Բան է և նորագոյն հետազօտութիւնները հիմնուած են գիտական միթօղի, բաղմաթիւ աղբիւրների ուսումնասիրութեան վրայ:

Դիմենք, սակայն, մեղ հետաքրքրող գրքոյկին: Ծաւալի փոքրութիւնը այստեղ արդէն միանգամայն խեղդել է գործը: Մեզանում առհասարակ մի թիւրիմացութիւն է աիրում.—որ ժողովրդական գիրքը անպատճառ պէտք է փոքրիկ լինի: Սա սխալ է: Այդ գիրքը պէտք է էփան լինի: Բայց որ ժողովուրդը կարող է և համեմատաբար մեծ գրքեր էլ կարդալ, այդ մասին կասկածելու ոչ մի հիմք չը կայ: Գլխաւորն այն է, որ գիրքը հետաքրքրական լինի, չնորհրով կազմուած, խելօք ու կրթիչ: Իսկ մենք բոլորովին հակառակն ենք անում, վերջնում ենք կրճատում ամենաէականն անգամ, որպէս զի կարողանանք, այսպէս ասած, «ժողովրդական» ծաւալ ստանալ:

Ժամանակ է թողնել այդպիսի հասկացողութիւնը:

Լ.

Յ) ԱՅՈՒՐ ԵԱՐՃԱՆԵԱՆ. Դիւցազնօրէն. Հայ երիտասարդութեան համար. Փարիզ, 1902 թ. գինը 1 ֆրանք:

«Դիւցազնօրէնը» մի փորձ է՝ բանաստեղծական ձևով արտայայտել թիւրքահայոց կեանքի վերջին անցքերը: Տարաբախտաբար Եարճանեան ևս պատկանում է մեր այն նորագոյն բանաստեղծների շարքին, որոնք ստրկօրէն հետևում են ֆրանսիական գրականութեան հիւանդոտ արտայայտութեան. մեր խօսքը գեկագենտ կամ սիմբօլիստ ուղղութեան մասին է: Զարմանալի է որ մեր նոր բանաստեղծները այդքան շուտ են թարկուեցին գեղարուեստական առողջ ճաշակի դէմ մեղանշող այդ վաղանցուկ և մօղային հովերին...

Ահա, օրինակ, ինչպէս է գրում պ. Եարճանեանը.

Ու հորիզոններուն ու հողերուն բոլոր զօրինելին,
Այսպէս, վալրազօրէն ու քինայուզօրէն ու լաղթանալօրէն,
Եկա՞ն, եկա՞ն, եկա՞ն, Անոնք, իրենց զօրթովը դժոխային
Սասանելէն դաշտալայրը ուր մենք բոլորս առաւօտին լուսե-
րէն գինով:

Վճռական օրուանը համար՝ որ «Օրերուն Օրն է» լսին,
Իրենց խառնուեցանք դեռ տակի զանգուածաւորելու համար
այդ Փոթորիկն ապերասան,
Որուն անողոք ճամբան, արդէն մեր ամենուն ալ ճամբան էր...

Այդ նոր ձևի «գեղեցիկութիւնը» չափ վիճելի է, մինչդեռ նրա տարօրինակ մթնոլթիւնը խանգարում է՝ գրուածքից անմիջական տպաւորութիւն ստանալու: Բանաստեղծը այդպիսով մի թանձր քօղ է գցում ընթերցողի աչքերի առաջ և այդ վերջինից պահանջւում է լարել երեակայութիւնը և գշուխ կոտորել՝ թափանցելու համար՝ սիմբոլներով թագնուած մտքերն ու զգացմունքները: Միթէ այդ աւելորդ խոչընդոտները դէմ չեն գեղարուեստի ամենատարրական պահանջներին, չէ որ՝ աղղելու, տրամադրութիւն առաջացնելու բոլորովին հակառակ բան են այդ նորագոյն ձևերը: Մինչդեռ հեղինակի ընտրած նիւթը բանաստեղծական ամեն տեսակ ստեղծագործութիւնների համար, իրաւ որ, կարող էր անսպառ աղբիւր լինել, մանաւանդ Պարիզում, եթէ միայն մամուլի աղատութիւնից դեկադենտօրէն չօգտուէին մեր նոր գրողները, այլ՝ լրջօրէն...

Լ. Ս.

1) ԳԷՈՐԳ. ՄԵԼԻՔ-ԿԱՐԱԳԵՕՋԵԱՆ.—Գերմանիայի հայ ուսանողութիւնը: (Արասպուած «Տարագ»-ից), Թիֆլիզ, 1901, գինն է 20 կոպէկ:

Վաղուց է մեր թէ մամուլի և թէ հասարակութեան զանազան շրջաններում անդադար դժգոհութեան և բողոքի ձայներ են լսուած հայ ուսանողութեան հասցէին—որ նա ընկած վիճակի մէջ է, զուրկ գաղափարական յափշտակութիւնից, գրական գործունէութեան տենչանքից, ջերմ, անվհատ եռանդից, որ նա հասարակական իդէալների վերաբերմամբ սպոն է, անհիւրընկալ և ետական, նիւթապաշտ ձգտումներով է միայն ոգևորւում...

Բայց մի այնպիսի կարեւոր խնդիր, ինչպիսին ժամանակակից հայ ուսանողութեան վիճակն է, լուրջ, պատճառաբանող, վերլուծական ըննադատութեան բովից դեռ չէր անցել: Այսպիսի մի փորձ մենք համարում ենք պ. Մելիք-Կարապետեանի գրքոյկը:

Հեղինակը՝ ինչպէս բացատրում է իր գրքի յառաջաբանում, չափ համեստ դիտաւորութիւն ունի—խօսել ոչ թէ ընդհանուր եւրոպական հայ ուսանողների, այլ բացառապէս Գերմանիայի հայ ուսանողութեան մասին: Նա իր փաստային և վիճակագրական տեղեկութիւնների մի մասը քաղել է «Եւրոպայի հայ ուսանողական միութեան» տեղեկագրից, որ լոյս տեսաւ 1899 թուին: Իսկ գլխաւորապէս հիմնուելով իր սեփական դի-

տողութիւնների և տպաւորութիւնների վրայ՝ իր նպատակն է դրել «ոչ միայն տեղեկութիւններ տալ և նրանցից եղբակացութիւններ հանել, այլ և, ըստ հնարաւորութեան, պարզ պատկեր տալ, թէ ինչ է անում, ինչպէս է ապրում, ինչ է զգում ու մտածում Գերմանիայի հայ ուսանողութիւնը»։ Հեղինակն այն կարծիքի է, որ «գերմանական հայ ուսանողի տիպը ընդհանուր է Գերմանիայի բոլոր քաղաքների համար», և որովհետև նրան ամենից շատ ծանօթ է Բերլինի հայ ուսանողութիւնը, այդ պատճառով նա կանգ է առնում առանձնապէս այս ուսանողութեան վրայ, որ «թուով ամենից հարուստ, արտադրել է և ամենից շատ գործունէութիւն և ամենից շատ է զարգացրել իր մէջ գաղափարների աւելի նուրբ տարբերութիւններ»։

Պ. Մելիք-Կարապետեանի գիրքը բաղկացած է հետևեալ հատուածներից—I. ընդհանուր տեսութիւն Եւրոպայի հայ ուսանողութեան վրայ. II. Բերլինի համալսարանը. III. նորեկ ուսանողի առաջին օրերը Գերմանիայում. IV. ինչո՞վ բացատրել մեր ուսանողների և գերման հասարակութեան մէջ չփման բացակայութիւնը. V. մեր ուսանողների դասաւորումը Եւրոպայի բարձրագոյն դպրոցներում և մասնաւորապէս Գերմանիայում. VI. ուսանողական ընկերութիւններ. VII. «Եւրոպայի հայ ուսանողական միութիւնը». VIII. Գերմանիայի հայ ուսանողների կեանքից։

Մենք կանգ կ'առնենք այս հատուածներից միայն կարևորագոյնների վրայ։

Ընդհանուր տեսութեան մէջ տաճկահայ և ուսաահայ ուսանողների միմեանցից ունեցած տարբերութիւնը, բնաւորութեան առանձնայատկութիւնները մեզ թւում է ճիշտ։ Նոյնը կարող ենք ասել նաև IV հատուածում առաջ բերուած գերմանական և հայ յեղերի բնորոշման մասին։ Հայ ուսանողների և գերմանացիների մէջ չփման բացակայութիւնը հեղինակը բացառում է մասամբ այս երկու յեղերի բնաւորութեան և մասամբ առհասարակ եւրոպական և արևելեան կեանքի տարբերութեամբ. իբրև մի այլ պատճառ՝ հեղինակը մատնանիչ է անում և այն հանգամանքը, որ գերմանացու և հայի ընդհանուր գաղափարներ և ձգտումներ չեն ներդաշնակում միմեանց հետ, մինչև իսկ «ընդհանուր ձգտումների մասին խօսել անգամ չի կարելի»։ Մեզ թւում է սակայն, որ «չփման բացակայութեան» բնորոշ արգելաոթիւթներից մէկը պարզապէս հայ ուսանողի անհարթութիւնն է։ Եթէ վերջինս կենդանի պահանջ ունենար շփուելու գերմանացու հետ, այն ժամանակ բնաւորութեան տարբերութիւնը և նոյնանման ուրիշ պատճառները՝ եթէ ոչ խիստ ձգու-

զական, մտերմական, գոնէ վանողական ոչ մի դեր չէին կարող խաղալ: Չենք կարող չը խոստովանել նաև, որ կան ուսանողներ, որոնք անտարբեր չեն, ընդհակառակն երբեմն բռնուն կերպով ձգտում են շփուել օտարների հետ, բայց նիւթական արվելների պատճառով ստիպուած են հետու մնալ նրանցից: Հեղինակը մատնանիչ անելով այն փաստը, որ չ«մեր ուսանողը, կամայ թէ ակամայ, չէ շփուում ոչ դերմանական ուսանողների, ոչ էլ դերման հասարակութեան միջակ ու բարձր բուրժուազիայի հետ»՝ գալիս է այն եզրակացութեան, որ ինտէլիգէնտ շրջանը (գրողներ, հրապարակախօսներ, գիտնականներ, արուեստագէտներ և այլն) նոյնպէս փակ է հայ ուսանողի համար: Հեղինակն այս երևոյթը բացատրում է 'սրանով'՝ «որովհետև մեր ուսանող երիտասարդը փոխադարձաբար չէ կարող հետաքրքիր լինել այդ անձանց համար»: Այս պատճառաբանութիւնը մեզ մի փոքր դեռ վիճելի է թւում: Բանը նրանումն է, որ հայ ուսանող դերմանական ինտէլիգէնտ շրջանում հէնց իր հայութեամբ կարող է հետաքրքիր լինել: Գլխաւոր արգելադիրն, անշուշտ, ինտէլիգէնտ դերմանացու մշտազբաղութիւնն է կամ ուրիշ խօսքով՝ ժամանակի պակասութիւնը, միւս կողմից այն հանգամանքը, որ Գերմանիայում միևնոյն կոչման և պարապմունքի տէր մարդիկ սովորաբար, եթէ կարելի է ասել, չէզոքացած համախմբութեան երևում: Այսպէս ուսանողը աւելի շուտ ուսանողի հետ է տեսնւում և ընկերական կեանք վարում, հրապարակախօսը՝ հրապարակախօսի, բանաստեղծը՝ բանաստեղծի, երաժիշտը՝ երաժիշտի, քաղաքագէտը՝ քաղաքագէտի, գիտնականը՝ գիտնականի հետ և այլն: Հայ ուսանողը ունի սակայն մի յարմար առիթ ինտէլիգէնտ շրջանի յայտնի ներկայացուցիչների՝ պրոֆէսորների հետ շփուելու: Այս առիթը աւելի նպաստուոր է մանաւանդ այն դէպքում, երբ ուսանողը բացի համալսարանական դասախօսութիւններից՝ յաճախելուց՝ մասնակցում է նաև գործնական պարապմունքներին, սեմինարական աշխատանքներին, ուր լայն ասպարէզ է բացուած պրոֆէսորների հետ աւելի սերտ կերպով շփուելու և ծանօթանալու:

Մենք համաձայն չենք հեղինակի այն կարծիքին՝ թէ գերմանացի ոչ կորպորանտ ուսանողները «իրանց ոգով այնքան էլ չատ չեն զանազանւում կորպորատիւ ուսանողներից»: Տարբերութիւնը չատ և չատ մեծ է: Եթէ չը լինէր այս տարբերութիւնը կամ եթէ, Թէօբալդ Յիգլերի ասելով, դերմանական բոլոր ուսանողական ընկերութիւնները «պարեմալային պետութիւն» ներկայացնէին, այն ժամանակ մարդ ակամայ հարց կը տար.

«Հապա որտեղից են առաջ դալիս այսքան նշանաւոր գիտնականներ, գրական, հասարակական գործիչներ և այլն»: Բացի Korps-ից և Burschenschaft-ից, որոնց սկզբնաւորութիւնը հասնում է մինչև 18-րդ դարը, գերմանիայում գոյութիւն ունեն նաև զանազան ազատ մասնագիտական ընկերութիւններ (քաղաքատնտեսական, պատմական, լեզուաբանական, մաթեմատիկական, իրաւաբանական, աստուածաբանական և այլն): Առաջինները ժամանակին գերմանական պատմութեան մէջ՝ առանձնապէս ներկայ դարու առաջին և երկրորդ քառորդում՝ շատ կարևոր դեր են կատարել, իսկ ներկայումս, յիշուի, միայն զուարճական նպատակներին են ծառայում: Այն ինչ մասնագիտական ընկերութիւնները ունեն զուտ գիտական նպատակ՝ առանց սակայն զուարճական մասից հրաժարուելու: Եւ առ շատ դովելի մի յատկութիւն է, որով ընդունակ է փայլել գերմանական ուսանողական ընկերութիւնը—գիտական նպատակը զուարճականով համեմել և այդպիսով մի սիրուն ներդաշնակութիւն առաջացնել—մի յատկութիւն, որ դժբախտաբար պակասում է հայ ուսանողական ընկերութիւններին, որովհետև մենք՝ հայերս սովորաբար լուրջ ենք, մտազբաղ և բուն զուարճական երակից միանգամայն զուրկ:

Բացի վերոյիշեալ մասնագիտական ընկերութիւններից, վերջերս Գերմանիայում կազմակերպուեցին նաև աւելի լայն և բազմակողմանի հիմքերի վրայ դրուած ուսանողական ընկերութիւններ—Finkenschaft, «Social-missenschaftlicher Verein» և այլն: Յանկայի է, որ հայ ուսանողները հետու չը միան գերմանական թէ՛ մասնագիտական և թէ՛ այս նորակազմ ընկերութիւններից, որոնցից բազմակողմանի կերպով կարելի է օգտուել:

Հեղինակը IV հատուածում խօսում է Լայպպցիգի «Հայ ճեմարանական ընկերութեան» և Բերլինի երկու նախկին հայ ուսանողական ընկերութիւնների մասին: 1897-ի բաժանուած խմբեր, սուր պառակտումներ այժմ այլ ևս գոյութիւն չունեն Բերլինում. երկու և կէս տարի առաջ Բերլինում կազմակերպուեց տեղական ընդհանուր հայ ուսանողների միութիւն, որին մասնակցում են Բերլինի համարեա բոլոր հայ ուսանողները: Այդ միութեան փողովները մինչև անցեալ տարուայ ձմեռային կիսամեակի վերջը կանոնաւոր կերպով տեղի էին ունենում. բայց վերջերս, դժբախտաբար, առաջ եկան մի քանի խոշոր տարածախնդրութիւններ, որոնց հիմքը աւելի անձնական էր քան թէ գաղափարական—այնպէս որ այժմ Բերլինում գոյութիւն ունեն երկու ընկերութիւններ՝ «գրական» և «կրթական»:

Երբեմն Լայպցիգի «Ճեմ. ընկերութիւնից» մի քանի ուսանողներ, որ, աստուածաբանների հետ ու մնալը՝ հեղինակը բացատրում է «աշխարհայեցողութեան միայն սուր տարբերութեամբ»։ Որքան մեզ յայտնի է, այդ երկուքի հիմքը դարձեալ աւելի շատ անձնական պատճառներն են և մի քանիսի հիւանդոտ կասկածամտութիւնը և ոչ թէ «աշխարհայեցողութիւնը»։ Աշխարհայեցողութեան տարբերութիւնը ամենեւին արգելք չը պէտք է լինի, ընդհակառակն՝ մի ուժեղ խթան պէտք է լինի՝ մասնակցելու մի ընկերութեան, որ, ուրախութեամբ պէտք է նկատել, նեղ հիմքերի վրայ չէ դրուած և յարմար առիթ է ներկայացնում հաւաքուելու և իրար հետ չփոխելու թէ ամենածայրայեղ արմատականին և թէ պահպանողականին։ Գոհութեամբ մտանանիշ պէտք է անել և այն փաստը, որ առհասարակ գերմանական հայ ուսանողների շրջանում հանդուրժականութեան ոգին հետզհետէ աւելի և աւելի է տրմատանում։ Սա մի վերին աստիճանի միութարական երևոյթ է և ցանկալի կը լինէր, որ այդ նոյն ոգին շարունակ վառ մնար նաև ապագայ գործունէութեան շրջանում՝ թէ՛ մանկավարժական, թէ՛ դրական, թէ՛ հրապարակախօսական և թէ՛ ուրիշ ասպարէզներում։

«Եւրոպայի հայ ուսանողական միութեան» մասին հեղինակի յայտնած հիմնական կարծիքներին համաձայն ենք. ունենք սակայն մի քանի վերապահումներ, որոնց վրայ անկարող ենք այստեղ կանգ առնել։

Իր գրքի վերջին հատուածում պ. Մելիք-Կարապետեանը՝ ի միջի այլոց խօսում է գերմանական և եւրոպական միւս հայ ուսանողների մէջ եղած տարբերութեան մասին։ Պարոնի բնորոշող նկատողութիւնները մեզ թւում են ճիշդ և հիմնաւոր։

Վ. ՆԱԼԲԱՆԴԵԱՆ

Ն Ո Ր Ս Տ Ա Ց Ո Ւ Ա Ծ Գ Ր Ք Ե Ր

- 1) Բ Ե Ն Ս Է. «Բուլանըխ կամ Հարբ գաւառ», արտատպուած «Ազգադրական Հանդէսից». Թիֆլիս, 1901 թ., գինն է 1 ռ. 50 կ.:
- 2) Բ Ժ. Ա. Բ Ո Ւ Դ Ո Ւ Դ Ե Մ Ն. «Առողջապահական նուէր նորատի կանանց». Ալեքսանդրապօլ, 1901 թ., գինն է 20 կ.:
- 3) Ռ. Յ. Պ Է Ր Ա Է Ր Ե Մ Ն. «Դաստիարակի մը խօսքերը». Վիեննա, 1901 թ., գինն է 3 ֆրանք:
- 4) Հաշիւ թեմական դպրանոցի վիճ. հայոց Ն. Նախիջևանի և Բեսարաբիոյ վասն 1900—1901 ուս. տ., Նոր-Նախիջևան, 1901 թ.:
- 5) П. Бакалейникъ. “Исловіе миллионера“, СПБ., 1901 г., цѣна 1 руб.
- 6) Լ Է Օ. «Հայկական Տպագրութիւն», Հատոր երկրորդ, Առաջին մաս. արտատպուած «Մուրճից», 1902 թ., գինն է 1 ռ. 50 կ.:

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

ԱՆԱՄՆԱՊԱՀՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԿԱԹՆԱՏՆՏԵՍՈՒԹԻՒՆԸ ՄԵՐ ԵՒ
ՈՒՐԻՇ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ *)

ԳԼ. II

Արհեստական խոտացանքսի մշակութեան բացակայութիւնը մեզանում: Անասնապահութեան և կաթնատնտեսութեան տեխնիկայի ընկած զրութիւնը. — Իւղապործութիւնը, պանրագործութիւնը և այլն. — Անասնապահութիւնից և կաթնատնտեսութիւնից ստացած մթերքների գների ցածութիւնը և այլ ճիւղերի եկամուտը. — Համեմատութիւն մեր և ուրիշ երկրների:

Անդրկովկասի և եւրոպական Ռուսաստանի անասունների բնութեան զլիաւոր պատճառներից մէկը նա է անկասկած, որ մեր երկրում շատ քիչ գեր է խաղում խոտի արհեստական ցանքսը:

Այն ժամանակ, երբ եւրոպայում, — մանուսանդ նրա հիւսիսային աւելի ցուրտ և խոնաւ մասերում, — ցանո՞վի մարգագետինները բռնում են ահագին, տարէց տարի աւելանող, տարածութիւն, մեզ մօտ զրա մասին շատ տեղեր զաղափար անգամ չունեն: Ամենատարածուած ցանովի խոտը Կովկասում, մանաւանդ Արարատեան դաշտում, անկասկած եօնջան է (*medicago sativa*, люцерна): Եօնջի ցանքսը ջրովի տեղերում տարէց տարի չատանում է և տարածւում նոր տեղեր: Բիծնի հովտում չատերը իրանց բակերի մէջ ցանում են «կոլինդարի» անուանեալ խոտից (*Lolium italicum*, թէ *L. perenne*, райграсъ), իսկ Թիֆլիսի նահանգի, Գորու, Ախալցխայի և այլ գաւառներում տեղ-տեղ գործ է ածւում «ուզրիխելի», «քիւրուշնա» անուա-

*) Տե՛ս «Մուրճ» 1901 թ. № 11.

Ձունուսը, 1902.

նեալ (vicia, կամ սիսեոի ցեղից ВИКА) բոյսերի խոտը և սերմը (վերջինս զոմէջների համար): Վերջապէս, Երևանի և Կարսի նահանգներում, գլխաւորապէս կրային հողերի վրայ, ինձ պատահել է տեսնել «կորինգանի» (կարմիր կօնջի, *Onobrychis sativa*, эспарцетъ) ցանքս, իսկ Նախիջևանի գաւառի մի քանի գիւղերում յայտնի է մի նոր խոտ «չամբալա» անունով (*trigonella faenum graecum*, греческое сѣно). յիշածս տեսակներն էլ գուցէ բաւական լինէին մեր երկրին, եթէ բռնելիս լինէին շօշափելի տարածութիւն:

Տարաբախտաբար ժողովրդին յայտնի խոտերի տեսակների ցանքսը բռնում է Կովկասում շատ չնչին տարածութիւն: Ի բաց առեալ Արարատեան և Բիժնի հովիտները, ուր հողի սակաւութեան պատճառով կօնջան ու «կորինգարին» տեղ-տեղ բռնում են $\frac{1}{5}$ — $\frac{1}{4}$ մասերը, քննարկ տեղերի խոտհարքները և մանաւանդ ցանքսի մարգագետինները չեն հասնում և մի քանի տոկոսի:

Երևանեան գաւառում, օրինակ, պետական գիւղացիների խոտհարքների (ըստ երեոյթին ցանուլի) տարածութիւնը *) հաւասար է 27 հազ. դեսետինի 108₂ հ. դ. հողից, կամ կազմում է գիւղացիների հողերի 25⁰/₀: Նոյնն է Ալեքսանդրապոլի գաւառում: Արհեստական խոտհարքները այդտեղ շատ քիչ են, իսկ բնական խոտհարքները 247₃ հ. դեսետինից կազմում են 56 հազ., կամ պետական գիւղացից հողերի 23⁰/₀-ը:

Աւելի վատ է Նախիջևանի գաւառի դրութիւնը, ուր գիւղացիների 879 հազ. դ. հողերի մէջ համարեա խոտհարք չը կայ: Չը նայած այս աղքատ թուերին, Երևանեան նահանգը համարուելու է համեմատաբար ամենից առաջադէմը այս կողմից: Այն ժամանակ, երբ այդ նահանգում պետական գիւղացիների հողերից արհեստական և բնական խոտհարքները կազմում են 40⁰/₀ (389 հազ. 977₇ հ.-ից), Բազուի նահանգում, ուր արհեստական մարգագետիններ համարեա չը կան, միմիայն բնական խոտհարքները նոյնպէս բռնում են միայն հողերի 44⁰/₀ (44₃ հ. դ. 1057₅ հ. դ.-ից)...

Այլ դրութիւն ենք տեսնում մենք Եւրոպ. Ռուսաստանում և մանաւանդ Եւրոպայում: Ռուսաստանում ամբողջ տարածութեան $\frac{1}{12}$ կամ 8⁰/₀ կազմում են խոտհարքները (34₂ միլ. դես. 441 միլիօնից), որից մօտ $\frac{1}{3}$ ծածկւում են վարնանը ջրով: Երկրի զանազան մասերը այս հարցի վերաբերմամբ միմեանցից

*) Вѣдомость о раскладкѣ оброчной подати и поземельнаго налога на 1901—1903 гг.

շատ տարբերում են՝ հիւսիսային (հողով առատ) մասում խոտ-հարքները բոնում են մօտ 60/0, հարավային «սեահողային» շրջանում 120/0 *):

Աւելի նպաստաւոր պայմաններ են Եւրոպայում **), Ֆրանսիայում ու Անգլիայում, օրինակ, երկրի տարածութեան ամբողջ պէտքական մասից.

Արտ ու բնական խոտհարքները բոնում են 165—472⁰/₀

Խոտացանքները և արհեստ. մարգագետինները 58—131 »

Տակերի մշակութիւնը սնասունների համար 12— 53 »

Նոյնն է համարեա և Աւստրիա ու Գերմանիա, ինչպէս և աւելի հիւսիսային և խոնաւ Դանիա, Շվեդիա, Նորվեգիա...

Համեմատելով վերջի թուերը մեր երկրի թուերի հետ, մեզ համար պարզ կը լինի՝ ինչ պատճառով յետ ենք մնացած մենք բաւարար քանակութեամբ խոտ և առհասարակ «կեր» ունենալու կողմից։ Այն ինչ, այն բոլոր խոտերի տեսակները, որ ցանւում են Եւրոպայում, բուսնում են և մեր երկրում, մանաւանդ իսկային մասերում։

Երեքնուկի, առոյտի, սիրի-սիրիի, խնձորածաղիի, սարի հօնջաի (Trifolium, клеверъ) կարմիր, սպիտակ, դեղին և ալ տեսակները, ցորենխոտը, ցորենկը կամ որոմն շատակեացը (Lolium, райграсъ), արմութոսեան չայրի խոտը (phleum pratense, тимopheeva трава), արոտածիլը կամ ոչխարախոտը (rosa camp-ressq, мятликъ), աղուէսախոտը, պոչուկը (alepocurus pratens, лисохвостъ), խրրուկախոտերը կամ վարաակախոտը (avena և festuca, овсяницы), մարառոյտը կամ հօնջան, առոյտը (medicago sativa, люцерна), ձիակորեկը (panicum italicum, могаръ) ոսպը, ոլորը, կորինգանը (onobrychis sat., эспаристъ), վարի աչորան—սրանք բոլորը բուսնում են առատութեամբ մեր արօտներում ու խոտհարքներում և կասկած չը կայ որ դրանց արհեստական ցանքը ստանալու է մեր երկրում մեծ ծաւալ։

Այնտեղ, ուր այսօր քաղւում է 80—100—150 պուղ խոտ, մշակութեան, պարարտացման և ցանքսի շնորհիւ կարելի է ստանալ 200—300 պ., իսկ բացառիկ դէպքերում (Ջրարբի, պարարտ տեղերում) և 500, նոյն իսկ 1000 պուղ։

Տասը տարի սրանից առաջ խոտի ցանքը Ռուսաստանում պատահում էր իրրի բացառութիւն մի քանի մասնաւոր կալուածքներում, բայց շնորհիւ գէմստվոնների զիւղատնտեսների քարոզի

*) Янсонъ, С. х. статистика.

**) Ботаевъ, Дьяковъ, Кормовая площадь Россіи. Полная энциклопедія русскаго сельскаго хозяйства.

և մանաւանդ կենդանի փորձերի, Ռուսաստանի շատ նահանգներում (Տվերի, Մոսկուայի, Նարովայի, Նովոգորոդի, Կոստրոմայի, Վոլոգդայի, Վեատսկայի, Տուլայի, Սարատովի և այլն) խոտերի ցանքսը տարածւում է շատ արագ կերպով և տեղ տեղ բռնում է արդէն գիւղացիների հողերի տարածութեան 5—10⁰/₀-ը:

Անհետաքրքիր է մեզ համար որ Ռուսաստանի հարաւային աւելի տաք նահանգներում ցանւում է գլխաւորապէս եօնջան, կորինգանը, ձիակորեկը, և մանաւանդ *bromus inermis* անուանեալ խոտը:

Ռուսաստանի միջին գօտիում—խրբուկը խառը պուրագի, վիկն-ի հետ (*vicia*, *Вика*), ցորնախոտը, աղուէսախոտը և երկբնուկը կամ սիրի-սիրին. իսկ հիւսիսում վերջինս և մանաւանդ ցորնախոտը: Ինչքան մեծ նշանակութիւն ունի խոտացանքսը Ռուսաստանի գիւղատնտեսութեան համար, երևում է նրանից թէ ինչ մեծ տարբերութիւն կայ ցանովի և միւս տեսակ խոտհարքների մէջ: Մոսկուայի գիմնտիօի գիւղատնտես Բաժանովի*) ասելով մի դեսետին խոտհարքը հիւսիսային Ռուսաստանում տալիս է միջին թուով.

Չոր դաշտի խոտհարքներից	.	65 պուգ.
Անտառի թալաների	» .	70 »
Հովիտների	» .	95 »
Գարնանը ոռոգուող	» .	140 »
Արհեստական ցանովի	» .	200 »

Աւելի հարաւային և տաք նահանգներում պ. Դեակովի հաշուով դեսետին խոտհարքը տալիս է միջին թուով.

Ինչ կարգի խոտհարքներից	Վուրակի նահ.	Վօրոնեի նահ.	Եկատե- րինօսլայի նահ.
Դաշտային	. . . 96	68	78
Անտառի	. . . 90	92	—
Հովիտների	. . . 142	138	108
Գարնանը ոռոգուող	. . . 154	176	134
Արհեստական ցանովի	. . . 175	163	157

Միւս բոլոր հաւասար պայմաններում խոտացանքսը 1¹/₂—2 անգամ աւելացնում է բերքը, չը հաշուած նա, որ ցանովի խոտը աւելի մաքուր և մննդարար է, քան բնական չայրներին:

*) Кормовая площадь России. Полная энциклопедия Русского Сельского Хозяйства, СПб., 1901 г.

ստացուած փշերի հետ խառը և շատ անգամ ճրտո «կերը»։ Խոտացանքսի արագ տարածման, բայի աւելի առատ բերք ստանալուց, նպաստում է և նա, որ ուժասպառ, յոգնած տեղերը ցանելով՝ միջոց է տրւում հողին հանգստանալ, պարարտանալ բնական կերպով։ Բայի այդ, վերջերս ապացուցուած է համարւում, որ եօնջան, սիրի-սիրին, կորինգանը և խոտերի միւս թիթեռակերպ ցեղին (papilionaceae) պատկանող տեսակները, շնորհիւ իրանց արմատների բացառիկ կազմի, կարողանում են իւրացնել օդից ազատ բորակածին և դրանով հարստացնում են հողը շատ մեծ կարեւորութիւն ունեցող նիւթերով։

Մինչև խոտերի ցանելը Ռուսաստանում հողը 2 տարի ցանուելուց յետ մի տարի հանգստանում էր։ Հիմա, խոտացանքսի շնորհիւ միջոց կայ այդ տարին չը կորցնել, ստանալ 2 անգամ առաջուանից աւելի խոտ և բայի զրանից պարարտացնել հողը։ Նամանաւանդ դա կարելու է այն պատճառով, որ խոտերի ցանքսը առանձին աշխատանք չէ պահանջում, իսկ սերմը թանգ չէ։ Խոտի սերմ ամեն մէկը կարող է ժողովել հէնց իր բնական չայիրներէից։ Դրա համար հարկաւոր է միայն խոտի հունձը խոտնաքի լաւ տեղերում յետաձգել 2 շաբթով, մինչև սերմը սկսի համնել և դեղնել։ Այդ ժամանակ խոտը կարելի է հնձել և տրորելով անասունների կամ մարդկանց ոտքերով բաժանել խոտերի հասկն ու սերմը ծղնոտից։ Ցանկացողները կարող են խոտերի սերմը գնել նաև շուկայում*) 4—10 ուղւրով շատ մանր սերմ ունեցող խոտերի պուղը։

Առհասարակ խոտը ցանում են աշնանը կամ գարնանը միւս ցանքսերի հետ, երբ հացահատիկը արդէն ցանուած և տափուած է լինում։

Նայած խոտին, սերմի քանակութիւնը տարբերւում է.

Կորինգանի, քիւրուշնայի սերմ վերցնում են 6 — 12 պուղ.

Եօնջի » » 1 1/2 — 2 »

Երեքնուկի (սիրի-սիրի), որսմնի 3/4 — 2 »

Նայած սերմի մաքրութեան, մեծութեան, հողի պարարտութեան, ծանօթը հեշտացնելու համար, խոտի սերմերի հետ խառնում են աւազ, կամ աւազային հող, որպէս զի կարելի լինի ցանքսը անել հաւասար և այն չափով, ինչ չափով անւում է ցորենի և գարու ցանքսը։

Խոտերի սերմերը ծլում են ցորենի եւ գարու հետ, բայց

*) Խոտերի սերմեր կարելի է գտնել կամ Երևան կամ չափանի սերմափաճառների մօտ՝ Մոսկուա Իմմերի, Քիֆլիս, Կիէէտի և այլն։

մնում ճնշուած մինչև հացահատիկների հնձելը, որից յետոյ արտերը սկսում են կանաչել ցանած խոտով, իսկ հետեւեալ տարին հնձուում են:

Մի անգամ ցանած խոտը հնձուում է 1, 2, 3, 4 տարի շարունակ, նայած տեսակին: Խրքուկը և քիւրուշնան հնձուում են ամեն մէկ տարի և տարին մի անգամ:

Երեքնուկը և ցորնախ. 2—3—4 տարի, տարին 1—2—3 անգ. Եօնջան . . . 3—4 » » 2—4 »

Կովկասում տարածուած կարծիք է, որ խոտ կարելի է ցանել միմիայն ջրարբի տեղերում: Բայց դա չափազանցութիւն է: Զրարբի տեղերը խոտերը ի հարկէ աւելի հոնձ և բերք են տալիս, քան դեմի տեղերը. բայց եթէ մենք թողնենք տաք դաշտերը (ուր առանց ջրի ոչինչ չի բնում), պէտք է ընդունենք որ ջուրը միայն ցանկալի է և ոչ անհրաժեշտ: Դա մանաւանդ ճշմարտութիւն է այն տեղերի համար, որոնք գտնւում են 5—6000 և աւելի բարձր տեղերում:

Իբրև ապացոյց վերը ասածներին, ես կարող եմ բերել օրինակ և Կովկասի կեանքից: Թիֆլիսի, Գորու և Բօրչալուի գաւառների սահմանապիսում, Մանգլիսի մօտ, Մօխիս գիւղում, գտնւում է Ն. Կավրիելի կալուածքը: Կալուածքը ունի 4500—6000 բարձրութիւն և բաղկացած է վարելահողից և արօտ ու խոտհարքներից, որոնք չեն կարող ջրուել: Պ. Կավրիելը մի քանի տարի առաջ սկսեց պարապել կաթնատնտեսութեամբ և մեծ կարիք էր զգում խոտի: 1896-ից ղիմելով խոտի ցանքսին, սկզբում նա փորձեց ցանել ցորնախոտ, երեքնուկ և եօնջա, բայց վերջը կանգ առաւ ցորնախոտի և երեքնուկի վրայ, և այս ըոպէիս նրա բնական խոտհարքներից և արօտներից մօտ 35 դեա. կազմում են արհեստական խոտհարքները. գործը աջնքան յաջող է գնում, որ խոտայանքսով սկսել են պարապել նրա հարեան գիւղացի թիւղները:

Վերջի 5 տարուայ փորձերի հիման վրայ երիտասարդ գիւղատնտեսը ընդունում է որ բնական խոտհարքների 85 պուգ խոտի տեղ, արհեստական խոտհարքից նա ստանում է 190 պուգ, այսինքն - երկու անգամ աւելի: Իսկ թէ ինչքան արհեստական խոտի ցանքսը ձեռնտու է, երևում է հետեւեալ համեմատութիւնից: Մէկ դեստին խոտհարքի վրայ ծախսւում է ռուբլի.

Բնական Արհեստական
խոտհարք: խոտհարք:

Հողի վարձի արժէքը մօտ. . .	40	40
Սերմ $1\frac{1}{4}$ պ. = 7 ո. (4 տարի) . .	00	126

Ցանկու և այլ մանր ծախքեր .	00	025
Հունձ	50	50
Ժողովել և բլուր կիտելը .	35	65
Ընդամենը .	1250	170

Մի գետեալին տեղը եկամուտ տալիս է (խոտի պուղը հաշուելով 15 կոպ.)՝ բնական խոտհարքներից ($85 \times 15 =$) 1275 ու. արհեստական » ($190 \times 15 =$) 2850 »

Զուտ արդիւնք ոտաղւում է՝ բնական խոտհարքից 075 ու.
» » » արհեստական » 1150 »

Այն ժամանակ, երբ խոտի պուղը նստում է՝

Բնական խոտհարքներից ($125 : 85 =$) 147 կոպ.

Արհեստականից միմիայն ($170 : 190 =$) 89 »

Ինքն ըստ ինքեան հասկանալի է, որ պ. Կավրիեվի գիւղը բացառութիւն չէ կազմում մեր լեռնային գիւղերի մէջ, Կովկասի հողագործութեամբ և անասնապահութեամբ պարապող գիւղերից շատ շատերը գտնւում են նոյն բարձրութեան վրայ (± 6500 և այլն), ունեն նոյն չափի խոնաւութիւն, ոռոգւում են նոյնչափ «եկ»-ով, եւ կ'աւելանաւելին. Կավրիեվի խոտարքները հարթ չեն, հողը կաւային է. այն ինչ միւս շատ տեղերում լեռնային հողը սե է, աւելի բերրի և գիրքը աւելի հարթ (վարուղ), քան Մոսխուսում:

Ալեքսանդրապոլի, Նոր-Բայազէթի, Զանգեաղուրի, Կարսի և այլ շատ գաւառների լեռնային մասերը այնքան ցուրտ են, այնքան առատ են ոռոգւում անձրեւներով, որ արհեստական խոտհարքներ այդ տեղերում, առանց ջրի, հեշտութեամբ կարող են առաջ գալ:

Անհրաժեշտ է, ի հարկէ, ընտրել կարելիին չափ խոնաւ — հարթ լանջեր, մասնաւոր դէպի հիւսիս ընկած, այսինքն այն տեսակ տեղեր, ուր հացահատիկները յրտի պատճառով զրգոււթեամբ են բուսնում, կամ անձրեւային տարիները «խեղդւում» են խրքուկով եւ այլ որոմներով. ամեն մի լեռնային գիւղում այդ տեսակ հողեր կան և խոտի ցանելը այդ տեղերում կարող է զգալի կերպով աւելացնել ժողովրդի եկամուտը:

Բացի այդ, ինչպէս վերի ասացինք, խոտի ցանքսը միջոց կը տայ մեր ժողովրդին մայնել բերքի փոփոխութիւն (плодо-сменѣ) և այդպիսով վերջ դնել հողերի յոգնածութեան, որ առաջ է եկել միատեսակ մշակութիւնից հացահատիկների համար. աւելացնելով խոտը — բնականաբար կ'աւելանայ անասուն-

ների թիւը, միջոց կը արուի լաւացնել անասնապահութիւնը, լայնացնել կաթնասնտեսութիւնը: Շատացնելով անասունների թիւը, մենք կը ստանանք աւելի աղբ, աւելի առատ կերպով կը պարարտացնենք վարելահողերը և նոյն տարածութեան հողից բնականաբար կը ստանանք ներկայիցս չատ եւ շատ աւելի բերք:

Մեր երկրի անասնապահութեան թոյլ կողմերից մէկն էլ նա է, որ անասունները կովկասում չեն բաժանուած որոշ ցեղերի, չունեն այն առանձնայատկութիւնները, որ պահանջում է ժամանակը: Եւ իսկապէս Այն ժամանակ, երբ Անդըր-կովկասը վերջին տասնեակ տարիների ընթացքում կրած է բաւականին մեծ փոփոխութիւններ և ընդհանուր կուլտուրական, և արդիւնաբերական ու գիւղատնտեսական միւս ձեւերի մէջ—անասնապահութեան վերաբերմամբ նա շարունակում է միայլ համարեա նոյն նահապետական դրութեան մէջ, ինչ դրութեան մէջ էր 100 տարի առաջ: Անցիկալ դարումն էլ մենք ունէինք Ղարաբաղի նոյն գեղեցիկ նժայգիները, նոյն դիմացկուն, չարքաչ պայմաններին սովոր տեղական ձիերը, որոնք հիմա էլ գնահատւում և ձիարշաւներում մրցանակներ են ստանում:

Չը նայած կեանքի փոփոխութեան, չը նայած ճանապարհների լաւանալուն, կառքերի առաջ գալուն, լծուող աւելի ուժեղ ձիերը մենք ստանում ենք... Ռուսաստանի խորքերից բնական պայմանները շատ նպաստում են, որ կովկասի կաղնի ու հաճարի անտառների շրջանում լայնանայ խողապահութիւնը, զարգանայ այն չափով, ինչ չափով պահանջում է մեծացած և որբացած շուկան: Դժբախտաբար 1901 թուի ցուցահանդէսը պարզեց, որ մեզ մօտ չեն զարգանում ու տարածւում ոչ միայն բերքչերի նման մաքուր և ձեռնտու ցեղեր, այլ և խառնուրդներ՝ տեղական ցեղի աւելի աղքատացածի հետ:

Այն ոչխարը, որ պահւում է այսօր կովկասում մսի, բրդի, կաթի համար—պահւում էր և 100 և 1000 տարի առաջ: Թուշի ցեղը իր համեղ մսով, միջակ բրդով ու կաթով վրաստանում, հայ-թուրքական շրջանի Մազըլը իր խոշորութեամբ ու ճարպով, պողաւոր ոչխարը իր բրդով ու բաւարար կաթով—բայց վատ մսով: Իմերէթում—այս բոլոր ցեղերը կային և շատ առաջ: Ճիշտ է, Գանձակի նահանգի զուխօբօր գաղթականները 30-ական թուականներին իրանց հետ բերած էին նուրբ բուրդ տուող մերինոսներ, բայց այդ ցեղը չի տարածւում, չնորհիւ չը կթուելուն և անհամ մսի:

Նոյն անշարժութեան մէջ են՝ և մեր մեծատաւարի ցեղերը: Յուլիանոսի տալիս կայացած ժողովների մէջ պ. պ. Կանցելմարսը, Ալ. Քալանթարը և ուրիշները մատնանիչ անելով այդ անշարժութեան վրայ, խոստովանում էին մի և նոյն ժամանակ որ Կովկասի մեծատաւարի ցեղերը նոյն իսկ լաւ ուսումնասիրուած չեն: Մենք գիտենք ընդհանրապէս, որ Կովկասի մեծ շղթայի ու իր փոռածքների վրայ արածում է մեծատաւարի աւելի մանր. Օսի, լեռնականների ցեղը (8—12 պուգ. քաշով), իսկ Անդրկովկասում աւելի խոշոր ցեղ (12—15 պ.)՝ Ղազախի, Քեաւառի, Շորապեալի ցեղի անուան տակ: Ձլբերի կամ Արդուհանի տաւարը յայտնի է իբրև բաւարար մնացող ցեղ, իսկ դուխորների մոխրագոյն կամ ոսի տաւարը իբրև ցեղ ամենից խոշորը: Յայտնի է, վերջապէս, որ սարի տաւարը միշտ աւելի մանր է քան դաշտինը, չոր շրջանինը աւելի չաղ, իսկ խոնավինը նիհար: Բայց... այս ամենը դեռ բաւական չէ: Մենք չունենք տեղեկութիւններ այդ ցեղերի կամ տեսակների առանձնայատկութիւնների մասին: Ուղեցած ժամանակ մենք չը գիտենք որտեղ գտնենք լաւ մուսցու, որտեղ լաւ լծկան, որտեղ լաւ կարնաւու ցեղ: Մեր մեծատաւարի բոլոր յայտնի ցեղերը և կիթիւհամար են, և լծկու, և միտ ասանալու, այսինքն ամեն բանի համար են ընդհանրապէս, բայց և ոչ մէկ բանի մասնաւորապէս: Այս դրութիւնը բաւարար էր 100, 50 տարի առաջ, երբ անասնապահութիւնը նաւորալ շրջանի մէջ էր, բայց հիմա չի համապատասխանում փոխուած պայմաններին: Վերջինս պահանջում է ձիւղերի բաժանում, որպէս զի անասունների մէջ զարգացած լինի մի յատկութիւն, բայց զարգացած զգալի չափով: Ասածիս անհրաժեշտութիւնը լուսաբանելու համար, բաւական է յիշեցնել, որ Եւրոպայի բեռնակիր ձիերը ոչ միայն 2—3 անգամ ուժեղ են մեր ձիերից, այլ և գոմէշներից:

Պոզերը իրանց ծանրութեամբ և մեծութեամբ մեր 5—7—10 պուգանոց քաշից հասցրուած են մինչև 15—20 և նոյն իսկ 30 պուգի:

Մեծատաւարը Եւրոպայում քաշում է 40—50 պ. և աւելի, այն ինչ 20 պուգը մեղ մօտ հաշւում է միջակից բարձր: Միջակ կովը մեղ մօտ տալիս է 30—40 պ. կաթը, այն ինչ Եւրոպայի կաթնատու կովը վատ է հաշւում, եթէ տալիս է 100 պուգից պակաս. միջակ տարեկան կիթը այնտեղ 150 պ. է, իսկ լաւը՝ 200 պ. և աւելի. Եւ այսպէս ամեն ձիւղում—Եւրոպայում ուշադրութիւն է դարձրած մի յատկութեան վրայ և այդ յատկութիւնը զարգացրուած կարելիին չափ: Նոյն բանին ձգտելու ենք և մենք: Երկրի այս կամ այն անկիւնում կստարած անհատական

փորձերը ցոյց են տալիս, որ լաւ մնունդի շնորհիւ Կովկասում ստացուած են և խոշոր, ուժեղ ձիեր և ահագին մեծութեան խոզեր և կաթնատու կովեր ու լծկան եղներ, որոնք շատ քիչ են տարբերուած եւրոպական ազնուացրած ցեղերից: Եթէ բաւարար մնունդի հետ մեր հասկացող գիւղացիները հոգ տանէին և տեղական ցեղերի ազնուացման մասին, մենք կ'անէինք չօշափելի քայլ դէպի առաջ: Դրա համար հարկաւոր է գլխաւորապէս մի բան: Որոշելով առաջուց ինչ յատկութիւն աւելի ձեռնտու և գնահատելի է այս ինչ շրջանում—խոշորութիւն, միս, բուրդ, ոյժ, կաթը,—հարկաւոր է պահել, մնունդ տալ և բազմացնել գլխաւորապէս այդ, ցանկալի յատկութիւն ունեցող, ջոկովի անհատները... Այդ միջոցով գլխաւորապէս առաջ են եկած և եւրոպական ազնիւ ցեղերը:

Ճիշտ է, մենք ունենք օրինակներ՝ ինչ յաջողութեամբ մնում են Կովկասում և ձիերի, և խոզերի, և միծառաւարի եւրոպական մի քանի տեսակները: շատ տեղեր յաջողութեամբ խառնուած և մետիսներ են ստացուած տեղական և եւրոպական ցեղերի միացումից: Այնուամենայնիւ մի բան անհրաքելի է, որ տեղական ազնուացրած ցեղը աւելի կը համապատասխանէ տեղական աշխարհագրական, կլիմայական և այլ (շատ անգամ անորոշելի) պայմաններին, քան օտար երկրում ու այլ պայմաններում ստեղծուած տեսակը: Թէ ինչքան մեծ դեր են խաղում տեղական պայմանները, դրան ապացոյց է և մեր երկրի կաթնատնտեսութեան այլ և այլ ճիւղերի գրութիւնը:

Դիմելով կաթնատնտեսութեան, չափազանցրած չեմ լինի, եթէ ասեմ, որ իր բազմակողմանիութեամբ կաթնատնտեսութեան վերաբերմամբ Կովկասը բռնում է բացառիկ դիրք: Մածունը, կէֆիրը և որոշ չափով կումիսը տարածուած են Եւրոպայում ու Ամերիկայում Կովկասից: Առողջապահական, սննդի, համեղութեան կողմից այս կաթնեղէնների դերը ընդունում է շատ և շատերի կողմից: Դրանց գործածութիւնը տարէց տարի ստանում է աւելի և աւելի լայն ծաւալ: Հում, պատրաստի իւղի տեսակների մէջ Կովկասում յայտնի են՝ կարաղը և հալած իւղը, սերը, արաժանը (հում սերը), թթուած սերը (ռուսների սմետանան), դայմախը (կիսաչորացրած ու թթուեցրած սերը), չորացրած սերը (Աջարիայի և Փոքր-Ասիայի չրջաններում): Իւղ հալելիս, մնացորդից բաժանւում է չոր կամ թանը (այրանը), որից չորացնելով ստացւում է չորաթան (դուռութ), որ տալիս է մեր աղքատ ժողովրդին յայտնի թանապուրը:

Վերջապէս, պանրի տեսակներից յայտնի են՝ օսի (կամ կորի), թուչի, թարաքեամի (Շիխլէի), Աջարիայի պանիրները,

ինչպէս և Գարալադեազի բզուղը, Ալեքսանդրապօլի «մքլած» պանիրը, անիւղ ջիւը և թել պանիրը, Մինգրելիայի սուլգունը *):

Կաթնատնտեսութեան այս բազմակողմանի ճիւղերից զիմելով ստացուող մթերքների որակութեան, մենք ստիպուած ենք, զժրախտաբար մատնանիչ անել շատ բացասական կողմերի վերայ: Ինչպէս մեր իւղերը, այնպէս և պանիրները արժէք չունեն երկու պատճառից՝ առաջին, որ կեղտոտ են, երկրորդ՝ չունեն որոշ, համեղ, գնահատուող յատկութիւն: Իւղը մեղ մօտ ստանում են կամ արաժանից կամ մաժնից: Արաժան ստանալու համար կաթը վրանների տակ «փռում» են տաշտերում $1-1\frac{1}{2}-2$ օրուայ ընթացքում և փռած կաթի երեսից հաւաքում արաժանը: Արաժանից կամ մերած մաժնից փայտէ մեծ կոթերում կամ կաշուէ պարկերում «հաւաք» են սնում $5-10-15$ օր, նայած կովերի քանակութեան: Երբ հաւաքը համարում է մի քանի պուղի, ածում են կաւէ, փայտէ խնոցիների կամ կաշուէ պարկերի մէջ և հարում: Մի քանի ժամից թանը բաժանւում է կարագից, որ պահում են վրան աղ անելով, մինչև հալելը: Ստացւում է հին, խառը համ ունեցող մթերք: Եթէ այս ամենի վրայ աւելցանք և այն, որ փռուող կաթը լինում է մեծ մասամբ բաւականին աղտոտ, զանազան կենդանիներից վերցրած, մեղ հասկանալի կը դառնայ, թէ ինչու այս բոլոր ճանապարհները անցնելով Կովկասի իւղը լինում է մեծ մասամբ անմաքուր, առանց նրբութեան և հետևապէս՝ առանց արժէքի, այն ինչ ամենավաղ փոփոխութիւնը իւղ պատրաստելու մէջ կարող էր զգալի կերպով լաւայնել կարագի յատկութիւնը եւ բարձրարեւել գիւղացու ստացած եկամուտը:

Դրա համար հարկաւոր է միայն սերը կաթից բաժանելու համար գործ ածել սեպարատորներ:

Լուղվիգ Նօբելի ֆիրմայի պատրաստած սեպարատորներից «Ալֆա լիլիպուաը» բաժանում է ժամը $3\frac{1}{2}$ վեդրօ կաթը սերից և արժէ 50 ռ., Ալֆա կօլիբրին, որ բաժանում է ժամը 10 վեդրօ, արժէ 75 ռ., Ալֆա բէբին (20 վեդրօ ժամը)—145 ռ. և այլն:

Բացի արագութիւնից և մաքրութիւնից սեպարատորները միջոց են տալիս աւելի մաքուր կերպով բաժանել սերը կաթից և հետևապէս ստանալ միևնոյն կովից աւելի մեծ քանակութեամբ կարագ: Այն ծախսը, որ անելու է գիւղացին սեպարատորի վրայ, նա կը վերագարձնէ հէնց առաջին տարին՝ ստանալով միւս տարիները զգալի չափով զուտ արդիւնք:

*) А. Калантарь. Молочное хозяйство на Кавказе. Т. 1901.

Պանիր չինելիս, ճիշտ է, հաւաքս չի անուում, բայց տեղի են ունենում այլ բացասական կողմեր: Պանիր ստանալու համար, ինչպէս յայտնի է, հարկաւոր է նոր կթած կամ քիչ տաքացրած կաթը մերել որոշ բաղադրութեամբ «մերանով», որ արտադրում է կաթով սննդուող գառների ու հորթերի շիրտուղնը (ստամոքսի ծակքեր ունեցող մասը):

Եւրոպայում և մեզ մօտ օսերը այդ լաւ հասկանում են և պանիր մերելու համար գործ են ածում միմիայն մանուկ կենդանիների շիրտուղնը իր մէջ գտնուած «մերանի» (մակարդուած պանրի) հետ: Բայց մեր ժողովուրդը շիրտուղնի հետ միասին «մերանի» վրայ աւելացնում է և շատ աւելորդ բաներ՝ աղ, չիբ, մեղր, քիչմիշ, ցորեն, քացախ, ձու, սոխ, ուրցը, հոն, և ուրիշ պտուղներ ու բոյսեր:

Սրանցից ամեն մէկը եթէ չի էլ տալիս պանրին որոշ չափով իր համր, յամենայն դէպս ծածկում է իսկական մերանի ոյժը և զիւղացուն շատ անգամ պահում է մթութեան մէջ մերանի քանակութեան վերաբերմամբ: Հետեանքը լինում է նա, որ պանիրը մակարդուում է ոչ այնպէս, ինչպէս ցանկալի է:

Մակարդուելուց յետոյ պանիրը մղում և բաժանում են չիճուկից: Օսերի հոշակուած պանիրը նախ բաժանում է չիճուկից ձեռքով, հէնց այն ամանի մէջ, ուր մերում էր պանիրը: Յետոյ պանիրը մղում են վերջնականապէս յատուկ կըոր փայտից շինուած ամանների մէջ, որից յետոյ վրան աղ են անում, թողնում մի-երկու օր և պահում աղաջրի մէջ: Թուշերը մակարդուած պանիրը բաժանում են մի քանի կտորի, ածում զատ զատ պարկերի մէջ և քամում, ժողովելով պանիրը պարկի մի տնկիւնում: Լաւ քամուելու համար պանրի վրայ առաջի գիշերը դնում են ծանրութիւն (քարեր): Յետոյ պանրի բլիթի վրայ աղ են անում և դնում կաշուէ պարկի մէջ, որ ժամանակ առ ժամանակ շուռ են տալիս, որպէս զի աղաջուրը ամեն կողմից ազդէ պանրի վրայ: Թարաքամանքը քամած պանրի բլիթը, նախ քան աղ անելը եփում են չիճուկի մէջ, կամ դնում արևի տակ, որպէս զի նա ստանայ դեղին գոյն, յետոյ կտրտում են և դնում աղաջրի մէջ:

Պանրագործութեան վերի յիշուած օսի և թուշի ձևերը վերջերս սկսուել են տարածուել Կովկասում: Մայնելով կաթի քամելը մաղի և զործուածքի միջոցով (մաքրութեան համար), տալով պանրի բլիթներին գունտի ձև, շնորհիւ յատուկ պատրաստուած «չանախների», գործ ածելով շիրտուղնից ստացած լաւ մերան և մաքուր աղ—Թիֆլիսի բախկաշները բաւականին կատարելագործած են տեղական անքաշ պանիրը...

Այնուամենայնիւ ժողովրդի ստուար մեծամասնութիւնը, չլովկասում անասնապահութեան և կաթնասնտեսութեան այլ և այլ ձևերի վերաբերմամբ, հետևում է նահապետական ձևերին և ստանում շատ չնչին եկամուտ:

Ի նկատի ունենալով մի քանի մասնագէտների կատարած հաշիւները *) կարելի է ընդունել, որ ընդհանրապէս (առանց վերածելու անասուններին տեսակների) անասնապահութիւնից ստացուած եկամուտը միջակ տարին հաւասար է անասունների արժէքի կէսին, իսկ զուտ արդիւնքը—արժէքի $\frac{1}{5}$ -ին. հաշուելով միջակ մեծատաւարի (1 կով, հորթ, եզր, 5 ոչխարի, ձիու, աւանակ) գինը 20 ռ., նրա տարեկան տուած եկամուտը կը լինի 10 ռ., իսկ զուտ արդիւնքը 4 ռուբլի: Վերը բերուած թուերի հիման վրայ մենք կարող ենք ընդունել, որ Անդրկովկասում միջակ անձի վրայ հաշուում է անասուններ. 39 մեծատաւարի հաշուով, 27⁸⁰ ռ. արժողութեամբ, որից ամեն անձ միջին թուով (կաթով, մսով, աշխատանքով) ստանում է 13⁹⁰ ռ. տարեկան եկամուտ և 5⁵⁶ ռ. զուտ արդիւնք:

Գրականութեան մէջ անասնապահութիւնից ցոյց տուած եկամուտը այս թուերից քիչ պակաս է:

Երևանեան նահանգի միջակ ընտանիքների բիւզջէներին նայած **), օրինակ ամին մէկ անձնաւորութեան ստացած ընդհանուր եկամուտի 39⁷ ռուբլուց, անասնապահութեան ձևերից ստացուած եկամուտը հաւասար է 9⁴ ռ.: Մի քանի տարի առաջ կատարուած հետազօտութիւնների հիման վրայ ***) ես ընդունած եմ որ Երևանեան նահանգում և Կարսի շրջանում միջակ անձնաւորութեան տարեկան ստացուածքի 39²³ ռուբլուց 11⁸⁴ ռուբլին ստացւում է անասնապահութիւնից: Այս թուերը քիչ ցած են վերը նշանակուած 13⁹⁰ ռուբլուց, բայց դա բացատրւում է նրանով որ վերջի թուի մէջ մտնում է և ձիերի ու եղջերի, այսինքն աշխատող անասունների տուած արդիւնքն ու օգուտը, այն ինչ առաջի թուերում այդ եկամուտը ցոյց է տրուած հողագործութիւնից ստացուած եկամուտի հետ...

Յենուելով վերը բերուած թուերի վրայ, մենք կարող ենք ընդունել, որ Անդրկովկասի անասունների ամբողջ քանակութիւնը 6,703 հազ. մեծատաւարի հաշուով և 134,052 հազ. ռ. արժողութեամբ՝ տարեկան բերում է մօտ 67,026 ռ. եկամուտ:

*) „Кавказъ“ въ с. х. отношеніи въ 1899 г. Тифлисъ, 1900 г.

**) Опытъ изслѣдованія с. хоз. Эрив. губ. и Карсской обл. Т.

1896 г.

***) Ibid.

Մեծատաւարը պահելու համար արօտի և խոտհարքի հողի վարձի ծախս է լինում մօտ 5 ա. (2—1 $\frac{1}{2}$ ա. ամառուայ և ձմեռուայ արօտի և 3—3 $\frac{1}{2}$, 1 $\frac{1}{2}$ դեպքերին խոտհարքի վարձ), իսկ ընդամենը 33 $\frac{5}{6}$ միլ. ա. (69 $\frac{5}{6}$ ա. անձի վրայ): Դուրս դալով այդ գումարը անասնապահութեան ընդհանուր եկամուտից, մենք կը ստանանք 33 $\frac{5}{6}$ միլ. ա. (7. ա. անձի վրայ) զուտ անասնապահութիւնից ստացած եկամուտ (առանց հողի), որից անասունների արժէքի 200% կամ 268 միլ. ա. (556 ա. անձի վրայ) կապիտալի տոկոսն է, իսկ մնացած 67 միլ. ա. (144 ա. անձի վրայ) աշխատանքի վարձ:

Անասնապահութիւնից ստացուած այս ամբողջ եկամուտը ստացւում է զանազան ճիւղերից՝ և մսից, և կաթնեղէնից, և կաշուից, և կենդանի ուժով աշխատանքի համար: Որոշել ճշտօրէն անասունների տուած այս բարիքների քանակութիւնը և արժէքը, դժուար է. այնուամենայնիւ այդ եկամուտը ընդհանուր առմամբ բաղկացած է հետեւեալ մասերից.

1) Մեծատաւարի մօտ $\frac{1}{3}$ մասից—թուով 1254 հազ. պուլէ 25,080 հ. ա. արժողութեամբ ստացւում է գլխաւորապէս ֆիզիկական ոյժ հողագործական աշխատանքների համար: Այդ աշխատանքի արժէքը հաշուելու է հաւասար մօտ 12,540 հ. ա. (26 ա. անձի վրայ): Կովերից ու մատակներից (թուով անասունների $\frac{1}{3}$ մասի, կամ 1,254 հ. ա. արժողութեամբ) ստացւում է միջին թուով 30-ական պուլէ կաթը, որից չինւում է՝

- ա) 1-կան պ. իւղ, 10 ա. արժողութեամբ,
կամ ընդամենը 1,254 հ. պ. արժողութեամբ 12,540 հ. ա. (26 ա.)
- բ) 2-կան պ. քաշած կամ ճիւլ պանիր,
1 $\frac{1}{2}$ ուռլով պուլը, կամ ընդամենը
2,508 հ. պ., արժողութեամբ 3,762 հ. ա. (08 ա.)
- գ) 105-կան պուլէ կամ $\frac{1}{4}$ պուլէ կաթ,
մածուն, խիժ եայլն, 40 կ. պուլը
արժողութեամբ, կամ ընդամենը
6,270 հ. պ., արժողութեամբ 2,508 հ. ա. (050 ա.)

Բացի այդ, մեծատաւարի (մնացած $\frac{1}{3}$ կամ 1,254 հազարի) մօտ կէսը կամ ամբողջ տաւարի $\frac{1}{6}$ մասը (627 հազ. հատ, արժողութեամբ մօտ 12,540 հ. ա.) գործ է ածւում իբրեւ մսացու և տալիս է.

- ա) միս 627 $\times$ 6 = 3,762 հ. պուլէ, արժողութեամբ (2 $\frac{1}{2}$ ուռլով) 9,405 հ. ա. (195 ա.)
- բ) կաշի (627 հազ., հատը 4 ուռլով) 2,508 հ. ա. (050 ա.)

2) Մսնրոսաւարից ստացուած է.

ա) բուրդ, 4-կան ֆունտ (11 միլ. $\times 4=$)

11 միլ. պուզ, հաշուելով պուզը 6 ու.,

արժողութեամբ 6,600 հ. ո. (14 ո.)

բ) պանիր 55 միլ. կիթան ոչխար-այծից

$1/2$ -կան պուզ, 275 միլ. պուզ, 3 ո.

պուզը, արժողութեամբ 8,250 հ. ո. (17 ո.)

գ) միս $1/4$ մասից կամ 2,750 հ., 3-կան

ու. հատը 8,250 հ. ո. (17 ո.)

դ) մորթի 2,750 հաղ. հատ 40 կոպէկով 1,100 հ. ո. (028 ո.)

3) Խոզից ստացուած է գլխաւորապէս միս, ճարպ և մասամբ ճագառ (կոշտ մազ ստեղծ): Ընդունելով, որ ամեն տարի մորթւում է կենդանի խոզերի (386 հաղարի) $1/3$ մասը (129 հաղ.) հատը 8 ուրլի, արժողութեամբ 1,032 հ. ո. (02 ո.):

4) Զի, ջորի, աւանակներից (627 հաղ.) ինչպէս և ուղտերից (48 հ.) 727 հաղ. մեծատաւարի հաշուով և 14,460 հ. ո. արժողութեամբ, ստացուած է գլխաւորապէս աշխատանք, բայց և մի քիչ միս ու բուրդ: Ընդունելով որ այդ եկամուտը կազմում է անասունների արժէքի մօտ $1/2$, մենք կ'ունենանք որ այդ կարգի անասունների եկամուտը կազմում է 7230 հ. ո. (15 ո.):

Ամբողջելով վերը ասածները, մենք կը ստանանք, որ Կովկասում միջակ տարին անասնապահութիւնից ստացուած է եկամուտ.

Ոնչ բարիքներով.	Ընդամենը հաղ. ո.	Մի անձի վրայ ուրլի. Գիւղական ազգաբնակ- չութիւն. Երկրի ամբողջ ազգաբնակ.	
		հաղ. ո.	ուրլ.
Կաթնեղէններով .	27,060	564	492
Մսով .	18,687	390	340
Բրդով և մազով .	6,600	138	120
Կաշուով .	3,608	075	065
Աշխատանքով .	19,770	413	360
Ընդամենը .	75,725	1580	1377

Չը հաշուած անասուններից ստացուած աշխատանքի արժէքը, անասնապահութեան բոլոր ճիւղերի եկամուտը կը հասնի ընդամենը 56 միլ. ո.

Գիւղական ազգաբնակչութեան միջակ անդամի . 1167 ո.

Ամբողջ երկրի » » » . 1017 »

Այս թուերի իմաստը ցնահատելու համար անհրաժեշտ է համեմատել զրանց միւս երկրների թուերի հետ: Դժբախտաբար դա միայն մօտաւորապէս կարող ենք անել, որովհետեւ անասնապահութեան միջերբերի դները զանազան երկրներում

զգալի չափով միմեանցից տարբերում են Ամերիկայի Միացեալ-Նահանգներում, օրինակ՝ *) կովի գինը հաշւում է 535 ռ., մնացած՝ մեծատաւարի 408 ռ., Գերմանիա մօտ—100 ռ. մեծատաւարը. այդ դների համեմատ մենք կ'ունենանք որ միջակ անձնաւորութեան վրայ բոլոր անասունների արժէքը Աւստրիա, Գերմանիա, Ֆրանսիա, Միացեալ-Նահանգներում հաւասար է 58, 58, 54 և 52 ռ.:

Եթէ անասունների եկամուտը կովկասի համեմատ ընդունենք հաւասար անասունների արժէքի կշռին, յիշեալ երկրներում ամեն անձնաւորութեան վրայ անամնապահութիւնից ստացած եկամուտը կը լինի մօտ 29, 29, 27 և 26 ռուբլի կամ 3 անգամ կովկասից աւելի:

Աւելի ճիշտ տեղեկութիւններ կան կաթնատնտեսութիւնից ստացուած եկամուտի մասին: Կովկասում, ինչպէս վերեւում տեսանք, կովից ստացւում է 30 պ. կաթը, իսկ մի անձի վրայ 138 պուդ. կամ 11 վեզրօ, և որ կաթնատնտեսութեան տուած ամբողջ եկամուտը հասնում է 492 ռուբլու:

Իսկ միւս երկրներում պ. Բաղցիդի հաշուով՝

Միջակ անձնաւորութեան վրայ ստացւում է կաթը.

Դանիա, Շվեդիա, Շվեյցարիա . 675, 438, 381 վեզրօ.

Հօլլանդիա, Միաց.-Նահ., Գերմանիա 326, 302, 293 »

Ֆրանսիա, Անգլիա, Աւստրօ-Ունգ. 170, 146, 185 »

Ֆինլանդիա, Լեհաստան, Եւրոպ. Ռուս. 488, 150, 73 »

Հնդկաստան, Իտալիա . . . 139, 90, »

Այս թուերի համեմատ հաշւում է և զանազան երկրների կաթնատնտեսութիւնից ստացուած եկամուտը մի անձնաւորութեան վրայ, նոյն Բաղցիդի հաշուով հաւասար է.

Դանիա, Շվեդիա, Շվեյցարիա . 405, 263, 229 ռ.

Հօլլանդիա, Գերմանիա, Միաց.-Նահ. 195, 176, 151 »

Ֆրանսիա, Անգլիա, Աւստրօ-Ունգարիա 117, 100, 93 »

Ֆինլանդիա, Լեհաստան, Եւրոպ. Ռուս. 244, 75, 30 »

Հնդկաստան, Իտալիա . . . 56, 36 »

Թուերը ակներև կերպով պարզում են՝ ինչքան մենք յետ ենք մնացած միւս ազգերից, և ինչքան դեռ աշխատելու ենք առաջադէմ երկրներին մօտենալու համար:

Ս. ԶԱԽԱՐԵԱՆ

(Եր ԵԱՐՈՒՆԱԿՈՒԻ)

*) А. Раддигъ, Скотоводство и Молочное хозяйство въ разныхъ государствахъ, СПб. 1849 г.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Մեր երկրի մի քանի առանձնայատկությունները.—Աշխատանքի արգասա-
տրութեան կախումը կրթութիւնից.—Ամենակրթուած ազգերն և ամենահա-
րուստներն են.—Ռուս ինտելիգէնցիայի գովելի և ռանգը ժողովրդի կրթու-
թեան գործում.—Ռուս նոթրատուների առատաձեռնութիւնը.— Ժողովրդի
կրթութիւնը նպաստաւոր է բուրժուազիայի շահերին.—Երկրի գլխաւոր ւա-
պառողները.—Ինչո՞ւ չընկած զներք չեն արգելում արտասահմանից ապ-
րանքներ ներմուծելուն.—Արքունական լեռնային գործարանների բանուոր-
ների կենսաթոշակը.—Հաղորդակցութեան միջոցների սղքատութիւնը.—
Երկաթուղային նոր վիթխարի դժերս

Ինչպէս որ փոթորիկի և յարատե անձրևների ժամանակ
ալիներն է դառնում խախուռ շէնքերի պակասութիւնները,
այնպէս էլ տնտեսական տագնապներն են յոյս տալիս առևտրի
ու արդիւնաբերութեան ներկայ կազմակերպութեան թոյլ կող-
մերը, թէ և տնտեսական տագնապը այժմ համաշխարհային ընա-
ւորութիւն ունի, բայց և այնպէս նա այլ երկրներում այնպիսի
սուր կերպարանք չի ստացել, ինչպէս մեզանում։ Դա նշանա-
կում է որ մեր առևտուրը և արդիւնաբերութիւնը բացի ընդ-
հանուր համաշխարհային պակասութիւններից ունի նաև ինը-
նուրսյն, առանձնայատուկ դժերս Աշխատե՛ք սլարգել այդ ա-
ռանձնայատկութիւնները։

Արդիւնագործութեան և առևտրի ամենագլխաւոր շարժա-
ռիթը, ի հարկէ, ինքը մարդն է իր մտաւոր-բարոյական կարո-
ղութեամբ, բնածին ընդունակութեան, փորձի, մտաւոր զար-
գացման, հասարակական բնազդների չափերը անագին նշանա-
կութիւն ունեն գործի աջողութեան համար։ Ոչ միայն գործա-
ւիրոջ, վարիչների, այլ և ամենահասարակ բանուորների մտա-
ւոր-բարոյական ընդհանուր զարգացումը և պատրաստութեան
չափը մեծ դեր են կատարում այդ գործունէութեան մէջ։ Հե-
տևաբար, մենք տնտեսական դիտութեան մի այբուբենական

ճշմարտութիւն կրկնած կը լինենք, եթէ ոսկնք թէ աշխատանքի արգասաւորութիւնը, ինտենսիւութիւնը, կախում է գլխաւորապէս բանուորի ճարտարութիւնից, իսկ այդ ճարտարութիւնը հետեանք է բանուորի մտաւոր զարգացման, նրա տեխնիկական պատրաստութեան, մանաւանդ մեր ժամանակ, երբ մեքենան է իսկապէս բանողը, իսկ մարդը միայն նրա հսկողն է ու նրա ղեկավարողը: Եւ գործնական կեանքում ամեն մէկը հասկանում է, որ բանուորի միայն ջուխտ ձեռքերը չեն գնահատուում, այլ և նրա ընդհանուր զարգացումը, նրա պատրաստութիւնը, ուստի ոչ ոք չի զարմանում, եթէ պարսկաստանի թշուառ «համշարին» շատ աւելի սլակաս է վարձատրւում, քան ողւա բանուորը, այս վերջինն էլ, ի հարկէ, չէր կարող առեքան ստանալ, ինչքան մի ամերիկացի բանուոր:

Կրթութեան տնտեսական արժէքը բոլոր ազգերից բաւ ըմբռնել է ամերիկացին՝ եռնկին: Այդ է նրա առաջնակարգ հարստութեան գլխաւոր պատճառը: Հետադաս կանկին մեզ համար անհասկանալի մի առատաձեռնութեամբ փող է մսխում ժողովրդի կրթութեան վրայ և փառաւորապէս վայելում է իր իսկացի կարգադրութեան պտուղները: Եւրոպական ազգերից էլ ամենահարուստները, միևնոյն ժամանակ ամենազարգացած, ամենալուսաւորութեամբներն են, այնպէս որ տնտեսական կեանքում էլ կարելի է ասել՝ վերջ ի վերջոյ յաղթողը ժողովրդական ուսուցիչն է...

Թէև վերջին տասը տարիների ընթացքում, ինչպէս ցոյց է տալիս Ֆինանսների մինիստրի այս տարուայ նախահաշիւը, շատ զգալի առաջադիմութիւն է արել Ռուսաստանը ժողովրդի լուսաւորութեան գործում, և 1892 թ. բոլոր մինիստրութիւնների գլորոյնների յաւկայրած 37,4 միլ. ռուբլին, այժմ, 1902 թուականին, համարեա կրկնապատկուել է և դառել 748 միլ. ռուբլի, բայց այնու ամենայնիւ մենք զիւռ ևս շատ հեռու ենք այդ կողմից եւրոպական շատ երկրներից և, գուցէ, միայն Բալկանեան թերակղզու ժողովուրդներից բարձր լինի մեր ժողովուրդը իր մտաւոր պատրաստութեամբ:

Այդ առանձնայատկութիւնը, մեր մասսայի տգիտութիւնը, քիչ նշանակութիւն չունի, որովհետև շնորհիւ այդ հանգամանքի մեր ժողովրդի աշխատանքը չունի ցանկալի ուրդասաւորութիւն, հետեաքսը չի աւելանում ժողովրդի բարեկեցութիւնը գոնէ այնքան, որ նա դիմանայ ամենաջնչին պատահարների և գէթ մի տարի տանի անբերրիութեան կամ տաքնալի հետեւանքները:

Պէտք է նկատել, որ ռուս հասարակութեան հասկացող

մասը վաղուց ըմբռնել է ժողովրդի կրթութեան առաջնակարգ նշանակութիւնը և մեծ եռանդով, սիրով և անձնազոհութեամբ աշխատում է, որքան հնարաւորութիւն ունի, բարձրացնել խաւար մասսայի մտաւոր զարգացումը: Ոչ մի աղբի մէջ ինտելիգէնցիան այնպիսի բռնն սիրով չի վերաբերում գէպի ժողովրդի կրթութեան գործը, ինչպէս ուես ինտելիգէնցիան, մանաւանդ գեղեցիկ սեռի ներկայացուցիչները: Պէտք և տեսնել թէ ինչ ահագին ջանքեր է գործ դնում այդ ինտելիգէնցիան, ինչպիսի անսպառ եռանդով է մաքառում նա զանազան խոչընդոտների դէմ և մանաւոր նստիւթաւութիւններով պահպանում իր նախաձեռնութեամբ բացած բազմաթիւ կիրականօրեայ դպրոցները, ժողովրդական գրադարանները, հանրակրթական դասընթացները հային: Էլ չհնք խօսում այն գուրգուրանքի մասին, որով շրջապատում են զեմաստիւնները իրանց դպրոցները...

Ռուսաստանի ազգաբնակչութեան ահագին մասը երկրագործութեամբ է հայեալթում իր ապրուստը: Այդ աշխատանքը, ի հարկէ, մեծ կախում ունի կլիմայական պայմաններից և յաճախ կրկնուող ոնքերթիւթիւնը մի տարերական պատուհաս է: Բայց և այնպէս գիտութիւնը աւելի ճարտար կը դարձնէր գիւղացուն և կը սովորցնէր նրան իր աշխատանքը աւելի արդասաւոր դարձնել, կատարելով այդ գիւղատնտեսական գիտութեան պահանջների համեմատ և ստեղծելով ինքնօգնութեան զանազան ընկերութիւններ: Եւ ժողովրդին գիւղատնտեսական օգնութիւն հասցնելու հարցը պակաս չի հետաքրքրում ուես ինտելիգէնցիային, քան բժշկական և իրաւաբանական օգնութիւն տալու հարցերը: Այսպէս, անցեալ տարի, փետրուար ամսում, Մոսկուայում կայացաւ մի համաժողով, որի նպատակն էր քննել «գիւղական ազգաբնակչութեան գիւղատնտեսական օգնութիւն հասցնելու» միջոցները: Այդ հարցը անշուշտ վերջ ի վերջոյ դարձեալ պտտում է ժողովրդի կրթութեան՝ իբրի մի հիմնական առանցքի շուրջ:

Ռուսական իրականութեան միթիթարական կողմերից մէկն էլ այն առատաձեռնութիւնն է, որ յոյց են տալիս ունեւոր դասի զանազան խաւերը գէպի ժողովրդի կրթութեան գործը: Այդպէս, օրինակ, հէնց միայն անցեալ տարի ժողովրդի կրթութեան համար արուել են հետեւալ կտակները. յայտնի կապիտալիստ Սօլօգովիկովը իր 21 միլիօն կարողութեան մի մասը, վաճառականներից ոմն Գրիգօրիւ 131 հազար, Կօրեակին 100 հազար, Խլէբնիկով 300 դեսեաւին հող և 100 հազար, Աֆանասիյ Գրիգօրիւ 160 հազար, զեներալ Դօպէլմէյցէր 70 հազար հային:

Եւ իսկապէս, ոչ միայն արդարութիւնը, մարդասիրութիւնը, այլ և հէնց բուրժուազիայի տնտեսական շահերը պահանջում են որ բարձրանայ ժողովրդի զարգացման մակերևույթը, որովհետև այդպիսով բարձրանում է և նրա տնտեսական ապահովութիւնը, հետեաքսոր, աւելանում են նրա պահանջները, և գնելու կարողութիւնը: Ֆինանսների միջխտրի հաշուով անցնալ տարուայ անբերրիութիւնը 42 նահանգներում պակասեցնում է ժողովրդի գնման ընդունակութիւնը աւելի քան 100 միլիոն ռուբլով: Երբ ևրկրի գլխաւոր սպառողը, մասսան, անկարող է ապրանք գնել, անշուշտ պէտք է կրճատուի թէ՛ արդիւնագործութիւնը և թէ՛ առևտուրը, որովհետև արտասահմանի բուրժուազիայի հետ մրցել մերսնք, յամենայն դէպս, չեն կարող:

Մեր առևտրականների և արդիւնագործների ահազին մեծամասնութիւնը չի կարող պարծննալ ոչ միայն իր տնտեսագիտական նախապատրաստութեամբ, այլ և առանձին մտաւոր զարգացումով. դրանց ձեռնարկութիւնների հիմքը յայտնի ՁՅՕՇԵՆ է (գույէ). այդ է պատճառը, որ պատահականութիւնը, բախտը այնպիսի մեծ դեր է կատարում դրանց գործունէութեան մէջ. գիտակցականութիւն, նպատակայարմարութիւն, սեփական ոյժերի համեմատ կազմակերպուած գործեր ստակաւթիւ են մեղանում: Մերոնց յոյսը աւելի պետութեան հովանաւորող քաղաքականութեան, պետական նպաստների վրայ է հիմնուած, քան սեփական ոյժերի, աշխատանքի, հեռատեսութեան և չրջահայեաց գործունէութեան: Դրա շնորհիւ է, որ մեր արդիւնագործները իրանց լաւ են զգում միմիայն արուեստական կերպով բարձրացրած գների ժամանակ և «օգնութիւն, քանդուեցիւն» են բռնում, հէնց որ այդ գները իջնում են, և դառնում նօրմալ, մատչելի սպառողների ահազին մեծամասնութեան համար: Պարզելու համար մեր այդ միտքը, բաւական է յիշեցնել, որ մինչդեռ հարաւային Ռուսաստանի երկաթագործները և քարածխահանքատէրերը գտնգատւում էին գործերի վատթար պայմանների վրայ և ստիպուած էին կրճատել իրանց արդիւնաբերութիւնը, միևնոյն ժամանակ արտասահմանից ներմուծւում էր 10 միլիոն պուդից աւելի նրկաթեղէն և 100 միլիոն պուդից աւելի քարածուխ: Հարց է. թէ ինչո՞ւ պէտք է ձեռնառու լինէին այդ «ընկած գները» արտասահմանից յիշեալ ապրանքները ներմուծողների համար, որոնք դեռ մաքս էլ էին վճարում...

Այդ հարցի պատասխանը մասամբ տրուած էր անցեալ տարուայ մեր մի տեսութեան մէջ («Մուրճ», № 5): Ի հարկէ.

տնտեսական տաղնապանների պարբերականութիւնը ինքն ըստ ինքեանց ցոյց է տալիս, որ նա արդիւնք է հասարակական ներկայ կազմակերպութեան, սակայն բանը այն է, որ շուկայի կենդանութեան մօմէնտներում սպեկուլացիան և փրօւն, ահիմն ձեռնարկութիւններ ստեղծելու տենչը մեր տնտեսական տնտեսութեան, մեր «կազմակերպողների» անսահման ազահութեան և «վարիչներին» անցերեմօն, անխօտրօլ արարքների չնորհիւ մի առանձին այլանդակ, չափազանց արտայայտութիւն է ստանում Իրանց գործերը, իրանց վարձատրութիւնները արուտատական կերպով բարձրացրած դների համեմատ դնելով մեր արդիւնագործները իսկապէս շատ աւելի թանգ են նստացնում իրանց կերտուածները, արդիւնահանութիւնները, քան չափ, հաշիւ ճանաչող եւրոպային կամ ամերիկային, ուստի երբ ուռցրած գները նստում են, դառնում նօրմալ, սպառողներին ձեռնտու, այդ երես առած մեր բուրժուաները վայնասուն են բարձրացնում... Միւս կողմից, դրանց արտասահմանեան մրցակիցները երբէք այնպիսի տմարդի կերպով չեն վարւում բանուորի հետ, ինչպէս մեր հայրենի կրեստները, չը նայած որ ինքը մեր պետութիւնը ցոյց է տալիս դէպի իր գործարաններում բանող բանուորների ազահովումը շատ ուսանելի դասեր մեր արդիւնագործներին: Արքունական լեռնային գործարաններում աշխատող բանուորների համար անցեալ թուականի մայիսի 15-ին հրատարակուած է կանոնադրութիւն, որով բոլոր այդ բանուորների համար, առանց հասակի և սեռի խտրութեան, կենսաթոշակ է սահմանւում, որ իրաւունք ունի ստանալ բանուորի մահից յետոյ էլ նրա ընտանիքը: Սակայն մնաւագործական, քարածխային, մանդանիկային և նաւթային արդիւնագործների հր ժողովում վճուեց հետեւի արքունական գործարանների այդ բարի օրինակին...

Առհասարակ աշխատող դասակարգի անպաշտպան, անօգնական վիճակը մեղանում աւելի ևս սոսկալի չափեր է ստանում 'սոյն տաղնապանների ժամանակ: Այդ ևս մեր իրականութեան առանձնայատկութիւններից մէկն է:

Թէ հաղորդակցական միջոցների անբաւարարութիւնը ինչպէս է ազդում մեր արդիւնագործութեան վրայ, մենք մի անգամ արդէն խօսել ենք (№ 10). անշուշտ պակաս դեր չէ կատարում կրիզիսի սրութեան մէջ և այդ հանգամանքը: Ռուսաստանը վերջին տասը տարիների ընթացքում պէտք է ասել որ հսկայական գործունէութիւն է ցոյց տուել իր երկաթուղային տնտեսութեան մէջ: Ինչպէս յայտնի է, անցեալ

տարի վերջացաւ Սիբիրի և Մանջուրիայի երկաթուղու վիթ-խարի գիծը, որ կապում է Բալտիկ ծովը Սալադով վիլիանոսի հետ: Այժմ որոշուած են, բացի մի քանի մանր-մունր ճիւղերը, եւ չորս ահագին գծերի կառուցում. Հիւսիսային (Պետերբուրգ-Վլադիկա), Բոլշոէ-Սէզլեյկոյէի (Պետերբուրգից Լեհաստանով մինչև արեւմտեան սահմանագիծը), Օրենբուրգ-Տաշկենտի և, հարաւային Ռուսաստանում՝ Երկրորդ Եկատերինեան գիծը, բո-լորը շուրջ 5 հազար վերստ տարածութեամբ:

Ֆինանսների մինիստրի նախահաշուից երևում է, որ աա-սը տարի առաջ երկաթուղային ցանցը Ռուսաստանում ունէր 31,377 վերստ տարածութիւն, իսկ այժմ աւելի քան 60,000 վ.: «Բայց չը նայած մեր երկաթուղային ցանցի արագ զարգաց-ման, ասում է իր նախահաշուի մէջ մինիստր Վիտտէն, մենք դեռ չատ յետ ենք մնացել այդ կողմից: Մինչդեռ մեղանում մի միլիոն ազգաբնակիւթեան վրայ ընկնում է 415 վերստ երկա-թուղի, Աւստրո-Ունգարիայում, ազգաբնակիւթեան նոյն թուի վրայ ընկնում է 716 վերստ, Մեծ-Բրիտանիայում 796 վերստ, Գերմանիայում 848 վ., Ֆրանսիայում 1,033 վ. և Հիւս. Ամե-րիկայի Մ.-Նահանգներում 3,622 վերստ»: «Բերած թուերի անբարեկաջող նշանակութիւնը մեզ համար աւելի ևս ոյժ է ստանում, աւելացնում է պ. մինիստրը, եթէ ի նկատի ունե-նանք այն հանգամանքը, որ Արեւմտեան Եւրոպայի և Հիւսի-սային Ամերիկայի երկրները բացի երկաթուղիներից մեզնից չատ և չատ աւելի հարուստ են նաև ամեն տեսակ ցամաքային և ծովային հաղորդակցութիւններով»:

Երկաթուղային ցանցի ընդարձակումը անշուշտ աւելի ևս արագացնելու է կապիտալիստական արդիւնադրութիւնը Ռուսաստանում: Եւ այդ ընդարձակ պետութեան մէջ, նրա 130 միլիոն ազգաբնակիւթեամբ և բնական անբաւ հարստու-թիւններով այնքան կատարելու դործ կայ, որ նոյն իսկ օտար գրամադրուիւնները վազում են այգտեղ, հարկաւոր է միայն որ լուսն ժողովուրդը կրթուի, նրա ուսից հարկային բեռը թեթե-ւացնուի, նրա բարեկեցութիւնը բարւոքուի, որ հարկ չը լինի մեր կապիտալիստներին՝ սահմանից դուրս սպառողներ որոնել, երբ սեփական սպառողների թիւը կարող է բաւարարութիւն տալ չատ աւելի զարգացած առևտրին էլ, արդիւնադրութե-անն էլ:

ԼԵՒՈՆ ՍԱՐԳՍԵԱՆ

Բագուի նաքագործների XVI հերթական ժողովը:

«Նաւթային պառլամենտը» այս անգամ մի առանձին, չը տեսնուած նշանակութիւն ու փայլ ստացաւ շնորհիւ այն հանգամանքի, որ քննադատուող հարցերն էլ նաւթագործների և առհասարակ բազուկների համար ծանրակշիռ և, ինչպէս որ իրանք մի քանի անգամ շեշտեցին, «կեսնքի և մահու» հարցեր էին: Հէնց միայն այդ հարցերով կը զբաղուենք այս յօդուածում: որովհետեւ ժողովում քննուող միւս հարցերը զուտ տեղական լինելով, Բագուից դուրս արժանի չեն առանձին ուշադրութեան: Այդ հարցերից մէկի մասին մենք արդէն խօսել ենք «Մուրճի» անցեալ տարուայ վերջին №-ում և այժմ մեզ մնում է արձանագրել, որ կայացած աճուրդների պայմանների փոփոխման թէ կողմնակիցներն ու թէ հակառակորդները ոչ մի ջանք չէին խնայել իրանց դատի արգարութիւնը տպացուցանելու: Լրագրներում լոյս տեսած մի շարք յօդուածները, միջոցառումներն ուղարկած ղեկուցումները և այն բաւական չը համարելով, երկու կողմից էլ չափազանց տաք ճառեր արտասանուեցան, սրամիտ պատասխաններ տրուեցան... առհասարակ շատ բան խօսուեց... սակայն հարցը այնքան կնճռոտ է և այնքան բազմազան շահեր է չօշափում, որ առաջարկուած և ոչ մէկը չի կարող գէթ փոքր ի շատէ գոհացուցիչ համարուել: Եթէ գանձարանը չը համաձայնուի փոխել արդէն մի անգամ կապած պայմանը,—վերջին երկու աճուրդներում հող վերցնողները բոլորը (կամ համարեա բոլորը) պիտի հիմնադրուեն քանդուեն, իսկ եթէ գանձարանը կը զիջի և կը փոխի պայմանը—այն ժամանակ Բիրի-Հէյբաթցիք կ'ողողեն շուկան իրանց շաղրուանների էժանադին նաւթով: Իսկ նաւթային կրեստները կամ հնուց հաստատուած մեծ-մեծ ընկերութիւնները, որոնք զուրկ են մնացել արքունի կուսական հողերից, որովհետեւ մնացածների նման «գիժ» դներ չեն խոստացել, այդ կրեստները, ասում եմ, որոնց վրայ նաւթը նստում է 7-ից մինչև 10—11 կոպէկ, պիտի տեղի աան այն անվահեր պարոններին, որոնք քաջութիւն ունեցան աճուրդներում գանձարանին 8, նոյն իսկ 12 կ. պուլաւձար խոստանալ: Ժողովի նիստում կրեստներից մէկը իր վերջին խօսքը նրանով վերջացրեց, թէ ինքը աճուրդներում մասնակցելիս միշտ աչքի առաջ է ունեցել որ այսպիսի ճնշածաժամիր կարող են գալ... և նեղը գցել, և հէնց այդ է պատճառը, որ գանձարանի հողերից և ոչ մի կտոր չը մնաց իրան աճուրդում: սակայն նա այսօր էլ կրկնում է, որ պատրաստ է

տալ զանձարանին նոյն գինը, որ առաջարկել էր աճուրդի ժամանակ, բայց ուրիշները իրանից աւելին առաջարկելով, տիրացել են հողին և այսօր արտօնութիւններ են խնդրում զանձարանից... Ինքը պատրաստ է վերցնել այն հողը իր մի անգամ առաջարկած գնով և նոյն իսկ վճարել նախկին կապալառուին, որ այժմ փախչում է, նրա արած ծախսը, յատուկ մասնաժողովի որոշած գնով:

Մի այսպիսի հիմնաւոր գատողութեան և՛ ըստ երևոյթին՝ վեհանձն առաջարկութեան դէմ ոչինչ չի կարելի ասել ի հարկէ: Բայց... մի բայց կայ մէջտեղ. ե այդ բայցը նրանումն է, որ մեծ ֆիրմաները, կրեստները, բաւականին հողեր ստացան զանձարանից առանց աճուրդի և համեմատաբար լաւ պայմաններով... Ուրեմն բանից դուրս է գալիս որ զիջողութիւններ, արտօնութիւններ և այլն նրանց համար «օրինաւոր» են, իսկ մանր-մոռնիների համար—«ապօրինի»... Նաւթագործների «օրինականութեան» մասին ունեցած հասկացողութիւնը լուսաբանելու համար աւելորդ չենք համարում մէջ բերել մի առաջարկութիւն, որ արաւ ժողովի մի իրաւաբան անգամ—փաստարան Օգուլեւիչը: Ինչպէս յայտնի է զանձարանի հողերի բազմաթիւ կտորներ կարճ ժամանակով կապալով են տրւում միմիայն այն պայմանով, որ կապալառուն օգտուի հողի մակերևոյթից, առանց փորելու իրաւունքի: Այդպիսի հողերի վրայ են շինուած բազմաթիւ արհեստանոցներ, գործարաններ, բնակարաններ և այլն: Արդ, պ. Օգուլեւիչը հարց բարձրացրեց, որ այդ հողերը այսուհետև միմիայն նաւթագործներին տրուի *), իսկ երբ խօսք եղաւ արհեստանոցների, գործարանների և զբանց նմանների մասին, խորհրդի անդամներից մէկը պատասխանեց, թէ միևնոյն է, այդ գործարանները վաղ թէ ուշ բոլորն էլ պիտի փակուեն, ինչ կարիք կայ նրանց մասին մտածելու... Նրանք էլ հօ նաւթագործ չեն, որ արժանի լինեն ուշադրութեան: Հարցը քուէարկութեան դրին և ժողովը, համարեա միաձայն, վճռեց զանձարանի հողերը ապագայում միմիայն նաւթագործներին տալ կապալով, իսկ մեքենագործական և այլ գործարաններին ասել.—Պարոններ միևնոյն է, դուք այսօր կամ վաղը պիտի ստիպուած քաշուէք հրապարակից, դէ ուրեմն հէնց այժմ և եթ հեռայէք այստեղից, ասպարէզը մեզ թողնելով: Բայց բարեբախտաբար ժողովի անդամ են բացի նաւթագործներից և զանազան միջոցաւորութիւնների ու պաշտօնական հիմնարկութիւնների ներկայացուցիչներ:

*) Տխրահոյակ Ռըլսկու ժառանգների ընդհանուր կառավարին է և այժմ ինքն էլ նաւթագործ է:

որոնք չը համաձայնուեցան ժողովի այդ տարօրինակ (եթէ աւելին չասենք) վճռի հետ և իրանց պատճառաբանումը կարծիքները ներկայացրին: Կասկած չը կայ, որ պաշտօնական բարձր շրջաններում այդ հարցին չեն նայի միմիայն պ. պ. Նաթագործներին շահերի տեսակետից:

Պակաս հետաքրքրութեան չարժանացաւ կերոսինի արտահանութեան հարցը: Վաղուց լուրեր էին պտտում, թէ կերոսինի (և հետևաբար նաւթի) գները դիտմամբ գցում են արտահանողները, այսինքն Նորել, Կապեան-Սեծովեան ընկ. (որի գլխավոր բաժնետէրը Ռոզիլդն է) և Մանթաշեանը: Առաջին երկուսի մասին հարցը պարզուեց որ նրանք մասնակցութիւն ունեն անդլիական «Կոնսոլիդէտը» ընկ. մէջ: Թէպէտ Նորելի ներկայացուցիչը պնդում էր ժողովում, թէ ինքը ոչինչ չը գիտէ այդ մասնակցութեան մասին, բայց որովհետև այդ երկու ֆիրմայի «Կոնսոլիդէտը»-ում ունեցած մասնակցութիւնը այլ ևս գաղտնիք չէր ժողովականների համար, Ռոտշիլդի Նեֆկայացուցիչը բացարձակ խոստովանեց, թէ այո, նրանք երկուսն էլ մասնակցում են, բայց երկուսն էլ այնպիսի վնասներ են կրում գների ընկնելուց, որ նրանց համար հաշիւ չէր դիտմամբ գները գցել: Բանից դուրս է գալիս որ այդ հոշակաւոր «Կոնսոլիդէտը»-ի կազմակերպողները, որ այժմ ահագին օգուտ են վերցնում Անգլիական շուկայում տարեկան 14 միլիոն պուղ կերոսին վաճառելով, մեր արտահանողներին իրանց թակարդը գցելուց յետոյ (Նորելին ու Ռոտշիլդին) բաժանել են ամբողջ Անգլիան ամերիկական «Ստէնդէռլի» հետ (40% իրանց, 60-ը ամերիկացոյ) և այդպիսով, առանց միմիանց հետ մրցելու ահագին հունձ են անում Անգլիայում, մի և նոյն ժամանակ այն աստիճան իջեցնելով կերոսինի գինը Բաթումում (ուրեմն և Բագու) որ մեր գործարանատէրերը ստիպուած են եւրոպացոյ «լուսաւորելու» պատուին արժանանալու համար, իրանց ջրից ծախսել, նաւթը մաքրել, կերոսին չինել և հրճուել, որ անգլիացիք «գիջանում» են իրանց բարձր ուղադրութեանը արժանացնել սրանց կերոսինը... Իսկ մեր արտահանողները, ընկերանալով այդ հոշակաւոր «Կոնսոլիդէտը»-ին երբէք չեն կասկածել, թէ իրանց կրտսեր եղբայրներին ծախսելով (ինչպէս երբեմն եղբայրները Յովսէփին) իրանց համար էլ են հոր փորում... և այժմ լաւ օգուտներ ստանալով այդ «Կոնսոլիդէտը»-ից իրրի բաժնետէրեր, եռապատիկ աւելի վնասում են իրրի Բագուի նաւթագործներ... ժողովում այս բոլորը պարզուեց ու հաստատուեց թուանշաններով... և իրրի միակելք այս ծանր դրութիւնից ժողովը միաձայն վճռեց կազմակեր-

պել տեղական գործարանատէրերից արտահանութեան մի ընկերութիւն, որի նմանը գոյութիւն ունէր 94—95 թ. թ. «СОЮЗЪ» անունով: Թէ որքան անկեղծ էին արտահանող ֆիրմաները, երբ միացան ժողովի միաձայն որոշման, այդ ցոյց կը տայ մօտիկ ապագան:

Անցեալ տարի խօսելով «Մուրճում» նախագործներին XV ժողովի մասին, մէջ էինք բերել և այդ Ժ.ում ընդունուած քուէարկութեան սխատմը, թէ ինչպէս օր. Նոբելը մօտ 200 ձայն ունի, իսկ նախագործների մեծամասնութիւնը 1—3 ձայն: Ներկայ ժողովը ձայնաւութեան մի այլ սխատմ մշակեց, որ կ'առաջարկուի ի հաստատութիւն: Նոր սխատմով մինչև կէս միլիօն տարեկան նախ ռենկոյդը կ'ունենայ մի ձայն, մի միլիօն ռենկոյդը—երկու, իսկ այնուհետև ղօռաւարանում է աւելի ձայն ստանալը: Օրինակ, 3 ձայն ստանալու համար արդէն 4 միլիօն պիտի ունենայ, 4 ձայն ստանալու համար—8 միլիօն, 5 ձայնի համար—16 միլիօն... և արդէն 8 ձայն ունենալու համար պէտք է 128 միլիօն ունենալ, կամ զրան համապատասխան կերտին, իւզ, և այլն: Այդպիսով ամենից շատ զրկուած են մեծերը, բայց ոչ յօգուտ մանրների, այլ միջակների:

Անցեալ տարուայ ժողովը մի մասնաժողով էր ընտրել՝ հանքերում կեանքի և գոյքի պահպանութեան համար մի ծրագիր մշակելու: Նախահանքերում գոյութիւն ունեցող օստիկանութիւնը թուով այնքան չնչին ու անբաւարար է, որ ամեն մի հանք ստիկական պահապանների վրայ բաւականին ծախս է անում և այնուամենայնիւ ոչ մի ապահովութիւն չը կայ հանքերում, ինչպէս այդ ապացուցեց Կասպեան ընկերութեան գանձապահի սպանութեան գործը և դատավարութեան ժամանակ պարզուած քստմանի մանրամասնութիւնները: Պահապանները իրանք յաճախ ամենակասկածելի անձնաւորութիւններ են... Ընտրուած մասնաժողովը մշակել էր մի չօչափելի կազմակերպութեան ծրագիր, որ, թէպէտ մեծ ընդդիմադրութեամբ, սակայն ընդունուեց... քստորդ միլիօն տարեկան բիւզձէով... Բայց, երբ մի քանի օրից յետոյ ելեմուտքի յօգուածները մէկ-մէկ քուէարկութեան ենթարկուեցին, մեծ ֆիրմաները իրանց ձայների շատութեամբ, մերժելով այդ գեղեցիկ մտքի իրագործման համար պահանջուող ծախքը, այդպիսով տապալեցին մի անգամ արդէն ընդունուած ծրագիրը:

Այս տարուայ ելեմուտքի համար հաստատուած ծրագիրը առանձին ղանազանութիւն չունի անցեալ տարուայ համար հաստատուածից, որ կարիք լինէր կանգ առնել Ընդհանուր

մուտք ենթադրուած է մօտ $1\frac{1}{4}$ միլիօն, որ չի բաւականանում ընդհանուր ծախքը ծածկելուց յետոյ ընթացիկ պարտքերն էլ տալու համար, այդպիսով պարտքերի մի մասը (չուրջ հարիւր հազար) պիտի նորոգուի: Ծախքի յօդուածներից աւելորդ չի արձանագրել հետեւեալները. բժշկական օգնութեան վրայ—երեք հարիւր հազարից աւելի, ուսումնարանների վրայ—մօտ յիսուն հազար, և ճանապարհների պահպանութեան վրայ—մօտ հարիւր յիսուն հազար:

Ի.

Հ Ր Ա Հ Ա Ն Գ Ն Ե Ր

Պոնապանների ընդհանուր պարտաւորութիւնների մասին *):

Յօդ. 1. զոնապանները և չվէյցարները տներում, հիւրանոցներում և կահաւորուած սենեակներում պարտաւոր են կատարեալ աջակցութիւն ցոյց տալ անչարժ կալուածքների տէրերին և ոստիկանութեանը հասարակական հանգստութիւնը, կարգը, բարեկարգութիւնը, նոյնպէս և բնակիչների անձնական ու զոյքի ապահովութիւնը պաշտպանելու դործում, և այդ պատճառով նրանց վրայ պարտաւորութիւն է դրւում հսկել:

Կ. 1. Որպէս զի իւրաքանչիւր եկողի և գնացողի մասին հաղորդուեն տեղեկութիւններ, նահանգապետի կողմից արուած առանձին բլանկների վրայ, տեղական թաղական ոստիկանական վարչութիւններին, այնպէս որ հիւրանոցները և կահաւորուած սենեակները եկողների և գնացողների մասին տեղեկութիւնները պէտք է հաղորդուեն ոստիկանութեանը 12 ժամուայ ընթացքում, իսկ տները—24 ժամուայ զալու կամ գնալու բուպէից:

*) Այդ պարտաւորիչ որոշումների 6-դ յօդուածի համաձայն, այն անձինք, որոնց այդ վերաբերում է, այդ որոշումները խախտելու դէպքում, ենթարկուած են, վարչական կարգով, պետական կարգը պաշտպանելու միջոցների վերաբերեալ կանոնադրութեան 15-դ և 16-դ յօդուածների համաձայն, 500 ռ. տուգանքի, կամ երեք ամսուայ բանտարկութեան: Այսպիսի պատիժների ենթարկելու համար, սաստկացրած հրեկողութեան 16-դ յօդուածի 1-ին կէտի համաձայն, լիազօրութիւն ունի Քիֆլիսի նահանգապետը:

Կ. 2. Որպէս զի հիւրանոցներում, կահաւորուած սենեակներում և տներում ամենայն ճշտապահութեամբ պահուեն նահանգապետի որոշած գրքերը՝ բնակւումքների ազգասնունները գրելու համար:

Կ. 3. Որպէս զի անյատաղ տեղեկութիւն տրուի տեղական թաղաձան վարչութիւններին.

ա) Բոլոր արտակարգ դէպքերի մասին.

բ) Կասկածելի ժողովների մասին աներում.

գ) Մարդկանց և անասունների մէջ վարակիչ հիւանդութիւններ երևալու մասին.

դ) Մեռածների մասին.

ե) Աղմուկների, կռիւների և հասարակական հանգստութիւնը խախտելու մասին.

զ) Տներում ապրող բոլոր անառակ կանանց մասին.

Կ. 4. Որպէս զի աներում և ուրիշ տեղերում չը լինեն գաղտնի տպարաններ, պայթուցիկ նիւթեր և հակադատարկչական հրատարակութիւնների պահեստներ չը պահուեն.

Կ. 5. Որպէս զի ոչինչ հողային աշխատանքներ չը կատարուեն աներում, առանց ոստիկանութեան գիտութեան.

Կ. 6. Որպէս զի տների առաջ գտնուող բակերի և փողոցների սրբելը, Թիֆլիսի քաղաքային դումայի պարտաւորիչ որոշումների համաձայն, աւարտուի մինչև առաւօտեան 8 ժամը, և յետոյ այդ մաքրութիւնը պահպանուի ամբողջ օրը:

Կ. 7. Որպէս զի ամբողջ հաւաքուած աղբը, համաձայն Թիֆլիսի քաղաքային դումայի պարտաւորիչ որոշումների, մինչև աղբակոյտերում ածելը, պահուի դրա համար իւրաքանչիւր բաւում չլինուած պինդ կաշկած և փակ արկղներում.

Կ. 8. Որպէս զի աղբի արկղները և արտաքնոցները, համաձայն Թիֆլիսի քաղաքի պարտաւորիչ որոշումների, չը լցուեն և իր ժամանակին մաքրուեն ու դեղինֆէկցիայի ենթարկուեն:

Կ. 9. Որպէս զի ձմեռը, փողոցները սառչելու ժամանակ, Թիֆլիսի քաղաքային դումայի պարտաւորիչ որոշումների համաձայն, տրոտուարները աւազով ծածկուեն, կամ ծեծած աղիւսով, կամ մոխրով:

Կ. 10). Որպէս զի հրդեհների առաջն առնելու նպատակով, Թիֆլիսի քաղաքային դումայի պարտաւորիչ որոշումների համաձայն, իր ժամանակին մաքրուեն ծխնելոյղները, խարոյկներ չը վառուեն բակերում և փողոցներում և այլն:

Յօդ. 2). Դռնապանները պարտաւոր են անձամբ ճանաչել տան բոլոր կեցողներին և նրանց ծառաներից և խիստ հետեւի, որպէս զի տան մէջ ապրող տան տանտէրերի ազգանուն-

ները, ուր կան երկուսից աւելի բնակարաններ, գրուած լինեն առանձին տախտակների վրայ, որոնք պէտք է կախուած լինեն դռների տակ կամ նախադռնիքներում:

Յօդ. 3) Դռնապանները պարտաւոր են զուրա գալ փողոցը հէնց որ զանգակի ձայն լսուի, ոստիկանութեան աջակցութիւն ցոյց տալու համար, և այդ պատճառով տանտէրերը պարտաւոր են շինել և կատարեալ կանոնաւորութեամբ պահել զանգակը, որ տանում է դէպի դռնապանի սենեակը դռներից, «ДВОРНИКУ» մակագրութեամբ:

Յօդ. 4) Տների և անշարժ կալուածքների տէրերը, թէ մասնաւոր, թէ արքունական և հասարակական, ամեն օր հերթապահութեան համար նշանակում են փողոցներում դռնապաններին:

Ծանօթութիւն 1. Դռնապանների հերթապահութիւնը նշանակուած է ցերեկով և գիշերով, յայտնի հերթապահութիւն պահպանելով դռնապանների մէջ, սօլիցիյմէյստերի առանձին կարգադրութեամբ, որ յայտնուած է թաղական ոստիկանական վարչութեան միջոցով, սակայն այնպիսի հաշուով, որպէս զի ընդհանրապէս իւրաքանչիւր դռնապանի վրայ օր ու գիշերուայ մէջ ընկնի հերթապահութիւն ոչ աւելի քան 4 ժամ փողոցում:

Յօդ. 5. Դռնապաններին, հերթապահութեան մէջ գտնուելու ժամանակ, տանտէրերը չը պէտք է ոչ մէկ յանձնարարուած թիւն տան և հերթապահութիւնից հանեն. դռնապանները չը պէտք է քնեն և պառկեն:

Յօդ. 6. Հերթապահ դռնապանները պէտք է զտնուեն տներից զուրա, և չը պէտք է մտնեն դռների տակ, և ոչ էլ տների ներսը:

Յօդ. 7. Հերթապահ դռնապանները պարտաւոր են օրինական աջակցութիւն ցոյց տալ այն բոլոր մասնաւոր անձանց, որոնք դիմում են նրանց օգնութեանը, և պարտաւոր են անպայման կատարել ոստիկանութեան բոլոր օրինական պահանջները և նրան կատարեալ աջակցութիւն ցոյց տալ, երբ նա կատարում է իր պարտաւորութիւնները, մանաւանդ այն անձանց բռնելու ժամանակ, որոնք կամենում են փախչել ոստիկանութեան ձեռքից և նրան դիմադրութիւն են ցոյց տալիս:

Յօդ. 8. Հերթապահ լինելու ժամանակ, դռնապանները պարտաւոր են.

Կ. 1. Հետեւել, որպէս զի որեւէ տեղ պատերին կպցրուած չը լինեն յայտարարութիւններ, ափիշաներ և այլն, առանց ոստիկանութեան թոյլտւութեան:

Կ. 2. Աչալուրջ պաշտպանել տները հրդեհներից:

Կ. 3. Հետևել, որպէս զի դռները և մուտքերը, սկսած գիշերուայ 11 ժամից մինչև լուսաբացը, փակուած լինեն կողպէքով:

Կ. 4. Բռնել և յանձնել ոստիկանութեանը այնպիսի անձանց, որոնք նկատուած են որևէ յանցանք գործելու մէջ—սպանութիւնների, վերքեր հասցնելու, կողոպտումների, մուրացկանութեան և այլն:

Կ. 5. Հետևել փողոցում տեղի ունեցող ամսն մի գէպքին, տները մտնողներին և այնտեղից դուրս եկողներին եւ, մանաւանդ, կասկածելի անձանց և տներից կապուցներով ու իրերով զուրս եկողներին:

Կ. 6. Հետևել, որպէս զի տներում կասկածելի մարդկանց ժողովներ չը լինեն, և այդպիսի բոլոր ժողովների մասին անյապաղ իմաց տալ տեղական պրիստաւին:

Յօդ. 9. Հերթապահ կղած ժամանակ, դռնապանները պարտաւոր են ունենալ թելից կախած, հազուադէպ վրայ, թիթեղեայ նշանակ «ДВОРНИКЪ» վերնագրով, նամերով (համարով), նոյնպէս և ոստիկանական սուլոց:

Գ Ա Ի Ա Ռ Ա Կ Ա Ն Կ Ե Ա Ն Ք

Մասնագիտական դպրոցների կառիքը Երեսնեան նահանգում:

Երկաթուղու երկանեան նոր գիծը, մեր նահանգը անմիջապէս կապելով առևտրական կենտրոնների և Եւրոպական Ռուսաստանի վտճառաշահ քաղաքների հետ, տուեց մեզ հազորդակցութեան այն մեծ գիւրութիւնը, որի շնորհիւ սրանից յետոյ մեր երկրի արդիւնքները կարելի կը լինի արտահանել և սպառել մեծ քանակութեամբ և աւելի արժան ճանապարհածախքով: Բայց ընդհանրապէս փոխադրութեան ծախքերի խնդիրը կանոնաւորելուց յետոյ, ընքն ըստ ինքեան ծագում է մի այլ աւելի լուրջ հարց, որի լուծումից կախուած է մեր նահանգի ապագայ տնտեսական դրութիւնը:

Մեր բերքերի համար որոշ շուկաներ ստեղծելու նպատակով անհրաժեշտ է, որ նրանք կարողանան որոշ տեղ բռնել ոչ միայն քանակութեան այլ և յատկութեան տեսակէտից: Ունեցէք մի բերք, թէկուզ չափ էժան գնով, բայց քանի այդ բերքը ընտիր յատկութեամբ անդօր կը լինի մրցել այլ տեղերի բերքի հետ, նրա պահանջը շուկայում մեծ լինել չէ կարող: Ուրեմն բերքերի տեսակների ազնուացման գործը այժմ առանձին կարևորութիւն է ստանում:

Հանգամանքները բոլորովին այլ էին մինչև այժմ: Հացահատիկների արտահանութիւնը մեր նահանգից կարելի է ասել գոյութիւն չի ունեցել, բայց բացառիկ դէպքերը, ինչպէս էր 1886—7 թուերին, երբ Ռուսաստանի ներքին նահանգներում անբերրիութիւն էր, իսկ արտասահմանից հացի մեծ պահանջ կար: Բամբակը թէև արտահանում էր, բայց աննպաստ պայմաններում. փոխադրութեան այլ և այլ ծախքերը բարդեցնելով, նրա իսկական արժէքը գցում էին մեծ շուկաներում: Իսկ գիւղատնտեսական բերքերի միւս տեսակները միանգամայն չեն

արտահանուել կամ արտահանուել են շատ աննշան չափով: Այսպէս, հնարաւորութիւն չի եղել տեղափոխել այլ տեղեր ծառապտուղների ոչ մի տեսակը, բանջարանոցային բոյսեր, դինի հայլն: Հաղորդակցական դիւրութիւնների հետ անշուշտ կ'ընդարձակուի վանազան բոյսերի մշակութեան տարածութիւնը:

Այսպէս, օրինակ, 2,449,492 դեկտալին մակերեսով ունեցող Երևանեան նահանգի 7 դաւաններից բաց թողնելով երկուսը այն է՝ Նոր-Բայալէտը ու Ալեքսանդրապոլը (որոնք միասին բռնելով 798,333 դեկտալին տարածութիւն և ընկած լինելով սարահարթերում միանգամայն անընդունակ են բուսցնելու դաշտային բերքերը), մնացեալ 5 դաւաները, այն է՝ Նախիջևանը Շարուր-Դարալագեազը, Երևանը, Էջմիածինը և Սուրմալուն, եթէ ոչ իրանց ամբողջ մակերեսով, այլ $\frac{1}{4}$ մասը վերցնելու լինենք, այնուամենայնիւ կը ստանանք մի ընդարձակ տարածութիւն՝ 412,865 դեկտալին, որը ընդունակ է բուսցնելու և արգիւնաբերելու գիւղատնտեսական բարձր տեսակի բերքեր. այն ինչ ամբողջ նահանգում բամբակի պլանտացիաների բռնած տարածութիւնը այժմ հաշոււմ է ընդամենը 25—30,000 դեկտալին, իսկ այգիների տարածութիւնը աւելի քան աննշան է, մօտ 3 հազար դեկտալին:

Բայց ինչ կերպ ընդարձակել և դրա հետ միաժամանակ զարգացնել և ազնուացնել բերքերի տեսակը. ահա իսկապէս այն խնդիրը, որի վրայ մենք ուզում ենք կանգ առնել:

Ճիշտ է մի քանի տարուց ի վեր երկրագործութեան և պետական կալուածների մինիստրութիւնների որոշմամբ Երևանում հիմնուել է փորձնական ազարակ զեկավարութեամբ մասնագէտ գիւղատնտեսի, որը իր մի քանի ինստրուկտօր օգնականների աջակցութեամբ նահանգի զանազան մասերում անում է փորձեր գիւղատնտեսական բերքերի մշակութեան վերաբերեալ: Ճիշտ է, այժմ Երևանի մօտ գտնուող պատմական Սարգարի այգին ներկայացնում է մի գեղեցիկ փորձնական ազարակ իր սիրուն փորձնական անկարանով, որտեղից մատչելի գնով ժողովրդին բաց է թողնուում սամնալնախի տեսակի պտղատու տունկեր ու, բացի այդ, ամառուայ ամիսներին կիւրակի օրերում ցոյց են տրուում զանազան գործիքներ և նրանց գործածութեան եղանակը և լինում են դասախօսութիւններ դիւղատնտեսական բոլոր ճիւղերի մասին, սկսած սերմանելուց մինչև հունձը, նաև բոլոր հիւանդութիւնների մասին, — բայց և այնպէս, առանց գիւղատնտեսական դպրոցների անկարելի է յեղափոխել ժողովրդի նահապետական հասկացողութիւնները

գիւղատնտեսութեան մասին Կարող էք երևակայել որ յիշած գեղեցիկ փորձերին չէին յաճախում և ոչ մի գիւղացի, իսկ երկու զոյգ մի կենդ յաճախողները, զուրկ լինելով սեփականութիւնից, ոչ մի հնարաւորութիւն չունէին տեսած և լսածները գործադրելու իրապէս Մատապտուղների ամենալինաստկար հիւանդութեան—թրթուռի դէմ կռուելու միջոցները և գործիքները, որոնք ի ցոյց էին տրուում այդ փորձերի ժամանակ, ինչպէս և չոր հիւանդութեան դէմ կռուելու միջոցը չը տարածուեցին ժողովրդի մէջ։ Գիւղատնտես Կանդուրալեան 2—3 տարի առաջ ծծումբով բժշկելու փորձեր կատարել տուեց Երևանի գաւառի Դամարլուի շրջանում և հասաւ շատ յաջող հետևանքի. բամբակի մի փոքրիկ պլանտացիա բաժանելով երկու մասի՝ մէկը թողեց իր բնական աճեցման վիճակին, իսկ միւսը ենթարկեց ծծմբի փոշիի սրսկման փորձերին, և հետևանքը այն եղաւ որ ծծմբի սրսկման ենթարկուած մասը կրկնակի չափով աւելի բերք տուեց քան աճեցման ընտան ընթացքին թողնուած մասը։ Չը նայած այս բոլորին, ծծմբի սրսկումը դեռ չի ընդհանրացել մեր նահանգում, և ոչ միայն բամբակի պլանտացիաները, այլ և խաղողի այգիները թողնուած են իրանց բնական ընթացքին։

Մնում է որ մասնագիտական գիւղատնտեսական դպրոցները խմբելով իրանց շուրջը նոյն ժողովրդի որդիներանց, տարիների ընթացքում սովորեցնեն տեսականի հետ նաեւ գործնական գիւղատնտեսութեան զանազան բաժիններ։

Կովկասի մի քանի արդիւնաբեր մասերում գիւղատնտեսական մասնագիտական դպրոցներ բացելու միտքը վաղուց արծարծուած է երկրագործութեան և պետական կառուածների մինիստրութիւնների խորհրդում, բայց թէ նրանք երբ կը բացուեն և ո՞ր տեղերում, այդ դեռ եւս յայտնի չէ։

Յանկալի էր որ Երևանի երկաթուղու բացումը մի խթան հանդիսանար այդ կարևոր խնդրի շատափոյթ լուծման, որը նոր կեանք կը ստեղծի Արաքսի հովտի գիւղատնտեսութեան համար։

Ա—ԴՕ

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Եւրոպական քաղաքակրթութեան լաւագոյն կողմերը,—Եւրական գիտութիւն և նրա մէջ աշխատողների աշխատանքի դրութիւնը,—Հանճարի դերը գիտութեան մէջ,—Քերթըլօի լիանամեակի առիթով,—Ալֆրէդ Նօթել և նրա 5 մրցանակներին արժանացած երեւելի մարդիկ,—Նիլիկիայի կաթողիկոսական հարցը:

Այս անգամ մեր տեսութիւնը չենք ուզում նուիրել եւրոպական քաղաքական կեանքին, որ վերջին ամիսներում մի առանձին փոփոխութիւններ չի կրել, այլ ցանկանում ենք մեր ընթերցողի հետ խօսել արտասահմանի գիտական աշխարհի մի քանի նշանաւոր երեւոյթների մասին:

Իսկապէս, ինչո՞ւմ է արտայայտուում «եւրոպական» կոչումաւ քաղաքակրթութիւնը, եթէ ոչ—անձի, գոյքի և պատուի ապահովութեան, օրէնքի և ոչ քրեանաճոյքի տիրապետութեան, խղճի, խօսքի և գումարումների ազատութեան, կնոջ իրաւունքի հաւասարութեան, աշխարհական ու պարտադիր կրթութեան և գիտական տեխնիկայի մէջ: Բայց այդ բոլորից բարձր և ամենից հիմնաւորը մարդկային մտքի այն վեհ, խիզախ ստեղծագործութիւնն է, որ կոչւում է դրական գիտութիւն:

Մի ժամանակ արհամարհուած և հալածուած էր դրական գիտութիւնը: Իսկ այժմ եւրոպական միտքը այնքան հասունացել է, որ անհասկանալի անաբրօնիզմ կը լինէր մի գրութիւն, երբ գիտնականը պարտաւոր է բացատրութիւն տալ իր այս կամ այն համոզմունքի կամ հետազօտութեան համար կասկածոտ ինկվիզիցիային. երբ գիտնականը, անապահով իր աշխատանքով, պէտք է օրուայ ապրուստի մասին մտածէ, մեկնեալներ որոնէ. երբ գիտնականը ձեռքի տակ չունի գիտական զբաղմունքների համար բոլոր անհրաժեշտ պարագաները: Ներկայումս գիտնականի աշխատանքը եւրոպական առաջնակարգ երկրներում ոչ միայն պատուաւոր է, ապահովող, այլ և շատ աւելի հեշտացած՝ չնորհիւ ամեն տեսակ ճոխ յարմարութիւններին

ու սլարագաներին, որոնցով հասարակութիւնը կամ պետութիւնը չըջապատուի է նրա ստեղծագործական պրօցեսսը:

Այդ պայմաններում, ի հարկէ, ամեն մի անհատ, որ իր մէջ կոչում և կորով է զգում նուիրուել գիտական ստեղծագործութեան, կարող է վստահ լինել, որ ոչ միայն կը վարձատրուի առատութեամբ երախտապարտ հասարակութիւնից, այլ և կը դռնի ամեն տեսակ դիւրութիւններ՝ իր աշխատանքը ըստ կարելոյն արդասաւոր դարձնելու:

Անշուշտ, և այդ իդէալական պայմաններում ամեն մի գիտնականի աշխատանք հաւասար արժէք չի ունենում. մէկը հում նիւթեր, այսպէս ասած՝ աղիւմներ և շաղախ է պատրաստում, միւսը գոլութիւն ունեցող գիտական չէնքի այս կամ այն պակասն է լրացնում, այս կամ այն կարկատանն է անում, առանց էական փոփոխութիւն մտցնելու չէնքի ընդհանուր բնաւորութեան մէջ, և միայն քիչերին է վիճակուած հիմնովին նորոգել, նոր ոճով գիտական չէնքեր կառուցանել կամ նրա նշանաւոր մասերն աւելացնել: Այդ քիչերը հանճարներն են:

Հանճարը կամ տաղանդաւորներից տաղանդաւորը, ի հարկէ, երախտապարտ է դէպի իր նախորդ համեստ գործիչները, որոնք պատրաստել են հում նիւթեր—աղիւս, շաղախ, իայլն—բայց, չը պէտք է մոռանալ որ այդ նիւթերի կոյանքը կը մնային անկերպարան, մինչև որ հանճարի անհատականութիւնը իր ստեղծագործող շունչը չը փչէր նրանց և չասէր՝ «եղիցի»...

Առաջին անգամից մարդկանց թւում է նոյն իսկ, որ մի առանձին բան չէ հանճարի արածը, և ամենամեծ գործը հէնց համեստ աշխատաւորների գործերի՝ հում նիւթեր պատրաստելու մէջն է: Անկասկած, այդ նախապատրաստական աշխատանքները շատ դիւրացնում են հանճարի կատարելիք գործը, բայց դրանով չի նսեմանում հանճարի անհատական, ինքնուրոյն նշանակութիւնը, որովհետեւ բնութիւնը նրա ուղեղումն է կենտրոնացրել որոշ ժամանակի մարդկային ամենաբարձր մտաւոր կարողութիւնը՝ լուսաւորելու համար իրերի և երևոյթների մութ կապը, հոգի ներշնչելու համար հում նիւթերին: Կուտակուած հում նիւթերի մէջ հանճարն է որ ջուկում է պիտանին անպէտքից և ինքը լրացնում նաև ամենակարևոր պակասները: Եւ ահա հանճարի չիտմից, կարծես մոգական զաւաղանի մի շարժումով, անհատականաբար փորձերի և գիտողութիւնների միջից բարձրանում է պանչացած մարդկութեան առաջ գիտութեան հոյակապ չէնքը, կրելով իր ոճի ամեն մասերում ստեղծագործական դրոշմ...

Այդպիսի հանճարներից մէկն էր և Լավուազիէն, որի մա-

սին խօսել ենք անցեալ տարի (Փետրուարի 28): Արդի քիմիայի այդ ստեղծողից յետոյ եկան-գնացին շատ տաղանդաւոր և աշխատասէր գիտնականներ, որոնք քիմիայում իրենց կողմից նոր նիւթեր, նոր փորձեր, նոր գիտողութիւններ աւելացրին, նոյն իսկ Լափուազէի կառուցած գիտական շէնքի մի քանի մասերն կարկատեցին, բայց, չը նայած այդ բոլոր ջանքերին, անգոր գտնուեցին նոր յարկ աւելացնելու կիսատ մնացած հրաշալի հիմքերի վրայ: Հարկաւոր էր մի ամբողջ կէս դար, որ պայ Լափուազիէի նման մի հանճար և շարունակի նրա գործը:

Եւ այդ հանճարը ծնեց նոյն Փրանսիան, տալով մարդկութեան Մարսըլէն Բերթըլլօին, որի յիսնամիսյ գործունէութիւնը մի երկու ամիս առաջ այնքան փառաւոր կերպով տօնեց մեծ հանրապետութիւնը և ամբողջ քաղաքակիրթ աշխարհը:

Մեզ, հայերիս էլ, որ քաղաքակիրթ ազգերի պոչում ենք գտնուում, մնում է միայն դուրս գալ մեր մտաւոր խղճութիւնից և ծանօթանալ այդ 75-ամեայ պատկառելի գիտնականի այն տիտանական մաքառումի հետ, որի նպատակն էր իւրեւ բնութիւնից մարդկային ցեղը հզօրացնող գաղտնիքներ: Մենք, ի հարկէ, մանրամասնութիւնների մէջ չենք կարող մտնել այստեղ և միայն կ'աշխատենք Բերթըլլօի գիտական նուաճումների մի քանի էական կողմերը բնորոշել: Եւ մեր ասածները հասկանալու համար կարիք չի լինելու մոտնադէտ լինել:

Անշուշտ ընթերցողին յայտնի կը լինի, որ բոյսերը և կենդանիները գիտութեան մէջ կոչւում են գործարանաւոր կամ օրգանական մարմիններ, իսկ հանքերը՝ անգործարանաւոր կամ անօրգանական, և թէ՛ հանքերի, բոյսերի և կենդանիների մարմինները զանազան նիւթերից կամ բաղադրութիւններից են կազմուած: Այդ բոլոր բաղադրութիւնները քիմիկոսները վերլուծել են կամ, ինչպէս սովորաբար ասում են, անալիզի են ենթարկել և գտել որ տիեզերքի բոլոր մարմինները բաղկացած են մի քանի տասնեակ պարզ, այլ ևս անվերլուծելի տարրերից կամ էլէմենտներից:

Լափուազիէն ցոյց տուաւ որ այդ տարրերի թէ միացումը կամ սինթեզը, թէ անալիզը կատարւում են սովորական ֆիզիկական ոյժերի (տաքութիւն, լոյս, էլէքտրականութիւն) ազդեցութեամբ: Սակայն նրա բոլոր հանճարը ուղղուած էր գլխաւորապէս անօրգանական բաղադրութիւնների քիմիական օրէնքների լուսաբանութեան վրայ: Եւ նա ցոյց տուեց որ քիմիկոսը ոչ միայն կարող է վերլուծել, անալիզի ենթարկել, ամենաբարդ անօրգանական մարմինները, այլ և իր աշխատանոցում կամ լաբօրատօրիայում ստանալ ուն-

օրգանական բաղադրութիւններ էլեմէնտների սինթեզով նոյն հեշտութեամբ քիմիկոսները Լավուազիէից յետոյ էլ տարաբաղադրութեամբ էին նաեւ օրգանական մարմինները և իմանում թէ ինչ պարզ էլեմէնտներից են դրանք բաղկացած, սակայն ոչ ոք չէր կարողանում լաբօրատօրիայում պարզ տարրերի միացման կամ սինթեզի միջոցով ստանալ օրգանական բաղադրութիւններ։ Ուստի գիտութիւնը հաշտուել էր այս «մարդկային անկարողութեան» հետ, միութարեւով իրան նրանով, որ բոյսերի և կենդանիների մարմինների բաղադրութիւնները ստեղծելու կարողութիւնը գաղտնապահ բնութիւնը վերապահել է մի ինչ որ «կենսական ոյժին»։ Կենսքի խորհուրդը չը գիտենք, մտածում էին մարդիկ, ուրեմն, ինչպէս իմանանք թէ ինչպէս է նա ստեղծում բոյսերի և կենդանիների մէջ եղած բաղադրութիւնները։

Ժիշտ է, Վեօլէրը դեռ 1829 թուականին պատրաստեց իր լաբօրատօրիայում մի օրգանական մարմին — մզանիւթը, բայց, մտածում էին գիտնականները, չէ որ մէզը կենդանու օրգանիզմի համար արդէն անպէտք է, մի վիժմունք է... Եւ առանց ուղարկութիւն դարձնելու այդ նշանաւոր փորձի վրայ, նոյն իսկ Բերցլիուսի նման տաղանդները, պնդում էին որ քիմիան գործարանաւոր նիւթերի նկատմամբ միայն կարող է աշակերտանել եւ ոչ սինթեզ, և, իբր թէ, մարդկային ոյժերից վեր է պարզ տարրերից գործարանաւոր բաղադրութիւններ ստանալը։

Այդ գիտական նախապաշարմունքի մէջ էր գտնւում քիմիան, երբ երեսնամեայ Բերթլըօն, յիսուս տարի առաջ, ստացաւ ածխածնից և ջրածնից էլէքտրականութեամբ ագիթիկէն պազը և ապա մի շարք այսպէս կոչուած ածխա-ջրածիններ, որոնք անխիւ-անհամար օրգանական բաղադրութիւնների ծնողներ են հանդիսանում։ Եւ այդ սինթեզը Բերթլըօն կատարեց առանց անհանգստացնելու խորհրդաւոր «կենսական ոյժին», այլ գիմելով ֆիզիկայում յայտնի զօրութիւններին — տաքութեան, էլէքտրականութեան հայլն։ Այդպիսով օրգանական քիմիան ստացաւ յանձին Բերթլըօի մի հզօր վերանորոգիչ և ստեղծող, ինչպէս յանձին Լավուազիէի՝ անօրգանականը։ Բերթլըօի ջնորհիւ վերացաւ իսպառ քիմիական աշխարհից միատիկական տարրը՝ «կենսական ոյժը», և այսօր քիմիկոսը լաբօրատօրիաներում ազատ միացնում է կամ սինթեզ է անում, զանազան տարրեր, և ստանում այնպիսի բաղադրութիւններ, որոնք առաջ միայն բոյսերի և կենդանիների մարմնի մէջ էին գտնւում։ Ո՞վ գիտէ, գուցէ վաղը չէ միւս օրը լաբօրատօրիաներ-

րուժ կը պատրաստուեն օսլան էլ, սպիտակուցն էլ, որոնք մարդկանց կերակուրների հիմնական մասերն են և, այգպիսով, վերացած կը լինի «անբերրութեան» հարցը երկրագործ մասսայի ուսերից և մարդկութեան մեծագոյն մասը իր անբաւ ոյժերը ազատած կը լինի աւելի վեհ գործունէութեան համար...

Բերթլլոն բացի այլ շատ կարևոր գիտերից նաև իմացաւ թէ ինչպէս է բոյսը իւրացնում օդի բորակածինը՝ հողի մէջ եղած որոշ բակտերիաների գործակցութեամբ: Այդ դեռ ոչինչ. նա իր նուրբ խելքով թափանցեց նիւթի ասե-նամանր մասնիկներէ կամ քիմիական մոլեկիւլներէ աշխարհը և փորձեց գտնել այդ մոլեկիւլների փոխադարձ յարաբերութիւնները, շարժումների օրէնքը, չափել նրանց մէջ թագուն գործող հետքիւն: Որպէս զի ընթերցողը գաղափար կազմի այդ մոլեկիւլներէ աշխարհի «մեծութեան» մասին, բուսական է որ նա երևակայի հետեւեալը. խոշորացոյցով 2 հազար անգամ մեծացրած ինֆուէնցիայի բակտերիան հազիւ նշմարելի մի կէտ է. այդ բակտերիան կարող է բաղկացած լինել 200 հազար մոլեկիւլներից...

Մարսելէն Բերթլլոն ճշմարտութեան հաւասար սիրում է և իր հայրենիքը. 1870 թուականին նա իր քիմիական հանձնարը գործ էր դնում պրոֆեսորներից պաշարած Պարիզում պայթուցիկ նիւթեր պարտաստելու վրայ: Ազգային ժողովում նա միշտ արմատական կուսակցութեան կողմն է եղել: 1881 թուականին ընտրուելով սենատոր, շարունակում է մնալ համոզուած գեմօկրատ: Եւ առհասարակ խոյս չի տուել հասարակական դործունէութիւնից. 1886—1887 թուականներին Բերթլլոն լուսաւորութեան միջնիստը էր, 1895 թուականին, հայկական մեծ կոտորածներից առաջ, նա արտաքին գործերի միջնիստը էր և, զբո-բախտաբար, նրան փոխարինեց Հանօտօ-փաշան... Բայց դիպ-լօմատները մասին այս անգամ չը պիտի խօսայինք, ուստի վերադառնանք գիտական աշխարհի հետ կապուած անուններին:

Այդպիսի անուններից ամենահետաքրքրականը և ժողովրդականը այժմ՝ չվէդացի Ալֆրէդ Նօբէլի անունն է: Ալֆրէդ Նօբէլը տիեզերահռչակ դառաւ գուցէ ոչ այնքան գլխամիտի (ուժանակ) գիւտով (1867 թ.), որքան նրանով որ իր հսկայական կարողութիւնը, աւելի քան 20 միլ. ուրբի, իր մահից յետոյ (1895 թ.) թողեց ոչ իր ազգականներին, այլ կտակեց մարդկութեան իսկական բարերարներին. նրա կտակով նշանակուած են 5 մրցանակ, իւրաքանչիւրը մօտ 80 հազար ուրբի: Ամեն տարի պէտք է կատարուի մրցանակաբաշխութիւնը:

Եւ դեկտեմբերի 23-ին Խրիստիանիայում կայացաւ ան-

ցեալ տարուայ մրցանակաբաշխութիւնը: Համաձայն կտակի առաջին մրցանակը պէտք է տրուի նրան, ով ամենանշանաւոր գիւտ է արել ֆիզիկայում, երկրորդը՝ քիմիայում, երրորդը՝ բժշկութեան կամ ֆիզիոլոգիայի մէջ, չորրորդը՝ գրական այն գործիչին, որի գրութեանը աւելի համապատասխանում են իդէալականութեան սգուն, հինգերորդը պէտք է տրուի նրան, ով ամենից շատ է աշխատել ուղեւորի եղբայրութեան և համաշխարհային խաղաղութեան գաղափարի ամրապնդման համար և նպաստել է սպառազինութեան և մշտական զօրքերի կրճատման:

Թեկնածուներ առաջարկելու իրաւունքը վերապահուած է գիտութեան երեք ակադեմիաներին. շվեդական, ֆրանսիական և սպանական. ոչ ոք իրաւունք չունի առաջարկել ինքն իրան: Իսկ մրցանակների արժանացնելու իրաւունքը յատկացրած է շվեդական ակադեմիային, բացի վերջին՝ խաղաղութեան մրցանակը, որ Նորվեգիայի ազգային ժողովից (ստորտինք) ընտրած 5 անդամներն են որոշում:

Բնականաբար հետաքրքրական է իմանալ այն երեւելի մարդկանց անունները, որոնք արժանացան այդ մեծ պատուին և առատ նիւթական վարձատրութեան: Ֆիզիկայի մրցանակը ստացաւ Միւնխէնի պրոֆէսոր հռչակաւոր Բեօնտլէնը, քիմիայի մրցանակը՝ Բերլինի համալսարանի պրոֆէսոր Վանտհոֆֆ, բժշկականութեան յատկացրած մրցանակը տրուեց Մարբուրգի պրոֆէսոր Բերլինգին, որ հակադիֆտերիտային չիժուկը գտաւ, չորրորդ մրցանակը (գրական) տրուեց ֆրանսիացի բանաստեղծ Սիլլի Պրիւզոմին, իսկ հինգերորդ՝ խաղաղութեան մրցանակը՝ բաժանուեց երկու անձանց մէջ՝ շվեյցարացի Հանրի Դիւրանի, որի նախաձեռնութեամբ 1864 թուին կայացաւ ժընևլի միջազգային դաշնագիրը—պատերազմների բարձրորոշութիւնը գէթ վերաւորուածների նկատմամբ ամոքելու այդ առաջին փորձը— և ֆրանսիացի Ֆրեդերիկ Պասսի—միջազգային խաղաղասիրական կոնգրեսների այդ եռանդոտ կազմակերպողի մէջ: Խոչընդոտները, աննպաստ պայմանները և այլն անդօր են յուսահատեցնել այդ անվեհեր պրօպագանդիստին, այնքան զօրեղ է նրա մէջ գաղափարով յափշտակումը: Երտնի է այդ անսպառ եռանդի մի չնչին մասը ունենար «Տանն Կիլիկիոյ» նորընտիր կաթողիկոսացուն, որ ահա երկու ամիս է, չը նայած ամեն կողմից լսուող խնդակցումներին և թախանձանքներին, շարունակում է «հրաժարուել» այն մեծ պատուից, որ ցոյց տուաւ նրան թիւրքահայը իր ներկայ դժնեայ հանգամանքներում:

Իրումանիայում ծնուած, Երուսաղէմում մեծացած և Պօլսի մէջ հանգիստ վայելող այս հոգեւորականը դեռ յիսուն տարեկն էլ

չի անցել: Ինչքան խեղճ ու թշուառ լինի Կիլիկիայի կաթողիկոսական իրաւասութեան տակ գտնուող թեմը, այնուամենայնիւ, եթէ գործելու եռանդ, պարտաճանաչութիւն և անձնազոհութիւն ունենար Գէորգեայի սկիզբից, նա, չը պիտի հրաժարուէր: Հարկաւոր չէ որ կաթողիկոսը բազմագէտ լինի, և որտեղից կարող է այդ ամեն տեղ հազուագիւտ յատկութիւնները ունենալ մի հոգեւորական, որի մտաւոր պաշարը լցուել է Երուսաղէմի վանքում: Բայց եթէ այն բոլոր բարեմասնութիւնները, որ այնքան շոյալորէն մեր թիւրքահայ պաշտօնակիցները յատկացնում են Գէորգեայի սկիզբից, իսկապէս կան նրա մէջ—միանգամայն անհասկանալի է դառնում նրա փախուստը գործունէութեան պատուաւոր մի ասպարէզից: Ինչքան և յոռի լինի թիւրքական իրականութիւնը, այնուամենայնիւ Կիլիկիայի կաթողիկոսացուն, եթէ միայն գործով ապացուելու անձնանուէր սէր ունի գէպի իր ժողովուրդը, իրաւունք չունի Բօսփօրի գեղաժիծալ ափերը գերադասել Սիսի վեհարանից: Եթէ նա «կորով» չի զգում իր մէջ, թող ընդունակութիւն ունենայ իրան չըջապատել գործունեայ, ժողովրդասէր, հասկացող ոյժերով: Եթէ նա մոռանայ իր անձը իր հօտի համար և ասիական բռնակալների նման վեհարանը չը լինի զանազան հացկատակներով և «սիրեցեալներով»—աղզը, հաւատացած կնք, կ'օգնի նրան և ամեն տեսակ աջակցութիւն ցոյց կը տայ: Իսկ եթէ Գէորգեայ, Երէցեանը իր մէջ ոչ մի կորով, ոչ մի աւիւն չի զգում, որովհետեւ սիրում է փափուկ կեանք և փախչում է զլիապաւանքից, այն ժամանակ իսկապէս որ բան չի գուրս գալ յորդորներից: Այդ նայնը կը լինի որ գիւղիկն ու գենանք չունչ փչել էլէքտրական ցնդումներով... Յաւալի լուսախարութիւն թիւրքահայերի համար:

Լ. Ս.

Գ Ի Տ Ո Ւ Թ Ե Ս Ն Ա Շ Խ Ա Ր Հ Ի Ց

ԹՈՒՔԱԽՏ ԵՒ ԱԼԿՈԼԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Ալկոլականութեան յառաջացրած վտանգների մէջ ամենամեծ տեղը թոքախտին պէտք է տալ, մի ախտ, որը սոսկալի կոտորածներ է անում մարդկային շարքերի մէջ:

Թոքախտի՝ մարդկութեան պատճառած սարսափելի զոհերի մասին մի փոքր զաղափար կազմելու համար, պէտք է յիշել, որ երկրագնդի վրայ պատահած բոլոր մահերի 5 ից 1-ը թոքախտին է պատկանում, և մարդկանց գրեթէ կէսը թոքախտաւորներ են: Սրտահետկ Եւրոպայում զանազան պատճառներով մեռնողների վրայ կատարուած դիաղնութիւնները ցոյց են տալիս, որ նրանց 100-ին 60-ը ենթակայ են եղած թոքախտի:

Այս մասին մի ուրիշ փաստ: Թոքախտի միկրոքը զանոց պրոֆ. Կօխ, գուցէ չատերը յիշում են, գտնել կարծեց նախ նրա բուժող շիճուկը (ախբէրկիւլին): Կիտնականները բազմաթիւ հիմնական և լուրջ փորձերով ջրեցին այդ շիճուկի բուժական յատկութիւն ունենալը, սակայն այս փորձերը մի ուրիշ բան առաջուցին, այսինքն, այդ շիճուկը թոքախտի փորձաքար լինելու յատկութիւնն ունի: Նրա ներարկումով կարելի է իմանալ, թէ փորձի ենթարկուող անասունը կամ մարդը թոքախտաւոր է թէ ոչ: Այժմ քաղաքակիրթ երկրներում, այս միջոցը գործադրում է, մարդկային սնունդին յատկացրուած կենդանիներին ջրկելու և նրանց առողջ կամ թոքախտաւոր լինելը որոշելու համար:

Ահա այս միևնույն փորձերը մարդկանց վրայ ևս կատարելով, թոքախտի ըստ երեոյթին քաջատեղջ և ուժեղ թուող անհատների վրայ յաճախակի գոյութիւնը ցոյց են տուած:

Կօխ այս դիւտից յետոյ գիտութեան ուժեղ կազմակերպութիւն ունեցող մի տէրութեան վիճակտը ցանկացաւ իր

զինուորների շարքերից բոլոր թոքախտաւորներին հեռացնելու համար Կօխի շինուկը գործադրել. սակայն այս փորձերի ենթարկուող զինուորների մէջ թոքախտաւորների թիւը այնքան անհամեմատ մեծ եղաւ, որ այս քաջընտիր բանակում խիստ ահագին մի դատարկութիւն թաղնելու վախից ստիպուած, հարկ համարուեց փորձերը դադարեցնել:

Այս կարճ տողերով ուղեցինք յոյց տալ՝ թէ թոքախտը ինչքան մեծ վտեր է պատճառում մարդկութեան և թէ որքան ահ ու սարսափ ազդող մի հիւանդութիւն է:

Այժմ յոյց կը տանք այս վտանգաւոր հիւանդութեան ծնունդ տուող պատճառների մէջ ամենամեծ տեղը բռնող ալկոլականութիւնը և նրա կատարած դերը թոքախտի մէջ:

Եթէ ապագայ Մօնտէսքիէօներ զանկանան մի ցեղի անկման պատճառները յոյց տալ, կը պարտաւորուեն մի մեծ զուլայատկացնել ալկոլականութեան...

Ալկոլի վնասակար ազդեցութիւնը ներգործում է նաև սերունդների վրայ: Այն երկրներում, որտեղ խմիչքներ աւելի շատ գործ են ածուծ, երեխաների մէջ աւելի շատ մահ է պատահում, ալկոլամոլ ընտանիքների ծոցում երեխաները աւելի շատ են մեռնում թոքախտով:

Գրեթէ բոլոր թոքախտաւորները ալկոլամոլներ են. միայն թէ նրանց տրամադրութիւնը միշտ համեմատական չէ նրան գործածած խմիչքների քանակութեան հետ: Մարդիկ կան, որոնք ուրիշների հետ համեմատած, տանել կարողանում են, մեծ չափով խմում են, առանց մի չօշափելի վնասի: Մի ալկոլամոլ միշտ կարող է իրանից աւելի ալկոլամոլ մէկին յոյց տալ, որը իրանից աւելի քաջաւորը է: Այս տարբերութեան պատճառը անհատական հանդուրժողութեան մէջ է, որպէս նոյն բանը պատահում է բոլոր թոյների համար:

Անվիճելի կերպով հաստատուած մի իրողութիւն է, որ ալկոլամոլները աւելի հեշտութեամբ թոքախտաւորներ են դառնում, նրանց համար թոքախտը աւելի վտանգաւոր է և աւելի շուտ զարգանում:

Ֆրանսական բժշկական ակադէմիայի անդամ պրօֆ. Լանսէրօ կանխարդել միջոցների մասին խօսելիս, շեշտած է նաև ալկոլականութեան դէմ կռուելու անհրաժեշտութիւնը: Իրողութիւնների բնական ընթացքով հակաթոքախտականները հետզհետէ հակալկոլականներ են լինում. ալկոլի դէմ մղուած կռիւը, նշանակում է միևնոյն ժամանակ թոքախտի դէմ կռիւ մղել, վերջապէս թոքախտը և ալկոլականութիւնը երկու անբաժանելի ընկերներ են:

Պրոֆէսոր Լանսէթո ասում է. «Թոքախտի կանխարգել միջոցը ոչ թէ միայն միկրոօրի մարդկանց հետ շփումը արգելելու մէջ է կայանում, այլ մանաւանդ օրգանիզմը տկարացնող պարագաները արգելելու ընդունակ միջոցների մէջ»:

Յիշեալ պրոֆէսորի կողմից 40 տարուայ շրջանում ծանոթագրուած 2,192 թոքախտաւոր հիւանդների վրայ թոքախտի տրամադրող պատճառների մէջ յիշուած են հետևեալները.

1,229 դէպք ալկոլամոլութիւն:

824 « անբաւական օդ, թշուառութիւն, յղութիւն:

93 « հաւանական ժառանգականութիւն.

46 « ուրիշից վարակում:

Ուրեմն թոքախտաւորների կէսից աւելին ալկոլամոլներն են կազմում: Այս 1,229 ալկոլամոլ թոքախտաւորների քննութիւնից հետեւում է. 1.—Ալկոլամոլների թոքախտը 25 և 50 տարիքում աւելի շատ է պատահում: 2.—Ընդհանրապէս թոքախտը ուժեղ անհատներին է հարուածում, որոնք սակայն ալկոլականութեամբ տկարացել են: 3.—Ալկոլամոլների թոքախտը աւելի սուր կերպարանք է ստանում և աւելի շուտ գերեղման առաջնորդում:

Այս 1,229 ալկոլամոլ թոքախտաւորները գործածած են են եղել խմիչքների հետեւալ տեսակները.

388 հոգի, խառն խմիչքներ (արաղ, գինի, արսէնթ հալլն):

254 » արաղ, արսէնթ, լիքէօր:

239 » արսէնթ, լիքէօր:

164 » գինի:

93 » գինի և արաղ:

91 » արաղ:

Այս ցուցակից պարզ երևում է, որ խմիչքների մէջ աւելի մեծ վնաս են պատճառում խառն խմուածները, իսկ գինին, որ շատերի կողմից մի անմեղ խմիչք է նկատուած, արաղից աւելի վնաս է տալիս:

Ալկոլամոլների թուին հետ եթէ թոքախտի յաճախութիւնը համեմատելու լինենք, կը տեսնենք որ 1,984 ալկոլամոլներից 853-ը թոքախտաւորներ են: Ուրեմն համարձակ կարող ենք ասել, որ ալկոլականութեան ամենամեծ վսանգը բոֆախսն է:

Պրոֆ. Լանսէթո եզրակացնում է. «Թոքախտին նպաստող առաջին մեծ պատճառը ալկոլականութիւնն է: Ուրեմն անհրաժեշտ է այս սկզբնական պատճառի վրայ ուշք դարձնել: Միկրոօրի դէմ կռիւ մղելը, ջնջել ջանալը, մի իւտօպի է, որովհետև այս միկրոօրը ամեն տեղ գոյութիւն ունի: Ընդհակառակը,

աւելի հեշտ է այս աղէտի դէմ հռուել և մրցել, արգելելով այն պատճառները, որոնք օրդանիզմը քայքայում են և հիւանդութեան ընդունակ մի վիճակի ենթարկում:

«Հարուածել ալիոլականութիւնը, նշանակում է, թոքախտաւորների կէսից աւելին պակասեցնել:

«Ֆրանսիայում և Անգլիայում թոքախտով պատահած մահերի թուեքը եթէ համեմատելու լինենք, կը հաստատենք որ Անգլիան իր խոնաւ, միգամած և ջուրա կլիմայով տարեկան հազիւ 50,000 թոքախտաւորներ է կորցնում, մինչդեռ Ֆրանսիան՝ աւելի առողջաւէտ մի կլիմայով, ամեն տարի թոքախտով 150,000 մահ է տալիս: Անգլիայի հետ համահաւասար քնակչութեան վրայ:

«Այս ահագին տարբերութիւնը՝ միայն թոքախտի պատճառով 100,000 աւելի մահը լինչ բանի վերագրելու է:

«Անգլիա ճանապարհօրդած միջոցիս բանուորների մի քանի դասակարգերի մէջ անգլիայու ամեն մի ճաշի ժամանակ ընդունուած մնունդի չափը և մննդարար արժէքը տեսնելով զարմացայ: Նրանց մննդառութեան հաշուեկշիռը հաստատել զանկանալով, կարողացայ քննել միջակ կազմով 10 անգլիայի հայելափորձ բանուորների մէջ: Միևնոյն քննութիւնը կատարեցի նաև 10 ֆրանսիայի հայելափորձ բանուորների վրայ: Քննութիւններիս վիճակագրութիւնը յոյց է տալիս, որ անգլիայիների մէկի միջոցով արտաքսուած տարրերի քանակութիւնը շատ աւելի մեծ է:

«Ուրեմն անգլիայի բանուորը աւելի լաւ մնունդ է առնում, ֆրանսիային անբաւական և վատ մնունդ ունի, նա ակոլից է սպասում առուեսական ոյժ: Վարժքերը գրեթէ նոյն են, բայց Անգլիայում ապրուածը անբաղդատելի կերպով նուազ թանկ է, որովհետեւ, դանձային օրէնքը գոյութեան համար ամենաանհրաժեշտ եղող նիւթերի վրայ մաքս դնելուց զգուշացած է, մինչդեռ Ֆրանսիայում ընդհակառակն է»:

Բոլոր աղգների մէջ Ֆրանսիան առաջին տեղն է բռնում թոքախտի, ալիոլականութեան և մարգանուազութեան կողմից:

Այս տարի Լօնդօնում գումարուած քոֆալսի դեմ կոնգրեսում պրօֆ. Բրուարդէլ մի ընդհանուր տեղեկագիր է ներկայացրած, որից քաղում են հետեւալը.

Չանագան երկրներում թոքախտով մեռնողների մահաթիւր եթէ քննուի, նախ և առաջ կը տեսնուի որ 1880 թուականից սկսած եւրոպական բոլոր երկրներում, բայց Ունգարիայից, Ֆրանսիայից և Իտալիայից, թոքախտով մեռնողների թիւը պակասած է: Միայն մեծ քաղաքների աղգարնակութիւնը աչքի

առաջ ունենալով կ'ասենք, որ Անգլիայում թղթախտով մեռնողների թիւը մի միլիոն բնակչի վրայ 440-ով պակասած է, Գերմանիայում 1,015-ով, մինչդեռ Ֆրանսիան 680 յուսելում յոյց է տալիս, Ունգարիան 297 և Իտալիան 145:

Գաւառներում թղթախտով մեռնողների մահաթիւր ալկոլի սպառման հետ համեմատելով, պ. զը Լավարէն յոյց է տալիս, որ աւելի շատ ալկոլանաշած ուղղերը նրանք են, որոնք աւելի լայն ծաւալով զոհեր են տալիս թղթախտին:

Մի երկրում ալկոլի սպառումը որքան չատանում է, նոյն համեմատութեամբ էլ թղթախտով մեռնողների թիւը աւելանում է, այս մասին պ. Բոդրանի կազմած վիճակագրութիւնը մէջ բերելով կը հաստատենք մեր ասածը:

Այս յուշակում թղթախտով մեռնողների թիւը նշանակուած է 10,000 բնակչի վրայ, իսկ գործածուած ալկոլի քանակութիւնը մարդագլուխ տարեկան միջին չափով.

12, 47	լիտր ալկոլ . .	30-ից 40 մահ
14, 72	» » . .	40-ից 50 »
15, 21	» » . .	50-ից 60 »
16, 82	» » . .	60-ից 70 »
17, 16	» » . .	70-ից 80 »
17, 80	» » . .	80-ից 90 »
30, 70	» » . .	90-ից աւելի

Ուրեմն երբոր մի տեղ մարդագլուխ տարեկան 12,47 լիտր ալկոլ է սպառում 10,000 բնակչի վրայ, թղթախտով մեռնողների թիւը լինում է 30-ից 40, իսկ երբոր ալկոլի քանակութիւնը 30,70 լիտրի է բարձրանում, նոյն համեմատութեամբ էլ մեռնողների թիւը 90-ից աւելի է բարձրանում:

Թղթախտի համար դումարուած յանձնաժողովը հետեւեալ եզրակացութիւնները ընդունած է.

«Ալկոլականութիւնը ծնունդ է աւնում այն նախապաշտումից, որ ալկոլին վերագրում է զանազան ողջպահիկ և ուժատու յատկութիւններ: Կլինիքը ընդհակառակը ոգելից խմիչքների անտաճին դերն է յոյց տալիս:

«Հիմնուելով այս անհերքելի իրողութեան վրայ, հասարակաց պաշտօնեաները կը կարողանային ուղղութիւն տալ բոլոր իրանց պաշտօնավարութեանց մէջ (դպրոց, ճեմարան, աղմինիստրայիա, ցամաքային և ծովային բանակ, և այլն). հակալիկաւան պրօպալանդա անելով, նախնական, երկրորդական, բարձրագոյն և մասնագիտական կրթական ծրագիրների համեմատ, որոնք լայն կերպով ընդհանրանալով, իբրեւ տիպարներ կը ծա-

ռայէին զործարանների, աշխատանոցների, արհեստանոցների, կայլնի պետերին»:

Պրօֆ. Դէբօլ Beaujon-ի (Պարիզում) հիւանդանոցի կլինիքում քոֆալիսի կանխարգել միջոցների վրայ դասախօսելիս, իր աշակերտներին ասում է. «Այն կանոնը, որ ես ցանկանում եմ նախապէս ձեզ ներշնչել և ուրիշներին խրատել, այն է բնաւ չը գործածել ոգելից խմիչիներ»:

«Ձեր առաջ չը պիտի դադարիմ հարուածելուց այն տարօրինակ վճիռը՝ թէ ալկոլը ոյժ է տալիս, ալկոլը միմիայն վնասակար ազդեցութիւններ է ունեցած»:

«Ճիշդ է, որ զանազան պարագաներում, երբ որ խնդիրը մի վաղանցիկ գրգռութիւն յառաջ բերելու վրայ է, ինչպէս այն հիւանդին, որի վրայ մի ծանր վիրաբուժական զործողութիւն է կատարուած, ալկոլ տալիս ենք: Բայց երբոր իմանում ենք թէ մին նիւթ դարմանող յատկութիւններ ունի, զրանից չէ հետևում թէ նա միշտ օգտակար է լինելու և թէ նրա սովորական գործածութիւնից որեւէ անպատեհութիւն յառաջ չէ գալու»:

«Ինչ որ է, մեր նիւթին դառնալով, ասում է պրօֆէսորը, ալկոլը թոքախտի առաջ գալուն անտարակոյս նպաստում է»:

Ֆրանսիայի փառքը կազմող պրօֆէսորներից Դէբօլի, Բրուարդէլի և Լանսէրօյի կարծիքները մէջ բերելով, ուզեցինք հաստատել, որ ալկոլականութիւնը պատճառ է դառնում թոքախտի, այս սարսափելի հիւանդութեան: Ալկոլականութեան այս արշաւանքը պէտք է բոլորի աչքին երեի իբրև հասարակական մի մեծ վտանգ և անհրաժեշտ է փորձել և մասսայի մտքի մէջ դրոշմել սա ճշմարտութիւնը՝ թէ այս աշխարհի մէջ միայն ժուժկալ ժողովուրդները ապագայ ունին...

Դօկտ. Կ. Յ. ՓԱՇԱՅԵԱՆ

Թուրքիայի հայոց Պատրիարքի Երջաբերականը եւ որբանոցների վերածույթը արհեստանոցների:

Գաւառական որբանոցներու տեսչութեան պայմանաժամը կըսկսի լրանալ հետզհետէ եւ հարկ կը լինի փակել զանոնք մի առ մի, քանի սպառին բարերարներու սահմանած նպաստներն եւ զազրին ընդհանուր նուիրատութիւնք, որոց արդիւնքով երեսուն եւ չորս որբանոցներ բացուեցան կարօտեալ զաւաններու մէջ: Այս առժամանակեայ հաստատութիւնք պատսպարեցին ու խնամեցին յարգ բազմութիւ անտէր մանուկներ՝ պատուար կանգնելով կարօտութեան դէմ, որու անմուռնչ զոհերը պիտի լինէին այդ մանուկներն, եթէ պետական չնորհներու հետ՝ մեր աղգայնոց ձեռնաւորութիւնք չհասնէին անոնց օգնութեան:

Այլ սակաւն այդ սրբանոցներուն մէջ կան տակաւին անչափահաս ու կարօտ աղաք, արժանի խնամքի ու պաշտպանութեան, կը զանուին դեռ շատեր՝ որ չեն աւարտած արհեստն, զոր կ'ուսանին, հայթայթելու համար իրենց ողբալահիկն, երբ մեկնին որբանոցէն, ուստի հազիւ թէ գաւառներու մէջ լսուած որբանոցներէ ոմանց փակման լուրն, թախանձազիր խնդիրներ կը տեղան ի Պատրիարքարան, երկարաձգելու դեռ անոնց տեսչութեան չըջանն եւ արգելելու այն բազմադիմի անպատեհութիւններն, որ կրնան ծագիլ որբերու լքումէն:

Այսպիսի պարագայից առջեւ փակել յեղսկարծ այդ գթութեան յարկերն եւ ցիր ու ցան վտարել ու իրենց բախտին լքանել այդ մատաղատի մանկտին, մանաւանդ ցուրտ ձմեռով, որ պտտած է արդէն գաւառներն բուքով ու ձիւնով, կարելի չէր, առանց տագնապելու խղճի խայթէ, առանց ծանր պատասխանատւութեան մ'ենթարկուելու Ազգին առջեւ, որ այնքան մեծ զոհողութիւններ յանձն առած էր թշուառութեան ձեռքէն խլելու համար բազդին այդ զրկեալներն, միանգամայն եւ Տէրութեան առջեւ, որ անոնց պաշտպանութիւն հրամայած էր, չնորհելով կարևոր դիւրութիւններն:

Բայց հոգածութեան արժանիներն՝ որբանոցներու պա-

տըսպարեալներն չէին միայն: Անոնցմէ դուրս գտնուող տղաքներն ալ, որ նպաստով կ'ապրէին, պէտք էր դնել այլ եւայնպիսի վիճակի մը մէջ, որ չմնային անդործ եւ ցվերջ կարօտ օգնութեան, այլ կարենային աշխատիլ եւ իրենց ձեռաց վաստակովն հոգալ զիրենք: Իրաց այս վիճակին մէջ կարնոր էր ուրեմն այնպիսի կարգադրութիւն մը, որ զօրէր այդ կրկին պէտքերուն միապէս դարման բերել, եւ նոյն իսկ այնպիսի եղանակաւ մը, որ սատարէր միանգամայն ժողովրդեան ալ ապրուստի միջոցներն ընդարձակելու, ցորչափ կարօտութիւնն համատարած էր, տնտեսական աննպաստ պարագաներու պատճառաւ: Միակ դարման մը կը ներկայանար, այն է՝ գաւառական գլխաւոր կեդրոններու մէջ մնայուն ու կանոնաւոր արհեստանոցներ հաստատել, փոխան առժամեայ որբանոցներու, որ տեւական արգիւնք մը չէին կրնար ունենալ, եւ այս հաստատութեանց մէջ գիշերօթիկ պատսպարելով հանգերձ՝ անչափահաս ու պաշտպանութեան կարօտ որբերն եւ ի մասնաւորի զանոնք՝ որ փակելի որբանոցներէն դուրս պիտի ելնէին, ընդունիլ նաեւ ցերեկեայ՝ ուրիշ գաւառացի տղաքներ, եւ ասոնց ամենուն աովրեցնել, ըստ տեղւոյն պիտանի արհեստներ եւ երկրագործական կարիք գիտելիքներ, առտորական հրապարակներու վրայ խնդրուած շահաւէտ բերքերու մշակութեան համար, եւ այս արհեստանոցներու միջոցաւ ու զանազան կարգադրութեանց ներքեւ միանգամայն երկրագործ դասոյն զիւրութիւններն ընծայել, քաջալերելու համար մշակութեանց նոյն կարիքը ճիւղը՝ Հետեաքար, Նպաստից Յանձնաժողովին հետ համախորհուրդ՝ այս կարկազադութիւնն ընելով, սահմանեցինք՝ յատուկ հրահանգով մը՝ արհեստանոցներու կազմակերպութեան եղանակն ու պայմաններն, եւ որոշեցինք միանգամայն մինչև գարուն յետաձգել փակումն այն որբանոցներուն, որոց պայմանաժամը լրացած էր:

Այս արհեստանոցներն, որք սահմանուած են այսքան էական կարօտութիւն մը լրացնելու, պիտի հաստատուին ու պահպանուին գլխաւորաբար այն կամաւոր նուէրովն, որ ամի ամի Ս. Ծննդեան տօնին առթիւ պիտի հաւաքուի մեր բարեւէր ազգայիններէն: Բարեգործութեանց մէջ ամէնէն քաղցրագոյնն ու հոգեպարարը չէ՞ միթէ, ու նաեւ զերազանցապէս վսեմն, որ զմարդ կը բարձրացնէ դէպի Նախախնամողն տիեզերաց, օգնել ու տէր կանգնիլ որբին ու կարօտ մանուկին, անզօր արարածներ՝ անմեղ, անարատ, որ անկարող են զիրենք պահպանելու աշխարհային աղէտներու դէմ, որ անգիտակ զոհերն կը լինին

բաղդին, որ կը տառապին առանց զանգատելու, որ կը ժպտին՝ արտասուելու ատեն, և հլուժեամբ կը համակերպին ամենայնի, կրելով իրենց հոգւոյն խորն՝ դառնութիւնն իրենց բովանդակ վիշտերուն: Ահա այս դեռատի էակներուն, այս խեղճ պզտիկներուն պաշտպանութեան համար է նուէրն, զոր կը խնդրենք աղերսապին, այս Ս. Ծննդեան հրաշալի տօնին տոթիւ, յանուն մանկացելոյն Յիսուսի, որ այնքան կը խանդաղատէր մանուկներուն վրայ, որ երբ կ'ուզէին հեռացնել զանոնք իրմէ՝ կը կրկնէր սաստելով. «Թոյլ տուք մանկաւոյն դալ առ իս»:

Լի ենք յուսով որ սիրայօժար պիտի պատասխանէք մեր հրաւերին, և հասցնէք մեզ Ձեր նուէրն, առատօրէն և զուարթութեամբ բղիսած Ձեր սիրտէն, վստահ ենք, որ այս կարևոր ձեռնարկին յաջողութեան համար, որով եկի՞ պիտի պսակուի որքոյ պաշտպանութեան գործը, պիտի բերէք մեզ Ձեր օգնութեան բաժինը և անտարբեր չպիտի մնաք այս նոր պէտքին առջև՝ դուք որ, ցարդ չղրացաք օգնել կարօտին և լքեալին, դուք ու չներեցիք Ձեր խղճին անպաշտպան թողուլ անօգնական մանուկը: Գթութեան Տէրն ընդունի Ձեր գթութեան նուէրը, և անոր փոխան հեղու Ձեր վրայ իր բաղմաղեղ բարիքներն ու չնորհներն, և ինքն իր Ամենակալ Աջովն հովանի Ձեր վրայ՝ զերծ պահէ զՁեզ, Ձեր ընտանիքն, Ձեր զաւակներն, Ձեր պարագաներն, ամէն վիշտերէ: «Տուք և տացի Ձեզ»:

Հրահանգ կազմակերպութեան գաւառական ազգային արհեստանոցներու:

Կ Ա Ջ Մ Ո Ւ Թ Ի Ւ Ն

Յօդուած 1.—Գաւառական առժամանակեայ որբանոցներու տեւողութեան պայմանաժամին լրանալովը՝ տակաւին անչափահաս գտնուող որբ և կարօտ մանուկներն իսպառ անխընամ չթողուլ համար Ազգային Պատրիարքարանի կողմէ առաջնորդական գլխաւոր կեդրոններու մէջ՝ ուր որ յարմար դատուի, երկու սեռի աղոց համար՝ ուրոյն արհեստանոցներ պիտի հաստատուին:

Յօդուած 2.—Այս արհեստանոցներու ընդհանուր հասոյթներն են.—¹⁰. Կայսերական կառավարութեան կողմէ կարօտ մանկանց համար զանազան առիթներով չնորհուած նպաստը:

—20. Բարեւէր ազգայնոց կողմէ տրուած տարեկան այն կամաւոր նուէրն, զոր Սրբազան Պատրիարքն ամէն տարի Ս. Ծննդեան տօնին առթիւ կ'ստանայ ուղղակի՝ մասնաւոր կերպերով զիմելով անոնց:—30. Բարեբարներու նուիրած և սահմանած գումարները՝ որքերը որ և է կերպով հոգալու համար:—40. Կտակաւ թողուած ու այլ և այլ միջոցներով ստացուած պատահական նուէրներ:—50. Գաւառական ազգային վարչութեանց և Թաղական խորհրդոց կողմանէ հայթայթուած նպաստներ:—60. Վանքերու տրամադրելի հասոյթներ և մասնաւոր սանատէրերու նպաստն, արհեստանոցներու յատուկ:—70. Եւ վերջապէս արհեստանոցներու արտադրած վաճառքներու զուտ շահն:

Յօդուած 3.—Արհեստանոցներու հասոյթներն կ'ամփոփուին ու կը պահուին Պատրիարքարանի նպաստից Սնուուկին մէջ, որ կը գտնուի արդէն Ս. Պատրիարքին պահպանութեան ներքեւ:

Յօդուած 4.—Արհեստանոցք կը հաստատուին այն ժամանակ՝ երբ տրամադրելի բաւականաչափ հասոյթներ գոյանան, կամ բարերար մը մասնաւոր կարգադրութեամբ կամ առաջնորդական վիճակ մը տեղական միջոցներով ստանձնէ հոգալ ծախքը, առանց պարտք ծանրաբեռնելու Առաջնորդարանին վրայ:

Յօդուած 5.—Այս արհեստանոցներու կազմութեան նպատակն է մասնաւորապէս՝ որք և անտէրունչ մանուկները խնամարկել, և ընդհանրապէս՝ թէ այս կարգի պատասպանալներու և թէ ուրիշ գաւառացի աղայոց ըստ տեղւոյն օգտակար արհեստներ և հողագործական կարեր որ գիտելիքներ սովորեցնել և միջոց ընձեռել անոնց որ անձնական աշխատութեամբ հոգան իրենց ապրուստն, և ըլլան բարի և օգտակար անդամներ Պետութեան և Ազգին:

Յօդուած 6.—Որք և անտէրունչ աղաքներէն որոշեալ թուով մաս մը գիշերօթիկ կ'ընդունուի, որու $\frac{3}{4}$ կ'առնուի վիճակին թեմերէն և $\frac{1}{4}$ -ը ըստ կարգադրութեան Պատրիարքարանի՝ ուրիշ կարօտեալ վայրերէն. իսկ ցերեկեայ կ'ընդունուին այն աղաքներն, որք արհեստանոցի քաղաքին մէջ բնակութիւն ունին:

Եթէ փակուած որբանոցներէ ելնող աղոց մէջ կան այնպիսիք, որ տակաւին կը կարօտին պաշտպանութեան և որ և է արհեստ չեն կրցած սովորել, կը գետնադուին Պատրիարքարանի որոշմամբ՝ յարմար արհեստանոցներու մէջ:

Յօդուած 7.—Արհեստանոցը կը հաստատուին յարմար վայրերու ու շէնքերու մէջ, և որչափ հնար է եկեղեցիին մօտ:

Յօդուած 8.—Գիշերօթիկ տղաք որոշեալ ժամանակներու մէջ կ'երթան տեղւոյն ազգային դպրոցն, նախնական ուսումն ընդունելու, և մնացեալ ժամանակներ կ'աշխատին արհեստանոցի մէջ:

Մ Ա Տ Ա Կ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ւ Ն

Յօդուած 9.—Գաւառական արհեստանոցը կը մատակարարուին յատուկ Հոգաբարձութեանց ձեռքը, որք վիճակին Առաջնորդին կամ Տեղապահին նախագահութեան ներքե կը բազկանան հինգ անգամէ, որոց մին քահանայ պէտք է լինի, իսկ անգամոց երկուքը քահանայ կը լինին, երբ ազջըկանց յատուկ է արհեստանոցն:

Հոգաբարձութեանց անդամք պիտի լինին իրենց ուղղութեամբ և պատուաւորութեամբ ծանօթ սնձեր, ըստ բաւականին լարեկեցիկ վիճակի մէջ, և դատաւարատութան ներքե չինկած:

Յօդուած 10.—Հոգաբարձութիւնը կ'ընտրուին Պատրիարքարարէն՝ ընտրելեաց երկպատիկ ցանկի մը վրայ, զոր Առաջնորդն յայտադրով մը կը ներկայացնէ, Գաւառական վարչութեանց հետ համախորհուրդ, տալով կարևոր ծանօթութիւններն ընտրելեաց նկատմամբ: Սակայն Պատրիարքարանն կրնայ նոյն ցանկէն դուրս՝ անձեր ալ ընտրել:

Յօդուած 11.—Հոգաբարձութիւնը կը պարտաւորուին մատակարարել արհեստանոցն որոշեալ ելմտացոյցին համաձայն, առանց ընաւ բաց կամ պարտք թողլու, հայրաբար խնամել տղաքն, վարել արհեստանոցի գործառնութիւններն, ընտրել սրբերն և արհեստանոցի աշակերտող տղաքները, որոշել պաշտօնեաներն ու արհեստի վարպետներն և հըսկել անոնց ընթացքին վրայ:

Յօդուած 12.—Արհեստանոցի պաշտօնակալաց ընտրութիւն հոգաբարձութեան կողմէ կը տեղեկագրուի Ազգ. Պատրիարքարանի: Նոյն պաշտօնակալը չեն կարող միջամուխ լինել տեղական ազգային գործելու և Պատրիարքարանի որոշմամբ կը դադրին անմիջապէս պաշտօնէ, երբ տեղի տան որ և է գայթակղութեան ու վէճի:

Յօդուած 13.—Հոգաբարձութիւնը ամեն տարեգլուխ կ'ուղարկեն ի Պատրիարքարան նոյն տարւոյ հաշուեցոյցն ու յաջորդին ելմտացոյցն՝ յատուկ տեղեկագրով մը, որով պէտք է պար-

ղուի հաստատութեան ընդհանուր վիճակը, և ձեռք բերուած արդիւնքն:

Յօդուած 14.—Հաստատութեան բոլոր ծախքերն տեղի կ'ունենան Հոգաբարձութեան որոշմամբ և նախագահին հրամանաւ: Հոգաբարձութեան անդամք չենք կրնար այս հաստատութեանց հետ իրենց անձնականին համար առևտուրի յարաբերութիւն ստեղծել ուղղակի և անուղղակի միջոցներով, նոյնպէս չեն կարող թոշակաւոր պաշտօն վսրել հաստատութեան մէջ:

Յօդուած 15.—Հոգաբարձութիւնը ուղղակի կը թղթակցին Պատրիարքարանի հետ, և իրենց գրութիւնք նախագահին և բոլոր անդամոց ստորագրութիւնը պէտք է կրեն: Նախագահը կը պարտաւորի իրեն զրկուած գրութիւն, զրամ և այլ ինչ անմիջապէս հաղորդել Հոգաբարձութեան:

Յօդուած 16.—Հոգաբարձութեանց անդամք ոչ առանձինն և ոչ ալ առանց նախագահի չեն կարող գործեր տնօրինել կամ հրահանգներ տալ հաստատութեան պաշտօնէից, այլ կը պարտաւորին խորհրդակցութեամբ տալ որոշումներն, արձանագրելով ատենագրութեանց մէջ, և նախագահին միջոցաւ գործադրութեան դնել:

Յօդուած 17.—Հոգաբարձութեան պաշտօնն երկու տարի կը տևէ: Պատրիարքարանն իրեն կը վերապահէ վերահաստատել զանոնք, երբ յարմար դատի:

Յօդուած 18.—Հոգաբարձութիւնն կամ անդամներէն ոք երբ թերանայ իր պաշտօնին մէջ և զեղծումներ գործէ, Պատրիարքարանը իրողութիւնը ստուգելէ ետքը՝ կը զադրեցնէ զայն պաշտօնէ:

Ա Ր Հ Ե Ս Տ Ա Կ Ա Ն Կ Ի Թ ՈՒ Թ Ի Ի Ն

Յօդուած 19.—Արհեստանոցներու մէջ յատուկ սննեակներ պիտի յատկանան, իրենց կարևոր կազմուածքով, ուր տղայք՝ գիշերօթիկ և ցերեկեայ՝ որոշեալ ժամերու մէջ պիտի պարապին արհեստ սովորելու, մասնագէտ վարպետներու միջոցաւ:

Յօդուած 20.—Արհեստներու տեսակն և որքանութիւնը հոգաբարձութիւնը կը սահմանէ ձեռնհաս անձերու հետ խորհրդակցելով, և Պատրիարքարանի որոշման ենթարկելէ ետքը՝ կ'սկսի գործադրութիւնն: Հոգաբարձութիւնը կը պարտաւորին նիւթական միջոցներու ներած չափով ընտ-

ընկ այնպիսի արհեստներ, որոց արտադրութիւնը ոչ միայն տեղական սոլառմանց յատուկ լինին, այլ և ուրիշ տեղեր արտածուելով՝ կարենան շահու աղբիւր մը դառնալ ժողովրդեան:

Յօդուած 21.—Պատրիարքարանն կը սահմանէ՝ Հոգաբարձութեանց յայտագրին վրայ՝ արհեստական ճիւղին նիւթական պիտոյից համար յատուկ դրամազուլս մը: Այս դրամազուլսը անկորուստ պէտք է պահուի, իսկ արտադրութեանց վաճառումէն վոյսցած շահուն կէսը կը կցուի դրամազլլսին և միւս կէսը կը պահուի, մէկ-մէկ նպաստ տրուելու համար արհեստաւոր կարօտ տղոց՝ իրենց արհեստին վերաբերող գործիքն զնելու համար, երբ արհեստն աւարակելով գործելու կ'ենեն:

Յօդուած 22.—Հոգաբարձութիւնը կը պարտաւորին արհեստանոցներու նիւթական պիտոյից համար զատ հաշիւ բռնել Պատրիարքարանի կողմէ ցոյց արուած դրութեամբ ու ամէն երեք ամիս՝ հաշուեցոյցն հաղորդել Պատրիարքարանի, տարին մի անգամ զրկելով նաև արտադրութեանց նմոշներն, անոնց իսկական ծախուց հաշուեղորով:

Յօդուած 23.—Հոգաբարձութիւնը կրնան արհեստարաններու մէջ պատրաստելի վաճառքներու համար ուղղակի յանձնարարութիւններ ընդունիլ և գործադրել, Պատրիարքարանի յայտագրելով ի տեղեկութիւն:

Յօդուած 24.—Արհեստաւարտ տղոց տեղ անմիջապէս նորերն կ'առնուին և մեկնողներու անուններն կը ծանուցուին Պատրիարքարանի կարեօր պարագաներով:

Յօդուած 25.—Արհեստանոցի աշակերտաց մէջ եթէ գտնուին այնպիսիք, որ գերազանց արհեստի ընդունակութիւն ցոյց տան ու ապագայ խոստանան, Հոգաբարձութիւնը կը յայտագրէ անոնց անունը Պատրիարքարանի, որ զանոնք կը զրկէ ուր անկ է՝ կատարելագործելու համար իրենց արհեստն, եթէ նիւթական միջոցները ներեն:

Յօդուած 26.—Հոգաբարձութիւնը կը պարտաւորին ուսումնասիրել այն միջոցներն, որոնցմով հնարին կրնայ լինել գիւղացի ժողովրդեան երկրագործական աշխատութիւններն արդիւնաւորել և հողին տեսակին ու կլիմայի համաձայն՝ շահաւէտ բերքերու մշակութիւնը քաջալերել, որպիսիք են՝ ատիրոն, բամբակ, թիթենի (չերամի), շուշմայ, կտաւատ, կանեփ, եւ ամէն տարի ուրոյն տեղեկագրով մը ներկայացնել Պատրիարքարանի իրենց ուսումնասիրութեան արդիւնքը և տեղւոյն առեօրական գործոց վիճակը, որպէս

զի կարելիութեան սահմանին մէջ Պատրիարքարանի կողմէ ընծայուին կարևոր դիւրութիւններն՝ հողագործական աշխատութեանց արդիւնաւորման համար:

Յօդուած 27.—Այդ նպատակաւ հողագործական վարժութիւնք տեղի պիտի ունենան արհեստանոցներու մէջ, և այն պարագային մէջ երբ յարմարութիւն չգտնուի, տեղւոյն մօտակայ վանքերու հողերն ու արտերն այդ նպատակին պիտի գործածուին՝ յատուկ կարգադրութեամբ:

Նպաստից Յանձնաժողովոյ հետ խորհրդակցութեամբ կազմուած եւ հրամայուած ի գործադրութիւն:

Ի Պատրիարքարանի, 20 Նոյեմբեր 1901.

Պատրիարք Կոստանդնուպօլսոյ

ՄԱՂԱՔԻԱ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

Ն Ա Մ Ա Կ Պ Ա Ր Ս Կ Ա Ս Տ Ա Ն Ի Ց

Թէհրան, չունուարի 9.

Պարսկա-Հնդկաստանի առաջնորդ՝ Սահակ արքեպիսկոպոս Այվատեան՝ երկու չաքաթէ աւելի է արդէն կը գտնուի Թէհրան։ Թէհրանցիները՝ իբրեւ վաղածանօթ բարեկամի մը, մեծ շքով գիմարեցին Այվատեան սրբազանը կառավարական շքանէն ալ լաւ ընդունելութիւն եղաւ։ Այվատեան սրբազանը այստեղ կը մնայ երկու ամիսի չափ։ Պէտք է գլուխ հանէ կարգ մը գործեր, որոնք բացարձակապէս անյետաձգելի են։ Օրինակ, պէտք է աւարտել տայ Հասանապատի թաղին մէջ գտնուող կիսակառոյց ուսումնարանը, որուն հիմնադրութիւնը Թէհրանցիները իրեն կը պարտին։ Պէտք է նոյնպէս կազմակերպէ Թէհրանի Խնամակալուհեաց ընկերութիւնը, որ լուծուած վիճակի մէջ է։ Թէհրանի տիկիւնները՝ որ ինչպէս ինձի հաւաստեցին, անցեալին մէջ բաւական գործօն դեր մը կատարած են իրենց սեռի կրթութեան գործին մէջ, այսօր բոլորովին ձեռնպահ կը մնան։ Ասիկա չիտակը պատիւ չի բերեր իրենց մայրաքաղաքացիութեան տիտղոսին։ Մայրաքաղաքը՝ ընդհանրապէս գործունէութեան օրինակը կուտայ գաւառներուն, քաղաքներուն։ Թէհրանի հայ տիկիւնները այս իրողութիւնը մոռցած ըլլալ կը թուին։

Ես իրենց մէկ բան պիտի ըսէի. Եւրոպայի մէջ կիները հրաշք են գործում. անոնք այնքան խանդավառութեամբ մասնակցում են հասարակական կեանքին, անոնք այնքան ազդեցիկ դեր են խաղում, մինչև հիմա տղամարդերու մենաշնորհն եղած հարցերու մէջ, որ սկսած են իրենց կարգ մը արդար իրաւունքները բարձրաձայն պահանջել ու... ձեռք բերել։

Շատ կիներ չեն գիտեր անշուշտ որ Բարիզի մէջ «ճիւղնա» անուն թերթ մը կը հրատարակուի, որուն ոչ միայն վարիչները, խմբագիրները, աշխատակիցները, այլ և գրաչարները ամբողջ կիներ են. Լոր Գոսնի խմբագրատունը մոռնէք, մէկ այր մար-

դու չէք հանդիպիր: Կը տեսնէք ձեր բարիզցի քոյրերուն յառաջ-
դիմութիւնը: Ու պէտք է ձեզի ըսեմ թէ Ֆոօնսը անկարելի,
անյայտ թերթ մը չէ, անիկա ոչ միայն կ'իներ-շրջանակին մէջ
մեծ ազդեցութիւն ունի, այլ և հասարակաց կարծիքին վրայ:
Ֆոօնսի խմբագիրներուն նպատակն է կ'իներն ալ գիտակից,
հասկացող դարձնել կեանքի մեծ խնդիրներուն, իրենց սեռին
ձայնն ալ լսելի ընել մարդկութեան ճակատագրին հետ կապ
ունեցող հարցերուն մէջ: Կ'ինը՝ մինչև հիմա անխօսուկ գերին
եղած էր մարդուն. այժմ կ'ուզեն զայն իր արժանի դիրքին
բարձրացնել, ընել մարդուն հաւասար: Բայց այդ նպատակին
հասնելու համար կ'իները պէտք է շարժուին. տանը մէկ ան-
կիւնը աս կամ ան բամբասկով, այս կամ ան կնոջ արդուդար-
դին վրայ շաղակրատելով չէ որ անոնք մարդերուն յարգել պի-
տի տան իրենց իրաւունքները. անտարակոյս իրենց պահանջ-
ները շատ արդարացի են, բայց այս աշխարհին մէջ արդարու-
թիւնն իր կողմը ունենալ չի բաւեր, պէտք է ոյժ ցոյց տալ
անոր յարգանքը հարկադրելու համար: Ու Եւրոպայի և Ամերի-
կայի մէջ՝ տկար սեռը, անհերքեցէք, գեղեցիկ սեռը պիտի ըսէի,
այս ճամարտութիւնը ըմբռնած է ու այս վայրկեանիս նոյն իսկ
քաղաքական իրաւունքներ կը վայելէ:

Հիմա սթափելու կարգը եկած է թէհրանցի տիկիններուն.
թաւրիզուհիները սկսած են շարժիլ:

Այս տարի թէհրանցիները թատերական ներկայացում
ըլլալով Նոր Տարիի առթիւով Հայկազեան ուսումնարանին կապ-
մակերպած մանկական ներկայացումը տեսան. պէտք է ըսել
թէ այդ ներկայացումը վատ չանցաւ. միայն թէ անհրաժեշտ է
մանկական թատրոնի սէպէտթուա կազմել. մեր թատերա-
գիրները այս տեսակ շատ թոյլ են մշակած:

Թէհրանցիները ընդհանրապէս թատրոնի սիրողներ են.
գէթ այս երեսիթը միտիթարական է:

Յառաջիկայ չաբաթ՝ յունուար 12-ին՝ «Ծիածան» գրական
ընկերութիւնը պէտք է ներկայացնէ Արշակ Բ.:

Փորձ է անում համեստ չափերով նաև ժողովրդական
համալսարանի մը հիմքը դնելու համար:

Դասախօսութիւնները պիտի կատարուեն թէ Տարվէզէ
Ղազուխի և թէ քաղաքին վերի մասին՝ Հասանապատի թաղին
մէջ: Թէհրանցիներու ցոյց տալիք համակրութենէն կախում ու-
նի գործը ընդարձակել. օրինակ, դասախօսութեանց սրահին
մօտ հիմնել մատենադարան-ընթերցարան մը, ուր դասախօս-
ները և ունկնդիրները իրենց արամադրութեան տակ գտնեն ոչ
միայն մեր հեղինակներու աշխատութիւնները և մեր կարեւոր

չրագիւրներն ու հանգէսները, այլ և օտար՝ մասնաւորապէս ֆրանսիական՝ գրականութեանց գլուխ-գործոցները և օգտակար հրատարակութիւնները:

Գալով դպրոցական գործին, աւելի լաւ է որ այս հարցը չչօշափենք, որովհետեւ պարզապէս յուսահատական է: Ձգեցէք երկրորդական ուսումնարանը, թէհրանցիները կանոնաւոր նախնական դպրոց մը ալ չունեն. ամեն բան թերի է ու շատ գէշ կազմակերպուած. հինգերորդ բաժանմունքի աշակերտները, այսինքն գալ տարուան շրջանաւարտները, ոչ միայն սող մը անսխալ չեն կարող գրել, այլ իրենց կարգացած հայերէնը... չեն հասկնար: Հետևութիւնները ալ դուք ինքնորդ հանեցէք: Այս խնդրին վրայ ուրիշ անգամ կը գրեմ երկարօրէն:

Դպրոցին նիւթական վիճակը այնքան ալ ապահով չէ. չարիքին գլխաւոր պատճառներէն մէկը այս իրողութեան մէջ պէտք է փնտռել: Բացի քանի մը հոգիներէ՝ որոնց մէջ պէտք է մասնաւորապէս յիշել բարի ու սլառուական հայ մը՝ ամիրթուման Մարտիրոս խանը, որուն քսակը միշտ բաց է ու առատօրէն բաց՝ դպրոցական ու հասարակական հիմնարկութիւններու համար, բացի խումը մը օգնողներէ՝ Հայկազեան ուսումնարանը ոչ մէկ աջակցութիւն կը դանէ թէհրանցի հասարակութենէն: Թէհրանցիները կասկած անգամ չունին թէ իրենց ապագան, նոյնիսկ իրենց գոյութիւնը իրենց դպրոցներէն ու միմիայն դպրոցներէն կախում ունի: Այսու հանգերձ արդար ըլլալու համար պէտք է աւելցնել որ թէհրանի հայութիւնը՝ բաղդատմամբ Պարսկաստանի միւս կարեւոր քաղաքներու՝ ինչպէս է Թաւրիզի և Նոր-Ջուղայի հայ բնակչութեան՝ նուազ բաղմամբօրէ է ու նուազ կարեւոր: Հայութեան կենտրոններէն՝ անհրաժեշտ է որ նպաստեն իրենց պարսկահայ եղբայրներու կրթական գործին: Ամբողջ հայութիւնը բարոյական անյետաձգելի ու գերագոյն պարտքն ունի ամուր ու լայն հիմքերու վրայ կազմակերպելու Պարսկաստանի մէջ դպրոցական գործը: Ո՛ւր են մեր եկեղեցի շինող ու քարոզի գրքերու վրայ մրցանակ հաստատող կրեստանները:

ՏԻԳՐԱՆ

Պ Ա Տ Ա Ս Խ Ա Ն Ն Ե Ր

Քաղախանի. պ. 2. Մ.-Ղ.—Ձարժէ զրանց հետ զլուի դնել
Ն.-Նախիջեւան. պ. Գ. Ձ ա լ խ ու շ ե ա ն ի ն.—Ուղարկէք. համաձայն
ենք:

Պեհերբուրգ. լ ե ո ն ա չ ի ն ի ն ս տ ի տ ու տ ի հ ա չ ու ս ա ն ո ղ-
ն ե Ր ի ն.—Ձրի ոչ ոքի չենք ուղարկում:

Անվեր. Մ. Կ ե Ր-ին.—Ձեր ուղարկած զումարից 12 ո. զուրս զալով
«Մուրճի» ալս տարուալ բաժանորդագինը, մնացած 68 ո.
յանձնեցիք պ. Գալստեանին:

Վ Ր Ի Պ Ա Կ Ն Ե Ր

«Մուրճի» դեկտեմբերի համարում մտել են ի միջի այլոց
հետեւեալ վրիպակները.

երես	տող	սպուած է	պէսf ք լինի
3	21	фалсификаціи	фальсификаціи
4	3	սենդիկատ	սինդիկատ
4	11	կշմարիտ	ճշմարիտ
220	8	Արիսինակալա	Արինակալա
"	19	Պրօիզադնալա	Պրօխադնալա
221	33	Վաղարշապատ 1	Վաղարշապատ 9

«Մուրճի» № 11-ում.

253	24	«Աղբատախանամ»	«Խնայողական»
-----	----	---------------	--------------

ԲԱՅՈՒԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Ա Ր Տ Ե Մ Ի Ս

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ ԱՄՍԱՀԱՆԴԵՍ

Օրդան XX-րդ դարու հայ կանանց

Պիտի հրատարակուի իր սեփական տպարանին մէջ: Բաղկացած
32 մեծադիր երկսխանակ էջերէ:

Տէր և տնօրէն-խմբագիր՝

Օր. Մանի Պէլլերեան

Ե գ ի պ ա ո ս ի հ ա մ ա ր

Տարեկան բաժանորդագրինն է. զըշ. ողջ . . . 40

Վեցամսեայ 25

Ա Ր ա ա ա հ մ ա ն ի հ ա մ ա ր

Տարեկան Փրարկ 12

Հասցէն՝ Rédaction de la Revue des Femmes Arméniennes
„Artémis“, le Caire, Egypte.

«ՄՈՒՐՃ» ամսագրի հետեակ թուականների ամփոփ հա-
մարները կարելի է ձեռք բերել, վճարելով՝

1899	Թուի համար 1	ո. 50 կոպ.		Դ ի մ ե լ՝	Тифлисъ, Вельяминов-
1890	»	» 1 » 50 »			ская, № 24, Ф. Я. Варта-
1891	»	» 5 » — —			тазарянцу.
1892	»	» 5 » — —			Ճանապարհածախսը գնողի
1893	»	» 5 » — —			վրայ է:
					4—2

ՄԱՅՐԵՆԻ ԽՕՄՔ

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԵԱՆ ՁԵՌՆԱՐԿ

կրսեւ դասարանների համար

համառօտ բառգրքով:

Կազմեցին

Կ. ԿՈՒՍԻԿԵԱՆ և Լ. ՍԱՐԳՍԵԱՆ

Գիշն է 70 ԿՈՊԷԿ

Դիմել՝ Թիֆլիս, Կենտրոնական և «Գուտտենբերգ»
դրավճառոյները:

ԲԱՑՈՒԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄՇԱԿ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ

(30-րդ տարի)

ԱՌԱՋԻԿԱՅ 1902 ԹՈՒԱԿԱՆԻ

«Մշակը» հրատարակուելու է նոյն պրոգրամով եւ նոյն ուղղութեամբ

Ամեն օր բացի տօնօրէն յաջորդող օրերէց:

Բաժանորդագիրը. «Մշակի» տարեկան գինը 10 ռուբլի է, տասնեւէկ եւ տասն ամսուանը՝ 9 ռ., ինն եւ ութ ամսուանը՝ 8 ռ., եօթն ամսուանը՝ 7 ռ., վեց ամսուանը՝ 6 ռ., հինգ ամսուանը՝ 5 ռ., չորս ամսուանը՝ 4 ռ., երեք ամսուանը՝ 3 ռ., երկու ամսուանը՝ 2 ռ. եւ մի ամսուանը՝ 1 ռուբլի:

Արտասահմանեան բաժանորդագրութիւն. Ամերիկայի բաժանորդները պէտք է վճարեն տարեկան 7 դոլլար. Եւրոպայի բաժանորդները՝ 30 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 10 ռուբլի:

«Մշակին» գրուել կարելի է Խմբագրասանը (Բաղարնայա եւ Բարօնսկայա փողոցների անկիւն), իսկ Բազում—ն. Դաւթեանի մօտ:

Կայսրութեան ուրիշ քաղաքներից «Մշակին» գրելու համար, եւ առհասարակ նամակներ եւ ծրարներ ուղարկելիս, պէտք է գիմել հետեւեալ հասցեով. ТИФЛИСЪ, Редакция «МШАКЪ», իսկ արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal arménien «MSCHAK».

Յայտարարութիւններն ընդունուում են բոլոր լեզուներով:

Ապառիկ բաժանորդագրութիւն չէ ընդունուում:

ԲԱՅՈՒԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԴՐՈՒԹԻՒՆ

ՊՊԱԶՄԱՎԵՅՈՒՆ

1902 տարւոյ

Կը ծանուցանենք, որ «Բազմավէպը» մեր ժողովրդեան զարգացման եւ յոռաջադիմութեան համար, գրական ամեն մասնաճիւղի վերաբերեալ յօդուածներ կը պարունակէ. եւ առաջիկայ տարեշրջանով մտադիր ենք ընթերցասէր ժողովրդեան պահանջներուն դեռ աւելի կարեւորութիւն տալ:

Կը շարունակենք մեր բաժանորդաց «Գեղունի»-ի եւ «Մխիթար»-այ նման բացառիկ նուէրներ տալ. նմանապէս այդ նուէրները գեղարուեստական գրական տեսակէտով կը ջանանք աւելի հետաքրքրական ներկայացնել:

Այդ բացառիկ նոր պատկերազարդ պրակը կը կրէ իր առաջուան

«Գ Ե Ղ Ո Ւ Ն Ի»

անունը, որ պիտի հրատարակուի «Որբունի»-ի մեծութեամբ, միաթերթ, քառաձալ եռասիւն եւ յատուկ ծածքով:

Եւ այս նորահաստատ գեղարուեստական թերթին ամենէն ուիրական նպատակն է, շարունակաբար, առանց կրօնքի խրտութեան՝ նպաստել ազգիս սովատանջ ծնողազուրկ սաներուն, որոնց խմբադրութիւնս մամուլով եւ ժողովուրդը բաժանորդագրութեամբ պարտական ենք օգնութեան հասնիլ, որչափ որ կարելի է:

«Գեղունին» կը տպենք 3000 օրինակ, եկամուտին կէսը կը յատկացնենք ազգային որբերուն:

Այս նոր թերթը պիտի պարունակէ ժողովրդական ժամանակակից տեղեկութիւններ, հետաքրքրական վէպեր, նշանաւոր ազգայնոց պատկերազարդ կենսագրութիւնը, ազգային եւ օտարազգի նշանաւոր նկարչաց գեղեցիկ դործոց պատկերները, եւ այլն:

Պատկերազարդ «Գեղունի» թերթը կը հրատարակուի երկու ամիսը մէկ անգամ:

Տարեկան բաժնեգինն է 3 ֆրանք. ռուսահայք կարող են յղել 1 ռուբլի եւ 50 կոպէկի նամակադրով: Բազմավէպի բաժանորդք, եթէ կը փափազին չզրկուիլ այդ նուէրէն, կը խնդրենք որ «Բազմավէպի» բաժնեգնոյն (10 ֆր.) հետ, պարզ նամակադրով համար 1 ֆրանք աւելի յղեն. այսինքն 11 ֆրանք (ռուսահայք 4 ռուբլի եւ 50 կոպէկի նամակադրով):

Ով որ «Գեղունի» թերթին համար հայ գեղարուեստի վերաբերեալ պատկերներ, կամ տեղեկութիւններ յղէ, նոյն պրակը ձրի կը ստանայ:

Մեր հասցէն. Rédaction de la Revue «BAZMAVEB»
(St. Lazare)
VENISE
(Italie)

Հ Ր Ա Ի Է Ր Բ Ա Ժ Ա Ն Ո Ր Դ Ա Գ Ր Ո Ի Թ Ե Ա Ն

1902 թ.

„ՀԱՆԴԵՍ ԱՄՍՈՐԵԱՅ“

Ո Ի Ս Ո Ի Մ Ն Ա Թ Ե Ր Թ

16-րդ տրամ

Կը հրատարակուի նոյն ծրագրով եւ նոյն ուղղութեամբ ամեն ամսոյ սկիզբը:

«Հանդէս Ամսորեայ» ուսումնաթերթը պիտի բովանդակէ այն ամեն հետաքրքրական հմտալից յօդուածները, որ հայ գրականութեան կը հային: Հայ պատմութեան նկատմամբ եղած ուսումնասիրութիւններն անաչառ քննադատութեան պիտի ենթարկէ: Ըստ պարագայի՝ բանասիրութեան եւ լեզուաբանութեան մասն աւելի պիտի ընդարձակուի: Հայ ուսման եւ հայ լեզուին վերաբերեալ ամեն ազգային եւ օտարազգի գիտնական բանասէրներու յօդուածները, որ կերպով մը հայ ազգին, հայադիտութեան հետ առնչութիւն ունին, պիտի հրապարակէ:

Թերթիս բովանդակութիւնն ինքնազիր պիտի ըլլայ մեծաւ մասամբ, բայց թարգմանութիւնքն ալ պիտի չստկարէ, գերմանական գրութիւններն ի մասնաւորի, որ ո՛ր եւ է կերպով հայ անուան հետ կապակցութիւն ունին:

Ուսումնաթերթիս մէջ համով-հոտով «Գրական թղթակցութիւններ» վերնագրին տակ նոր բաժին մը պիտի բացուի: Պիտի շարունակուի «Ծագկէփունջ», «Գրական հրապարակ» ընդհ. տեսութեան երբեմն երբեմն տեղի տալով: Պիտի ջանանք նոր գիւտեր, օգտակար գիտելիքներ գիտական նորութիւններով դասակարգ մը գոհացընել:

Խմբագրութեան զրկուած ամեն գրքերու վրայ քննադատական համաժող կա՞ր ընդարձակ տեղեկութիւն պիտի տրուի: Քաղաքական տեսութիւնը նոյն ընդարձակութեամբ կը շարունակուի:

Թերթիս ծածկը պիտի զարգարուի ազգային թերթերու բովանդակութենէն քաղուած միայն ազգային նիւթերով: Հունգարահայոց Armenia թերթին բովանդակութիւնն ալ պիտի դընենք: Յառաջ պիտի տանինք նոյնպէս Թղթակցութիւնը հանդիպիս մեր բաժանորդաց անձուկ կապը: Իսկ գրական հարցմանց երբեմն աւանձին յօդուածներով պիտի պատասխանենք:

Խմբագրութեան հասցէն—A la Rédaction de Revue «Hantesse», Vienne (Autriche) VII/2 Mechitharistengasse 4.

ОТКРЫТА ПОДПИСКА НА ЕЖЕМЕСЯЧНЫЙ НАУЧНО-ЛИТЕРАТУРНЫЙ ЖУРНАЛЪ

ГОДЪ III. КАВКАЗСКІЙ ВѢСТНИКЪ 1902 г.

„Кавказскій Вѣстникъ“ даетъ ежегодно около 3,000 страницъ оригинальныхъ и переводныхъ статей съ арм., груз., татарск., арабск. и съ европ. яз.

УСЛОВІЯ ПОДПИСКИ:

	въ годъ— $\frac{1}{2}$ года	
Для городскихъ подписчиковъ.	9 р.	5 р.
Для иногородныхъ.	10 р.	6 р.

Разрѣчка доуказывается для учебныхъ заведеній и учащихся, подписывающихся непосредственно въ конторѣ журнала. Книжнымъ магазинамъ. ком. ск. 10⁰/₀.

Адресъ Редакціи и Конторы: Тифлисъ, Тургеневская, № 11. Подписка принимается во всѣхъ книжныхъ магазинахъ, въ конторѣ журнала и въ отдѣленіи конторы: Тифлисъ, Голов. пр. № 1) (Книжный маг. Хиделекъ).

Въ числѣ рукописей, имѣющихся въ Редакціи
находятся слѣдующія:

Пастырѣ, повѣсть А. Казбека, съ груз.—Со всѣхъ сторонъ, повѣсть Арбоели, съ груз.—Честь, романъ Ширванзаде, съ арм.—Звница Ока, О. Шапирѣ.—Стихотворенія Ов. Тумацянца, съ арм.—Дитя страданія, романъ Аларкона, съ исп.—Мать и сыновъ, драмат. этюдъ кн. Ил. Г. Чавчавадзе, съ груз.—Мемуары кн. Андроникова (1811 г.).—Максъ Мюллерѣ, Бердяева.—Воспоминанія офицера генеральнаго штаба, С. Кишмишева.—Обычное право у казаковъ, А. Передѣльскаго.—Турецкій театрѣ, Эр. Росси, съ итал.—Вахтангъ VI и Петръ Великій, В. Романовскаго.—Обычное семейное право у армянъ, Самуельяна.—Вліяніе Византии на грузинское законодательство, Н. Тавдгиридзе.—Азіатская академія, проекты Кера и Гр. Уварова.—Мемуары Л. Исарлова.—Матеріалы для исторіи Эчмиадзинскаго патріаршаго престола.—Очерки по крѣпостному и кр. реформѣ въ Грузіи, А. Кипшидзе.—Григорій Нарекскій, этюдъ Чобаньяна.—Елисаветпольская губернія, впечатлѣнія и воспоминанія, І. Сегаль.—Письма и записки нѣкоторыхъ кавказскихъ дѣятелей, а также Ренана, Мопасана, В. Гюго, Шпеннгауера и др.

Полный экземпляръ „Кавказскаго Вѣстника“ за 1900 годъ можно получить въ конторѣ журнала за 11 р.; за 1901 г.—10 р.

Годовые подписчики получаютъ въ 1902 г. приложеніемъ къ „Кавказскому Вѣстнику“ романъ М. С. Хатисовой **ПО НОВОМУ ПУТИ.**

Редакторъ-издатель В. Д. КОРГАНОВЪ.

Открыта подписка на 1902 годъ.

„ТИФЛИССКІЙ ЛИСТОКЪ“

(годъ изданія XXV й)

въ 1902 году, какъ и раньше, будетъ выходить ежедневно, но
въ значительно **УВЕЛИЧЕННОМЪ ФОРМАТѢ.**

Увеличить размѣры газетнаго листа до формата „Русскихъ Вѣдомостей“, редакция ежедневно будетъ давать подписчикамъ приблизительно на 4 столбца или на 600 строкъ газетнаго матеріала болѣе, чѣмъ до сихъ поръ, получивъ такимъ образомъ возможность одинъ изъ отдѣловъ газеты, до нынѣ являвшіеся, за отсутствіемъ мѣста, случайными,—вести регулярно „Обзоръ печати“, журнальное обозрѣніе, беллетристика и пр.), а другіе отдѣлы (внутренней и иностранной жизни и др.)—значительно расширить.

Особенное же вниманіе редакціи будетъ обращено на развитіе отдѣла корреспонденцій, чтобы газета могла явиться возможно полной выразительницей нуждъ закавказскихъ провинцій, безъ ущерба однако отдѣлу тифлисской жизни, на который и въ предстоящемъ году будетъ обращено преимущественное вниманіе.

Въ 1902 году газета будетъ заключать въ себѣ слѣдующіе отдѣлы и подъ-отдѣлы:

I. Дѣйствія и распоряженія правительства. II. Телеграммы отъ собственныхъ корреспондентовъ и „Россійскаго телеграфнаго агентства“. III. Статьи по общимъ краевымъ вопросамъ, а также по вопросамъ городского самоуправления. IV. Внутреннія извѣстія. V. Иностранныя извѣстія. VI. Мѣстный отдѣлъ (хроника тифлисской жизни и другихъ мѣстъ Кавказа и Закавказья). VII. Наши корреспонденты. VIII. Злободневные фельетоны („Мысли вслухъ“, „Мелочи жизни“, „Бѣглыя замѣтки“ и др.). IX. Судебный отдѣлъ. X. Письма читателей. XI. Обзоръ печати (общей и кавказской). XII. Фельетоны (городской, обозрѣнія кавказской жизни, популярно научный, историческій, беллетристика, иностранной и внутренней жизни и др.). XIII. Театръ и музыка. XIV. По Россіи. XV. Смѣсь, справочный отдѣлъ и объявленія.

Текстъ газеты по временамъ будетъ иллюстрироваться, а по мѣрѣ надобности будутъ выходить отдѣльныя „ИЛЛЮСТРИРОВАННЫЯ ПРИБАВЛЕНІЯ“.

По понедѣльникамъ подписчикамъ будетъ разсылаться телеграммы съ справочнымъ отдѣломъ и объявленіями.

ПОДПИСНАЯ ЦѢНА

	на годъ.	на 6 мѣс.	на 3 мѣс.	на 1 мѣс.
Съ доставкой въ Тифлисъ .	5 руб.	3 руб.	1 р. 75 к.	— 75 к.
Съ пересылкой иногороднимъ .	7 „	4 „	2 „ 50 „	1 — „
Съ пересылкой за границу .	12 „	7 „	4 „ — „	1 50 „

Подписка принимается только съ 1-аго числа cadaго мѣсяца исключительно въ конторѣ изданія. Головинскій проспектъ, № 3.

Плата на объявленія: для Закавказья за мѣсто, занимаемое строкой петита: на первой страницѣ—10 коп. и на четвертой страницѣ—5 коп.; за объявленія въ предѣломъ Закавказья: на первой страницѣ—24 коп. и на четвертой—12 коп. 3—2

Открыта подписка на 1902 г., IX годъ изданія,

НА ЕЖЕНЕДЕЛЬНУЮ ГАЗЕТУ

„КАВКАЗ. СЕЛЬС. ХОЗЯЙСТВО“

органъ Императорскаго Кавказскаго общества сельскаго хозяйства.

Газета выходитъ по четвергамъ, безъ предварительной
цензуры,

ПО С Л Ъ Д У Ю Щ Е Й П Р О Г Р А М М Ъ:

1. Руководящія статьи по техническимъ и эконоическимъ вопросамъ сельскаго хозяйства Кавказа. 2. Популярныя статьи (оригинальныя и переводныя) по полеводству, молочному хозяйству, садоводству, виноградарству и винодѣлю, шелководству, лѣсоводству, техническимъ производствамъ и проч. 3. Хроника и корреспонденціи. 4. Отчеты хозяевъ о произведенныхъ ими въ своихъ хозяйствахъ опытахъ и наблюденіяхъ. 5. Обзоръ литературы, русской и иностранной, по вопросамъ, относящимся къ Кавказу. 6. Сельско-хозяйственныя статистическія и рыночныя свѣдѣнія о производствѣ и потребленіи сельско-хоз. продуктовъ, о видахъ на урожай, о цѣнахъ на продукты; тарифы. 7. Правительственныя распоряженія. 8. Протоколы, доклады и отчеты общества и его органовъ. 9. Критика и библіографія. 10. Вопросы и отвѣты. 11. Сельско-хозяйственный календарь. 12. Домоводство. 13. Справочный указатель. 14. Смѣсь. 15. Метеорологическія наблюденія. 16. Объявленія.

ЗАДАЧА ГАЗЕТЫ заключается въ установленіи болѣе живой и тѣсной связи между обществомъ сельскаго хозяйства и хозяевами Кавказа, съ цѣлю, во первыхъ, совмѣстной разработки сельско-хозяйственныхъ вопросовъ Кавказа и, во вторыхъ, распространенія среди населенія необходимыхъ сельскохозяйственныхъ знаній.

Въ отдѣлѣ „Вопросы и отвѣты“ газета, при содѣйствіи спеціалистовъ, будетъ своевременно давать хозяевамъ отвѣты на тѣ вопросы, съ которыми они будутъ обращаться въ редакцію или общество сельскаго хозяйства.

Подписная цѣна съ доставкой и пересылкой: на годъ—4 руб., полгода—2 руб., $\frac{1}{4}$ года—1 руб. и 1 мѣсяць—40 к.

Подписка принимается въ Тифлисѣ, въ бюро Импер. Кавк. общ. сел. хоз., Баятинская ул., собственный домъ.

Отвѣтственный редакторъ А. А. Калантаръ.

IV годъ
изданія

ОТКРЫТА ПОДПИСКА

IV годъ
изданія

на 1902 г.

НА ГАЗЕТУ

„НЕФТЯНОЕ ДѢЛО“

Изданіе Совѣта съѣзда нефтепромышленниковъ въ Баку.

Выходитъ два раза въ мѣсяцъ по слѣдующей программѣ:

I. Узаконенія и распоряженія Правительства, касающіяся нефтяной промышленности. II. Само-стоятельныя статьи, посвященныя нефтяной промышленности и другимъ связаннымъ съ нею вопросамъ, каковы: судоходство, пути сообщенія, тарифы, кредитъ и т. п. III. Хропика нефтяного дѣла: буреніе, добыча нефти, заводская ея переработка, вывозъ и торговля нефтяными продуктами. IV. Новосты техники нефтяного дѣла. V. Статистика нефтяного дѣла. VI. Обзоръ печати свѣдѣнія и мнѣнія другихъ изданій по вопросамъ нефтяной промышленности и ихъ критическая оцѣнка. VII. Корреспонденціи и телеграммы изъ нефтяныхъ районовъ и центровъ нефтяной торговли. VIII. Нефтяная биржа, цѣна на нефтяные продукты, состояніе рынковъ, акцій нефтепромышленныхъ обществъ и обіи бржевыя свѣдѣнія. IX. Положеніе, нужды и статистика рабочаго населенія и служащихъ бакинскаго промысловаго района. X. Несчастные случаи и пожары на нефтяныхъ промыслахъ, заводахъ, складахъ, станціяхъ, пристаняхъ, судахъ и поѣздахъ. XI. Отчеты нефтепромышленныхъ фирмъ. XII. Библиографія: рецензіи о книгахъ и статьяхъ по нефтяной промышленности и вопросамъ, имѣющимъ связь съ нею. XIII. Смѣсь: мелкія новости изъ нефтяного міра. XIV. Отчеты о съѣздахъ нефтепромышленниковъ. XV. Представительская дѣятельность Совѣта съѣзда нефтепромышленниковъ: ходатайства, отзаны, мнѣнія и переписка Совѣта по вопросамъ и нуждамъ нефтяной промышленности съ правительственными и общественными учрежденіями. XVI. Хозяйственная дѣятельность Совѣта по благоустройству бакинскаго промысловаго и заводскаго районовъ: врачебное дѣло, народное образованіе, пути сообщенія, осущеніе промысловъ, пожарное дѣло, общественныя сооруженія, приходъ и расходъ суммъ и проч. XVII. Объявленія о предметахъ, имѣющихъ связь съ нефтепромышленностью.

Подписная цѣна съ доставкой:

на годъ 10 р., на 6 мѣсяцевъ 6 р., на 3 мѣсяца 4 р.

Подписка принимается въ гор. Баку, въ редакціи, въ помѣщеніи Совѣта съѣзда нефтепромышленниковъ.

Объявленія принимаются тамъ-же.

Редаторъ П. О. Гукасовъ.

ОТКРЫТА ПОДПИСКА НА 1902 Г.
НА ЕЖЕДНЕВНУЮ ПОЛИТИЧЕСКУЮ И ЛИТЕРАТУРНУЮ
ГАЗЕТУ

АРГОНАВТЪ

Два раза въ недѣлю номера «Аргоната» выходятъ съ
иллюстраціями.

ПОДПИСНАЯ ЦѢНА: съ пересылкой и доставкой;
годъ 7 р., 6 мѣсяцевъ 4 р., въ Тифлисъ 5 р., и 6 мѣся-
цевъ 3 р.

Годовые подписчики БЕЗПЛАТНО получаютъ, въ
видѣ приложенія, собраніе сочиненій Н. В. ГОГОЛЯ, въ
3-хъ томахъ, со множествомъ иллюстрацій, изданіе „На-
родная Польза“, которое выйдетъ въ свѣтъ въ Петербургѣ
21 февраля 1902 года и будетъ выданъ тифлисскимъ и ба-
кинскимъ подписчикамъ въ первой половинѣ мар-
та 1902 г., а остальнымъ подписчикамъ Закавказья—выс-
ланъ почтой.

Подписка принимается въ Тифлисъ, Головин-
скій, № 14, и въ отдѣленіи конторы, Головинскій № 3,
въ магазинѣ С. Маркианца; въ Баку Горчаковскій, д.
Татіева, въ магазинѣ Шрейбера.

Редакціонныя письма, статьи и сообщенія просятъ
адресовать на имя Ивана Григорьевича Хачатурова.

Съ разрѣшенія главнаго управленія по дѣламъ печати,

ПОНИЖЕНА ПОДПИСНАЯ ПЛАТА

— НА —

ежедневную полит. и литер. газету

„НОВОЕ ОБОЗРѢНІЕ“

Какъ для городскихъ, такъ и для иногородныхъ подписчиковъ подписная плата: за годъ—7 р., за полгода—4 р., 3 мѣс.—2 р. 50 к., 2 мѣс.—2 р., 1 мѣс.—1 р., отдѣльный № въ Тифлисѣ—3 коп., въ Тифлиса—5 коп.

Допускается разсрочка платежа: къ 1-му января—4 р. къ 1-му іюня—3 р.

Для сельскихъ учителей, народныхъ и школьныхъ бібліотекъ и благотворительныхъ учрежденій сдѣлана скидка: годъ плата для иногородныхъ—6 руб., для городскихъ—5 руб.

Программа газеты, сотрудники и другія условія изданія остаются прежнія.

Подписка принимается не иначе, какъ считая съ 1-го числа каждаго мѣсяца. Подписка принимается въ Тифлисѣ, въ конторѣ газеты, Барятинская ул., д. № 8.

Ред. Г. Тумановъ.

Изд. К. Тумановъ.

3—3

Լ Է Օ

ՀԱՅԿԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

Մեր կեանքը, գրականութիւնը անցեալում

Հասարակական:—XVI -XVII դար

Ա Մ Ջ Ի Ն Տ Մ Ս

ԳԻՆՆ Է 1 ԲԵՐԵԼԻ 50 ԿՈՊԵԿ

Ծախուում է Թիֆլիսում, «Մշակի» խմբագրատանը:

Փոստաբաղադրանքները գրում են. Тифлисъ, редакция „Мшакъ“

լուն.—Արքունական լեռնային գործարանների բան-
տոների կենսաթոշակը.—Հաղորդակցութեան միջոցնե-
րի աղբատութիւնը.—Երկաթուղային նոր վիթխարի
գծեր. Լ. Սարգսեանի.

- Բագուի նաւթագործների XV1 հերթական ժողովը. Ե.—Հրա-
հանգներ զոնապաններին 165
15. ԴԱԻԱՌԱԿԱՆ ԿԵԱՆՔ. Մասնագիտական ղարտայների
կարիքը Երևանեան նահանգում, Ա.—Դ. օ 178
16. ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Երասկան քաղաքակր-
թութեան լաւագոյն կողմերը. —Դրական գիտութեան
և նրա մէջ աշխատողների զրութիւնը. —Հանճարները
գիտութեան մէջ.—Բերթըլօի չիսնամեակի առիթով.—
Ալֆրէդ Նոբէլ և նրա 5 մրցանակներին արժանացած
երեւելի մարդիկ.—Կիլիկիայի կաթիլկոտական հարցը. Լ. Ս. 182
17. ԴԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻՑ. Թոքախառ և ալիւլականու.
Թիւն, դօկտ. Կ. Յ. Փաշայեանի 189
18. ԹԻԻՐԻՔԱՀԱՅՈՅ ՊԱՏՐԻԱՐԿԻ ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆԸ 195
19. ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՅ, Տիգրանի 203
10. ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. 207
21. ՅԱԻԵԼՈՒԱԾ. «ՕՐԱՄՈՒՏԻՆ», Վէպ Ի. Ս. Տուրգենեւի 1—32

ԲԱՅՈՒԱԾ Է 1902 Թ. ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄՈՒՐՃ

ԳՐԱԿԱՆ, ՀԱՍՏԱՐԱԿԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Ա. Մ Ս Ա. Գ Ր Ի

(Նոր շրջան, II-րդ տարի)

Խմբագրության անդամներն են՝ պ.պ. ԼԵՒՈՆ ՍԱՐԳՍԵԱՆ և ԼԷՕ

«ՄՈՒՐՃ» ամսագիրն ունենալու է հետևյալ բաժինները.

1. Վէպեր, պատմություններ, դրամա, 2. Քանաստեղծություններ, 3. Գրական-պատմական և հրապարակախոսական լուրեր, 4. Քննադատություն և Մատենախոսություն, 5. Նորություններ առաջ և արտասահմանյան գրականությունից, 6. Գիտության, գեղարվեստի և տեխնիկայի աշխարհից, 7. Տրնտեսական հարցեր, 8. Ներքին տնտեսություն, 9. Գաղափարական կեանք, 10. Արտաքին տնտեսություն, 11. Նամակներ արտասահմանից, 12. Պարբերական հրատարակություններ, 13. Յուրաքանչյուրություններ ամեն լիզուով:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒՆԸ

Ռուսաստանում տարեկան 10 ֆուր. Արտասահմանում՝ 12 ֆուր.

կէս տարին 6 " " " " 1 " 20 կ.

1 ամսուան 1 " " " " 1 " 20 կ.

«Մուրճ» ամսագրին կարելի է ղրուել Թիֆլիսում — խմբագրատանը (Գանձախոս փողոց, № 21, տ. Ջանջուղալովի):

Խալաթիսի ան ժողովրդի պէտք է ղրուել՝ Тифлисе, въ редакцію журнала „Мурдж“.

Արտասահմանից՝ Tiflis, Rédaction de la revue „Mourtech“.

Տ ա ն ո թ ի լ ի Ն. Ո՛ր ղ ժ ու ա ր ա ն ու մ է Ռուսաստանում տարեկան բաժանորդագրությունը (10 ֆ.) վճարել միանգամ, կարող է տալ մաս-մաս (սկզբում 5 ֆ., մայիսի 1-ին 3 ֆ. և յուլիսի 1-ին 2 ֆ.):

Հասցեն փոխելու համար պէտք է ուղարկել 40 կ.

«Մուրճում» ՅԱՅՏԱՐԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ՝ զետեղելու համար պէտք է վճարել՝

Մի երես լանդ խալաթիսի համար . 15 ֆ.

1/2 " " " " " 8 " "

1/4 " " " " " 4 " "

Ա.ՊԱՌԻԿ ԿԱՄ ԶՐԻ ոչ ոքի «Մուրճ» չէ ուղարկում:

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

1. Խմբագրությունը չափով խնդրում է լուրերագրողներին՝ ղրել պարզ, մանասանգ թուրք, չափով անուններն ու օտար բառերը, և թերթի միայն մի երեսի վրայ:

2. Զբոսաշրջական մեծ լուրերագրողները պահում են խմբագրատանը 6 ամիս, իսկ փոքր լուրերագրողներն ու բանաստեղծությունները չեն վերադարձնում: Զեռարկը չեա ստանալու համար պէտք է ուղարկել ճանապարհահաշիւ:

3. Գրականության վարձատրության հարցը որոշում է Խմբագրությունը:

4. Խմբագրությունը իրան է վերադարձնում ուղարկուած լուրերագրողները փոփոխելու կամ կրճատելու իրաւունքը:

5. «Մուրճ» համարը չը ստացուելու գէպքում պէտք է Խմբագրության տեղեկութիւն տալ մինչև լաճորդ համարի լույս տեսնելու: Այդ տեղեկութեան անհրաժեշտ է կցել տեղական պատասխին գրտեսնակի հաւատարմիլը (удостоверение), որ ամսագրի համարը չի լանձնուած դանդաղատարին:

Խմբագիր-հրատարակիչ՝ Կ. ԿՐԱՍՆՆԻԿԵԱՆ